

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ. Գ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԿՋԲԻՑ ՄԻՆՁԵՎ

Ք. Հ. III ԴԱՐԻ ՎԵՐՋԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Չորրորդ, բարեփոխված հրատարակություն

Խմբագրություն

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941 (479,25)(07)

ԳՄԴ 63.3 (2Հ) ց73

Ժ 225

Ժամկոչյան, Հ. Գ.

Ժ 225 Հայ ժողովրդի պատմություն, սկզբից մինչև Ք. Հ. III դարի վերջը / Ոմբազրույթյամբ Պ. Հ. Հովհաննիսյանի.- Եր., Երևանի Համալս. Հրատ., 2006, 356 էջ:

Գասազրքում հեղինակը հանգամանորեն վերլուծել է նախնադարյան հասարակության, Արարատյան, Երվանդունիների, Արտաշեսյանների թագավորությունների, Հայ Արչակունիների առաջին պատմաչրջանի Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմության հարցերը, բացահայտել Հայաստանի տեղն ու դերը Հին աշխարհի պատմության ընդհանուր համակարգում, լուսաբանել վիճելի դանազան խնդիրներ, կատարել ժամանակագրական տարբեր ճշգրտումներ:

Հասցեագրվում է սովորող երիտասարդությունը և ընթերցող հանրությունը:

0503020913
Ժ $\frac{0503020913}{704(02)06}$ 2006 թ.

ԳՄԴ 63.3 (2Հ) ց73

ISBN 5-8084-0776-1

© ԵՊՀ Հրատարակչություն, 2006 թ.

© Ժամկոչյան Հ. Գ., 2006 թ.



50
1956
2006
anos

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ

Գրքի և նրա հեղինակի մասին

Հայ ժողովրդի պատմության բուհական դասագիրքն անցել է երկար ու բարդություններով լի ճանապարհ: 1950-ական թվականների երկրորդ կեսին միայն հնարավոր եղավ մեծ մի դասագրքի ստեղծումը, որին էլ ձեռնամուխ եղան Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի աշխատակիցները: Նախօրոք մշակված ծրագրի համաձայն նախ լույս տեսան «Հայ ժողովրդի պատմության» պրակները (նախատեսված 12-ի փոխարեն՝ 7-ը), ապա, 1963– 1970 թթ. ընթացքում, բուհական քառահատոր դասագիրքը: Ավելի ուշ՝ քառահատորյակի խմբագրման ու բարելավման միջոցով ստեղծվեց բուհական երկհատոր դասագիրքը (1975, 1979):

Այս դասագրքի միջոցով է, որ կես դար շարունակ բուհական ուսանողությունը և ընթերցող հանրությունը շփվում է հայոց պատմական անցյալին, սովորում հայոց պատմության դասը: Անկասկած, դասագիրքը կարևոր դեր է խաղացել և ինչ որ չափով շարունակում է խաղալ նաև այսօր, երիտասարդության հայրենասիրական դաստիարակության գործում:

Բուհական դասագրքի առաջին պրակի (1959), քառահատորյակի առաջին (1963) և երկհատորյակի առաջին (1975) հատորների ստեղծման գործում մեծ է հայոց պատմության ամբիոնի երկարամյա ու սիրված դասախոս Հայկազ Ժամկոչյանի ավանդը: Նա հեղինակն է առաջին պրակի, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմության չափազանց հետաքրքիր, բարդ ու միևնույն ժամանակ ուսումնասիրության կարոտ, իրենց վերջնական լուսաբանությունը չստացած և շատ հարցեր ընդգրկող մի քանի պատմաշրջաններ: Հատորի բովանդակությունը վերաբերում է նախնադարյան, տոհմատիրական, ստրկատիրական և վաղ ավատատիրական հայկական հասարակությունների պատմության հարցերին: Այստեղ հատկապես առանցքային են հասարակական կացութաձևերին, ուրարտական հասարակությանն ու մասնավորապես հայ ժողովրդի կազմավորմանը վերաբերող հատվածները: Հասկանալի է, որ այդ հարցերը հեղինակը շարադրել է 1950-ական թվականներին խորհրդային պատմագրության մեջ տիրապետող տեսակետների համաձայն, տեսակետներ, որոնց մի մասն այժմ հնացել է և կարոտ է արմատական վերանայման: Խոստովանելի է նաև, որ հեղինակի կողմից առաջ քաշված շատ հարցեր էլ հիմնավոր են և բռնել են ժամանակի քննությունը: Իսկ ինչ որ հնացել է կամ մասամբ կարոտ է խմբագրման, ապա դա արդյունք է գիտական մտքի նոր արդյունքների ձեռքբերման, նոր մոտեցումների: Պետք է նաև շեշտել, որ հեղինակը հայոց պատմության հարցերը մեկնաբանել է առանց գաղափարախոսական ավելորդ ճիգերի ու ջատագովության և քիչ է առաջնորդ-

վել քաղաքական ու կուսակցական «ղեկավար» դրույթներով: Դասագիրքը վերահրատարակելիս բավարարվել ենք միայն մասնակի ու անհրաժեշտ խմբագրական միջամտություններով՝ հեղինակի տեսակետներն ու դրույթները թողնելով անփոփոխ:

Հ. Ժամկոչյանի հեղինակած դասագրքի սկզբում անհրաժեշտ ենք համարել զետեղել անվանի աշխարհագետ Թադևոս Հակոբյանի գրչին պատկանող «Հայկական լեռնաշխարհի բնությունը և Մեծ Հայքի վարչական բաժանումը» հատվածը, որն առկա է երկրորդ և երրորդ հրատարակություններում:

Թեև Հ. Գ. Ժամկոչյանի հեղինակած «Հայ ժողովրդի պատմության» դասագիրքը հանրահայտ է և ուսանողական միջավայրում հորջորջվում է հենց այդպես՝ «Ժամկոչյան», այսպե և նույնը չի կարելի ասել նրա հեղինակի մասին: Այսօր քչերին է հայտնի այդ տաղանդաշատ, լայն ու հիմնարար գիտելիքների տեր մտավորականի անունը, որ գերադասում էր ոչ թե գրելը, այլ՝ դասախոսելը:

Հայկազ Գևորգի Ժամկոչյանը ծնվել է 1909 թ. Մալաթիա քաղաքում: Դաշակետի է եղեռնի ամբողջ դառնությունները և փրկվել հրաշքով: Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի ամերիկյան որբանոցի վարժարանում (1918–1924): Այնուհետև տեղափոխվել է Ֆրանսիա: Փարիզում, Վալանսում և Բոլոնյայում բանվորություն է արել, գործուն մասնակցություն է ունեցել Ֆրանսիայի և Բելգիայի բանվորական շարժումներին, անդամակցել համայնավար կուսակցությանը:

1929 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան: Սովորել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմատնտեսագիտական և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետներում: Համալսարանի ասպիրանտուրան ավարտելուց հետո (1938), անընդմեջ, մինչև իր կյանքի վերջին օրը (4 մարտի, 1981), որպես դասախոս աշխատել է համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնում: Այդ ընթացքում եղել է նաև հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ (1941–1944), պատմության ֆակուլտետի ղեկան (1941–1943, 1945–1955): 1941 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1943 թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1970 թ.՝ Գիտության վաստակավոր գործչի կոչում:

Ընդարձակ չէ Հ. Ժամկոչյանի գիտական աշխատությունների ցանկը: Սակայն հեղինակ է պատմաբանասիրական բնույթի մի շարք արժեքավոր ուսումնասիրությունների՝ «XII–XIII դարերի ազդեցությունը «Սասունցի Դավիթ» էպոսի տարբերակներում» (1939), «Պատմություն վասն ազգին նետողաց» երկի հեղինակը» (1946), «Անի քաղաքի XIII դարի երկու արձանագրության մասին» (1955), «Ֆրիկի երեք տաղերի մասին» (1956), «Պատմա-բանասիրական դիտողություններ Ֆրիկի և նրա տաղերի մասին» (1958) և այլն: Անշուշտ, Հ. Ժամկոչյանի կյանքի գործը, նրա կարասի երգը եղավ «Հայ ժողովրդի պատմության» առաջին պրակը (1961), որն այժմ խմբագրական անհրաժեշտ միջամտություններով ու շտկումներով դարձյալ հասցեագրվում է բարձրագույն դպրոցների աշակերտներին, ուսանողներին, ուսուցիչներին և մտավորականներին: Սույն չորրորդ հրատարակության համար հիմք է ծառայել 1961 թ. տպագրությունը, միաժամանակ լայնորեն հաշվի են առնվել 1963 և 1975 թթ. տպագրությունների հեղինակային խմբագրումներն ու հավելումները:

Հարկ ենք համարում շեշտել, որ այս շահեկան աշխատանքի վերահրատա-

րակությունը հնարավոր եղավ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական բաժնի տնօրեն դուկտոր **Զավեն Եկավյանի** ազնիվ նախաձեռնության շնորհիվ:

Պետրոս Գովհաննիսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՄԵԾ ՀԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հայ ժողովուրդն ապրել ու իր բազմադարյան պատմությունը կերտել է այն տարածքում, որը հայտնի է Հայկական լեռնաշխարհ անունով:

Հայկական լեռնաշխարհը հրաբխային և լեռնակազմական ուժերի գործողության հետևանքով առաջացած երկիր է, ֆիզիկա-աշխարհագրական մի ուրույն մեծ շրջան: Նա հարևան երկրներից ավելի բարձրադիր է և անվանվում է «լեռնային կղզի»: Հյուսիսում նրա սահմանը հասնում է մինչև Փոքր Կովկասի ծայրաչղթաները, հարավում՝ Կորդվաց և Մասիուս լեռները, արևելքում՝ Ուրմիա լճի մոտերքը, իսկ արևմուտքում՝ Անտիտավրոս, զբաղեցնելով ավելի քան 300.000 քառ. կմ տարածություն:

Լեռնաշխարհի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1500–1800 մ է: Տարբեր ուղղությամբ ձգվող լեռնաչղթաներն իրար հետ հատվելով՝ երկիրը վեր են ածել բազմաթիվ փակ շրջանների: Լեռնաչղթաների միջև ձգվում են ձորեր, հովիտներ և դաշտեր: Երկրում հիմնականում տարածված են հրաբխային սարահարթեր և առանձին լեռնազանգվածներ, լեռներ, գետահովիտներ ու դաշտեր:

Հայկական լեռնաշխարհը մտնում է երկրաչափերի գոտու մեջ: Հայկական լեռնաշխարհում է գտնվում Առաջավոր Ասիայի միակ գործող հրաբուխը՝ Թոնդուրեկը (Մասիսից հարավ-արևմուտք), որի խառնարանից դուրս են գալիս ջրային գոլորչիներ, ծծմբային ու ածխածնային գազեր և մանր քարակտորներ, իսկ ստորոտից բխում են հանքային տաք աղբյուրներ:

Երկրում հսկայական տարածություն վրա ձգվում են Փոքր Կով-

կաս, Հայկական պար և Հայկական Տավրոս լեռնահամակարգերը: Դրանցից առաջինը սկսվում է Բաթումի մոտից և հարավ-արևելյան ուղղությամբ ձգվում մինչև Արաքս՝ Մեղրու մոտ: Փոքր Կովկասը բաղկացած է Նոնավ, Վիրահայոց, Փամբակի, Սյունյաց և այլ լեռնաշղթաներից, որոնց միջև տարածվում են մեծ ու փոքր բարձրադիր շրջաններ: Փոքր Կովկասի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտ-Ջուղն է (3916 մ): Փոքր Կովկասին կից են Գեղամա հրաբխային լեռնաշղթան և Արագած լեռնագագաթը՝ 4096 մ բարձրությամբ:

Հայկական պարը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնաշղթան է: Այն ձգվում է զուգահեռական ուղղությամբ: Լեռնաշղթայի արևելյան ծայրակետում է գտնվում երկրի ամենաբարձր լեռը՝ Մեծ Մասիսը (Արարատ՝ 5165 մ), որի գագաթը պատված է հավերժական ձյան ծածկույթով: Հայկական պարի լեռնագագաթներից հայտնի են նաև Սինակը, Բարդոզը, Սուկավետը (կամ Ջրաբաշխ) և Այծպտկունքը:

Լեռնաշղթայի հարավային մասով ձգվում են Ծաղկանց լեռները, որոնց լավաները արևելքում հասնում են մինչև Թոնդուրեկ: Հայկական Տավրոսը կազմում է Տավրոսյան լեռնահամակարգի արևելյան՝ ամենաերկար հատվածը: Նա ձգվում է Ջահան գետի ակունքներից (Կիրիկիայում) մինչև Ուրմիա լճի մոտերքը: Սկզբնաղբյուրներում հաճախ են հիշատակվում Հայկական Տավրոսի երեք գագաթները՝ Արտոսն ու Կապուտկոզը՝ Վանա լճի հարավային ափին, և Անդոկը՝ լեռնաշղթայի կենտրոնական հատվածում:

Հայկական Տավրոսին են միանում գեղադիր Նեմրութ լեռնագագաթի (3050 մ) լավաները, իսկ Նեմրութից հյուսիս-արևելք՝ Վանա լճի հյուսիսային ափին բարձրանում է Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր լեռը՝ Սիփանը (4434 մ), որի գագաթից անկրկնելի տեսարան է ներկայացնում Վանա լիճն իր շրջակայքով: Լճի արևելյան կողմում՝ Վան քաղաքից ոչ հեռու, Վարազա լեռն է իր համանուն վանքով:

Հայկական լեռնաշխարհի տարածքի մեծագույն մասը կազմում են Արաքս, Արածանի (Արևելյան Եփրատ), Արևմտյան Եփրատ (Եփրատ) և ձորոխ գետերի ավազանները: Արաքսի և նրա վտակների հովիտներում են տարածվում Տուարածատափի, Բասենի, Կարսի (կամ Վանանդ), Շիրակի, Արարատյան, Սուրմալուի, Կոզովիտի, Մակուի (որի մի մասը հայտնի էր Ավարայր անունով), Կարմիր գետի և Նախճավանի արգավանդ դաշտերը: Նույնպիսի արգավանդություն

ունեն Արածանիի հովտում սփռված Ալաշկերտի, Մանազկերտի, Մուշի, Բալահովիտի (Բալու) ու Սարբերդի և Կարինի (էրզրումի), Դերջանի, Երզնկայի ու Կամախի դաշտերը:

Երկրի լեռնային ռելիեֆի և արտաքին ազդակների հետևանքով Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները՝ կլիման, հողերը, բույսերը, կենդանիները բազմազան են: Այստեղ առկա են կիսանապատներից մինչև լեռնային «տունդրան» և նույնիսկ լեռնային-«բևեռային» բնական բոլոր գոտիները: Եվ այդ բոլորը իրար հաջորդում են ընդամենը 15–20 կմ վրա: Բնական պայմանների այդպիսի տարատեսակությունն էլ պայմանավորել է երկրի առանձին շրջաններում տարբեր զբաղմունքների առաջացումն ու զարգացումը:

Հայաստանն ամբողջապես գտնվում է տաք, բարեխառն գոտում: Նրա կլիման ցամաքային է, տեղումներով սակավ և ունի ջերմաստիճանների մեծ տատանումներ: Համեմատաբար բավարար տեղումներ են ստանում երկրի միայն հյուսիս-արևելյան, հյուսիսային, հյուսիս-արևմտյան և մասամբ հարավային լեռնային ծայրաշրջանները:

Երկրի կենտրոնական մասում համեմատաբար բավարար տեղումներ են ստանում միայն Հայկական պարի, Ծաղկանց լեռների, Սիփանի և այլ լեռների բարձրադիր լանջերը: Երկրում անհամաչափ է տեղաբաշխված նաև ջերմությունը: Ամռանը լինում են խիստ շոգ օրեր, իսկ ձմռանը՝ ցրտեր: Երկրի ամենաշոգ շրջանները Արարատյան դաշտն ու Արևմտյան Տիգրիսի հովիտն են, որտեղ ամռանը ստվերում ջերմատիճանը երբեմն անցնում է 41 աստիճանից: Ցրտություն կենտրոնը Կարսի շրջանն է: Այստեղ արձանագրվել է մինչև –42 աստիճան սառնամանիք: Հայաստանի ցրտությունն այդ բևեռը իր հերթին սառնեցնում է և հարևան շրջանների օդը:

Հայկական լեռնաշխարհը ջրառատ երկիր է: Այստեղ գտնվում են մի քանի խոշոր լճեր և բազմաթիվ լճակներ: Նա ունի բավական զարգացած գետային ցանց և հայտնի է իր սառնորակ, հորդաբուխ աղբյուրներով ու հանքային բազմապիսի ջրերով:

Հայկական լեռնաշխարհի լճերից հայտնի են Վանա լիճը (Բլբլնույաց ծով, Աղթամարի լիճ)՝ Աղթամար, Լիմ և Կտուց կղզիներով, Սևանա լիճը (Գեղամա ծով) և Ուրմիա լիճը (կամ Կապուտան ծով): Վանա լիճն իր մեծությունը Ուրմիայից հետո զբաղում է երկրորդ տեղը (3733 քառ. կմ): Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 1720 մ է, փակ լիճ է, ջրերը աղի են՝ բորակով հարուստ: Հայտնի

է իր տառեխ ձկան տեսակով: Սևանա լիճը աշխարհի լեռնային ամենամեծ և ամենաբարձր լճերից է (մինչև մակարդակի իջեցումը բարձրությունը 1916 մ էր, իսկ մակերևույթը՝ 1416 քառ. կմ): Նրա ջրերը քաղցրահամ են և զարմանալի վճիտ: Նրա մեջ թափվում են Գավառագետը, Բախտակը, Վարդենիսը, Մասրիկը, Ջկնագետը և այլն: Լճի հյուսիս-արևմտյան կողմում գտնվում է Սևանա կղզին, որը լճի մակարդակի իջեցման հետևանքով վեր է ածվել թերակղզու: Սևանը հայտնի է իր իշխան ձկով: Նշվածներից բացի, տնտեսական որոշակի նշանակություն ունեն նաև Արճակ (Վանա լճից արևելք), Նազիկ (Վանա լճից արևմուտք), Ծովք (Արևմտյան Տիգրիսի ակունքի չրջանում), Մեծամոր (Սև ջուր գետի ակունքում) և մի շարք այլ փոքրիկ լճակներ:

Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում Տիգրիս, Եփրատ, Ճորոխ, Կուր և Արաքս գետերը: Կուրը սկիզբ է առնում պատմական Տայք աշխարհի Կող գավառից:

Արաքսը Հայաստանի մայր գետն է: Նա աշխարհի ամենատղմոտ գետն է: Սկիզբ է առնում Բյուրակն բարձրավանդակի Սրմանց գագաթի լանջերից և թափվում է Կուրի մեջ Կասպից ծովի մոտակայքում: Ջկնառատ է և արագահոս: Վարարումների և հունի փոփոխման պատճառով պատմություն ընթացքում նրա վրա կառուցված կամուրջներից միայն Հովվի կամուրջն է (Բասենում) պահպանվել մինչև մեր օրերը: Արաքսի ձախակողմյան վտակներից հայտնի են Ախուրյանը, Մեծամորը (Սև ջուր), Հրազդանը, Ազատը, Նախիջևանը, Երնջակը, Ողջին, Որոտանը, Հագարին (կամ Աղավնո գետ), իսկ աջակողմյաններից՝ Դեղին ու Կոտուր (Կարմիր) գետերը:

Եփրատը Հայկական լեռնաշխարհից սկսվող գետերի մեջ ամենաերկարն է, իսկ Տիգրիսը՝ ամենաշրառատը: Այդ երկուսն էլ կազմավորվում են երկուական հյուղերից, Եփրատը՝ Արածանից (Արևելյան Եփրատ) և Արևմտյան Եփրատից (Եփրատ), իսկ Տիգրիսը՝ Արևմտյան Տիգրիսից և Արևելյան Տիգրիսից (նաև՝ Ջերմ): Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Էրզրումի սարահարթից, իսկ Արածանին՝ Ծաղկանց լեռներից: Երկու Եփրատներն իրար են միանում և կազմում Եփրատ գետը Ռարբերդի դաշտի հյուսիս-արևմտյան կողմում: Արևմտյան Տիգրիսը սկիզբ է առնում Ծովք լճից:

Հայկական լեռնաշխարհի գետերը լեռնային բնույթ ունեն, արագահոս են և փոփոխլից: Դրանց անկման ուժը հին և միջին դարերում օգտագործվել է շատ չնչին չափով՝ ջրաղացներ գործի դնելու համար:

Գետերը արագահոսությամբ և մեծ անկման պատճառով նավարկության համար պիտանի չեն: Գետերի նշանակությունը առանձնապես մեծ է եղել ոռոգման և ձկնորսության համար:

Ընդհանուր առմամբ Հայկական լեռնաշխարհի հողն արգավանդ է: Երկիրը հավասարապես նպաստավոր է գյուղատնտեսության երկու կարևորագույն ճյուղերի՝ երկրագործության և անասնապահության զարգացման համար: Հողն ու բուսականությունը այստեղ, կլիմայական պայմաններին համապատասխան, բազմազան են. դրանք ուղղաձիգ ուղղությունը կազմում են մի քանի գոտիներ: Ցածրադիր մասերում՝ ծովի մակերևույթից 500–1000 մ բարձրության վրա գտնվող հարթություններում (Արարատյան դաշտ, Մեղրու և Կապանի հովիտներ, Արևմտյան Տիգրիսի հովիտ և այլն) արհեստական ոռոգման դեպքում հաջողությամբ աճում են չոր մերձարևադարձային մշակույթներ՝ բամբակ, նուռ, թուզ և այլն: Այս գոտում հացահատիկային մշակաբույսերի հետ միասին աճեցնում են բրինձ:

Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանը մեծ համբավ ունի իր խաղողով, դեղձով, ծիրանով և պտուղների այլ տեսակներով: Ցածրադիր այդ գոտու բնական աղքատ բուսածածկը հիմնականում բազկացած է օշինդրից և ճահճաբույսերից: Ցածրադիր գոտուց վեր՝ ծովի մակերևույթից 1100–1500 մ բարձրության վրա ընկած է նախալեռնային գոտին, որի համար բնորոշ մշակույթները հացահատիկներն են՝ ցորենը, գարին, տարեկանը, հաճարը, կորեկը, իսկ ցածրադիր մասերում՝ մինչև 1300 մ բարձրության վրա խաղողի ու կորիզավոր պտուղների մշակույթը: Հացահատիկներով առանձնապես աչքի են ընկել Ծիրակը, Ալաշկերտը և Մուշը: Հայկական լեռնաշխարհի նախալեռնային գոտում տարածված են վայրի հացաբույսերի մի քանի տեսակներ: Հայաստանը վայրի ցորենի նախահայրենիքներից մեկն է:

Երկրում լայն տարածում ունեցող նախալեռնային գոտուց վերև տարածվում է լեռնային գոտին, որը ծովի մակերևույթից ունի 1500–2000 մ բարձրություն: Այստեղ նույնպես տարածված են հացահատիկները, միայն այն տարբերությամբ, որ ցորենի փոխարեն գերիշխում են գարին և տարեկանը: Հացահատիկների ցանքերը այս գոտում երբեմն վնասվում են կարկուտից և ցրտերից: Լեռնային գոտու բարձր շերտերում՝ 1900–2000 մետրից վեր, տարածվում են ալպյան փարթամ ու հյութեղ մարգագետինները, որոնք զրավում են ընդար-

ձակ տարածութիւններ: Այսպէս մարգագետիններով առանձնապէս հարուստ են Բյուրակնյան, Խոնավ, Սևանի (Սևանա լճից արևելք), Գեղամա և Սյունյաց լեռների բարձրադիր լանջերը:

Անտառները Հայկական լեռնաշխարհում համեմատաբար քիչ տարածութիւն են գրավում: Նրա կենտրոնական շրջանները, եթէ չհաշվենք տեղ-տեղ երևացող առանձին պուրակները, գրեթէ անտառազուրկ են: Մեծ զանգվածներով անտառներ գտնվում են Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Տայքում, Չորրորդ Հայքում, Արեւիկյան Տիգրիսի ավազանում: Հնում անտառներն ավելի ընդարձակ տարածութիւններ են գրավել, քան այժմ: Հայկական լեռնաշխարհի անտառներում առանձնապէս տարածված են՝ կաղնին, հաճարենին, բոխին, թխկին, հացենին և կեչին: Սյունիքի, Արցախի և Գուգարքի անտառներում կան մեծ քանակութեամբ վայրի պտղատու ծառեր ու թփեր՝ տանձենիներ, խնձորենիներ, սալորենիներ և այլ ծառատեսակներ: Սյունիքի հարավային մասում, Վանա լճի ավազանում և մի քանի տեղերում անտառային պուրակներ են կազմում ընկուզենիները:

Հին Հայաստանում տնկվել են մի քանի անտառապուրակներ: Դրանցից առանձնապէս նշանավոր են եղել «Սոսյաց անտառը» (Արմավիր մայրաքաղաքի մոտ), «Մննդոց անտառը» (Ախուրյան գետի աջ ափին, Բագարան քաղաքի շրջակայքում) և, մանավանդ, «Սոսրովակերտ» անտառը, որը տարածվում էր Ազատ և Վեդի գետերի ջրբաժան շրջանում՝ Գառնիի բերդի մոտից մինչև Դվին, ապա՝ Արտաշատ: Վերջինիս մնացորդները մինչև օրս էլ մնում են Արարատի շրջանում «Սոսրովի անտառ» անունով և որպէս պետական արգելանոց պահպանվում են հատուկ խնամքով:

Բազմազան է նաև Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը: Ընտանի կենդանիներից այստեղ տարածված են ոչխարը, այծը, կովն ու եզը, ձին, գոմեշը, ջորին, էշը, և բազմազան թռչուններ: Վայրի կենդանիներից՝ աղվեսը, նապաստակը, կղաքիսը, գայլը, արջը, բորենին, քարայծն ու վայրի ոչխարը, եղնիկը, վարազը, ծայր հարավային մասերում՝ նաև առյուծ: Հին և միջնադարյան Հայաստանի համար տնտեսական մեծ նշանակութիւն է ունեցել միջատի մի տեսակը, որն աճում էր Արարատյան դաշտի Արաքսին հարող ճահճուտներում: Այդ միջատից պատրաստում էին արտաքին շուկայում մեծ համբավ ձեռք բերած Հայկական չգունաթափվող վառ կարմիր ներկ՝ «որդան կարմիր»-ը:

Հայկական լեռնաշխարհն աչքի է ընկնում իր բնական հարստու-

թյուններով, ամենից առաջ՝ սեղանի աղով: Աղի երեք նշանավոր հանքավայրերը՝ Կողբը, Նախիջևանը և Կաղզվանը, հայտնի էին վաղազույն ժամանակներից:

Հայկական լեռնաշխարհը հայտնի է նաև պղնձի, կապարի ու ցինկի հանքերով: Պղնձի հանքավայրեր կան երկրի շատ մասերում: Առանձնապես հայտնի են եղել Գուգարքի Տաշիրք գավառը, Սյունիքի Վայոց ձոր, Բաղք և Ջորք գավառները և այլն: Երկաթն ավելի լայն տարածում ունի: Անանիա Ծիրակացու «Աշխարհացույց»-ի (VII դար) մեջ հիշատակվում է, որ երկաթով հարուստ են Աղձնիք, Տուրուբերան և Ուտիք նահանգները: Առանձնապես նշանավոր էին Վանա լճի հարավային ափին գտնվող «Երկաթահատ» կամ «Երկաթահանք» կոչված հանքերը՝ Կապուտկող լեռան մոտ: Նավթը նույնպես հիշատակվում է Աղձնիք և Տուրուբերան աշխարհներում: Նավթային ավազաններ կան նաև Վանից հարավ, Բերկրի քաղաքի շրջանում և Կարինում (էրզրում): Քարածխով աչքի են ընկնում Արևմտյան Տիգրիսի և Արևմտյան Եփրատի ավազանները:

Աղնիվ մետաղներից հիշատակվում են ոսկին և արծաթը: Արծաթի հայտնի հանքավայրը գտնվում էր հին Հայաստանի հյուսիսարևմտյան մասում, իսկ ոսկու հանքեր ու ոսկեբեր ավազներ հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի հինգ վայրերում՝ Սպեր գավառում, Արարատյան դաշտում, Ջորրորդ Հայք աշխարհի Պաղնատուն գավառում, Հայկական Տավրոսի Վանա լճին հարող հատվածում և Սյունիքում (Սողք գավառում): Դրանցից առանձնապես նշանավոր էին Սպերի ոսկու հանքերը, որոնք հայտնի են եղել և մշակվել են շատ հին ժամանակներից: Երկրի հրաբխային շրջաններում և գունավոր մետաղների հանքավայրերում մեծ տարածում ունի ծծումբը: Լեռնաշխարհի տարբեր մասերում հանդիպում են տորֆ, գառիկ, քրոմիտ:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է բազմատեսակ շինանյութերով: Երկրում ավազը, կավը և կրաքարերը տարածված են գրեթե ամենուրեք: Կան տարբեր տեսակի ու գույնի մարմարներ (Երևանի մոտ, Արզականում, Խոր Վիրապում, Արարատ կայարանի մոտ և այլ տեղերում): Հրաբխային շատ շրջաններում հզոր շերտերով տարածված են բազմագույն (սև, գորշ, վարդագույն և այլն) տուֆերը, որոնցից առանձնապես մեծ հռչակ է վայելում Արթիկի վարդագույն տուֆը: Տուֆերով (Երևանում, Ծիրակում և այլուր), մարմարներով,

ինչպես և պեմզայով (Շիրակում) ու գիպսով (Արարատյան դաշտում) հայտնի է եղել մանավանդ Այրարատյան աշխարհը: Պակաս տարածում չունեն նաև գրանիտը, բազալտը, ֆեբրիտները: Շինանյութերի բարձր որակն ու առատությունը բնականաբար նպաստել են Հայկական լեռնաշխարհի բնակիչների շինարարական արվեստի զարգացմանը, մի արվեստ, որի ամենատարբեր ժամանակներին վերաբերող կոթողներն այսօր էլ պահպանում են իրենց հմայքը:

Հրաբուխների տարածվածությունը շնորհիվ Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր կողմերում բխում են բազմատեսակ ու բազմաթիվ հանքային տաք ու սառն աղբյուրներ: Դրանք հիմնականում ունեն ածխաթթվային, երկաթային, ծծմբային և ածխաթթվա-ալկալիական բաղադրություն: Հրազդան գետի ավազանում բխում են հանքային մի շարք սառն աղբյուրներ, որոնց մեջ պատմական շատ հին ժամանակներից ի վեր բուժիչ հատկություններով հայտնի է Արզնիի ջուրը: Տաք աղբյուրներից հայտնի են «Վարչակի ջերմուկը» (Բայազետ քաղաքից ոչ հեռու, Դիաղինի շրջանում), Ջերմուկը (Սյունիքի Վայոց ձոր գավառում), Կարինի (էրզրում) և Երզնկայի ջերմուկները: Մեր օրերում լայնորեն օգտագործվում է Վայոց ձորի ջերմուկը, ուր կառուցվել են հիանալի առողջարաններ: Հանքային բազմաթիվ աղբյուրներ կան Փամբակ ու Աղստե գետերի ձորերում, Որոտան ու Ողջի գետերի ավազաններում և այլուր:

Հայկական լեռնաշխարհն իր կլիմայական ու հողային բարենպաստ պայմաններով, ձկնառատ լճերով ու արագահոս գետերով, հարուստ բուսական ու կենդանական աշխարհով, հանքային բազմատեսակ հարստություններով մեծապես նպաստել է տնտեսությունների զարգացմանը:

Հայաստանը քաղաքակրթված հին աշխարհի բաղկացուցիչ մասերից մեկն էր և, իբրև այդպիսին, հայտնի էր պատմության վաղագույն ժամանակներից: Հայաստանի հնագույն շրջանի տարածքի և վարչական բաժանման վերաբերյալ հիշատակություններ են կատարել Հերոդոտոսը, Քսենոփոնը, Ստրաբոնը, Պլինիոս Ավագը, Պտղոմեոսը և հայտնի այլ հեղինակներ: Սելևկյան տիրապետության ժամանակներից սկսած (Ք. ա. IV–II դար) հայաբնակ բոլոր շրջանները բաժանված էին երեք խոշոր վարչական միավորների՝ Փոքր Հայք, Ծոփք և Մեծ Հայք, որոնք Ք. ա. III դարում դարձան առանձին-առանձին անկախ պետություններ: Դրանց մեջ ամենից զորեղը Մեծ

Հայքի պետությունն էր, որտեղ Ք. ա. II դարից մինչև Ք. չ. V դարը թագավորում էին նախ Արտաշեսյանները, ապա Արշակունիները:

Արտաշեսյանների օրոք, մանավանդ Արտաշես I-ի և Տիգրան II-ի թագավորության շրջանում, Մեծ Հայքի տարածքը՝ Հարևան Հայկական ու մասամբ ոչ Հայկական շրջանների, ինչպես նաև Ծոփքի ու Փոքր Հայքի հաշվին ընդարձակվելով, հասավ իր առավելագույն սահմաններին: Նրա սահմանները, որ գրեթե առանց էական փոփոխության մնացին նաև I-IV դարերում, Տիգրան II-ի օրոք հասնում էին արևելքում Կասպից ծով, արևմուտքում՝ Եփրատ, հյուսիսում՝ Կուր գետը, իսկ հարավում Կորդվաց լեռների հարավային վերջավորությունները: Նշված սահմանների միջև ամփոփված երկիրը, որը, եթե բացառելու լինենք արևելյան մի քանի շրջաններ, հիմնականում համընկնում է Հայկական լեռնաշխարհի հետ, պատմությունը հայտնի է Մեծ Հայք կամ ուղղակի Հայաստան անունով՝ անկախ ժամանակի ընթացքում նրա կրած տարածքային ու վարչական-քաղաքական փոփոխություններից:

Մեծ Հայքը վարչական առումով Արտաշեսյանների թագավորության շրջանում բաժանվում էր զորավորությունների (վարչատարածքային ու զինվորական միավորներ) ու բղեչխությունների, իսկ Արշակունիների օրոք՝ նախարարությունների ու բղեչխությունների: Հետագայում երկրի ներքին վարչատարածքային բաժանումներն ըստ էության բազմաթիվ անգամ ենթարկվում են փոփոխությունների: Սակայն դարեր շարունակ պատմագիրների ու աշխարհագիրների մոտ գործածության մեջ է մնում Մեծ Հայքի տարածքային այն բաժանումը, որը տրվում է VII դարի «Աշխարհացույց»-ում:

Ըստ «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքը բաղկացած էր 15 աշխարհներից, որոնք բոլորը միասին ունեին 191 գավառ: Այդ աշխարհները հետևյալներն էին՝ Տայք, Բարձր Հայք կամ Կարինի աշխարհ, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորձեք կամ Կորդվաց աշխարհ, Մոկք, Պարսկահայք, Փայտակարան, Արցախ, Ուտիք, Գուգարք, Տուրուբերան կամ Տարոնի երկիր, Սյունիք, Վասպուրական և Այրարատ:

Հայ ժողովրդի պատմության մեջ առանձնապես կարևոր դեր են խաղացել Բարձր Հայքը, Չորրորդ Հայքը, Տուրուբերանը, Վասպուրականը, Սյունիքը, Արցախը, Գուգարքը և հատկապես Այրարատը: Բարձր Հայքի գավառներից նշանավոր էին՝ Դարանաղի գավառն իր Անի ամրոցով, Եկեղյաց գավառը՝ Երիզա ավանով (Երզնկա), Մա-

նանադի գավառը, որն առանձնապես հայտնի դարձավ Թոնդրակյան շարժման ժամանակ, Կարինը Կարին քաղաքով և Սպեր գավառը Սպեր գյուղաքաղաքով: Չորրորդ Հայքի գավառներից նշանավոր էին Հանձիթը՝ Խարբերդ քաղաքով և Հոանդեա վայրով, Մեծ Ծոփքը, Անգեղտուն գավառը՝ Անգղ ամրոցով և այլն: Տուրուբերան աշխարհի ամենանշանավոր գավառը Տարոնն էր՝ Աշտիշատ ու Գլակա վանքերով, Ողական ամրոցով, Մուշ գյուղաքաղաքով և նշանավոր Հացեկաց ու Խորոնք գյուղերով:

Վասպուրականը Մեծ Հայքի ամենաբազմագավառ աշխարհն էր, նրա գավառների թիվը հասնում էր մինչև 37-ի: Հայտնի էին հատկապես Ռշտունիքը՝ Ոստան գյուղաքաղաքով, Նարեկա վանքով և Աղթամար կղզով, Տոսպը՝ Վան քաղաքով և Արտամես գյուղաքաղաքով, Արտազը՝ Ավարայրի դաշտով և Եղինդ գյուղով, Աղբակը՝ Արծրունիների Աղամակերտ ոստանով, Նախճավանը՝ Նախճավան քաղաքով և գուսաններով հայտնի գինեվես Գողթն գավառը: Սյունիքի նշանավոր գավառներից էին Արևիքը, Բաղքը, Ծղուկը, Վայոց ձորը և Գեղարքունիք գավառը:

Մեծ Հայքի ամենահայտնի աշխարհը Այրարատն էր, հայ պետականությունից, մշակութային ու տնտեսական կյանքի ամենանշանավոր կենտրոնը: Բավական է ասել, որ հայկական պետության մայրաքաղաքների մեծագույն մասը գտնվում էր Այրարատում: Այրարատյան աշխարհի գավառներից հայտնի էին՝ Բասենը՝ Վաղարշավան քաղաքով, Արշարունիքը՝ Երվանդաշատ ու Բագարան քաղաքներով, Երվանդավան դղյակով և Արտազերս ամրոցով, Վանանդը՝ Կարս բերդով, Շիրակը՝ Անի բերդով, Արագածոտնը՝ Արմավիր ու Վաղարշապատ քաղաքներով, Կոտայքը՝ Երևան գյուղաքաղաքով, Մազազը՝ Գառնի բերդաքաղաքով, Բագրևանդը՝ Վաղարշակերտ գյուղաքաղաքով, Ծաղկոտնը՝ Շահապիվան վանքով, Կոզովիտը՝ Բագրատունիների ոստան Դարույնքով (Բայազետ), Ոստանը՝ Արտաշատ և Դվին քաղաքներով: Հայ մատենագիրները, հատկապես Ղազար Փարպեցին, մեծ գովեստով են խոսում Այրարատի արգավանդություն մասին:

Մեծ Հայքից բացի հայ ժողովուրդը զգալիորեն մեծամասնություն է կազմել նաև Փոքր Հայքում, որն սկզբում գրավում էր միայն Իրիս գետի և նրա աջակողմյան Գայլ գետի վերին ու միջին հոսանքների ավազանները, բայց հետագայում, IV դարից սկսած, երբ այն բաժանվեց Առաջին և Երկրորդ Հայք պրովինցիաների, նրա տարածքը

զգայի չափով մեծացրին հարևան շրջանների հաշվին: Ավելի ուշ Մեծ Հայքից եկող բնակիչները Փոքր Հայքից բացի բնակություն հաստատեցին նաև նրա հարավային հարևան՝ նախկին Կապադովկիայի տարածքում, իսկ X դարից՝ Կիլիկիայում, որտեղ XI դարում նրանք ստեղծեցին իրենց պետականությունը:

Արարական պետության ժամանակներից սկսած՝ մեկը մյուսին փոխարինող արտաքին նվաճողները աղավաղել, փոխել են Հայաստանի աշխարհագրական անունները: Այդ պատճառով էլ մենք Հայաստանում հանդիպում ենք ամենատարբեր օտարածին աշխարհագրական անունների: Սակայն նրա բնակչության հիմնական զանգվածները և աշխարհագրական անունների մեծ մասը, ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, մնացին հայերն ու հայկական անունները:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

**ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՎԱՂ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՊԱԼԵՈԼԻԹԸ ԵՎ ՆԵՈԼԻԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Նախնադարյան
Հասարակության
զարգացման
չըջանները**

Մարդկային հասարակության կազմավորումն ու զարգացումը երկարատև մի գործընթաց է, որը տևել է հարյուր-հազարավոր տարիներ:

Ըստ Հնագիտական և երկրաբանական տրվյալների, մարդը երկրագնդի վրա հանդես է եկել երկրի պատմության չորրորդական ժամանակաշրջանի սկզբում, երբ, ընդհանրապես, երկրի կլիման աստիճանաբար սկսել էր ցրտել: Քանի որ մարդկային հասարակության զարգացման նախնական աստիճաններում աշխարհագրական միջավայրը կարևոր դեր է խաղացել, ուստի և մարդը առաջին հերթին հանդես է եկել երկրագնդի այն մասերում, որտեղ նրա համար գոյություն են ունեցել բնական նպաստավոր պայմաններ:

Ի տարբերություն բոլոր կենդանիների, մարդն իր սնունդը, իր կենսապայմանները հայթայթելու համար բնության դեմ մղվող պայքարում հանդես է գալիս ոչ թե դատարկ ձեռքերով, այլ արտադրության գործիքներով: Աշխատանքային կամ արտադրության գործիքների պատրաստումը հանդիսանում է մարդու առաջին և հիմնական առանձնահատկությունը. գիտակցությունը, մտածողությունն ու

նպատակադրումը հանդիսանում են մարդու երկրորդ առանձնահատկությունը:

Մարդն իր առաջին գործիքները պատրաստել է փայտից, քարից և ոսկրից, սակայն, հասկանալի է, որ մեզ հասել են միայն նրա պատրաստած քարե, մասամբ և ոսկրե գործիքները: Քարե գործիքների պատրաստման համար իբրև շինանյութ ծառայել են այն քարատեսակները, որոնք ավելի հեշտ են մշակվել և տվել են կտրող սուր ծայրեր: Այդպիսի քարատեսակներ են եղել կայծքարը, օբսիդիանը (սատանի եղունգ), կվարցիտը և այլն: Միայն հարյուր-հազարավոր տարիներ հետո, երբ հսկայական փորձ է կուտակվում, մարդը տիրապետելով մետաղների մշակման արվեստին, սկսում է գործիքներ պատրաստել նաև մետաղներից՝ պղնձից, բրոնզից և երկաթից:

Նյութական բարիքներ արտադրելու համար, բնությունն ղեկավոր պայքարում մարդիկ հանդես են գալիս ոչ թե միայնակ, իրարից մեկուսացած, այլ միասին, խմբերով կամ հասարակություններով: Միայնակ մարդը, ինչպես և նյութական բարիքների արտադրությունը հասարակությունից դուրս գոյություն ունենալ չեն կարող: Արտադրությունը միշտ և բոլոր պայմաններում բացառապես հասարակական բնույթ ունի:

Նախնադարյան հասարակության պատմությունը սովորաբար, ըստ աշխատանքային գործիքների, բաժանվում է քարի դարի, բրոնզի դարի և երկաթի դարի: Քարի դարն իր հերթին բաժանվում է երկու խոշոր շրջանների՝ պալեոլիթ և նեոլիթ, այսինքն՝ հին քարի դար և նոր քարի դար:

Մարդկային հասարակության, այդ թվում և նախնադարյան հասարակության զարգացման մի աստիճանից մյուսին անցնելու համար վճռական նշանակություն ունի արտադրության գործիքների զարգացումը: Որքան ցածր է արտադրողական ուժերի զարգացումը, և կամ որքան հասարակ ու քիչ զարգացած են արտադրության գործիքները, նույնքան ցածր ու քիչ զարգացած է նաև հասարակության զարգացման աստիճանը և ընդհակառակն: Արտադրողական ուժերի զարգացումը ոչ միայն հասարակությունը զարգացման ցածր աստիճանից փոխադրում է ավելի բարձր աստիճանի, այլև առաջ է բերում արտադրական նոր հարաբերություններ, ինչպես և փոփոխում հասարակության ներսում մինչ այդ գոյություն ունեցող քաղաքական, հասարակական կառավարման ձևերը, իրավական նորմաները, գաղափարները:

Նախնադարյան Հասարակության սկզբում մարդիկ ապրել են թափառող խմբերով, հոտերով, իսկ հետագայում միավորվել են տոհմային համայնքներում՝ համատեղ կերպով սնունդ հայթայթելու, գիշատիչ կենդանիներից և հարևան թշնամի տոհմներից պաշտպանվելու համար: Նախնադարյան Հասարակությունում թե՛ աշխատանքը և թե՛ արտադրված նյութական բարիքների բաշխումն ու յուրացումը ունեցել են կոլեկտիվ, հասարակական բնույթ: Այստեղ չեն եղել ո՛չ շահագործում և ո՛չ էլ դասակարգեր: Ծահագործման և դասակարգերի բացակայությունը պայմանավորված էր արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակով: Քարի գործիքներով զինված նախնադարյան մարդը երկարատև աշխատաժամերի միջոցով հագիվ կարողանում էր պահպանել իր և իր սերնդի գոյությունը: Հասարակության ներսում հավելյալ կենսամթերքների արտադրություն անհնարինությունը բացառում էր շահագործման և դասակարգերի առաջացման հնարավորությունը: Այդ հնարավորությունը առաջանում է միայն բրոնզի դարի վերջում և երկաթի դարի սկզբում, երբ արտադրողական ուժերի հետագա զգալի զարգացման հետևանքով քայքայվում են նախնադարյան կարգերը, և առաջանում է դասակարգային հասարակություն:

**Պալեոլիթը
Հայաստանում**

Պալեոլիթը կամ հին քարի դարը տևել է մի քանի հարյուր-հազար տարի:

Վերջին տարիներում կատարված հնագիտական մի շարք հայտնագործություններ ապացուցեցին, որ Հայկական լեռնաշխարհը հանդիսացել է մարդկային հասարակության ամենահին բնակավայրերից մեկը, որտեղ բնակության համար գոյություն են ունեցել աշխարհագրական, կլիմայական նպաստավոր պայմաններ: Հայաստանը ծածկված է եղել մերձարևադարձային կուսական խիտ անտառներով:

1944–1947 թթ. Արագածից դեպի հարավ-արևմուտք գտնվող Արտին լեռան լանջերում, Երևանից ոչ հեռու գտնվող Արզնի, Նուռնուս և այլ գյուղերում հայտնաբերված նախնադարյան մարդու կայաններից դուրս են բերվել մեծ թվով քարե գործիքներ, որոնք պատկանում են պալեոլիթի տարբեր շրջաններին: Այս կայանները, որոնք գտնվում են օբսիդիանի (սատանի եղունգ) հարուստ հանքերի մոտ, հանդիսացել են քարե գործիքների պատրաստման յուրատեսակ արհեստանոցներ:

Հայտնաբերված քարե գործիքների մեջ կան շատ կոպիտ մշակված ձեռքի հատիչներ, քերիչներ, սրածայրեր և այլ մանր գործիքներ,

որոնք պատկանում են պալեոլիթի ամենավաղ շրջանների մշակույթներին կամ, այլ կերպ ասած, դրանք նախնադարյան մարդու ամենահին քարե գործիքներից են:

Ստորին պալեոլիթին բնորոշ քարե գործիքը հանդիսացել է ձեռքի հատիչը, որը նախնադարյան մարդը օգտագործել է հարվածելու, ձեղքելու, պատռելու, կտրելու և նույնիսկ փորելու համար: Ձեռքի հատիչը մեկից մինչև երկու կիլոգրամ կշռող, 10–12 սանտիմետր երկարություն ունեցող, մի ծայրը սուր, իսկ մյուսը հաստ ու բուլթ մի քարի կտոր է, որը ձեղքելու կամ հատելու համար որոշ չափով մշակված է մարդու ձեռքով:

Այդ ժամանակ մարդիկ ապրում էին թափառող շատ փոքրածխված խմբերով, սնվում էին հիմնականում հավաքելու, մասամբ էլ որսորդության միջոցով ձեռք բերվող սննդով: Նրանք չունեին երկարատև բնակություն վայրեր և կայաններ:

Ստորին պալեոլիթի վերջում երկրաբանական փոփոխությունների հետևանքով Եվրոպայի և Կովկասի, այդ թվում և Հայաստանի կլիման խիստ կերպով ցրտում է, գոյանում են սառցադաշտային կենտրոններ:

Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած սննդի հայթայթման դժվարությունները Հայաստանում ապրող նախնադարյան մարդուն ստիպում են բարելավել իր աշխատանքի գործիքները և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Արտին լեռան լանջերում, Հրազդան գետի միջին հոսանքի շրջանում, ինչպես և Կարս, Մալաթիա, Բուլանըխ քաղաքների շրջակայքում հայտնաբերված նախնադարյան կայաններից հայտնաբերվել են մեծ քանակությամբ ձեռքի հատիչներ, սրածայրեր, քերիչներ, դանակներ և քարե այլ կտորոց սուր գործիքներ, որոնք պատկանում են վերին պալեոլիթին: Վերին պալեոլիթին պատկանող մի հետաքրքիր քարե մեծ սրածայր գործիք է հայտնաբերվել նաև Պեմդաչենում: Ուշագրավ է, որ այս ժամանակի գործիքների մի մասը պատրաստված է կայծքարից: Այդ գործիքները, նախկինների հետ համեմատած՝ ոչ միայն ավելի լավ են մշակված և ունեն կտրող ու սուր ծայրեր, այլև որոշ չափով ենթարկվել են տարբերացման: Ամեն մի գործիք օգտագործվել է որոշակի աշխատանքների համար, այն է՝ կենդանիների հարվածելու, մորթելու, մաշկելու, փայտ տաշելու և այլն: Այս ժամանակաշրջանի գործիքների սրածայր և կտրող լինելը պայմանավորված էր նրանով, որ մեծ կենդանիների, հատկապես մամոնտի, ոնգեղջյուրի, հսկա եղջերուի, քարանձավային արջի կողեկտիվ որ-

սորդությունը դարձել էր նախնադարյան մարդու հիմնական տրնտեսական զբաղմունքը և նրա սննդի գլխավոր աղբյուրներից մեկը:

Տարբեր ժամանակներում Լենինականում (Գյումրի) Ախուրյան գետի ափին, Երևանի չրջակայքում, Լոռիում, Արևմտյան Հայաստանի Խնուս քաղաքում և այլ վայրերում հայտնաբերվել են մամոնտի, ունգեղջյուրի, հսկա եղջերուի, արջի, նախնական ձիու և չորրորդական ժամանակաշրջանի այլ կենդանիների ոսկորներ ու կմախքներ, որոնք այժմ պահվում են Հայաստանի երկրաբանական, Թբիլիսիի և Բրիտանական թանգարաններում: Հիշյալ կենդանիների ոսկորների ու կմախքների գյուտերը ինքնին նույնպես կարևոր ապացույց են հանդիսանում, որ Հայաստանում ապրող վերին պալեոլիթի մարդը զբաղվել է այդ կենդանիների որսորդությամբ:

Կլիմայի փոփոխությունը ստիպում է վերին պալեոլիթի մարդուն ցրտից պատսպարվելու համար ապաստարան ձարել: Հատկապես լեռնային երկրներում նախնադարյան մարդու առաջին բնակարանները դառնում են քարայրները, որոնք նա նվաճում է գիշատիչ կենդանիների դեմ մղված համառ պայքարում:

Վերին պալեոլիթի նախնադարյան մարդը կատարում է մարդկային հասարակության ամենամեծ գյուտերից մեկը՝ կրակի գյուտը: Կրակի գյուտը նախնադարյան մարդուն ոչ միայն պաշտպանում է ցրտից ու հնարավորություն տալիս նրան հում մսից անցնելու եփած մսի գործածության, ոչ միայն հեշտացնում է նրա աշխատանքը, գործիքների պատրաստումն ու սննդի հայթայթումը, այլև մի ահեղ զենք է դառնում բնության և գիշատիչ կենդանիների դեմ պայքարելու համար: Կրակի գյուտը մարդկային հասարակությանը հնարավորություն է տալիս տարածվելու ավելի ընդարձակ տարածքներում, ինչպես և ստիպում է նախնադարյան մարդուն աստիճանաբար անցնել նստակեցության:

Պալեոլիթի վերջում մարդը իր գոյության հազարամյակների փորձով հնարում է նաև տեղը, նիզակը, պարսատիկը և նետն ու աղեղը: Ինչպես ցույց են տալիս Հայաստանի նախնադարյան հուշարձաններից գտնված իրերը, նախնադարյան մարդը որպես նետի սլաքներ օգտագործել է կայծքարի և օբսիդիանի սուր կտորներ: Նետ ու աղեղը նախնադարյան մարդու համար մի կարևոր գործիք և զենք է դառնում որսը հեռվից սպանելու, վիրավորելու, ինչպես և գիշատիչ կենդանիներից ու թշնամիներից պաշտպանվելու համար:

Վերին պալեոլիթում մարդիկ իրար էին միացած բնության և գիշատիչ կենդանիների դեմ համատեղ պայքարելու, համատեղ սնունդ

Հայթայթելու անհրաժեշտությունը: Պալեոլիթի վերջում առաջանում է տոհմային համայնքը, որտեղ արդեն, բացի նշված պատճառներից, մարդիկ իրար էին միացած նաև արյունակցություններով, որը որոշվում էր մոր գծով: Այստեղ թե՛ աշխատանքը և թե՛ նյութական բարիքների բաշխումն ու յուրացումը ուներ բացառապես կոլեկտիվ, համայնական բնույթ, որը պայմանավորված էր արտադրողական ուժերի խիստ ցածր աստիճանով:

Նեոլիթը Հայաստանում

Նեոլիթը կամ նոր քարի դարը հսկայական դեր է կատարել նախնադարյան Հասարակության զարգացման պատմության մեջ: Նա տևել է ավելի քան ութ հազար տարի (Ք. ա. XII հազարամյակի վերջերից մինչև IV հազարամյակի կեսը):

Թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջաններից Հայտնաբերված՝ նեոլիթին պատկանող նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ապրող նոր քարեդարյան մարդը նախ խոշոր առաջադիմություն է կատարում աշխատանքի գործիքների պատրաստման ասպարեզում: Հին քարի դարի կոպիտ, ծանր, քիչ զարգացած քարե գործիքների փոխարեն հանդես են գալիս գեղեցիկ կերպով մշակված ու հղկված, ավելի նպատակահարմար ձև տրված, զգալի չափով մասնագիտացված բազմաթիվ նոր գործիքներ ու զենքեր: Թայիների շրջանի Զաղաներ, Բառոժ, Արարատյան դաշտի Կողջակ բլուր, Տերտերի ձոր, Մաշտոց բլուր, Սև բլուր կոչվող նեոլիթյան բանակատեղերից, ինչպես և Անի-Պեմզայի, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի շրջակայքից և Հայաստանի այլ վայրերից հայտնաբերված գործիքների ու զենքերի մեջ կան կայծքարից, օբսիդիանից և ոսկրից պատրաստված դանակներ, քերիչներ, տրորիչներ, փայտե կոթ անցկացնելու կամ կապելու հարմարություն ունեցող մուրճեր, կացիներ, մանգաղներ, սանդեր, աղորիքներ, հերուններ, մախաթներ, իլիկի գլուխներ և այլն:

Նոր քարեդարյան մարդու խոշոր նվաճումներից մեկը հանդիսացավ վայրի կենդանիների ընտելացումը և դրա հիման վրա անասնապահության սկզբնավորումը: Հայաստանի նոր քարեդարյան դամբարաններից հայտնաբերվել են ոչխարի, այծի, շան, խոզի, կովի, ձիու և այլ ընտանի կենդանիների ոսկորներ, որոնք ցույց են տալիս վերին նեոլիթում Հայաստանում անասնապահության զգալի չափով զարգացած լինելը: Մարդը ոչ միայն օգտագործում էր կենդանու միսը, կաթը, կաշին ու մորթին, այլև նրա բուրդը և մազը: Քարից

կամ կավից պատրաստված իլիկի գլուխների գտնվելը ցույց է տալիս, որ Հայաստանի նեոլիթի մարդը բուրդը և մազը մշակում էր թել ստանալու համար, որը նա օգտագործում էր մատներով հագուստներ հյուսելու և մորթե հագուստեղենի առանձին մասերն իրար միացնելու համար: Մարդը բուրդը և մազը օգտագործում էր նաև թաղիք պատրաստելու համար:

Այս ժամանակ հատկապես կնոջ ջանքերով հանդես է գալիս նաև ձեռքի բրիչով մշակվող երկրագործությունը: Նեոլիթի վերջում Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող երկրագործության մասին արժեքավոր տվյալներ են հասել Երևանի չրջակայքում գտնվող Շենգավիթի նախնադարյան բնակավայրի պեղումներից: Այս բնակավայրի բնակարաններից մեկի ներսում եղած կավե մեծ ամանների և կրակարանի մոտ գտնվել են ցորենի, գարու տարբեր տեսակների հատիկներ և ամբողջական հասկեր, որոնք զգալի չափով նման են այժմ ևս Հայաստանում տարածված ցորենի և գարու վայրի տեսակներին: Այրված ցորեն և գարի է գտնվել նաև Նախճավանի մոտ գտնվող Քյուլ-Թափայի դամբարաններից մեկում: Շենգավիթ բնակավայրում և այլ վայրերում հայտնաբերվել են մանգաղկտրիչներ, սանդեր և պարզ աղորիքներ, որոնք օգտագործվել են հասկերը քաղելու, հասկերից հացահատիկը անջատելու, հացահատիկը մանրացնելու և կոպիտ այլուր ստանալու համար:

Առկա նյութը հաստատում է, որ Հայկական լեռնաշխարհում երկրագործությունն առաջացել է Ք. ա. վեցերորդ հազարամյակում և նրա առաջին կենտրոններն են դարձել Արարատյան դաշտը, Արածանի գետի ստորին հովիտը, Երզնկայի դաշտը, Հայոց ձորը Վասպուրականում և այլն:

Կրակի գյուտի շնորհիվ նեոլիթի սկզբում առաջանում է նաև կավագործությունը կամ խեցեգործությունը: Հայաստանում գտնվել են զգալի քանակությամբ կավե ամաններ ու գործիքներ, որոնք պատկանում են նեոլիթի զարգացման տարբեր շրջաններին: Հայտնաբերված իրերի մեջ կան մեծ ու փոքր ամաններ, կարասներ, իլիկի գլուխներ, արձանիկներ և այլն: Վաղ նեոլիթին պատկանող կավե ամանները պատրաստված են ձեռքով՝ կոպիտ և անկանոն ձևերով, ավագախառն կավից: Իսկ վերին նեոլիթին պատկանողները պատրաստված են ճաշակով, բրուտի զրգի վրա և մաքուր կավից: Սրանցից մի մասն իրենց վրա ունեն երկրաչափական, բուսական և քիչ չափով նաև կենդանական նախշեր:

Նեոլիթի շրջանում նախնադարյան մարդը սկսում է աստիճանաբար անցնել նստակեցություն և իր համար կառուցել մշտական բնակատեղիներ ու կացարաններ: Բնական է, որ նախնադարյան մարդն իր առաջին կացարանները պետք է կառուցեր քարայրների նմանությամբ: Նման կացարաններ Հայաստանում հայտնաբերվել են Օշական և Այգեչատ գյուղերի շրջակայքում: Սրանք գետնափոր, նեղ, երկար ու ցածր, առանց լուսամուտների և ծխնելույզի, պատերը խոշոր ու անտաշ քարերով շարված, կտուրը սալաքարերով ծածկված կացարաններ են: Նեոլիթի վերջի բնակատեղիներ հայտնաբերվել են Հայաստանի շատ շրջաններում: Այս ժամանակաշրջանի բնակարանները ավելի հարմար են և լայն, ունեն դռներ ու լուսամուտներ, հիմքը շարված է քարից, պատերը՝ հում աղյուսից, առաստաղը կառուցված է գերաններով, իսկ տանիքը ծեփված է ցեխով: Սովորաբար տան մեջտեղում կա մի մեծ քար, որը հենարան է հանդիսացել տանիքի ծանրությունը պահպանող կենտրոնական սյունի համար: Հայկական հետագա գյուղական տների ներսում գտնվող թոնրի փոխարեն սրանք ունեն կրակարաններ:

Նեոլիթի վերջում առաջանում է նաև մթերքների միջտոհմային պարզ փոխանակությունը: Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում միջտոհմային պարզ փոխանակության հիմնական առարկաներից մեկը դառնում է աղը, քանի որ այն գոյություն չունեցողը տոհմերի ապրած տարածքում: Որ իսկապես քարաղը շատ վաղ ժամանակներից արդյունահանվել և փոխանակության առարկա է դարձել, պարզ երևում է նրանից, որ Նախնավանի և Կողբի աղհանքերից գտնվել են քարե մուրճեր, որոնցից մի քանիսը պատկանում են ստորին նեոլիթին: Հայաստանում փոխանակության կարևոր առարկաներից են եղել նաև օրսիդիանը ու նրանից պատրաստված գործիքները: Հատկապես Արագածի օրսիդիանը իր ծխագույն, երբեմն նաև կարմրավուն գույնով տարբերվում է այլ երկրների նույնանման քարատեսակներից, որը մեղ հնարավորություն է տալիս որոշելու նրա տարածման սահմանները: Ոչ լրիվ տվյալներով՝ Արագածի օրսիդիանից պատրաստված գործիքներ են գտնվել Անդրկովկասի, Պարսկաստանի, Միջագետքի և Փոքր Ասիայի տարբեր մասերում:

**Մայրական
տոհմը**

Տնտեսության նոր բնագավառների հանդես գալը նախնադարյան հասարակության ներսում առաջ է բերում աշխատանքի բնական բաժա-

նուս տղամարդկանց և կանանց միջև: Եթե տղամարդը զբաղվում էր որսորդությունում և գործիքներ պատրաստելով, ապա կինը, բացի տան աշխատանքներից, զբաղվում էր նաև երկրագործությունում, անասնապահությունում, բրդի մշակմամբ և այլն: Մենդի մշտական և հիմնական միջոցները արտադրվում էին կնոջ աշխատանքով, որովհետև որսորդությունը կախված էր պատահական հաջողությունից հետ:

Պալեոլիթի վերջում առաջացած մայրական տոհմը լրիվ զարգացման է հասնում նեոլիթի շրջանում:

Ամեն մի տոհմ ուներ իր տարածքը, որի մեջ մտնում էին բնակատեղը, որսատեղը, արոտը, անտառաչերտը և այլն: Արտադրություն բոլոր միջոցները՝ հողը, արոտը, անտառաչերտը, անասունները, գործիքները և այլն հանդիսանում էին տոհմի սեփականությունը: Տոհմի անդամի միայն գեներն ու զարդերն էին պատկանում նրան, որ և մեծ մասամբ նրա հետ թաղվում էին գերեզմանում: Նյութական բարիքների արտադրությունը և այդ բարիքների յուրացումն ունեին համայնական բնույթ:

Տոհմի ղեկավարման գերագույն մարմինը հանդիսանում էր տոհմի խորհուրդը, որտեղ հավասար իրավունքներ ունեին տղամարդիկ ու կանայք: Տոհմի խորհուրդը վճռում էր տոհմի ներքին և արտաքին բոլոր կարևոր հարցերը, ընտրում և հրաժարեցնում էր տոհմի ավագին և ռազմական առաջնորդին:

Վերին նեոլիթում առաջանում է գույգային ամուսնությունը և գույգային ընտանիքը, որի ժամանակ ամուսնությունը թույլատրվում էր տարբեր, ոչ արյունակից տոհմերի անդամների միջև: Քանի որ մայրական իրավունքի համաձայն ծագումը հաշվվում էր միայն մոր գծով, ուստի հայրը և նրա զավակները նույն տոհմից չէին համարվում, որով և զավակներն իրավունք չունեին ժառանգել իրենց հոր ունեցած սեփական իրերը, այլ այդպիսիք ժառանգում էին մեծածի եղբայրները, քույրերը, քրոջ որդիները:

Տոտեմիզմը, որն առաջացել և զարգացել էր պալեոլիթի մարդու՝ բնություն, բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ ունեցած աշխարհայեցողությունից, իր գոյությունը պահպանել էր նաև նեոլիթի ժամանակ: Ամեն մի տոհմ ուներ իր բուսական կամ կենդանական տոտեմը և կոչվում էր նրա անունով: Տվյալ տոհմի անդամները հավատում էին, որ իրենց տոհմը առաջացել է այս կամ այն բույսից կամ կենդանուց, և որ տվյալ բույսը կամ կենդանին հանդիսանում է իրենց տոհմի գոյություն հիմքը: Ազգագրական և այլ

տվյալներ ցույց են տալիս, որ Հայաստանում ապրող տոհմերը հիմնականում ունեցել են կենդանական տոտեմներ: Ըստ այդ տվյալների՝ Հայաստանում ապրող տոհմերի տոտեմներ են հանդիսացել ցուլը, եղը, ձին, վարաղը, խոյը, այծը, շունը, գայլը, եղջերուն, արջը, արծիվը, բազեն, անգղը, աղավին, ծիծեռնակը, կոտնկը, արագիլը, սարյակը, օձը և այլն:

Այս ժամանակ մարդը, չկարողանալով բացատրել մահվան և քնի պատճառները, ինչպես և բնության մի շարք երևույթներ, սկսում է պաշտամունքի առարկա դարձնել բարի և չար «ոգիներին»: Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ապրող նախնադարյան մարդը հավատում էր, որ մարդու մեռնելուց հետո նրա «հոգին» չի մեռնում, այլ փոխադրվում է մի այլ աշխարհ: Դրա համար էլ հանգուցյալի հետ թաղված ենք տեսնում նրա ղենքերը, զարդերը, ձին, գործիքները, ամաններ, անասուններ, ուտելիք և այլն:

Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ապրող տոհմերը ունեցել են իրենց տոհմային գերեզմանատները, որտեղ թաղվել են տվյալ տոհմի անդամները: Դամբարանների պեղումներից երևում է, որ ննջեցյալները ոչ միայն թաղվել են ուղղակի հողի մեջ, այլև դիակները կարասների, քարարկղների, մեծ սալաքարերից պատրաստված տնականման դղմենների մեջ տեղավորելուց հետո: Նշված ձևերով թաղումներ են կատարված նաև դիակը այրելուց հետո:

Հայաստանում ամենից շատ տարածված և տոհմատիրական կարգերին առանձնահատուկ դամբարանները հանդիսանում են դղմենները, որոնք սկիզբ առնելով նեոլիթի ժամանակ, շարունակել են իրենց գոյությունը նաև բրոնզի և երկաթի դարերում: Սրանք երբեմն բռնում են ընդարձակ տարածություններ: Դղմենների հետ սերտորեն կապված են նաև մենհիրները և կրոմլեխները: Մենհիրները հողի մեջ ամրացված և սուր ծայրով վեր բարձրացող մեծ մենքարեր են, որոնց տակ մեծ մասամբ լինում են դիակներ, իսկ կրոմլեխները շրջանակաձև, հողի մեջ ամրացված և իրար կողքի շարված խոշոր քարեր են, որոնց կենտրոնում հաճախ լինում են դղմեններ կամ մենհիրներ: Դղմեններ, մենհիրներ և կրոմլեխներ կան Աշտարակի, էջմիածնի, Ապարանի, Աղինի, Գորիսի, Ալավերդու, Երզնկայի, Վանի և այլ շրջաններում:

2. ԷՆԵՈՒԽԹԸ ԵՎ ԲՐՈՆՁԻ ԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էնեոլիթը Հայաստանում

Հայաստանը Փոքր Ասիայի և Կովկասի հետ հանդիսացել է մետաղամշակութային հնագույն վայրերից մեկը: Այն Հայաստանում առաջացել և զարգացել է սկսած Ք. ա. չորրորդ հազարամյակում: Դրան մեծ չափով նպաստել են Գուգարքում, Սյունիքում, Վասպուրականում, Աղձնիքում, Ծոփքում և այլ նահանգներում գտնվող պղնձի, կապարի, արծաթի, երկաթի, անագի հարուստ հանքերը: Մետաղի մշակույթի իրացման առաջին ժամանակաշրջանը հանդիսանում է Էնեոլիթը, այսինքն՝ պղնձի-քարի դարը: Այն Հայկական լեռնաշխարհում տևել է Ք. ա. IV հազարամյակի կեսից մինչև III հազարամյակի վերջը:

Ինչպես շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում ապրող նախնադարյան մարդն իր մետաղյա առաջին գործիքները պատրաստել է մաքուր պղնձից: Սակայն մաքուր պղինձն իր փափկություն պատճառով երկար չի մնում գործածություն մեջ և լրիվ չի փոխարինում քարին: Այդ պատճառով էլ Էնեոլիթի ժամանակ ևս քարե գործիքները շարունակում են կարևոր դեր կատարել:

Հնագիտական պեղումների ընթացքում թե՛ Նորհրդային Հայաստանում և թե՛ Արևմտյան Հայաստանում հայտնաբերվել են մեծ թվով էնեոլիթյան բնակավայրեր: Հատկապես բացառիկ նշանակություն ունեն Ծենգավիթի, Աբովյանի, էջմիածնի շրջանի Մոխրաբլուրի, Սև բլուրի, Թագավորանիստի (Կիրովական), Վանի, Կարինի, Բագրևանդի շրջաններում գտնվող բնակատեղերը: Այդ վայրերում գտնվել են պղնձից պատրաստված կացիներ, ուրագներ, դանակներ, մանգաղներ, գնդասեղներ, ձուկ որսալու կարթեր, տեգի տերևաձև ծայրեր, ապարանջաններ, օղեր և այլն: Մեծ արժեք ունեն Ծենգավիթում և Քյուլ-թափայում գտնված պղնձե հարթ, կոթի տեսքով կացինը, իսկ Գառնիի էնեոլիթյան շերտում՝ ականջավոր կացին ձուլելու քարե կաղապարները: Այս գյուտերն ապացուցում են, որ Հայաստանում գտնված պղնձե իրերը ձուլվել ու պատրաստվել են տեղում:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ծենգավիթում հայտնաբերված տոհմային բնակարանները: Դրանք բաղկացած են 6–8 մետր տրամագիծ ունեցող կլոր կացարաններից և հարակից քառանկյունի, իրար հետ կապված շինություններից, որոնց հիմքերը շարված

են անմշակ քարով, պատերը՝ հում աղյուսով, իսկ տանիքները ծեփ-ված են ցեխով: Կլոր կացարանի կենտրոնում գտնվում է մի մեծ քար, որը հենարան է հանդիսացել կոնաձև տանիքի վերջավորությունն ամփոփող և նրա ծանրությունը պահպանող սյան համար: Այդ սյան մոտ գտնվում է պաշտամունքային կրակարանը, որն ունի իրար հետ կապված երեք բաժանմունք: Էնեոլիթյան այդպիսի բնակարաններ գտնվել են նաև այլ վայրերում:

Գործիքների հետագա կատարելագործումը նպաստում է Հայաստանի նախնադարյան հասարակության տնտեսության զարգացմանը: Հայաստանի էնեոլիթյան գրեթե բոլոր բնակավայրերում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ոչխարի, այծի, կովի, շան, ձիու, խոզի և այլ ընտանի կենդանիների ոսկորներ: Նույն բնակավայրերից հայտնաբերվել են նաև վայրի կենդանիների, հատկապես վայրի այծի, եղջերուի, արջի և ձկան ոսկորներ, որոնք ցույց են տալիս, որ էնեոլիթյան մարդը անասնապահության հետ միաժամանակ զբաղվում էր նաև որսորդությամբ ու ձկնորսությամբ:

Էնեոլիթի շրջանում գոյություն ունեցող երկրագործության մասին մեզ արժեքավոր տվյալներ են հասել Շենգավիթի պեղումներից: Կլոր կացարանների հատակին և կավե մեծ ամանների մեջ գտնվել են ցորենի, գարու տարբեր տեսակների հատիկներ ու հասկեր: Էնեոլիթյան տարբեր բնակատեղից գտնվել են նաև զգալի թվով քարե մանգաղներ, կտրիչներ, սանդեր և աղորիքներ, որոնք օգտագործվել են հասկեր քաղելու, ծեծելու միջոցով հասկերից հատիկներն անջատելու, մանրացնելու և այլուր ստանալու համար: Սակայն այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհում երկրագործությունը դեռևս գտնվում էր զարգացման ցածր աստիճանի վրա: Ցանքսը կատարվում էր բնակավայրերին մոտիկ գտնվող գետերի ափերի նեղ շերտերում, հողը մշակվում էր բրիչով:

Համեմատաբար ավելի բարձր զարգացման է հասնում կավագործությունը: Հայաստանի էնեոլիթյան բնակավայրերում գտնվել են մեծ քանակությամբ լավ փայլեցված սև և բաց կարմրավուն գույնի կավե ամաններ և ամանների բեկորներ, որոնց վրա հաճախ կան երկրաչափական, բուսական և կենդանական զարդարանքներ ու նկարներ: Հայտնաբերվել են նաև կավից պատրաստված կնոջ, եզան, ոչխարի, շան և թռչունների արձանիկներ:

Էնեոլիթին հաջորդում է բրոնզի դարը, որը Հայաստանում տևել է Ք. ա. III հազարամյակի վերջից մինչև II հազարամյակի վերջը: Մաքուր

**Բրոնզի դարը
Հայաստանում**

պղինձն իր փափկության պատճառով երկար չի մնում գործածության մեջ: Հետագայում մարդը պղնձի և անագի համաձուլվածքից ստանալով ավելի ամուր մի այլ մետաղ՝ անագապղինձը կամ բրոնզը, սկսում է իր գործիքները պատրաստել դրանից: Հայաստանում չկա մի չրջան, որտեղ գտնված չլինեն բրոնզե գործիքներ, զենքեր և զարդարանքի առարկաներ: Բրոնզե իրերի առատությունը հատկապես հայտնի են Ալավերդու, Նոյեմբերյանի, Կիրովականի (Վանաձոր), Կապանի, Սիսիանի, Գորիսի, Դիլիջանի, Վանի, Խարբերդի և այլ շրջանները: Բրոնզի դարում սկսում են լայնորեն օգտագործման ենթարկել Հայաստանի պղնձի, կապարի, ոսկու, արծաթի, անագի հանքերը: Իր ժամանակի տեխնիկայի ուսումնասիրությունն տեսակետից բացառիկ արժեք ունեն պեղումների միջոցով հայտնաբերված Մեծամորի տարբեր մետաղների և Զոզի ոսկու հանքանյութի մշակման արտադրական համալիրները: Հայաստանում հայտնաբերված բրոնզե իրերի մեջ կան կացիններ, դանակներ, մանգաղներ, եղաններ, սանձեր, ասեղներ, հերուններ և տնտեսական գործածություններից մանր առարկաներ: Շատ են հատկապես զենքերի տեսակները, որոնց մեջ կան դաշույններ, սրեր, տապարներ, նիզակի ծայրեր, գուրգեր, նետի սլաքներ և այլն: Հարուստ և բազմազան են նաև տղամարդկանց և կանանց զարդարանքի առարկաները: Սրանց մեջ հայտնաբերվել են լայն ու զարդարված գոտիներ, վարսակալներ, ապարանջաններ, մանյակներ, մատանիներ, մեղալյոններ, գինդեր, կոճակներ, շղթաներ և այլն: Հայաստանում գտնվել են նաև ոսկուց, արծաթից և սուրմայից պատրաստված թասեր, ամաններ, մանյակներ և այլ զարդարանքներ, որոնք պատկանում են բրոնզի դարին: Այս տեսակետից շատ հետաքրքիր են Կիրովականի բրոնզեդարյան դամբարաններից մեկում հայտնաբերված իրերը: Այդ իրերի մեջ կան ոսկե մի թաս, արծաթե չորս աման, ոսկուց և սարդիոնի ուլունքներից պատրաստված գեղեցիկ մի մանյակ և այլ իրեր: Ոսկյա թասը նուրբ փորագրությունը զարդարված է երեք զույգ առյուծներով: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Լճաչենի ու Տոլորսի դամբարաններից հայտնաբերված բրոնզե ու ոսկե իրերը: Գեղարվեստական բացառիկ մեծ ճաշակով են պատրաստված այստեղ հայտնաբերված ցուլի և եղջերուի արձանները:

Մետաղամշակման հանդես գալը ոչ միայն մեծ չափով հեշտացնում է աշխատանքի գործիքների պատրաստումը և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը, այլև զգալիորեն նպաստում է Հայաստանի նախնադարյան հասարակությունն տնտեսության բոլոր բնագավառների արագ զարգացմանը:

Նախ մեծ չափով զարգանում է անասնապահությունը: Ավելանում են անասունների հոտերը և դրանց գլխաքանակը, որոշ չափով բարելավվում է անասունների խնամքը և դրանց ձեռնարկ կերի հայթայթումը: Հայաստանի բրոնզեդարյան դամբարաններից հայտնաբերված բնտանի անասունների բազմաքանակ ոսկորների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ միայն ընդհանրապես ավելանում է բոլոր տեսակի անասունների գլխաքանակը, այլև շատ ավելի մեծ չափով և արագ կերպով աճում է մանր եղջերավոր անասունների՝ ոչխարների ու այծերի գլխաքանակը: Այս հանգամանքն ապացուցում է, որ այդ ժամանակ անասնապահությունը առավելապես կիսաքոչվորային, յայլաղային բնույթ ունեւորող մանր անասուններին ավելի հեշտ էր մի արոտավայրից տեղափոխել մյուսը: Անասնապահության կիսաքոչվորային բնույթը պայմանավորված էր նրանով, որ բնակավայրերին մոտիկ գտնվող արոտներն այլևս չէին բավարարում մեծ չափով ավելացած հոտերի կերային կարիքները: Պետք է կարծել, որ կային նաև քոչվոր տոհմեր և ցեղեր, որոնք իրենց անասունները արածացնելու համար ամառը բարձրանում էին լեռնային արոտները, իսկ ձմեռը իջնում տաք դաշտավայրեր:

Անասունները ջրելու, արոտավայրերը ոռոգելու համար Հայաստանի բրոնզեդարյան մարդը շատ լեռների, բայց հատկապես Արագածի և Գեղամա լեռների լանջերում կառուցում է ջրանցքների և առուների ամբողջական ցանցեր, որոնք սկիզբ էին առնում լեռնային աղբյուրներից: Այս աղբյուրների մոտ հայտնաբերվել են հսկա ձկան տեսք ունեցող քարակոթողներ՝ «վիշապներ», որոնք համարվել են ջրի պահպաններ: Ջրանցքներից մի քանիսը բերված են մինչև լեռների մոտ գտնվող բնակավայրերը: Այս հանգամանքը ապացուցում է, որ այդ ջրանցքները որոշ չափով օգտագործվել են նաև ցանքսերի ոռոգման համար:

Բրոնզի դարում զգալի չափով զարգանում է նաև երկրագործությունը: Ընդարձակվում են ցանքատարածությունները, հատկապես հացահատիկային մշակաբույսերի տարածությունները, բարելավվում են երկրագործության հետ կապված աշխատանքի գործընթացները: Պատմական Հայաստանի տարածքի դամբարաններից հայտնաբերված իրեղեն տվյալները ցույց են տալիս, որ բացի հացահատիկների՝ ցորենի, գարու և հաճարի մշակությունից, բրոնզի դարում առաջ է գալիս նաև խաղողի և պտղատու ծառերի մշակությունը: Հայաստանը համարվում է խաղողի հնագույն հայրենիքներից մեկը:

Այս ժամանակ հանդես է գալիս և ձեռքի բրիչին է փոխարինում լծկան անասունների ուժով գործող արորը: Եթե բրոնզե մանգաղը և եղանը հեշտացնում են բերքահավաքը, ապա արորը հեշտացնում, բարեկալում է հերկը և հնարավորություն է ընձեռում հերկելու ավելի ընդարձակ տարածություններ: Ձգալի չափով ավելացնելով հացահատիկների ցանքսերը, բնական է, որ Հայաստանի բրոնզե-դարյան մարդը պետք է մտածեր նաև հացահատիկների կալսման մասին, որովհետև քարե սանդերը կամ ձեռքով հասկերը փշրելու եղանակը այլևս չէր կարող բավարարել այդ պահանջը: Դրա համար էլ մարդը հնարում է անասունների ուժով քաշվող և տախտակների հակառակ կողմի փոսիկների մեջ կայծքարի կտորներ ամրացվող կամը: Նման մի ամբողջական կամ գտնվել է Ախթալայի վաղ երկաթի դարին պատկանող մի դամբարանից, որը, անկասկած, գոյություն ունեցած պետք է լիներ նաև բրոնզի դարում: Այս ենթադրությունը հաստատուն հիմք է տալիս ոչ միայն այն, որ Հայաստանի բրոնզեդարյան մի քանի դամբարաններից գտնվել են կամի փոսիկների մեջ ամրացվող կայծքարի բազմաթիվ կտորներ, այլև այն, որ Հայաստանին շատ մոտիկ գտնվող Պանլարի բրոնզեդարյան դամբարաններից մեկում նույնպես գտնվել է մի ամբողջական կամ, որը շատ նման է Ախթալայում գտնված կամին:

Բրոնզի դարում Հայաստանի նախնադարյան մարդը հնարում է նաև եզների ուժով շարժվող փոխադրական միջոցը՝ երկանիվ և քառանիվ սայլը: Բրոնզեդարյան ամբողջական սայլեր են գտնվել Լճաչենի ու Գետաչենի դամբարաններից, որոնք այժմ պահվում են Հայաստանի պատմության թանգարանում: Եթե երկրագործը սայլը օգտագործում էր քաղած հացահատիկի կամ խոտի խուրձեր և բեռներ փոխադրելու համար, ապա կիսաքոչվոր անասնապահը նրանով մի տեղից մյուսն էր փոխադրում իր ունեցած իրերը, վրանները և երեխաներին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում դամբարաններից հայտնաբերված բարձրակող, ցածրակող, կամարակապ ծածկով, թանկարժեք կարմիր փայտից պատրաստված երկանիվ, քառանիվ ամբողջական սայլերն ու կառքերը:

Անասնապահության և երկրագործության զարգացման հետևանքով Հայաստանի լեռնային շրջաններում ապրող տոհմերն ու ցեղերը առավելապես սկսում են զբաղվել անասնապահությամբ, իսկ դաշտավայրերում բնակվողները՝ երկրագործությամբ: Այս պատճառով անասնապահությունը և երկրագործությունը բաժանվում են իրարից, և տեղի է ունենում աշխատանքի առաջին խոշոր հասարակական բաժանումը:

Մեծ չափով զարգանում են ինչպես հին, նույնպես և մետաղամշակութային հետ կապված նոր առաջացած արհեստները: Ոչ միայն բարելավվում և կատարելագործվում են արհեստավորական գործիքները, այլև արտադրվում են ավելի որակյալ և լավ ձևավորված գործիքներ, զենքեր և զարդարանքներ:

Դամբարաններում և բնակավայրերում հայտնաբերված հազարավոր կավե ամաններն ու իրերը ցույց են տալիս, որ բրոնզի դարում Հայաստանում մեծ զարգացման է հասնում կավագործությունը: Հայտնաբերված իրերի մեջ կան մեծ մասամբ ձեռքով, իսկ երբեմն նաև բրուտի զրգի վրա պատրաստված, լավ թրծված, նախշերով հարուստ կաթնասներ, կճուճներ, գավեր, կժեր, գավաթներ, քամիչներ և այլն: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լենինականի (Գյումրի) շրջանում գտնված ամաններից մեկը, որի վրա ոչխարի գոհարերության տեսարան է քանդակված: Նույնքան հետաքրքիր են նաև Ալավերդու շրջանում գտնված այն ամանները, որոնց կոթերը գանազան կենդանիների՝ եղջերուի, օձի և այլ տեսք ունեն:

Հայաստանի հարուստ պղնձահանքերը սկսում են մշակման ենթարկվել մետաղամշակութային հանդես գալու հենց սկզբից: Հանքաքարը ձեռք է բերվել ոչ միայն ձեռքով հավաքելու, այլև փորելու միջոցով, որի համար օգտագործվել են սկզբում քարե, իսկ հետո՝ բրոնզե գործիքներ: Հանքաքարի ձուլումը նախ կատարվել է բաց հորերում, և ձուլվել են այն հանքաքարերը, որոնց վրա եղել է պղնձաժանգ: Լավորակ բրոնզ ստանալու համար մաքուր պղնձին խառնել են 4-ից մինչև 10 տոկոս անագ: Անագի փոխարեն երբեմն օգտագործել են նաև սուրմա և կապար: Հայաստանում հայտնաբերված բրոնզե իրերը հիմնականում պատրաստված են քարե, աղյուսե և այլ կաղապարների մեջ հալված մետաղը լցնելու, այսինքն՝ ձուլելու եղանակով: Բրոնզե տապարի, կացնի և զարդարանքի քարե կաղապարներ են հայտնաբերվել Լենինականում, Կարմիր բլուրում և Մուխաննաթ-թափայլում: Լենինականում գտնված քարե կաղապարը դուրս է եկել նախնադարյան արհեստանոցի մոտ, որտեղ եղել են մետաղամշակման մնացորդներ: Բրոնզե գործիքների և զենքերի մի մասը ունեցել են փայտե և ոսկրե կոթեր, որոնք զենքերին և գործիքներին ամրացվել են բրոնզե սեպերի միջոցով:

Հայաստանում գտնված նույնանուն գործիքները, զենքերը և զարդարանքի առարկաները ոչ թե պատրաստված են միատեսակ, նույն չափսերով, նույն կաղապարներով, այլ բազմաթիվ ձևերով և տարբեր չափսերով: Այսպես, օրինակ, բրոնզե դաշույններն իրենց ձևերով,

չափսերով և զարդարանքներով այնքան շատ և բազմազան են, որ գրեթե անհնարին է ճիշտ կերպով որոշել դրանց տեսակները: Դամբարաններից և բնակավայրերից մեծ քանակությամբ բրոնզե իրերի հայտնաբերումը և նույնանուն իրերի բազմատեսակությունը ոչ միայն ապացուցում են բրոնզի մշակույթի հարստությունը Հայաստանում և բրոնզե իրերը երկրի տարբեր շրջաններում պատրաստված լինելը, այլև մետաղամշակության և նրա հետ կապված արհեստների՝ դարբնության, զինագործության, զարդագործության բարձր զարգացումը: Հատկապես զարդարանքի առարկաների և զենքերի մի մասի վրա կան փորագրության և այլ միջոցներով կատարված երկրաչափական, բուսական և կենդանական զարդաքանդակներ, նկարներ, որոնք ցույց են տալիս բրոնզեդարյան արհեստավորների և՛ հմտությունը, և՛ գեղարվեստական զարգացած ճաշակը:

Զգալի չափով զարգանում են նաև փայտամշակությունը, քարագործությունը, կաշեգործությունը, ջուլհակագործությունը և այլն:

Հայաստանի բրոնզեդարյան մարդու կարևոր նվաճումներից մեկն էլ այն էր, որ նա Ք. ա. XV դարում հնարում է նաև ձիերով քաշվող ուղղակառքը: Ռազմակառքի հանդես գալը ոչ միայն ընդհանրապես արհեստների հետագա զարգացման, այլև մի քանի տարբեր արհեստների՝ դարբնության, զինագործության և աստղձագործության պարզ համագործակցության, տարբեր արհեստավորների համատեղ աշխատանքի հետևանք էր:

Բրոնզի դարում զգալի չափով զարգանում է նաև փոխանակությունը: Եթե առաջ փոխանակությունը տեղի էր ունենում հարևան տոհմերի միջև և այն էլ որպես բացառիկ երևույթ, ապա այժմ այն տեղի է ունենում հեռավոր տոհմերի ու ցեղերի և նույնիսկ հեռավոր երկրների միջև, և տնտեսության զարգացմանը զուգընթաց, դառնում սովորական երևույթ: Այս ժամանակ աղի հետ միասին փոխանակության կարևոր առարկաներ են դառնում նաև անասունը, բրոնզե գործիքները և զենքերը: Հնագույն այս ժամանակներից Հայաստանը փոխանակային կապեր է հաստատում ոչ միայն Անդրկովկասի, այլև Առաջավոր Ասիայի շատ երկրների հետ: Փոխանակային այդ կապի գլխավոր առարկան Հայաստանի համար հանդիսանում էր անագը, որովհետև այդ մետաղը երկրում չատ քիչ էր և չէր կարող բավականացնել զարգացող մետաղամշակության պահանջները: Պետք է ենթադրել, որ, իր հերթին, Հայաստանը Առաջավոր Ասիայի երկրներից տալիս էր անասուններ և մաքուր պղինձ:

Անասնապահության քոչվորային և կիսաքոչ-
Հայրական տոհմը վորային բնույթը, հոտերը թշնամի ցեղերից և
գիշատիչ կենդանիներից պաշտպանելու անհրա-
ժեշտությունը, երկրագործության մեջ արորի կիրառումը և ֆիզիկա-
կան ավելի մեծ ուժ պահանջող աշխատանքների հանդես գալը պա-
հանջում են տնտեսության այս բնագավառներում կնոջ աշխատանքը
փոխարինել տղամարդու աշխատանքով: Տղամարդը տնտեսության
բոլոր ճյուղերում հանդես գալով իբրև հիմնական արտադրող՝ դառ-
նում է ոչ միայն ընտանիքի սնունդ հայթայթողը, այլև հասարա-
կության կենտրոնական դեմքը:

Ձուլգային ամուսնության հիման վրա առաջանում է նահապե-
տական ընտանիքը կամ գերդաստանը: Նահապետական ընտանիքն
իր մեջ ընդգրկում էր մոտիկ արյունակիցների մի քանի սերունդներ,
որի գլուխ էր կանգնած ընտանիքի ավագը համարվող տղամարդը
կամ նահապետը: Աշխատանքը արտադրությունների բոլոր ճյուղերում
կատարվում էր ընտանիքի բոլոր անդամների մասնակցությամբ:
Նահապետական ընտանիքի առաջացումը դեռևս էապես չի խախ-
տում, չի քայքայում տոհմատիրական կարգերի հիմքերը, քանի որ
տոհմերը դեռևս իրար էին միացած արյունակցական կապերով, տոհ-
մային ընտանիքներում աշխատանքը և արտադրված նյութական
բարիքների յուրացումը ուներ ընդհանուր բնույթ, և շահագործումը
միայն պատահական երևույթ էր:

Մայրական տոհմը և մայրական իրավունքը, որոնք արդեն չէին
համապատասխանում արտադրական նոր հարաբերություններին,
բրոնզի դարի սկզբում անհրաժեշտաբար փոխարինվում են հայ-
րական տոհմով և հայրական իրավունքով, որի ժամանակ երեխա-
ների արյունակցությունը արդեն հաշվվում էր հոր գծով, և հայրը
իրավունք էր ստանում իր ժառանգությունը թողնել երեխաներին:
Այնուհետև սահմանվում է, որ տոհմի արական անդամները պետք է
մնան նույն տոհմում, իսկ իգական անդամները ամուսնանալուց
պետք է հեռանան տոհմից, իսկ նրանց երեխաները պետք է մտնեն
իրենց հոր տոհմի մեջ:

Ցեղային կազմակերպությունը, որը առաջացել էր մայրական
տոհմի ժամանակ, մեծ չափով ամրապնդվում և ուժեղանում է: Տըն-
տեսական փոխադարձ կապերի, հարևան թշնամի տոհմերից համա-
տեղ կերպով պաշտպանվելու, մարդկանց ավելի մեծ խմբերի միաց-
ման միջոցով որոշ ձեռնարկումների և աշխատանքներ կատարելու
անհրաժեշտությամբ արյունակից տոհմերը միանալով կազմում են
ցեղեր:

Ամեն մի ցեղ ուներ իր որոշակի տարածքը, որի մեջ մտնում էին բնակատեղիները, վարելահողը, անտառաչերտը, արոտները: Յեղի գերագույն մարմինը հանդիսանում էր ցեղային խորհուրդը, որը կազմված էր տոհմերի ավագներից կամ տոհմապետներից: Յեղային խորհուրդը որոշում էր ցեղի ներքին և արտաքին հարցերը, կարգավորում էր տոհմերի միջև առաջացած վեճերը, ուժեղ տոհմապետերից մեկին ընտրում էր ցեղապետ: Յեղի մեջ միավորված տոհմերը խոսում էին մի ընդհանուր լեզվով, ունեին ընդհանուր հավատալիքներ:

Արոտավայրերի, անասունների և կողոպուտի համար մղվող միջցեղային կռիվներն ու ընդհարումները այս ժամանակ մշտական և սովորական երևույթներ դառնալու պատճառով հոտերը, երկրագործական կենսամթերքները, մետաղե իրերը և այլ հարստություններ թշնամու հափշտակությունից պաշտպանելը կարևոր նշանակություն է ստանում: Այդ կապակցությունը էլ Հայաստանում ապրող ցեղերը բարձր բլուրների վրա և անառիկ վայրերում կառուցում են պարսպապատված բնակավայրեր՝ բերդաշեններ կամ քաղաքաբերդեր: Սրանց պարիսպները կառուցված են միաշար կամ երկշար, անտաշ, մինչև 4 մետր երկարություն, մեկ մետրից ավելի լայնություն ունեցող խոշոր քարերով և առանց շաղախի: Ամրոցի ներսում կա ընդարձակ տարածություն, երբեմն և բնակարանային բաժանումներ, իսկ ամրոցի շրջապատում՝ ընդարձակ գերեզմանատներ: Նման բերդ-ամրոցներ կան Արագածի լանջերին, Սևանի ավազանում, Շիրակում, Սյունիքում և այլ վայրերում:

Անասնապահության և հատկապես երկրագործության զարգացման հետևանքով, երբ փոխվում է նախնադարյան հասարակության տնտեսության հիմքը, փոխվում են նաև Հայաստանում ապրող նախնադարյան մարդու կրոնական հավատալիքները: Եթե անասնապահությանը զբաղվող ցեղերի մոտ դեռ ուժեղ կերպով շարունակվում էր կենդանիների պաշտամունքը, ապա երկրագործությանը զբաղվող ցեղերի մոտ այդ պաշտամունքը սկսում է կապվել երկրագործության հետ: Հատկապես մեծ չափով տարածվում է եզան պաշտամունքը, որը կապված էր երկրագործության հետ: Առաջանում է նաև արեգակի, հողի, ջրի, նախնիների «հոգու» պաշտամունքը:

Հայաստանի նախնադարյան հասարակության կրոնական հավատալիքների ու արվեստի ուսումնասիրման տեսակետից շատ արժեքավոր են Արագածի, Գեղամա լեռների, Սյունիքի լեռնալանջերում

գտնված ժայռապատկերները: Սրանցում պատկերված են ընտելացած շների մասնակցություններ, զինված մարդկանց կողմից վայրի ու գիշատիչ գազանների համատեղ շուրջկալով կատարվող որսորդական տեսարաններ, պաշտամունքային, ծիսական շուրջպարեր և այլն: Ուշագրավ է, որ պատկերների մեջ կան նաև եղներով լծված երկանիվ և քառանիվ սայլեր: Ուսումնասիրողները գտնում են, որ այդ ժայռապատկերներից հենք, հավանաբար, ստեղծվել են նոր քարի դարում, իսկ նորերը՝ բրոնզի դարում:

Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ապրող տոհմերը ունեցել են իրենց տոհմային գերեզմանատները: Դամբարանների պեղումներից երևում է, որ թաղումը կատարվել է ննջեցյալների կարասների, քարարկղների և մեծ սալաքարերից պատրաստված տնականման դոմենների մեջ տեղավորելով: Կիրառվել է նաև դիակիզում:

3. ԵՐԿԱԹԻ ԴԱՐԻ ՍԿԻՉԲԸ ԵՎ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Երկաթի դարի սկիզբը Հայաստանում

Երկաթի մշակությունը Արևմտյան Հայաստանում սկսել է Ք. ա. XII–XI դարերից, իսկ Արևելյան Հայաստանում՝ X դարից: Դրան մեծ չափով նպաստել են Հայկական Տավրոսում, Վասպուրականում, Չորրորդ Հայքում, Սասունում, Գողթն, Լոռի և Գեղարքունիք գավառներում գտնվող երկաթի հանքերը: Հատկապես Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում երկաթի մշակույթը արագ տարածվում է VIII–VII դարերում՝ ուրարտացիների անմիջական ազդեցություններ, որոնք երկաթի մշակությունը այդ ժամանակ հասցրել էին չգերազանցված աստիճանի:

Դերեղ գետի ձորում, Ալավերդու չրջանում, Սևանի ավազանում, Երևանի չրջակայքում, Վանում և այլ վայրերում գտնվող բնակավայրերից և դամբարաններից հայտնաբերվել են զգալի քանակությամբ երկաթե զանազան իրեր: Հայտնաբերված այդ իրերի մեջ կան բահեր, քլունգներ, կացիններ, եղաններ, մանգաղներ, դանակներ և այլ գործիքներ: Ծառ են նաև զենքերը, որոնց մեջ կան բրոնզե երախակալներով դաշույններ, սրեր, թրեր, տապարներ, նիզակի և նետի ծայրեր և այլն: Զենքերի մի մասն իր վրա ունի զարդաքանդակներ:

Մարդու համար ամենակարևոր և խիստ կարծր մետաղի՝ երկաթի մշակություն հանդես գալը մարդկային հասարակության պատմու-

Թյան մեջ խոչոր հեղաշրջող դեր է կատարում: Երկաթե գործիքները մինչ այդ չտեսնված չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը և ընդլայնում արտադրությունից բոլոր ճյուղերը:

Համեմատաբար մեծ չափով և աննախընթաց կերպով զարգանում է երկրագործությունը: Եթե երկաթե սուր կացինը հնարավորություն է տալիս անտառները կտրատելու միջոցով նշանակալիորեն ավելացնել ցանքատարածությունները, ապա երկաթե խոփով գործող արորը հեղաշրջում է առաջ բերում երկրագործությունից մեջ: Պետք է ենթադրել, որ այս ժամանակաշրջանից է սկսվում Սևանի ավազանում և Հայաստանի այլ վայրերում գտնվող անտառների ոչնչացումը՝ ցանքատարածություններ ստեղծելու համար: Բացի ցորենի, գարու և հաճարի մշակությունից, Հայաստանում սկսվում է նաև կորեկի, ոսպի, սիսեռի, յուղատու հատիկներից՝ կտավատի, քնջութի մշակությունը: Զգալի չափով զարգանում է նաև այգեգործությունն ու պտղաբուծությունը: Կարմիր բլուրի, Վանի մոտ գտնվող Թուփրակկալայի և այլ բնակավայրերի պեղումները ցույց են տալիս, որ ոչ միայն ուրարտացիները, այլև Հայաստանում ապրող մյուս ցեղերը այս ժամանակ ծանոթ են եղել գինու, գարեջրի և ձեթի պատրաստմանը:

Զգալի չափով զարգանում է նաև անասնապահությունը:

Երկաթի մշակությունից հանդես գալը նպաստում է բոլոր արհեստների՝ դարբնության, զինագործության, ոսկերչության, քարտաշության և այլ արհեստների զարգացմանը: Ավելի կատարելագործվում են շինարարության, կառուցողական գործի տեխնիկան և արվեստը: Արհեստները սկսում են ենթարկվել մասնագիտացման: Ամեն մի արհեստավոր մասնագիտանում է մի որևէ արհեստի մեջ: Արհեստների զարգացումն ու մասնագիտացումը առաջ են բերում աշխատանքի հասարակական երկրորդ խոչոր բաժանումը՝ արհեստը բաժանվում է երկրագործությունից:

Նախնադարյան կարգերի քայքայումը

Բրոնզի և երկաթի դարերում արտադրողական ուժերի զարգացումը և դրա հիման վրա առաջացած աշխատանքի հասարակական առաջին և երկրորդ բաժանումները սկսում են քայքայել նախնադարյան հասարակությունը:

Անասունների հոտերը, որոնք սկզբում պատկանում էին տոհմերին, հավանաբար բրոնզի դարի սկզբից դառնում են ընտանիքների ավագների մասնավոր սեփականությունը: Սրանց մասնավոր սեփականությունն են դառնում նաև անասունների փոխանակության մի-

Չոցով ձևոք բերված իրերը: Աշխատանքի հասարակական երկրորդ բաժանումից հետո մասնավոր սեփականություն ղարգացումը ավելի մեծ չափեր է ընդունում. անձնական ղենքերի, ղարղարանքների և անասունների հետ միասին մասնավոր սեփականություն են դառնում նաև աշխատանքի գործիքները և արտաղրված նյութական բարիքները:

Տնտեսություն բոլոր ղյուղերի ընղլայնման և աշխատանքի արտաղրողականություն բարձրացման շնորհիվ հավելյալ կենսամթերքների ստացման հնարավորությունը պայմաններ են ստեղծում շահագործման և ստրկություն առաղացման համար: Եթե առաղ պարտված և գերելարված թշնամուն սպանում կամ որղեգրում էին հղթողների տոհմում, ապա այժմ նրան ստրկացնում են: Ստրկատիրությունը, որը սղգրում միայն պատահական երևույթ էր և ուներ նահապետական բնույթ, բրոնղի դարի երկրորղ կեսիղ դառնում է տարածված երևույթ: Եթե առաղ ստրուկները նահապետական ընտանիքի կամ ընտանեկան համայնքի մասն էին կաղմում և հանղիսանում էին իրենղ տերերի օղնականները, ապա այժմ նրանք լրիվ կերպով իրավաղրկվելով, քղվում են ղեպի դաշտերը, հանքերն ու արհեստանոցները՝ տաժանակիր աշխատանք կատարելու համար: Սրանով մարղկային հասարակություն ներսում առաղանում է դասակարղային առաղին խոշոր բաժանումը. առաղ են գալիս ստրկատերեր և ստրուկներ, շահագործողներ և շահագործվողներ:

Հայաստանի տարբեր շրղաններում պեղված ղամբարանները ցույց են տալիս, որ բրոնղի դարի վերղում ստրկությունը գղալի շափով տարածված երևույթ է եղել: Մարտունու շրղանի Գետաշեն գյուղում պեղված մի ղամբարանում գտնվել է խորաքանղակ նախշեր ունեցող մի սայլ, որի վրա եղել է վարսակալով, լայն գոտիով, ղենքերով, ապարանղանով, մատանիով, ղարղարված գայիսոնով և եռաժանիով թաղված մի ղիակ: Բացի նղված, ինչպես և այլ բրոնղե ու կավե իրերիղ, այս ղամբարանում հայտնաբերվել են նաև սայլի վրա գտնվող ղիակի ոտքի տակ շարված՝ սպանված մարղկանղ կրմախքներ: Կամոյի (Գավառ) շրղանի Արծվաքար գյուղի մի ղամբարանում, որտեղ թաղված են եղել բրոնղե վարսակալով, ապարանղաններով և ղարղարանքներով պճնված մի տղամարղ ու կին՝ իրենղ երկու երեխաներով, հայտնաբերվել են գլխատված ստրուկների 5 գանղ և սրանղ կմախքները: Նույն գյուղի երկու այլ ղամբարանում գտնվել են՝ մեկում 7, մյուսում՝ 4 սպանված ստրուկների կմախքներ: Սպանված կամ առանղ սպանելու իրենղ տերերի հետ

Թաղված ստրուկների կմախքներ են հայտնաբերվել նաև Լոռու և Սյունիքի տարբեր վայրերում պեղված դամբարաններից:

Մասնավոր սեփականությունից առաջացման հետևանքով հարրատությունը աստիճանաբար սկսում է կուտակվել տոհմի ազդեցիկ անդամների, հատկապես տոհմական ավագների և ռազմական առաջնորդների ձեռքում: Կողոպուտի նպատակով մղված միջցեղային կռիվները ավելի ևս ուժեղանում են և ամրապնդում տոհմական ավագանու տնտեսական կարողությունը և նրա իշխանությունը: Տոհմի ներսում հանդես է գալիս հարուստների և աղքատների տարբերություն: Նահապետական ընտանեկան համայնքը քայքայվելով, առաջանում են ավելի փոքր ընտանիքներ, որոնք իրենց սեփական տնով և հողամասով հարձակում են սկսում տոհմատիրական վերջին սեփականությունից՝ համայնական հողատիրություն դեմ:

Նահապետական ընտանեկան համայնքի քայքայման և փոքր ընտանիքների առաջացման երևույթը Հայաստանում պարզ երևում է պեղված դամբարաններից: Եթե բրոնզի դարի առաջին կեսի դամբարաններում հաճախ նկատելի են նահապետական ընտանիքներով, մինչև 40 հոգու հասնող կոլեկտիվ թաղումներ, ապա բրոնզի դարի վերջում մեծ մասամբ նկատելի են ընտանեկան փոքր, մարդու և կնոջ զույգ թաղումներ:

Մասնավոր սեփականությունից վրա հիմնված ընտանիքի հանդես գալը, բնակչության աճող խտությունը և տարբեր տոհմերի անդամների մեջընդմեջ իրար խառնվելը, տոհմի տարածքում ստրուկների շատանալը վերացնում են տոհմային համայնական հողատիրությունը, հողի համատեղ մշակումը: Տոհմական համայնքը վերածվում է գյուղական համայնքի:

Մասնավոր սեփականությունից առաջանալուց և հատկապես մասնագիտացված արհեստը երկրագործությունից բաժանվելուց հետո մեծ զարկ է ստանում փոխանակությունը, որը հետզհետե վերածվում է ներքին և արտաքին առևտրի: Ծավալուն փոխանակության ժամանակ սկզբում փողի դեր են կատարել անասունը, աղը, կաշին, բրոնզե ապարանջանները, ապա կշռով ոսկին և արծաթը: Դրամահատումը Առաջավոր Ասիայում հանդես է եկել միայն Ք. ա. VI դարի վերջում: Հայաստանում, բացի աղից և անասուններից, հավանաբար փողի դեր են կատարել նաև բրոնզե ապարանջան-օղակները, որոնք մեծ քանակությամբ հայտնաբերվել են դամբարաններում:

Փոխադարձ տնտեսական-մշակութային կապերի և արտաքին լինամու դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտությունը սկզբում

առաջանում են ցեղային միությունները, իսկ Հետագայում սրանց ձուլումից կազմավորվում է Ժողովուրդը՝ մի միասնական տարածքով ու լեզվով: Ժողովուրդների մեծ մասի կազմավորումը տեղի է ունեցել տոհմատիրական կարգերից դեպի դասակարգային հասարակության անցման շրջանում: Այս ժամանակաշրջանում առաջ են գալիս Ժողովրդական հանրաժողովը, խորհուրդը և Ժողովրդի զորահրամանատարը, որոնք հանդիսանում էին տոհմական հասարակարգից առաջացած ռազմական դեմոկրատիայի մարմիններ: Հետագայում այս մարմինները դառնում են ժառանգական, և դրա հիման վրա առաջանում է պետությունը, որը մի գործիք է դառնում իշխող դասակարգերի ձեռքին՝ շահագործվող դասակարգերին ճնշելու և հպատակության մեջ պահելու համար:

Այսպիսով, առկա նյութի վերլուծությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ Ք. ա. XII հարյուրամյակում Հայկական լեռնաշխարհում տոհմատիրական հասարակությունը սկսում է քայքայվել. հանդես են գալիս առաջին պետական կազմավորումները:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՆԱԻՐԻԻ ՅԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ք. ա. XIV–XIII դարերում Վանա լճի շրջանում և նրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած ընդարձակ տարածություն վրա ապրում էին բազմաթիվ ցեղեր: Այս ցեղերի զբաղեցրած տարածքն ասորեստանյան արձանագրությունների մեջ անվանվում է Նաիրի երկիր:

Նաիրի երկիրը առաջին անգամ հիշատակված է Ասորեստանի Սալմանասար I (1280–1261) թագավորի մի արձանագրության մեջ, որտեղ նա հայտնում է, որ դեպի հյուսիս կատարած իր արշավանքի ժամանակ, ի թիվս այլ երկրների, նվաճել է նաև Նաիրի երկիրը: Հակառակ Սալմանասար I-ի այս հայտարարության, նրա արշավանքը առանձին հաջողություն չէր ունեցել: Դա երևում է այն բանից, որ նա հետագայում ստիպված է եղել սահմանամերձ մի քանի քաղաքներում նշանակել պահակազորք՝ Ասորեստանի տիրապետության շրջանների վրա նաիրյան ցեղերի հարձակումները կանխելու համար:

Հետևելով իր հորը՝ Թուկուլթի-Նինուրտան (1261–1239) նույնպես մի արշավանք է կատարում Նաիրի երկրի վրա, որտեղ նրա ղեմ գուրս են գալիս 40 ցեղերի առաջնորդներ կամ ցեղապետեր, որոնք ասորեստանյան արձանագրության մեջ անվանված են «թագավորներ»: Թուկուլթի-Նինուրտան հայտնում է, որ ինքը հաղթել է Նաիրի երկրի «թագավորներին», նրանց հարկի տակ է գցել, նրանց բրոնզե շղթաներով կապած բերել է Ասսուր աստծու առաջ՝ նրանցից հպատակության և հնազանդության երդում ստանալու համար:

Նաիրի երկրի մասին ավելի մանրամասն և հետաքրքիր տեղեկություններ տալիս է Թիգլաթպալասար I-ը (1115–1077), որը երեք արշավանք է կատարել այս երկրի վրա: 1114 թվականին Ստորին Ջարից՝ լեռնային նեղ արահետներով, կիրճերով և լեռնանցքներով շարժվելով դեպի հյուսիս, Թիգլաթպալասարը մեծ զորքով ու ռազ-

մակառքերով մտնում է Նաիրի երկիրը, որը նա անվանում է «ընդարձակ, հպատակություն չիմացող և անծանոթ երկիր»: Նաիրի երկրի 23 «թագավորներ», այսինքն ցեղային առաջնորդներ, անմիջապես իրենց զորքերը և ռազմակառքերը հավաքելով, շարժվում են երկիրը ներխուժած արտաքին թշնամու դեմ՝ պատերազմելու և ճակատամարտ տալու համար: Շուտով սրանց օգնության են շտապում նաև նաիրյան 60 այլ ցեղային առաջնորդներ: Ճակատամարտը տեղի է ունենում Մանազկերտի մոտ, որը սակայն վերջանում է նաիրցիների պարտությունով, որտեղ նրանք թողնում են 120 ջարդված ռազմակառք և մեծ թվով սպանվածներ:

Ի հիշատակ նաիրյան ցեղերի դեմ տարած իր հաղթանակի Թիզլաթպալասարը ճակատամարտի վայրում մի արձանագրություն է թողել: Այս արձանագրությունը Հայաստանի տարածքում մինչև այժմ հայտնաբերված ամենահին արձանագրությունն է:

Թիզլաթպալասար I-ի, ինչպես և Ասորեստանի մյուս թագավորների արչավանքները դեպի Նաիրի երկիր ունեցել են բացառապես կողոպուտի բնույթ: Ահա թե ինչպես է նկարագրում Թիզլաթպալասարը Նաիրի երկրում իր կատարած ավերումները և կողոպուտը. «Նրանց մեծամեծ քաղաքները գրավեցի, նրանց ունեցվածքը, նրանց հարստությունը վերցրի և փոխադրեցի, նրանց բնակավայրերը հրով այրեցի, ավերեցի, ավերակների բլուր և խոպան դարձրի: Նրանց բազմաթիվ ձիերի, ջորիների, երինջների երամակները և նրանց երկրագործական անթիվ ունեցվածքը վերցրի և փոխադրեցի»:

Թիզլաթպալասարը ձերբակալում է նաև ցեղային առաջնորդներին և միայն նրանց որդիներին պատանդ վերցնելուց, նրանց վրա տարեկան 1200 ձի և 2000 խոշոր եղջերավոր անասուն հարկ նշանակելուց և հավատարմություն ու հպատակություն երդում ընդունելուց հետո ազատ է արձակում:

XIII–XII դարերում նաիրյան ցեղերի տնտեսական հիմնական զբաղմունքը հանդիսանում էր անասնապահությունը. անասունները կազմում էին նրանց հիմնական հարստությունը: Այս ցեղերի մոտ երկրագործությունն ու արհեստագործությունը դեռևս համեմատաբար քիչ էին զարգացած: Այս հանգամանքը պարզ կերպով երևում է նրանից, որ Թիզլաթպալասարը Նաիրի երկրից տարած իր ավարի և նաիրյան ցեղերի վրա նշանակած հարկերի մեջ հիմնականում նշում է անասունները: Ուշագրավ է, որ թե՛ Թիզլաթպալասարի և թե՛ Ասորեստանի հետագա թագավորների՝ Նաիրի երկրից տարած ավարի մեջ միշտ հիշատակվում են ձիերի և ջորիների երամակները, որը ցույց է տալիս, թե Հայկական լեռնաշխարհի այս տարածքը վաղ

ժամանակներից հանդիսացել է ձիարուծություն կարևոր կենտրոններից մեկը:

Նշված դարերում Նաիրի երկիրը չի եղել մի միասնական առաջնորդի կողմից կառավարվող ցեղային միություն, այլ այստեղ ավելի շուտ գոյություն է ունեցել ցեղերի դաշնակցություն, որի կազմի մեջ մտել են բազմաթիվ ցեղեր, երբեմն նաև փոքր ցեղային միություններ: Նաիրյան ցեղերի դաշնակցությունը առաջին հերթին առաջացել է արտաքին ուժեղ թշնամու, այսինքն Ասորեստանի դեմ համատեղ կերպով պայքարելու անհրաժեշտությունը:

Թուկուլթի-Նինուրտայի և Թիգլաթպալասարի կողմից նաիրյան ցեղերի առաջնորդներից հպատակության և հավատարմության երդում ընդունելու, ցեղային առաջնորդների որդիներին որպես պատանդ վերցնելու փաստերն ապացուցում են, որ ցեղային առաջնորդի կամ ցեղապետի պաշտոնը նաիրյան ցեղերի մոտ արդեն ժառանգական էր:

**Նաիրի երկիրը
Ք. ա. X–IX
դարերում**

Հաջորդ երկու դարերի ընթացքում զգալի փոփոխություններ են տեղի ունենում նաիրյան ցեղերի տնտեսական–հասարակական կյանքում: Հատկապես IX դարի առաջին քառորդում Նաիրի երկրի մասին մեզ կարևոր տեղեկություններ է տալիս Ասուրնագիրպալ II (883–859) թագավորի տարեգրությունը: Այս տարեգրությունից իմանում ենք, որ Ասուրնագիրպալը 883, 882, 879 և 866 թվականներին չորս խոշոր արշավանք է կատարել Նաիրի երկրի վրա:

Իրար հաջորդող այս արշավանքների ընթացքում Ասուրնագիրպալը, դաժան կերպով ճնշելով նաիրյան ցեղերի դիմադրությունը, գրավում և ավերում է նրանց քաղաքներն ու բնակավայրերը և ծանր հարկեր նշանակում: Նա հայտնում է. «Նաիրի երկրում 250 քաղաք իրենց զորավոր պարիսպներով ավերեցի, քանդեցի, ավերված ու խուպան երկրի վերածեցի»: Անկասկած է, որ այստեղ նշված քաղաքների ճնշող մեծամասնությունը ոչ թե իրապես քաղաքներ էին, այլ ավելի շուտ բերդեր, ամրոցներ և ամրացված բնակավայրեր:

Ասուրնագիրպալը, հետևելով իր նախորդներից Սալմանասար I-ի օրինակին, սահմանամերձ քաղաքներում ոչ միայն բնակեցնում է ասորեստանյան գաղթականներ և նշանակում պահակազորք, այլև իր գրաված առանձին երկրամասերում տեղական ցեղային առաջնորդների փոխարեն նշանակում է ասորեստանցի կառավարիչներ: Այս քաղաքականությունը նպատակ ուներ ամրապնդել ասորեստանցիների տիրապետությունը Նաիրի երկրում:

Իր տարեգրությունն մեջ Աստուրնագիրապալը շատ հաճախ հիշատակում է, որ Նաիրի երկրից որպես ավար կամ որպես հարկ տարել է մեծ քանակությամբ գերիներ, ձիեր, ջորիներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, հացահատիկ, գինի, պղինձ, բրոնզ, կապար, անագ, ոսկի, արծաթ, պղնձե և բրոնզե ամաններ, կաթսաներ, գործված հագուստներ և այլն: Այս տվյալներից երևում է, որ Նաիրի երկրում, անասնապահության հետագա զարգացմանը զուգընթաց, մեծ չափով զարգանում են նաև երկրագործությունը, այգեգործությունը, մետաղամշակությունը և արհեստագործությունը:

Արտագորդական ուժերի զարգացման և նրա հետ կապված առանձին ցեղերի միջև տնտեսական-մշակութային սերտ կապերի առաջացման, ինչպես և Ասորեստանի դեմ համատեղ կերպով պայքարելու անհրաժեշտության հետևանքով XI-X դարերում Նաիրի երկրում նախկին ցեղային դաշնակցության կամ փոքր ու թույլ ցեղային միությունների փոխարեն առաջանում են մի քանի ուժեղ ցեղային միություններ, ինչպես, օրինակ՝ Ուրարտուի, Գայանիի, Խուրուչկիայի, Մուսասիրի և նախահայկական այլ ցեղային միություններ:

Ասորեստանի դեմ մղվող պատերազմներն ու միջցեղային կոնֆլիկտները ոչ միայն մեծ չափով ամրապնդում են ցեղային միության և ռազմական առաջնորդների ժառանգական իշխանությունը, այլև նրպաստում, որպեսզի հարստությունը կուտակվի վերջիններիս ձեռքում: Մասնավոր սեփականության և գույքային անհավասարության հիման վրա ցեղի ներսում առաջացած շերտավորման, ինչպես և ստրկատիրության և շահագործման առաջացման հետևանքով նաիրյան ցեղերի մոտ շատ ավելի վաղ, քան Հայկական լեռնաշխարհի մյուս ցեղերի մոտ, քայքայվում են տոհմատիրական կարգերը, և առաջանում է դասակարգային հասարակությունը, որի հիման վրա էլ կազմավորվում է պետությունը:

2. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ուրարտական պետության առաջացումը Բ. ա. IX դարի կեսին Վանա լճի շրջանում կազմավորվում և պատմության թատերաբեմ է իջնում Հայկական լեռնաշխարհի ամենահնագույն պետությունը, որը ասորեստանյան արձանագրությունների մեջ անվանվում է Ուրարտու, իսկ Աստվածաշնչում՝ Արարատի երկիր:

Ուրարտացիներն իրենց պետությունն կենտրոնական մասը անվանում էին Բիայնիլի: Նրանց մայրաքաղաքն էր այժմյան Վանը, որը կոչվում էր Տուչպա: Բիայնիլի-Բիայնա անունը պահպանվել է հետագայի Վան անվան, իսկ Տուչպա անունը՝ Տոսպ գավառի անվան մեջ, գավառ, որի կենտրոնը հանդիսանում էր Վանը: Սակայն պատմագրությունն մեջ ընդունված է այս պետությունը ասորեստանյան ձևով անվանել Ուրարտու: Ուրարտու անունը Առաջավոր Ասիայում շատ տարածված է եղել: Այդ անունը ձևափոխված կերպով Աստվածաշնչում պահպանվել է «Արարատ», իսկ Հերոդոտոսի մոտ՝ «Ալարոդ» ձևերով: Նույն այդ անվան ձևափոխություններն են հանդիսանում նաև Մասիս լեռան և Հայաստանի նահանգներից մեկին տրվող «Արարատ» և «Այրարատ» տեղանունները:

Ուրարտական պետության մասին մեզ կարևոր տեղեկություններ են տալիս ասորեստանյան և, հատկապես, ուրարտական սեպագիր արձանագրությունները: Մինչև այժմ հայտնաբերվել է ավելի քան 500 ուրարտական արձանագրություն: Մեծ թվով արձանագրություններ գտնվել են Վանում, նրա շրջակայքում և Ուրարտուի կենտրոնական մասում: Բացի այս վայրերից, ուրարտական արձանագրություններ են հայտնաբերվել նաև Մանազկերտում, Մշո դաշտում, Հասան-կալայում, Բալու քաղաքում, Մալաթիա քաղաքի մոտ, Ուրմիո լճի հարավ-արևմտյան ափի մոտ՝ Կելիշին գյուղում, Մակու քաղաքում, Սարիղամիչում, Ծիրակում, Արարատյան դաշտի տարբեր մասերում (Արմավիրում, Երևանի շրջակայքում), Էլարում, Սևանա լճի ավազանում և այլն:

Ուրարտուի պատմության ուսումնասիրությունն համար շատ կարևոր աղբյուր են հանդիսանում նաև հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված նյութերը: Այս տեսակետից շատ արժեքավոր նյութեր են ստացվել Վանի, Արմավիրի, բայց հատկապես Վանի մոտ գտնվող և Ք. ա. VII դարում ուրարտական թագավորների կենտրոնատեղին հանդիսացող ամրոցի՝ Թուփրակ-կալայի պեղումներից: Ծատ արժեքավոր ու անգնահատելի նյութեր են ստացվել նաև Երևանի մոտ գտնվող Կարմիր բլուրի և Արին բերդի պեղումներից:

Ուրարտական արձանագրությունների հայտնաբերված վայրերից և այդ արձանագրություններում հիշատակված տեղանունների ուսումնասիրությունից երևում է, որ Ուրարտական պետությունն իր հզորության ժամանակ իր սահմանների մեջ հիմնականում ընդգրկել է պատմական Հայաստանի տարածքը: Նրա բնական սահմաններն են եղել արևելքից՝ Ուրմիո լիճը, արևմուտքից՝ Եփրատ գետը, հյուսիսից՝ Փոքր Կովկասը և հարավից՝ Հայկական Տավրոսը:

Ուրարտու երկրի մասին «Ուրուատրի» ձևով առաջին անգամ հիշատակված է XIII դարի սկզբում՝ Ասորեստանի թագավոր Սալմանասար I-ի մի արձանագրության մեջ: Սալմանասարը հայտնում է, որ երեք օրում նվաճել է Ուրարտու երկիրն իր ութ երկրով և 51 բնակավայրով, և որ նա այնտեղից տարել է գերիններ ու հարուստ ավար, ինչպես և ուրարտացիների վրա մշտական հարկեր նշանակել:

Սալմանասարի այս, ինչպես և ասորեստանյան այլ արձանագրությունների վկայություններից երևում է, որ Ք. ա. XIII-X դարերում Ուրարտուն եղել է նաիրյան ցեղային դաշնակցության մեջ մտած փոքր ցեղային միություններից մեկը:

«Ուրարտու» անվանումը հին «Ուրուատրի» ձևի փոխարեն առաջին անգամ հիշատակված է Ասսուրնազիրպալ II-ի արձանագրության մեջ: Այնտեղ նշված է, որ ասորեստանցիք նվաճել են բոլոր երկրները՝ «Սուբնատ գետի (Ջերենե-սու) ակունքներից մինչև Ուրարտու երկիրը»:

Այս վկայությունից հետևում է, որ IX դարի առաջին կեսում Ասսուրնազիրպալի դեպի Նաիրի երկիրը կատարած չորս ավերիչ ու կողոպտիչ արշավանքներից Ուրարտուի տարածքը գերծ էր մնացել: Այս հանգամանքը, մի կողմից, ապահովում է ուրարտական ցեղային միության տնտեսական-հասարակական կյանքի բնական զարգացումը, մյուս կողմից, ուրարտական ռազմաստրկատիրական ավագանու համար ստեղծում է տնտեսական-քաղաքական խոշոր գերակշռություն՝ նաիրյան ցեղային դաշնակցության մեջ: Ասորեստանցիների կողմից խիստ կերպով կողոպտված և ծանր հարկերի տակ ընկած նաիրյան ցեղերը, որոնք վաղուց իրար հետ կապված էին տնտեսական, լեզվական, մշակութային և ռազմաքաղաքական կապերով, Ասորեստանի ծանր և դաժան լուծը թոթափելու, նրան համատեղ ուժերով դիմադրություն ցույց տալու համար իրենց ուժերը արագ կերպով ենթարկում են կենտրոնացման և համախմբվում Ուրարտուի շուրջը: Ուրարտական ռազմաստրկատիրական ավագանին, գլխավորելով նաիրյան ցեղերի միավորումը, Ք. ա. IX դարի առաջին կեսին ստեղծում է կենտրոնական պետություն:

Ուրարտական պետության հիմնադիրը և նրա առաջին թագավորը լինում է Արամեն (մոտ 860-843): Հետաքրքիր է նշել, որ Ուրարտական պետության հիմնադրի հիշատակը երկար ժամանակ պահպանված է եղել հայկական ժողովրդական հին ավանդությունների մեջ, որը մեզ է հասել Պատմահայր Մովսես Խորենացու շնորհիվ: Ըստ ավանդության՝ Արամեն եղել է հայերի նախահայր Հայկի սե-

րընդից. նա մի շարք փառավոր հաղթանակներ է տարել Ասորիքի, Մարաստանի և Կապադովկիայի (ըստ հին ավանդույթյան անչուչտ՝ Ասորեստանի, Մաննայի և Խեթերի) դեմ, և որ Արամեի անունով օտարները հայերին կոչել են արմեն:

Ք. ա. IX դարի կեսից Ուրարտական պետությունն արդեն իրական ուժ էր ներկայացնում Ասորեստանի՝ դեպի Հայկական լեռնաշխարհը ձեռնարկած զավթողական, կողոպտիչ արշավանքներին դիմադրություն ցույց տալու համար:

Ասսուրնազիրալին հաջորդած Սալմանասար III-ը (859–825) իր թագավորության հենց սկզբից վճռական պայքար է սկսում հյուսիսից և հյուսիս–արևմուտքից ասորեստանցիների կողոպտիչ արշավանքների ճանապարհը փակող ուրարտական նորաստեղծ պետության դեմ:

Իր թագավորության առաջին տարում Սալմանասարը, մեծ ուժերով, հարավից հարձակվում է Ուրարտուի վրա: «Նուբուշկիայից, կարողում ենք Սալմանասարի արձանագրության մեջ,– ելա և ուրարտացի Արամեի բերդաքաղաք Սուգունիային մոտեցա, քաղաքը պաշարեցի, գրավեցի, նրա զինվորներից շատերին սպանեցի, կողոպուտը տեղափոխեցի»: Այնուհետև Սալմանասարը հայտնում է, որ ուրարտացի Արամեի երկրում այրել է 14 բնակավայր և Սուգունիայից իջել է «Նաիրի ծովը», այսինքն՝ Վանա լիճը:

Սալմանասարի արձանագրությունից դժվար չէ նկատել, որ Ուրարտուի վրա Ասորեստանի ձեռնարկած առաջին արշավանքը ոչ մի հաջողություն չէր ունեցել, որովհետև ասորեստանցիք սահմանամերձ շրջանում միայն Սուգունիա բերդաքաղաքը և 14 բնակավայր գրավելուց ու ավերելուց հետո շտապ ետ էին նահանջել: Որ իսկապես Ասորեստանի առաջին արշավանքը ոչ մի արդյունք չէր տվել, երևում է նաև նրանից, որ Սալմանասարը երկու տարի անց՝ 858 թվականին ստիպված է լինում մի նոր, խոշոր արշավանք կատարել դեպի Ուրարտու:

Ասորեստանցիք այս անգամ ներխուժելով Ուրարտու, պաշարում են թագավորական քաղաք Արգասկուն: Արամեն իր գորքով քաշվում է Արգասկուի մոտ գտնվող բլուրը՝ ճակատամարտում ավելի նպաստավոր դիրք գրավելու համար: Ըստ Սալմանասարի արձանագրության՝ բլրի վրա տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ, որը վերջանում է ուրարտացիների պարտությամբ, որտեղ նրանք թողնում են 3400 սպանված և մեծ ավար: Այս ճակատամարտից հետո ասորեստանցիք գրավում, ավերում և այրում են Արգասկուն և նրա շրջակայքի բնակավայրերը:

848 թվականին Սալմանասարը մի երրորդ արչավանք է կատարում Ուրարտուի վրա, որի մասին նա իր արձանագրություն մեջ նշում է շատ համառոտ կերպով. «Ուրարտացի Արամեի քաղաքները մինչև Եփրատ գետի (Արածանիի) ակունքը ավերեցի, քանդեցի, հրով այրեցի»:

Սալմանասարը Ուրարտուի վրա կատարած իր առաջին և երկրորդ արչավանքներին շատ կարևոր նշանակություն է տվել: Դրա համար էլ այդ արչավանքների ժամանակ գրավված Սուգունիա և Արգասկու քաղաքների գրավման տեսարանները բարձրաքանդակներով քանդակել է տվել Բալավաթի իր պալատի բրոնզե դռների վրա, որոնք այժմ գտնվում են Բրիտանական թանգարանում: Այդ բարձրաքանդակները կարևոր պատմական և ազգագրական վավերագրեր են, որովհետև դրանք մեզ ոչ միայն որոշ գաղափար են տալիս ուրարտացիների մարդաբանական տիպի, այլև նրանց քաղաքների և ռազմական տեխնիկայի մասին: Բարձրաքանդակներից երևում է, որ Սուգունիան և Արգասկուն կառուցված են եղել բլուրների վրա, և հատկապես Արգասկուն ունեցել է պաշտպանական աշտարակներով բարձր ու ուժեղ պարիսպներ: Սուգունիայի գրավման տեսարանի մեջ ուրարտացի մարտիկները՝ զինված նիզակներով, նետ ու աղեղով, վահանով, սաղավարտով, դիմադրություն են ցույց տալիս քաղաքը պաշարած թշնամուն:

Ուրարտական պետություն ամրապնդումը

Չորրորդ արչավանքը Ուրարտուի դեմ, որը տեղի է ունենում 833 թվականին, Սալմանասարը անձամբ չի կատարում, այլ ուղարկում է իր սպարապետին: Այս արչավանքի ժամանակ ասորեստանցիների դեմ դուրս է գալիս Արամեին Հաջորդած Սարգուր I-ը (835–825), որին ասորեստանցիք կոչում էին Սիդուր: «Ուրարտուի կառավարող Սիդուրը,– ասված է Սալմանասարի արձանագրության մեջ,– երբ այդ մասին լուր ստացավ, իր մեծաթիվ զորքերի ուժին վստահեց և շարժվեց իմ դեմ ճակատամարտ տալու համար: Ես պատերազմեցի նրա հետ և հաղթեցի»:

Վանի միջնաբերդում հայտնաբերվել է Սարգուր I-ի ասորեստանյան լեզվով թողած և բովանդակությամբ միանման երեք արձանագրություն, որոնց մեջ նա հայտնում է, որ Ալնիուսու քաղաքից քարեր է բերել և բերդ կառուցել: Այս արձանագրությունների հիման վրա ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի (Վանի) հիմնադիրը եղել է Սարգուրը:

Նշված արձանագրությունների մեջ Սարգուրը իրեն անվանում է «Մեծ արքա, հզոր արքա, բազմությունների արքա, Նաիրի երկրների արքա, արքա, որին ոչ մի թշնամի չի հաղթել», և այլ նման տիտղոսներով: Նույն տեղում նա հայտնում է նաև, որ «բոլոր թագավորներից (այսինքն՝ բոլոր ցեղապետներից) հարկեր ստացա»:

Սարգուրին տրվող վերոհիշյալ տիտղոսները, նրա՝ մեծաթիվ զորք ունենալը և «բոլոր թագավորներից» հարկեր գանձելը ցույց են տալիս, որ IX դարի երկրորդ կեսում Ուրարտական պետությունը զգալի չափով ուժեղացել էր և իրեն ապահով էր զգում Ասորեստանի հնարավոր արշավանքներից:

Ուրարտական պետությունը ավելի մեծ չափով ուժեղանում և ամրապնդվում է Սարգուր I-ի որդու՝ Իշպուլինիի (825–810) ժամանակ:

Ք. ա. IX դարի վերջում ուրարտացիները Իշպուլինիի և նրա որդու՝ Մենուայի գլխավորությամբ Հայկական լեռնաշխարհում մի շարք նվաճումներ են կատարում և զգալի չափով ընդարձակում իրենց պետության սահմանները:

Նախ ուրարտացիները նվաճում և վերջնականապես իրենց պետությանն են միացնում Վանա և Ուրմիո լճերի միջև ընկած տարածքը, որի թվում և Մուսասիր կամ Արդիիի քաղաքը: Այս քաղաքը, որը գտնվում էր Վանա լճից դեպի հարավ-արևելք և իր բնական դիրքով շատ լավ էր պաշտպանված, դառնում է Ուրարտուի վարչական, կրոնական խոշոր կենտրոններից մեկը և Ուրարտուի ու Ասորեստանի միջև մղված պատերազմների ժամանակ պաշտպանական կարևոր դեր կատարում հարավից:

Ուրարտացիները, այստեղից հաղթականորեն շարժվելով դեպի հարավ, նվաճում են նաև Ուրմիո լճի հարավային ափին գտնվող Մաննա երկրի մի մասը, որը սահմանակից էր Ասորեստանին և գտնվում էր նրա գերիշխանության տակ: Հետաքրքիր է նշել, որ այս երկրի վրա կատարված ուղեգրական արշավանքներից մեկի ժամանակ ուրարտացիները ունեցել են 106 ուղեգրակառք, 9174 հեծելազորային և 2704 հետևակ զինվոր:

Նույն այս ժամանակ ուրարտացիները որոշ նվաճումներ են կատարում նաև դեպի հյուսիս-արևելք ընկած տարածքում. նրանք գրավում են Ալաշկերտի դաշտը և նրա շուրջը գտնվող ցեղային երկրները, իրենց պետության հյուսիսային սահմանները հասցնում գրեթե Հայկական պար: Այս արշավանքի ժամանակ ուրարտացիները դուրս են բերել 66 ուղեգրակառք, 15.760 հետևակ և մի քանի հազար հեծելազոր:

Իշպուհինին զբաղվում է նաև շինարարական աշխատանքներով: Նա Տուշպայում և շրջակայքում կառուցում է ամրոցներ, տաճարներ, սրբատեղիներ և այլն:

3. ՈՒՐԱՐՏՈՒՆ ԻԲՐԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀՁՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մենուան և Ուրարտական պետության հզորացումը

Ք. ա. IX դարի վերջից Ուրարտուն դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը և գերիշխող դիրք է ձեռք բերում մյուս պետությունների նկատմամբ: Այդ հզորությունը սկսվում է Մենուայի (810–786) թագավորության սկզբից և տևում է մոտ 70 տարի:

Ուրարտական պետության հզորացումը առաջին հերթին պայմանավորված էր Ուրարտուի ներքին սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմամբ, ինչպես նաև հզոր և աշխարհակալ Ասորեստանի ժամանակավոր թուլացմամբ: Հատկապես IX դարի վերջից սկսած ներքին կռիվների և խռովությունների հետևանքով Ասորեստանը, տնտեսապես և ռազմական տեսակետից խիստ կերպով թուլանալով, ի վիճակի չի լինում խանգարել Ուրարտուի հզորացմանը և նրա հաղթական առաջխաղացմանը:

Մենուայի թագավորության ժամանակ ուրարտացիները բոլոր ուղղություններով խոշոր նվաճումներ են կատարում և ընդարձակում իրենց պետության սահմանները:

Հետևելով իր հոր քաղաքականությանը և հավանաբար հաշվի առնելով Ասորեստանի ծանր դրությունը՝ Մենուան նախ իր ռազմական արշավանքներն ուղղում է Ասորեստանին ենթակա և նրան անմիջականորեն սահմանակից այն երկրների դեմ, որոնք գտնվում էին Ուրմիո լճից դեպի հարավ-արևելք: Ուրարտացիք հաղթական կերպով չարժվելով դեպի հարավ-արևելք, իրար հետևից նվաճում են Մաննա, Բուշտու, Պարսուա և մի շարք այլ երկրներ:

Մենուան իր հաջորդ ռազմական արշավանքներն ուղղում է դեպի հարավ-արևմուտք, Եփրատի միջին հոսանքի շրջանում գտնվող Ասորեստանի տիրապետությունների դեմ: Ուրարտացիք Տարոնը, Արածանիի հովիտը, Մոփբը գրավելուց հետո հասնում են Եփրատ գետին և անցնելով այն, նրա արևմտյան ափին նվաճում են նաև Մելիտիներ (այժմյան Մալաթիա) խեթական փոքրիկ թագավորությունը:

Ասորեստանը ոչ միայն դիմադրություն ցույց չի տալիս Ուրարտուի հաղթական առաջխաղացմանը, այլև իրար ետևից կորցնելով իրեն

ենթակա երկրամասերը, չուտով ինքը ևս կանգնում է ուրարտացիների ներխուժման վտանգի առաջ:

Մենուայի ժամանակ ուրարտացիք կարևոր նվաճումներ են կատարում նաև Հյուսիսում: Անցնելով Հայկական պարը, նրանք հասնում են Արաքս գետին և նվաճում Արարատյան դաշտի մեծ մասը, որտեղ բնակվում էին բազմաթիվ ցեղեր, որոնք իրենց հասարակական-տնտեսական կյանքի զարգացման աստիճանով դեռևս գտնվում էին տոհմատիրական կարգերից դեպի դասակարգային հասարակություն անցման շրջանում:

Ուրարտական թագավորներից Մենուան առաջինն է լինում, որը գնահատում է Արարատյան դաշտի խոշոր տնտեսական նշանակությունը Ուրարտական պետության հետագա հզորացման համար: Արարատյան դաշտում ուրարտացիների նվաճումը ամրապնդելու և հետագա նվաճումների համար հենակետ ստեղծելու նպատակով Մենուան Արաքսի աջ ափին, այժմյան Դաշբուռուն գյուղի մոտ կառուցում է վարչական մի կենտրոն, քաղաք-ամրոց, որը նրա անունով կոչվում է Մենուախինիլի: Նա այստեղ ոչ միայն նշանակում է կառավարիչ, թողնում է կայազոր և փոխադրում զգալի թվով ուրարտացի վերաբնակիչներ, այլև նրանց համար կառուցում է պալատ, տաճար, զորանոցներ և բնակարաններ:

Մենուան իր թագավորության վերջում մի քանի արչավանքներ է կատարում նաև դեպի Հյուսիս-արևմուտք՝ Դիաուելխի (ասորեստանյան Դայանի, Հայկական Տայք) երկրի կամ ցեղային միություն դեմ: Այս ցեղային միությունը, որի տարածքը տարածվում էր Ալաշկերտի հովտից մինչև Ճորոխ գետը, դեռևս Ք. ա. XIII դարից հանդիսանում էր Հայկական լեռնաշխարհի և Հարավային Անդրկովկասի ամենաուժեղ ցեղային միություններից մեկը: Ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ այս ցեղային միության կամ երկրի անունը պահպանվել է Հայկական Տայք հայտնի նահանգի անվան մեջ: Մենուան իր արչավանքների ժամանակ հաղթելով Դիաուելխի երկրի «թագավորին»՝ գրավում է նրա մայրաքաղաք Շաչիլուն և հասնում է մինչև Օլթի գետը: Դիաուելխի երկրի «թագավորը» ստիպված է լինում ընդունել Մենուայի գերիշխանությունը, նրան հարկ վճարել և վերադարձնել Ուրարտուից փախած ստրուկներին:

Մենուան իր պետության սահմաններն ընդարձակելու հետ միասին խոշոր աշխատանք է կատարում նաև երկրի տնտեսական կյանքի զարգացման ուղղությամբ: Նա Ուրարտական պետության տարբեր շրջաններում և հատկապես նրա կենտրոնական մասում կա-

ուուցում է բազմաթիվ ջրանցքներ, քաղաքներ, բերդեր, պալատներ, տաճարներ, սրբատեղիներ, տնկում խաղողի և պտղատու ծառերի այգիներ և այլն:

Մենուայի շինարարական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Վանում նրա կառուցած նշանավոր ու հռչակապ ջրանցքը, որը հետագայում հայերը վերագրել են Ասորեստանի թագուհի Շամիրամին և կոչել նրա անունով: «Շամիրամի ջրանցքը», որը այժմ էլ գործում է և ոռոգելու ու խմելու ջուր է մատակարարում Վան քաղաքին, սկիզբ է առնում ՈՆշաբ գետից 5 կիլոմետր հարավ գտնվող լեռան ստորոտից բխող աղբյուրներից: Նա ունի 70 կիլոմետր երկարություն: Ջրանցքը տեղ-տեղ անցկացված է փորված ժայռերի միջով, իսկ որոշ տեղերում՝ հսկայական քարերից կառուցված, 15–20 մետր բարձրություն ունեցող լայն և անշաղախ պատերի վրայով:

**Արգիշտի I-ի և
Սարգուր II-ի
նվաճումները**

Մենուային հաջորդում է նրա որդին՝ Արգիշտի I-ը (786–764), որի ժամանակ Ուրարտական պետությունը հասնում է իր քաղաքական և ռազմական հզորության ամենաբարձր կետին:

Արգիշտի I-ը իր թագավորության տարիների մեծ մասը անց է կացնում ռազմական արշավանքների մեջ, որոնց ամփոփումը նա տվել է Վանա ժայռի վրա փորագրված «ՈՆՈՒՍՈՆՅԱՆ» կոչվող իր նշանավոր տարեգրության մեջ: Այս տարեգրությունը, որը բաղկացած է մոտ 400 տողից, հանդիսանում է Հին Արևելքի ամենամեծ արձանագրություններից մեկը:

Արգիշտին իր գահակալության սկզբում մի խոշոր արշավանք է կատարում Դիաուելիսի երկրի վրա, որը, հավանաբար Մենուայի մահվանից հետո զուրս էր եկել Ուրարտուի գերիշխանությունից և հրաժարվել նրան հարկ վճարել: Ուրարտական զորքը, իր ճանապարհին ընկած ամրոցները, բնակավայրերը կողոպտելով ու ավերելով, հասնում է մինչև Չլզբբ լճի ափերը: Դիաուելիսի երկրի «թագավորը» ստիպված է լինում կրկին ընդունել Ուրարտուի գերիշխանությունը և որպես հարկ Արգիշտիին մատուցել 41 ման ոսկի (ավելի քան 20 կիլոգրամ), 37 ման արծաթ, մի քանի տասնյակ հազար ման պղինձ, 1000 ձի և այլն: Բացի այս, նա պարտավորվում է նաև Ուրարտուին ամեն տարի վճարել որոշ քանակությամբ ոսկի, 10.000 ման պղինձ, 300 ձի, մանր և խոշոր եղջերավոր անասուններ:

Այս տվյալներից երևում է, որ Դիաուելիսի երկրում, բացի անասնապահությունից և հատկապես ձիաբուծությունից, մեծ չափով զար-

գաջած է եղել նաև մետաղամշակութունը: Այս տվյալներից դժվար է նկատել նաև այն մեծ հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը, որ ուրարտական թագավորները հանդես են բերել այս երկրամասն իրենց գերիշխանություն տակ պահելու համար: Նրանք այստեղից առաջին հերթին աշխատել են ձեռք բերել ոսկի, արծաթ, պղինձ և այլ մետաղներ, ինչպես և ձիեր՝ իրենց բանակի համար:

Արգիշտին այս և հետագայում կատարած մի այլ արչավանքի ժամանակ նվաճում է նաև էրիախի երկիրը (Շիրակ), այժմյան Սարիղամիշի, Կարսի շրջանները և այնտեղից տանում է ավար ու գերիներ:

Հետևելով հոր քաղաքականությանը, Արգիշտին մեծ ուշադրությամբ ու եռանդով աշխատում է ամրապնդել Ուրարտուի տիրապետությունը Արարատյան դաշտում և այդ տիրապետությունը տարածել դեպի հյուսիս: Իր թագավորության երրորդ և հինգերորդ տարիներում կատարած երկու արչավանքների ընթացքում նա, անցնելով Արաքս գետը, ոչ միայն գրավում է Արարատյան դաշտի մնացած մասը, այլև, շարունակելով նվաճումները՝ հասնում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափը: Արգիշտիի տարեգրությունից, ինչպես և էլար, Լճաչեն գյուղերում և այլ վայրերում նրա թողած արձանագրություններից երևում է, որ Արաքս գետից մինչև Սևանա լիճն ընկած տարածքում ապրել են բազմաթիվ ցեղեր, որոնց տնտեսական հիմնական զբաղմունքը եղել է անասնապահությունը և երկրագործությունը:

Ք. ա. 782 թվականին Արգիշտին Երևանի հարավ-արևելյան շրջանում, Նոր Արեչ և Վարդաչեն թաղամասերի միջև գտնվող Արին բերդ կոչվող բլուրում կառուցում է մի հզոր քաղաք-ամրոց և այն անվանում էրբերունի: Այս քաղաք-ամրոցի ավերակներից հայտնաբերված արձանագրություններից մեկում Արգիշտին ազդարարում է. «Ուալդ աստծո մեծությունամբ Արգիշտի, որդի Մենուայի, այս հզոր քաղաք-ամրոցը կառուցեցի. նրա համար անուն սահմանեցի էրբերունի, Բիայնիլի երկրի հզորության և թշնամական երկրների ճնշման, հանդարտեցման համար»: Հետաքրքիր է նշել, որ այս քաղաք-ամրոցում իբրև կայազոր օգտագործելու համար Արգիշտին այստեղ է փոխադրում Ծոփբից և Ոնթբերի երկրից գերի վերցված 6600 զինվոր:

Ուսումնասիրողները իրավացի կերպով գտնում են, որ այս քաղաք-ամրոցի «էրբերունի» անունից է առաջացել Ուորհրդային Հաստանի մայրաքաղաք Երևանի անունը:

Արարատյան դաշտում, Արաքսի ձախ ափին Արգիշտի I-ը 776 թ. իր անունով կառուցում է նաև մի այլ քաղաք-ամրոց՝ Արգիշտիխի-

նիլին, որին հետագայում հայերը վերանվանում են Արմավիր: Նա այս քաղաքի շրջակայքում կառուցում է նաև ջրանցքներ, տնկում է խաղողի և մրգատու ծառերի այգիներ:

Կարճ ժամանակից հետո թե՛ էրեբունին և թե՛ Արգիշտիսինիլին դառնում են Ուրարտական պետության հյուսիսային մարզերի վարչական, ռազմական, տնտեսական ու կրոնական խոշոր կենտրոններ:

Արգիշտին իր թագավորության չորրորդ տարվա արչավանքն ուղղում է դեպի հարավ-արևմուտք: Նա այս արչավանքի ժամանակ, բացի Մոփքը և Մելիտինեի խեթական թագավորությունը վերանվաճելուց, գրավում է նաև հյուսիսային Միջագետքի և հյուսիսային Ասորիքի (Սիրիայի) մի շարք քաղաքներ ու շրջաններ: Իր այս նվաճումներով Արգիշտին ոչ միայն ձգտում էր ձեռք բերել հարուստ ավար, տիրել Ասորիքի վրայով անցնող առևտրական ճանապարհներին, կապ հաստատել Միջերկրական ծովի հարուստ քաղաքների հետ, այլև արևմուտքից թևանցել և մեկուսացնել Ասորեստանը:

Հյուսիսից և արևմուտքից իր թիկունքն ամրապնդելուց հետո Արգիշտին ռազմական արչավանքներ է սկսում, մի կողմից, Ասորեստանի, իսկ մյուս կողմից՝ նրան սահմանակից և նրա օգնությամբ Ուրարտուի դեմ ապստամբած Մաննա և Պարսուա երկրների դեմ: Իր հաղթական արչավանքների ընթացքում Արգիշտին ոչ միայն վերանվաճում է հիշյալ երկրները և հասնում Բարեղոնիայի տիրապետության սահմանների մեջ գտնվող Դիալա գետի միջին հոսանքին, այլև, մի քանի անգամ հաղթելով ասորեստանյան զորքին, ներխուժում է բուն Ասորեստան: Այս արչավանքների ժամանակ ուրարտացիք տանում են հսկայական ավար և տասնյակ հազարավոր գեղիններ:

Ք. ա. մոտ 764 թ. գահ է բարձրանում Արգիշտիի որդին՝ Սարգուր II-ը (764–735), որը, շարունակելով իր նախորդների քաղաքականությունը, բոլոր ուղղություններով նոր նվաճումներ է կատարում և ավելի ևս ընդարձակում Ուրարտական պետության տիրապետության սահմանները:

Տարբեր ժամանակներում կատարված երկու արչավանքների ընթացքում նա իր զորքի հետ անցնելով Ձլղըր լիճը՝ հյուսիս-արևմուտքից հասնում է Կոլխա կամ Կոլխա երկրին, որը ուսումնասիրողները համապատասխան են համարում այժմյան Կոլխիդային: Ուրարտացիք ճնշելով այստեղ բնակվող ցեղերի դիմադրությունը՝ ավերում, այրում են նրանց բնակավայրերը և տանում մեծ թվով գեղիններ ու անասուններ:

Հյուսիս-արևմտյան ուղղությամբ, հավանաբար նաև Արարատյան դաշտի վրայով, Սարգուր II-ը մի շարք արչավանքներ է կատարում դեպի էրիախի երկիրը, որը ըստ երևույթին նրա հայրը՝ Արգիշտին, վերջնականապես չէր կարողացել նվաճել: Գրեթե իրար հաջորդած այդ արչավանքների ընթացքում նա արևելյան բռնապետին հատուկ դաժանություններ, ճնշում է տեղական ցեղերի դիմադրությունը, նվաճում նրանց երկիրը և այն միացնում իր պետությանը: «Նույն տարում,– ասում է Սարգուրը Վանում թողած իր տարեգրության մեջ,– երրորդ անգամ արչավեցի էրիախի երկրի դեմ: Երկիրը նվաճեցի, քաղաքներն այրեցի և քանդեցի, երկիրն ավերեցի, տղամարդկանց և կանանց քչեցի դեպի Բիայինիլի երկիրը: Ես այնտեղ ամրոց կառուցեցի, երկիրը միացրի իմ երկրիս»:

Նույնպիսի դաժանություններ, հրով ու սրով Սարգուրը իր տիրապետությունը տարածում է նաև Սևանա լճի ավազանում: Նա այստեղ նվաճում և իրեն հարկատու է դարձնում լճի արևմտյան և հարավային շրջաններում գտնվող Ուելիկուխի (Կամոյի շրջանը), Արկուկինի (լճի հարավային շրջանը) և մի շարք այլ փոքր երկրներ, որտեղ ապրում էին տեղական բազմաթիվ ցեղեր:

Ուրարտացիները թե՛ էրիախի երկրից և թե՛ Սևանա լճի ավազանից տանում են մեծ թվով գերիներ ու անասուններ: Երկու արչավանքի ժամանակ նրանք միայն էրիախի երկրից տանում են 2113 ձի, 115 ուղտ, 25.089 խոչոր և 62.855 մանր եղջերավոր անասուն, 29.489 մարդ, որից 6436 պատանի և 15.553 կին: Հետաքրքիր է նշել նաև, որ ուրարտացիներն էրիախի երկրում հայտնաբերում և կողոպտում են 150 թաքստոց-պահեստներ, որոնց մեջ այդ երկրի ցեղերը թաքցրել էին իրենց հարստությունը, անասուններին, կանանց և երեխաներին, որպեսզի չընկնեն թշնամու ձեռքը:

Իր թագավորության առաջին շրջանում Սարգուր II-ը երկու խոչոր արչավանք է կատարում Ուրմիո լճից դեպի հարավ գտնվող երկրների դեմ: Նա այստեղ ոչ միայն վերանվաճում և իր պետությանն է միացնում Մաննա երկիրը, այլև հասնում և ներխուժում է Բաբելոն երկիր, այսինքն՝ Բաբելոնիա:

753 կամ 752 թվականին Սարգուրը մի խոչոր արչավանք է կատարում նաև Ասորեստան, որի մանրամասնությունները, դժբախտաբար, մեզ հայտնի չեն: Միայն հայտնի է, որ նա հաղթել է Ասորեստանի թագավոր Ասուրներարի IV-ին (753–746):

Սարգուրի առավել կարևոր արչավանքներն ուղղված էին հարավ-արևմուտք, դեպի Կուսմուխի երկիրը (Կուսմագենն), որտեղից անցնում էին Ասորիքը և Ասորեստանը Փոքր Ասիայի հետ կապող հիմնական առևտրական ճանապարհները: Հավանաբար 746 թվականին ուրարտացիները հարձակվում են Կուսմուխի երկրի վրա և մարտով գրավում նրա մի քանի քաղաքները: Կուսմուխի թագավորը ստիպված է լինում իր հպատակությունը հայտնել Սարգուր II-ին և նրան որպես հարկ մատուցում է 40 ման ոսկի, 800 ման արծաթ, 3000 հատ հազուստ, 2000 պղնձե վահան, 1500 պղնձե բաժակ և այլն:

Իր տիրապետությունն ենթարկելով Կուսմուխի երկիրը, Սարգուրը տիրում է այստեղից անցնող առևտրական ճանապարհներին և կրտսրում Ասորեստանի տնտեսական կապերը Փոքր Ասիայի հետ: Այսպիսով, Կուսմուխի նվաճումով Սարգուր II-ը արևմուտքից թևանցում և մեկուսացնում է Ասորեստանին: Բացի այդ, Սարգուրի II-ը Ուրարտուի, Մելիտինեի, Կուսմուխի, Գուրգամի (Մարաշ) և Հյուսիսային Ասորիքի մի քանի այլ մանր երկրների մասնակցությունամբ ստեղծում է հակասորեստանյան մի ռազմական դաշնակցություն:

Հատկապես Արգիշտի I-ի և նրա որդու՝ Սարգուր II-ի թագավորության առաջին շրջանում ուրարտացիների հաղթական նվաճումները հարավ-արևելքում, հարավում և հարավ-արևմուտքում, նրանց մի շարք հաղթանակները Ասորեստանի դեմ ցույց են տալիս, որ Ուրարտուն դարձել էր Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը:

Հաղթական նվաճումների հետ միասին Սարգուրը զբաղվում է նաև շինարարական աշխատանքներով: Վանում, սրա շրջակայքում, Արճեշում և այլ վայրերում նա կառուցում է բերդեր, հացահատիկի, մթերքի ու զենքի պահեստներ, տնկում խաղողի և մրգատու ծառերի այգիներ և այլն: Նա եռանդուն շինարարական գործունեություն է ծավալում նաև Արարատյան դաշտում, բայց հատկապես Արգիշտի-խինիլիում և նրա շրջակայքում, որի մասին վկայում են հայտնաբերված նրա մի շարք արձանագրությունները: Նա վերակառուցում է Արգիշտիխինիլին, կառուցում տաճարներ ու պահեստներ, անցկացնում է ջրանցք և տնկում այգիներ:

4. ՊԱՅՔԱՐ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ
ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ

**Ընդհարումները
Ասորեստանի և
Ուրարտուի միջև
և Թիգլաթպա-
լասար III-ի
արչավանքը**

Հյուսիսից, արևմուտքից և արևելքից սպառնացող ու անընդհատ ուժեղացող ուրարտական վտանգը ստիպում է Ասորեստանի իշխող դասակարգի առանձին խմբերին, որ սրանք վերջ տան ներքին կոիվներին, համախմբեն իրենց ուժերը՝ այդ վտանգի դեմ պայքարելու համար:

Ք. ա. 745 թ. Ասորեստանում գահ է բարձրանում Թիգլաթպալասար III-ը: Վարչական մի շարք բարենորոգումներով պետությունն ամրապնդելուց, ասորեստանյան բանակը վերակազմելուց և զորքի մարտունակությունը բարձրացնելուց հետո Թիգլաթպալասար III-ը ձեռնամուխ է լինում վերականգնելու Ասորեստանի երբեմնի սահմանները և վերանվաճելու նրա կորցրած երբեմնի տիրապետությունը:

Թիգլաթպալասարը առաջին հերթին աշխատում է իր ուժեղ հակառակորդին՝ Սարգուր II-ին, հարված հասցնել Հյուսիսային Ասորիքում և նրան դուրս քշել այնտեղից:

Ք. ա. 743 թ. Թիգլաթպալասարը մեծ ուժերով հարձակվում է Ուրարտուի դաշնակից Արպադ քաղաքի վրա, որը գտնվում էր Հյուսիսային Ասորիքում: Ուրարտուն և նրա մյուս դաշնակիցները՝ Կումմուխի, Մելիտինեի և Գուրգամի (Մարաշ) փոքր թագավորությունները օգնություն են չտապում Արպադի իշխանությունը: Ճակատամարտը տեղի է ունենում Արպադ քաղաքի մոտ, որը տևում է մի օր և վերջանում Ուրարտուի ու նրա դաշնակիցների ծանր պարտությունով: Սարգուր II-ը, կորցնելով իր զորքի մեծ մասը և ռազմականությանը, ստիպված է լինում փախչել իր երկիրը. ասորեստանցիք նրան հետապնդում են մինչև Եփրատ գետը: Ասորեստանցիները վերցնում են մեծ թվով գերիներ և հարուստ ավար, այդ թվում՝ Սարգուրի վրանը, որտեղ գտնվում էին նրա գանձերը, մահճակալը, շարժական գահը և այլն:

Մի կողմից՝ Ասորեստանի, իսկ մյուս կողմից՝ Ուրարտուի և նրա դաշնակիցների միջև երկրորդ ճակատամարտը տեղի է ունենում միայն ութ տարի անց՝ Ք. ա. 735 թ., Կումմուխի երկրի Կիչտան և Նալպու քաղաքների միջև: Այս անգամ ևս ասորեստանցիք գլխավին

ՂախՂախում են ուրարտական բանակը և նրա ղեմ վճռական հաղթանակ տանում: Սարգուր II-ը ստիպված է լինում կրկին փախուստի դիմել: Այս անգամ Թիգլաթպալասարը, Հետապնդելով Սարգուրին, մեծ ուժերով ներխուժում է Ուրարտու, հասնում և պաշարում է նրա մայրաքաղաք Տուշպան: Սակայն Թիգլաթպալասարը, չկարողանալով գրավել Տուշպայի միջնաբերդը, նրա ղոնների դիմաց կանգնեցնում է իր քարե արձանը, ավերում ու կողոպտում է Ուրարտուի տարածքի մի մասը և ետ վերադառնում: Միաժամանակ նա Հայկական լեռնաշխարհի հարավային մասում և Հյուսիսային Միջագետքում գտնվող մի շարք մարզեր անջատում է Ուրարտուից և միացնում Ասորեստանին:

Ուրարտական բանակի պարտությունը ծանր հետևանքներ է ունենում Ուրարտական պետությունից համար: Ուրարտուն ոչ միայն կորցնում է իր քաղաքական գերիշխանությունը Առաջավոր Ասիայում, ինչպես և իր տիրապետությունները՝ Ասորիքում, Միջագետքում և Ուրմիտ լճից դեպի հարավ գտնվող երկրներում, այլև ծայրամասային և նույնիսկ կենտրոնական մի շարք մարզեր, որոնք միայն թույլ կապերով ու զենքի ուժով էին միացած Ուրարտական պետությանը, ապստամբություն են բարձրացնում և անջատվում Ուրարտուից:

Սարգուր II-ի մահից հետո գահ է բարձրանում նրա որդին՝ Ռուսա I-ը (735-714): Գա Ուրարտական պետության համար ծանր ժամանակաշրջան էր: Ռուսան ոչ միայն պետք է վերականգներ անջատված երկրամասերը, պայքար մղեր տեղական թագավորների, ցեղապետերի ու կառավարիչների կենտրոնախույս ձգտումների դեմ, այլև պետք է վերականգներ ավերված ու կողոպտված երկրի տնտեսությունը:

Հակառակ ստեղծված ծանր դրությունից, Ռուսան կարճ ժամանակից հետո, ճնշելով տեղերում առաջացած ապստամբությունները, կրկին Ուրարտուի հետ է միավորում անջատված երկրամասերը, այդ թվում և կրոնական ու ռազմական կարևոր նշանակություն ունեցող Մուսասիրի փոքրիկ թագավորությունը: Անշուշտ, իր կողմից Ուրարտուն կրկին վերամիավորելու փաստն է ցանկացել նշել Ռուսան, երբ Մուսասիրի տաճարում գտնվող իր արձանի վրա պարծենալով արձանագրել է. «Իմ երկու ձիերով և մի մարտակառքով ձեռքովս նվաճեցի Ուրարտուի թագավորական իշխանությունը»: Ուրարտուի տիրապետությունը տեղերում ամրապնդելու և կենտրոնախույս ուժերին սանձահարելու նպատակով նա բարեփոխում ու փոքրացնում

է երկրամասային կամ մարզային կառավարչութիւնները, տեղական թագավորների, ցեղապետների կողքին կամ նրանց փոխարեն ուրարտական ավագանուց նշանակում է կառավարիչներ:

Առաջին շրջանում Ռուսան, խուսափելով Ասորեստանի Հետ ընդհարվելու առիթներ ստեղծելուց, աշխատում է իր տիրապետութիւնն ամրապնդել և ընդարձակել Սեանա լճի ավազանում: Նա այստեղ ոչ միայն վերանվաճում է լճի արևմտյան և հարավային շրջաններում գտնվող ցեղային երկրները, տեղական ցեղապետների փոխարեն նշանակում կառավարիչներ, այլև գրավում ու իր պետութեանն է միացնում նաև լճի արևելյան շրջանները: Սեանի ավազանում իր տիրապետութիւնն ամրապնդելու նպատակով Ռուսան այստեղ կառուցում է երկու քաղաք-ամրոց, որոնց մասին վկայում են Կամոյում (Գավառ) և Ծովինարի մոտ նրա թողած արձանագրութիւնները:

Հավանաբար, փոքր ինչ ավելի ուշ Ռուսա I-ը ընդարձակ նվաճումներ է կատարում նաև Ուրմիո լճի հյուսիսային ու արևելյան շրջաններում և հյուսիս-արևելքից հասնում Մաննայի պետութեան սահմաններին, որը Սարգուր II-ի պարտութիւնից Հետո դուրս էր եկել Ուրարտուի տիրապետութեան տակից և ընկել Ասորեստանի գերիշխանութեան տակ: Իր գրաված նոր շրջաններում և հատկապես այժմյան Մարանդ քաղաքի շրջանում նա կառուցում է քաղաք-ամրոցներ, հացահատիկի և գինու պահեստներ, հանում է ջրանցքներ, տնկում խաղողի այգիներ և այլն:

Ռուսան խոշոր շինարարական աշխատանքներ է կատարում նաև Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայում: Նա նախ մեծ չափով ավերված Վանի միջնաբերդից արքունիքը տեղափոխում է Զըմզըմ լեռան շրջանում գտնվող Թոփրակ-կալայի ամրոցը, ուր կառուցում է մի նոր թաղամաս, որը նրա անունով կոչվում է Ռուսախինիլի: Նոր թաղամասը խմելու և ոռոգելու ջրով ապահովելու նպատակով կառուցում է նաև արհեստական մի լիճ, հանում է ջրանցքներ ու ատուններ:

Ուրարտական պետութեան հզորութեան վերականգնումը և Մաննայի պետութեան սահմաններին ուրարտական զորքերի մոտենալը մեծ անհանգստութիւն է առաջ բերում Ասորեստանում: Ք. ա. 722 թվականին Ասորեստանում գահ բարձրացած Սարգոն II-ը (722-705) մեծ ուշադրութեամբ սկսում է հետևել Ուրարտուում տեղի ունեցող դեպքերին: Նրա հետախույզ-լրտեսները, որոնք գտնվում էին Ուրարտուի ռազմավարական նշանակութիւն ունեցող գրեթե բոլոր քաղաքներում, սկսում են նրան անընդհատ լրտեսական տեղեկա-

գրեր ուղարկել՝ Ուրարտուի ներքին կյանքում տեղի ունեցող իրա-
դարձությունների, Ռուսա I-ի և ուրարտական զորքի տեղաշարժի,
արշավանքների մասին:

**Ընդհարումը կիմ-
մերների հետ և
ներքին պայքարը** Ռուսա I-ը նոր էր վերականգնել Ուրարտուի
հզորությունը և պատրաստվում էր վճռական
պայքար սկսել Ասորեստանի դեմ, երբ ստիպված
է լինում ընդհարվել մի նոր արտաքին վտան-
գավոր թշնամու՝ կիմմերների հետ:

Կիմմերական ցեղերը քոչվոր կամ կիսաքոչվոր ցեղեր էին, որոնք
վաղ ժամանակներից բնակվում էին Սև ծովից դեպի հյուսիս ընկած
տափաստաններում: Ք. ա. VIII դարի երկրորդ կեսում կիմմերները
Կովկասի վրայով ներխուժում են Անդրկովկաս և Փոքր Ասիա:

Կիմմերները, հաստատվելով Ուրարտուի հյուսիսային սահմաննե-
րում, այստեղից սկսում են ասպատակություններ կատարել ու կո-
ղոպտել Ուրարտական պետության սահմանամերձ շրջանները: Ռու-
սան իր զորքով շարժվում է կիմմերների դեմ, որպեսզի նրանց դուրս
քշի իր պետության սահմաններից: Սակայն տեղի ունեցած ճակա-
տամարտում ուրարտական զորքը պարտություն է կրում:

Ուրարտական զորքի անհաջող արշավանքը կիմմերների դեմ և
նրա պարտությունը երկրում առաջ են բերում ապստամբություններ
ու ներքին խռովություններ: Օգտվելով կենտրոնական պետական իշ-
խանությունից ժամանակավոր թուլացումից՝ ծայրամասային մի քանի
մարզեր ապստամբություն են բարձրացնում և անջատվում Ուրար-
տուից: Նույն այս ժամանակ խռովություն են բարձրացնում նաև
կենտրոնական մարզերի մի շարք կառավարիչներ: Խռովության
գլուխ է կանգնում ուրարտական բանակի սպարապետը, որը և իր
կողմն է գրավում զորքի մի մասը:

Իրեն հավատարիմ մնացած զորքերով Ռուսան, արագ կերպով
շարժվելով խռովարարների դեմ, Վանա լճից դեպի հարավ-արև-
մուտք գտնվող Ուասի մարզում ջախջախում է խռովարարներին և
ձերբակալում խռովարարների պարագլուխ սպարապետին: Ուրար-
տուում գործող Սարգոնի գլխավոր հետախույզներից մեկը գրում է.
«Տեղեկություն Ուրարտական թագավորի մասին: Նախկինում, ինչ ես
գրեցի, հաստատվեց, նրանց մոտ տեղի ունեցավ մեծ կոտորած, այժմ
նրա երկիրը հանգստացել է: Նրա գլխավորները, ամեն մեկն իր եր-
կիրը մեկնեց: Կակկանադուն, նրա տուրտանը (սպարապետը) բռնը-
ված է: Ուրարտական թագավորը գտնվում է Ուասի երկրում»:

Հավանաբար, երբ Ռուսան ռազմական գործողություններ է սկսում Ուսսի մարզում գտնվող խոռվարարների դեմ, նրա թիկունքում՝ Տուչպայում, ուրարտական բանակի 21 այլ հրամանատարներ, որոնց թվում և գորքի երկրորդ սպարապետը, նույնպես ապստամբություն են բարձրացնում: Ռուսան Հեշտությունը և արագությունը ճնշում է նաև այս ապստամբությունը:

Չնայած կիմներների դեմ մղած ճակատամարտում ուրարտական բանակի կրած պարտությունը և երկրի ներսում առաջացած ապստամբություններին, Ռուսային Հաջողվում է պահպանել ոչ միայն իր պետության ամբողջականությունն ու միասնությունը, այլև մասամբ նրա Հզորությունը:

**Սարգոն II-ի
714 թվականի
արչավանքը**

Երկրում խախտված կարգը վերականգնելուց և պետության սահմաններն ամրապնդելուց Հետո Ռուսան եռանդուն կերպով պայքարի է պատրաստվում Ասորեստանի դեմ, որովհետև ընդհարումը Ասորեստանի Հետ գնալով անխուսափելի էր դառնում: Պատրաստվելով այդ ընդհարմանը, Ռուսան արևմուտքում և հարավ-արևելքում գտնվող մի շարք փոքր թագավորություններից հակասորեստանյան մի դաշնակցություն է կազմակերպում: Նա աշխատում է, իր գերիշխանությունը ենթարկելով Մաննայի պետությանը, նրան նույնպես ներգրավել այդ դաշնակցության մեջ:

Ք. ա. 716 թվականին Ռուսան և Ուրմիտ լճի արևելյան մասում գտնվող իր դաշնակիցները հաղթում և սպանում են ասորեստանցիների վասալ Մաննայի թագավորին և նրա փոխարեն գահ բարձրացնում նրա եղբորը: Սա հավատարմության երդում է տալիս Ռուսային և նրան զիջում 22 քաղաք-բնակավայր:

Իր գերիշխանությունը Մաննայում պահպանելու համար Սարգոնը ստիպված է լինում իրար Հետևից կատարել մի քանի պատժիչ արչավանքներ: Ք. ա. 714 թ. նա մի նոր, պատժիչ արչավանք է կազմակերպում դեպի Ուրմիտ լճի արևելյան շրջանները: Ռուսան որոշում է վճռական ճակատամարտ տալ Ասորեստանի դեմ: Դրա համար նա իր դաշնակիցների Հետ միասին գալիս բանակ է դնում Ուաուչ լեռան կիրճում, որը գտնվում էր Սարգոնի թիկունքում: Սարգոնը ասորեստանյան լրտեսներից ճիշտ ժամանակին տեղեկություն ստանալով, որ ուրարտական զորքը գտնվում է իր թիկունքում, անմիջապես փոխում է իր զորքի ընթացքը և արագ շարժվում Ռուսայի դեմ: Ասորեստանցիք զիջերը հանկարծակի հարձակվելով ուրարտական

ճամբարի վրա, ջախջախում են ուրարտական բանակը և վերջնում են մեծ թվով զերիններ: Ռուսան ստիպված է լինում փախչել և ապաստանել Տուշպայում:

Ուրարտական զորքի պարտությունից հետո Սարգոնը Ուրմիո լճի արևելյան, իսկ այնուհետև Հյուսիսային ափերով շարժվելով՝ ներխուժում է Ուրարտու: Սարգոնը Ուրարտուում իր անցած ճանապարհին ամեն ինչ ենթարկում է ավերման ու կողոպուտի: Նա քանդում, այրում ու թալանում է քաղաքները, բնակավայրերը, ոչընչացնում ջրանցքները, այգիները, ցանքսերը, բռնագրավում կամ այրում սննդամթերքների պաշարները, տանում անասունները և այլն:

Այս արշավանքի ժամանակ Սարգոնը գրավում է նաև Մուսասիր քաղաքը, որի թագավորը հավատարիմ մնալով Ռուսային, չէր ենթարկվել Սարգոնին: Ասորեստանցիք թագավորի պալատից և Մուսասիրի տաճարից կողոպտում և տանում են հսկայական քանակությամբ ոսկի, արծաթ, պղինձ, բրոնզ, երկաթ, կապար, ոսկե և արծաթե բաժակներ, դեկորատիվ վահաններ, սրեր, դաշույններ, թանկագին քարեր, փղոսկրե իրեր, հագուստներ և այլն: Նրանք Մուսասիրի տաճարից տանում են նաև Խալդ աստծու, Արուբանե աստվածուհու, Սարգուր քրմապետի, Արգիշտի I-ի և Ռուսա I-ի արձանները, որոնցից Ռուսայի արձանը քանդակված էր իր մարտակառքով:

Ասորեստանցիների կողմից Մուսասիրի տաճարի գրավման և կողոպտման տեսարանը Սարգոնը քանդակել է տվել Դուր Շարրուկինի իր պալատի դահլիճներից մեկում: Դժբախտաբար այդ քանդակի միայն նկարն է մեզ հասել, որովհետև 1842–1843 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերված բուն հուշարձանը Ֆրանսիա տեղափոխելու ժամանակ ընկղմվել է Տիգրիս գետը:

Ռուսա I-ը, լուր ստանալով Մուսասիրի տաճարի գրավման ու կողոպտման մասին, ինքնասպան է լինում:

Ռուսա I-ին հաջորդում է նրա որդին՝ Արգիշտի II-ը և Ռուսա II-ի ջանքերը Ուրարտուի հզորությունը վերականգնելու համար

Ռուսա I-ին հաջորդում է նրա որդին՝ Արգիշտի II-ը (714–685), որի թագավորությունից ժամանակաշրջանից մեզ քիչ տեղեկություններ են հասել:

Չնայած Սարգոնի 714 թ. արշավանքը ծանր հարված էր հասցրել և խիստ կերպով թուլացրել Ուրարտական պետությունը, բայց և այնպես Ասորեստանին չէր հաջողվել վերջնականապես ոչնչացնել Ուրարտական պետության ուժը և նրա ինքնուրույնությունը: Այս արշավանքից հետո էլ Ուրարտուն չարունակում էր մնալ

Ասորեստանի լուրջ հակառակորդներից մեկը: Դրանով պետք է բացատրել ոչ միայն այն, որ Սարգոնը Արգիշտիի ժամանակ ևս մեծ ուշադրություն չէ տեսնում է Ուրարտուում տեղի ունեցող դեպքերին, այլև այն, որ նա 712 թ. Ուրարտուի արևմտյան սահմաններում ամրոցներ է կառուցում և կայազորներ ղեկավարում՝ ուրարտացիների հնարավոր հարձակումները Փոքր Ասիա և Հյուսիսային Ասորիք կանխելու համար:

Արգիշտի II-ը, հաշվի առնելով Ասորեստանի հետզհետե աճող հզորությունը, խուսափում է նրա հետ ընդհարվելուց և առավելագույնս զբաղվում է խաղաղ շինարարական աշխատանքներով: Նա այժմյան Արճնչ քաղաքի շրջակայքում կառուցում է իր անունով Արգիշտիխինիլի քաղաքը (հավանաբար հենց Արճնչ քաղաքը), մի արհեստական լիճ, հանում է ջրանցք, տնկում խաղողի և պտղատու ծառերի այգիներ և այլն:

681 թվականին Ասորեստանի թագավոր Սինախերիբը (705–681) տաճարում աղոթելու ժամանակ սպանվում է իր որդիների՝ Ադրամելեքի և Սարասարի կողմից, որոնք, ըստ Աստվածաշնչի վկայության, փախչում են Արարատի երկիրը, այսինքն՝ Ուրարտու:

Հայրասպան արքայազնների ապաստանելը Ուրարտուում և Ասորեստանում գահ բարձրացած նրանց եղբոր՝ Ասարհադդոնի (681–669) կողմից դեպի Ուրարտու ոչ մի արշավանք չձեռնարկելը ինքնին ապացուցում են, որ Արգիշտիի գահակալություն վերջում Ուրարտական պետությունը որոշ չափով ամրապնդվել էր:

Ուրարտական պետությունը զգալի չափով կրկին ուժեղանում է Արգիշտիի որդու՝ Ռուսա II-ի (685–645) ժամանակ:

Կենտրոնախույս ձգտումներ հանդես բերող ուրարտական ավագանու՝ բանակում ունեցած դիրքերը խախտելու և Ասորեստանի դեմ հակակշիռ ուժ ստեղծելու նպատակով Ռուսա II-ը լեզու է գտնում և դաշինք կնքում իր պետության Հյուսիսային սահմանների մոտ հաստատված կիմմերների հետ: Նա իր բանակում սկսում է զգալի չափով օգտագործել կիմմերներին՝ որպես դաշնակիցների կամ վարձկան զինվորների:

Հավանաբար 672 թ. Ռուսա II-ը կիմմերների հետ դաշնակցած՝ մի խոշոր արշավանք է կատարում դեպի արևմուտք: Այս արշավանքի ժամանակ նա զբաղվում ու կողոպտում է Փոքր Ասիայի արևելյան մասում գտնվող Մուշկինին (այսինքն՝ մուշկերի երկիրը, Փոյուզիան), Նաթթին (խեթերի երկիրը) և Նախտուն:

Ռուսա II-ը պետություն հյուսիսային շրջաններում, հատկապես Արարատյան դաշտում, կատարում է խոշոր շինարարական աշխատանքներ:

Մակու քաղաքի շրջանում հայտնաբերված մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ նա այստեղ կառուցել է մի քաղաք և այն իր անունով կոչել «Փոքր քաղաք Ռուսայի» կամ «Ռուսայի քաղաքիկ»: Հետաքրքիր է նշել, որ Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերված իրերի մեջ կա նաև բրոնզե մի բաժակ, որի վրա արձանագրված է. «Պատկանում է Ռուսայի փոքր քաղաքին»:

Զվարթնոցի տաճարի ավերակներում հայտնաբերված արձանագրության մեջ Ռուսա II-ը հայտնում է, որ նա Կուտուրլինի դաշտում (հավանաբար Հրազդանի հովտում) տնկել է խաղողի այգիներ և պտղատու ծառեր, կատարել ցանքս, Իլդարունի գետից (Հրազդան) անցկացրել է ջրանցք և այլն: Գրեթե բոլոր ուսումնասիրողները գտնում են, որ Ռուսա II-ի՝ Հրազդան գետից անցկացրած ջրանցքը՝ Երևանի մոտ, Կարմիր բլուրի դիմաց գտնվող այժմյան Դալմայի ջրանցքն է: Այս ջրանցքը, որը այժմ էլ գործում է, իր ժայռափոր թունելով ուրարտական նշանավոր կառուցումներից մեկն է հանդիսանում:

Ռուսայի շինարարական գործունեության մեջ ամենանշանավորը Երևանի մոտ գտնվող Թեյշեբախի քաղաքի (Կարմիր բլուր) և նրա միջնաբերդի կառուցումն է: Այս քաղաքը, որի ավերակները սփռված են մոտ 40 հեկտար տարածության վրա, VII դարի առաջին կեսում դառնում է Հարավային Անդրկովկասում Ուրարտական պետության ռազմավարչական և պետական տնտեսության խոշոր կենտրոններից մեկը:

5. ՈՒՐԱՐՏՈՒԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերին Երկրագործու- ղեռուս վաղուց էին հայտնի երկրագործությունն թյունը և անաս- ու այգեգործությունը, սակայն դրանք առավել նապահությունը մեծ չափով զարգանում և դաշտավայրերի ու լեռնահովիտների բնակչության տնտեսական Հիմնական զբաղմունքն են դառնում ուրարտական դարաշրջանում:

Երկրագործության և այգեգործության զարգացումը եթե, մի կողմից, պայմանավորված էր գյուղատնտեսության մեջ երկաթե գործիքների մուտքով, ապա մյուս կողմից՝ պայմանավորված էր արհես-

տական ոռոգման ցանցի ստեղծումով: Թուփրակ-կալայում և այլ վայրերում հայտնաբերվել են ծանր արորի երկաթե թիականման խոփեր, բահեր, մանգաղներ, եղաններ, կացիններ: Հատկապես երկաթե խոփ ունեցող ծանր արորի կիրառումը երկրագործության մեջ ոչ միայն զգալի չափով բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, այլև հնարավորություն է տալիս ընդարձակելու ցանքսերի տարածությունը, բարելավելու հողի մշակությունը:

Ուրարտական պետության ներսում բնակչության աճը և նվաճված երկրներից հարյուր-հազարավոր ստրուկների փոխադրումը դեպի պետության կենտրոնական շրջանները անհրաժեշտաբար պահանջում էին մեծ չափերով ընդարձակել մշակվող հողային տարածությունները: Սակայն աշխարհագրական տեսակետից լեռնային անհարթ մակերևույթ և չոր կլիմա ունեցող Հայկական լեռնաշխարհում մշակվող հողային տարածությունները հնարավոր չէր ընդարձակել առանց արհեստական ոռոգման: Արևելքի երկրներում, որի թվում և Հայկական լեռնաշխարհում երկրագործության համար միշտ էլ շատ կենսական նշանակություն է ունեցել և գյուղատնտեսության հիմքն է կազմել արհեստական ոռոգումը: Ինչպես Արևելքի մյուս երկրներում, նույնպես և Ուրարտում արհեստական ոռոգման գործը իր ձևերն է վերցնում պետությունը: Ուրարտական գրեթե բոլոր թագավորները եռանդուն գործունեություն են ծավալում ջրանցքաշինության ասպարեզում: Նրանք կառուցում են ջրանցքներ, արհեստական լճեր, ջրամբարներ ու առուներ: Բացի Շամիրամի կամ Մենուայի նշանավոր ջրանցքից, ուրարտական թագավորները արհեստական ոռոգման ընդարձակ ու ճյուղավորված ցանցեր են ստեղծում Վանա լճի ավազանում, Արարատյան դաշտում, Արածանիի հովտում, Ուրմիո լճի հյուսիսային շրջանում և այլն:

Արձանագրություններից և հնագիտական տվյալներից երևում է, որ ուրարտացիները մշակում էին գարի, ցորեն, կորեկ, հաճար, սիսեռ, ոսպ, քնջութ և այլն: Սարգոն II-ը 714 թվականի արչավանքի կապակցությամբ թողած իր արձանագրության մեջ հաճախ է հիշատակում Ուրարտուի տարբեր երկրամասերում ասորեստանցիների կողմից կողոպտված կամ ոչնչացված ցորենի ու գարու անհաշիվ լիքը պահեստների ու ամբարների մասին: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են գարու, ցորենի, կորեկի ու սիսեռի ածխացած մեծաքանակ մնացորդներ, կորեկից պատրաստված հաց, ոսպի հատիկներ, աղորիքներ, սանդեր: Ուրարտացիները մեծ չափով զբաղվում էին նաև խաղողի և պտղատու ծառերի, այգիների մշա-

կուլթյամբ: Ուրարտական թագավորներն իրենց թողած արձանագրությունների մեջ շատ հաճախ են հիշատակում Վանա լճի ավազանում, Արարատյան դաշտում խաղողի ու պտղատու ծառերի այգիներ տնկելու մասին: Ուշագրավ է, որ ուրարտացիները պտղատու ծառերն անվանել են «գարի» կամ «զառի», որը համապատասխանում է հայերեն «ծառ» բառին:

Ուրարտացիները վաղուց ծանոթ էին նաև գինի, գարեջուր և ձեթ պատրաստելու արհեստին: Բացի վերևում նշված նյութերից, Կարմիր բլուրում հայտնաբերվել են նաև ձիթահանքի մոտ դիզված քնջութի քուսպի մի մեծ կույտ, խաղողի ու նույն կորիզներ, գարեջրի հումքի մնացուկներ:

Ուրարտական պետության հատկապես նախալեոնային ու լեոնային շրջաններում զարգացած էր նաև անասնապահությունը: Ուրարտացիները և Հայկական լեոնաշխարհի մյուս ցեղերը պահում էին խոշոր եղջերավոր անասուններ, ոչխար, այծ, ձի, ջորի, էշ, խոզ և ուղտ: Ուրարտական թագավորներն իրենց կատարած արչականքների կապակցությամբ գրեթե միշտ հիշատակում են Հայկական լեոնաշխարհի տարբեր երկրամասերից հազարավոր, երբեմն նաև տասնյակ ու հարյուր հազարավոր անասուններ բռնագրավելու և դեպի Բիայնիլի տանելու մասին:

Ուրմիտ լճի հյուսիս-արևելյան շրջաններում, Դիաուեխի երկրում, էրիախի երկրում և այլ վայրերում զարգացած է եղել նաև ձիարուծությունը: Ուրարտացիները ձին հիմնականում օգտագործել են ռազմական գործում, քանի որ ռազմակառքերը և հեծելազորը շատ կարևոր դեր են կատարել ուրարտական բանակում: Երկրագործության մեջ, ինչպես և սովորական կառքերի ու սայլերի համար որպես քաշող ուժ գրեթե բացառապես օգտագործվել են եզները:

Ուրարտացիները բարձր զարգացման էին հասցրել մետաղների մշակությունը: Թուփրակ-կալայում և Կարմիր բլուրում հայտնաբերվել են մեծ քանակությամբ երկաթե ու բրոնզե և փոքր քանակությամբ նաև ոսկե ու արծաթե իրեր: Հայտնաբերված այդ իրերի մեջ կան գյուղատնտեսական գործիքներ, կացիներ, մուրճեր, ամաններ, կանթեղներ, սրեր, դաշույններ, վահաններ, սաղավարտներ, կապարճներ, նետի սլաքներ, արձաններ, գոտիներ, ապարանջաններ, մանյակներ և այլն:

Ք. ա. VIII–VII դարերում Ուրարտուում մետաղագործության մեջ գերակշռող է եղել երկաթի մշակությունը: Ուրարտացիները աշխա-

տանքային գործիքներ ու զենքեր պատրաստելու համար հիմնականում օգտագործել են երկաթը, իսկ ամաններ, զարդարանքի իրեր ու արձաններ պատրաստելու համար՝ բրոնզն ու պղինձը:

Հայտնաբերված մետաղե իրերի մի մասը պատրաստված է տեխնիկական ու գեղարվեստական մեծ հմտությամբ և վարպետությամբ: Ուրարտացիները հիանալի տիրապետում էին բրոնզե իրերը ոսկու բարակ շերտով պարուրելու կամ ոսկեզօծելու, քարը մետաղի հետ զուգակցելու տեխնիկային: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուրարտական երկու արձանիկ, որոնցից առաջինը գտնվում է Բեդլիսի թանգարանում, իսկ երկրորդը՝ Լենինգրադի (Ս. Պետերբուրգ) էրմիտաժում: Առաջին արձանիկի իրանը պատրաստված է բրոնզից՝ պարուրված ոսկու բարակ շերտով, իսկ գլուխը՝ սպիտակ քարից: Երկրորդ արձանիկը գահի մաս է կազմել և ներկայացնում է մարդու գլխով թևավոր առյուծ. նրա իրանն ու գլուխը պատրաստված են բրոնզից, դեմքը՝ սպիտակ քարից, իսկ աչքերն ու հոնքերը դրվագազարդված են: Այս արձանիկը ևս ոսկեզօծված է եղել, որի հետքերը դեռ տեղ-տեղ մնում են:

Ուրարտական մետաղագործական մշակույթի և արվեստի տեսակետից խոշոր արժեք ունեն փորագրելու, քանդակելու ու քանդակադրոշմելու եղանակներով հիանալի կերպով գեղազարդված վահանները, սաղավարտները, կապարճները, գոտիները, ամանները և այլն: Կարմիր բլուրում գտնված Արգիշտի I-ի բրոնզե սաղավարտը հոյակապ կերպով գեղազարդված է սրբազան ծառերի, ծառերի երկու կողմերը կանգնած աստվածների և հեծյալ զինվորների քանդակներով: Ռազմակառքերի ու հեծյալների նույնպիսի հիանալի քանդակներով են զարդարված նաև նույն տեղում գտնված բրոնզե կապարճը, Սարգուր II-ի բրոնզե սաղավարտը:

Ոսկե իրերի մեջ իր բարձր գեղարվեստով առանձնահատուկ տեղ է գրավում Թոփրակ-կալայում հայտնաբերված մեղալյոնը, որի վրա քանդակված են գահի վրա բազմած ուրարտական աստվածուհիներից մեկը և նրա առաջ կանգնած բազկատարած մի թագուհի: Այս մեղալյոնի վրա պատկերված նույն աստվածուհու բրոնզե արձանիկը գտնվել է Վանից դեպի Հյուսիս գտնվող Դարաբեյ բերդի ավերակներում և այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում:

Մետաղե և հատկապես երկաթե գործիքների հանդես գալը մեծ չափով նպաստում է նաև քարի մշակույթյանը և նրա հետ կապված արհեստների զարգացմանը: Երկաթե գործիքները բարելավում ու

հեշտացնում են քարի տաշումը, հնարավորություն են ընձեռում անցնելու ավելի կարծր քարատեսակների մշակությունը:

Ուրարտացիների տնտեսական կյանքում ու կենցաղում քարը կարևոր դեր է կատարել: Բացի շինարարությունից, ուրարտացիները քարը լայնորեն օգտագործել են տնային գործածությունների, իրեր, զարդարանքի առարկաներ, արձաններ, կնիքներ պատրաստելու և սեպագիր արձանագրություններ փորագրելու համար: Թուփրակ-կալայում, Կարմիր բլուրում, Արին բերդում և այլ վայրերում հայտնաբերվել են մեծ քանակությամբ քարե աղորիքներ, սանդեր, տնային գործածությունների մանր իրեր, արձաններ, փորագրության միջոցով զանազան կենդանիների, թռչունների նկարներով զեղազարդված կրնիքներ, կիսաթանկագին քարերից՝ ազատից ու սարդիոնից պատրաստված և հիանալի կերպով հղկված հուլունքներ:

Ուրարտացիները զարգացման նոր աստիճանի են հասցնում կավագործությունը: Ուրարտական պետության տարբեր վայրերում կատարված հնագիտական պեղումներից մեզ են հասել մաքուր կավից պատրաստված, լավ թրծված, սև, կարմիր և դեղնավուն գույնի մեծ քանակությամբ կաթսաներ, կճուճներ, սափորներ, կժեր, գավաթներ, ամաններ, արձանագրություններ գրելու աղյուսներ և այլն: Մեզ հասած իրերը հիմնականում պատրաստված են բրուտի զրզի վրա և բարձր որակով: Սրանց մեջ կան սև փայլարկով, կարմիր ջնարակով և կարմրափայլ գլազուրով գունավորված, հարուստ նախշերով, կենդանիների և այլ նկարներով զեղազարդված բազմաթիվ իրեր:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուրարտացի բրուտագործ վարպետների պատրաստած և Ուրարտական պետության սահմաններում լայնորեն տարածված կարասները, որոնք երբեմն ունեն մինչև 600 լիտր ջրատարողություն: Կարասների մի մասի վրա կան հիանալի զարդանկարներ և տարողության չափը նշող սեպագիր նշաններ: Ուրարտացիները կարասներն օգտագործել են ոչ միայն գինի, գարեջուր և հեղուկներ, այլև հացահատիկներ, զանազան մթերքներ ու իրեր պահելու համար:

Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերին դեռևս վաղուց էին հայտնի ոչխարի բրդից և այծի մազից իլիկով մանված թելերից հագուստներ ու գործվածքներ հյուսելը: Չնայած անասնապահությունը զարգացմանը, այնուամենայնիվ, կենդանիների բուրդն ու մազը չէին կարող բավարարել անընդհատ աճող բնակչության հագուստի և գործվածքների նկատմամբ ունեցած պահանջը: Դրա համար էլ

Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերը սկսում են մշակել և օգտագործել նաև վուչի-կտավատի թելերը՝ գործվածքներ հյուսելու, պարաններ, թոկեր պատրաստելու համար: Սակայն մանածագործությունը, որպես արհեստագործությունն առանձին ճյուղ, առավել չափով զարգանում է ուրարտական դարաշրջանում: Ուրարտուում մանածագործության զարգացած լինելու մասին են վկայում թե՛ սեպագիր արձանագրությունները և թե՛ Հնագիտական նյութերը: Սարգոն II-ը 714 թ. արչավանքի կապակցությունը թողած իր արձանագրության մեջ հայտնում է, որ Ուրարտուից և Մուսասիրից, ի թիվս այլ թանկագին իրերի, տարել է նաև բազմաթիվ գույնզգույն գործվածքներ, բրդե ու վուչե զգեստներ: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ գտնվել են թավշանման խավոտ, ամուր, հաստ և նուրբ կերպով հյուսված բրդե գործվածքի մնացորդներ, բրդի և վուչի թելերից գործված ուղեկարպետ, նուրբ կերպով մանված բրդե թելի կծիկներ, վուչի կամ քնջութի սուզագնդիկներ և այլն:

Կարմիր բլուրի պեղումներից մեզ են հասել նաև ուրարտական շրջանում փայտից պատրաստված զգալի թվով իրեր: Տարբեր ժամանակներում այստեղ հայտնաբերվել են կճուճանման փայտե մի աման, եղջյուրով ներզարդված տնային կահույքի մասեր, ոչխարի գլուխ ներկայացնող բռնակ, հաստ տախտակներից պատրաստված դռան մնացորդներ, փորագրված փայտե առարկաների բեկորներ, փայտե շերեփ, գդալ, կաշվով ծածկված փայտե կապարճ և այլն: Նշված իրերը և հատկապես կճուճանման ամանը, որն իր վրա բացահայտ կերպով կրում է հյուսնի ճախարակահաստոցի-չարխի միջոցով պատրաստված լինելու հետքերը, ցույց են տալիս, որ Ուրարտուում զգալի չափով զարգացած էին նաև փայտի մշակությունը և նրա հետ կապված արհեստները: Ուրարտական բանակում զանգվածաբար գործածվող ռազմակառքերը, ինչպես և սովորական կառքերն ու սայլերը, որոնց հիմնական մասերը պատրաստված էին փայտից, նույնպես ապացուցում են, որ փայտամշակության հետ կապված արհեստները զգալի զարգացման էին հասել Ուրարտուում:

Ուրարտուի ներքին ապրանքափոխանակության մասին մեզ գրավոր ուղղակի վկայություններ չեն հասել: Սակայն Հնագիտական տվյալները և գրավոր անուղղակի վկայությունները ցույց են տալիս, որ Ուրարտուում որոշ չափով զարգացած է եղել ապրանքափոխանակությունը, որը պայմանավորված էր մասնագիտացված արհեստը երկրագործությունից անջատվելու հետ:

Ապրանքափոխանակությունը

Թոփրակ-կալայում, Կարմիր բլուրում և Արին բերդում գտնվել են ոսկուց, արծաթից, երկաթից, պղնձից, բրոնզից, անագից, արճճից, սուրճայից, ագատից, սարդիոնից, լեռնային բյուրեղներից պատրաստված բազմաթիվ իրեր: Սակայն հայտնի է, որ նշված վայրերի անմիջական շրջապատում վերոհիշյալ մետաղների և կիսաթանկագին քարերի հանքավայրեր գոյություն չունեն: Այստեղից հետևում է, որ այդ բերդերում հայտնաբերված նման իրերի մեծ մասը, եթե ոչ պատրաստի վիճակում, գոնե նրանց հումքը, ձեռք է բերվել փոխանակության միջոցով: Հիմնականում ապրանքափոխանակության հետևանքը պետք է համարել նաև այն, որ աշխարհագրականորեն իրարից շատ հեռու գտնվող ուրարտական բերդերից, բնակավայրերից ու դամբարաններից գտնվել են արհեստագործական բազմաթիվ միանման իրեր, որոնք ոչ միայն պատրաստված են նույն կայուն ու միատիպ կաղապարներով, այլև երբեմն իրենց վրա ունեն նաև պատրաստող նույն արհեստանոցների կամ վարպետների տարբերադրոշմները: Աշխատանքային գործիքների, զենքերի, տնային գործածությունների և զարդարանքի առարկաների զգալի մասը կայուն ու միատիպ կաղապարներով ձուլված լինելու երևույթն ինքնին պացուցում է, որ ուրարտացի արհեստավորները հիշյալ իրերը արտադրում էին փոխանակության համար:

Բացի արհեստագործական արտադրանքներից, փոխանակության առարկաներ են դառնում նաև հացահատիկն ու գյուղատնտեսական մյուս մթերքները: Սարգոն II-ի թողած մի վկայությունից երևում է, որ Ուրարտական պետությունն էլ էր մասնակցում գյուղատնտեսական մթերքների վաճառքին և դրանով ավելացնում իր եկամուտները: Հիշյալ վկայության մեջ Սարգոնը հայտնում է, որ Ռուսա I-ը Ուլխու քաղաքի շրջակայքում գտնվող պետական հողերից ստացված հացահատիկի վաճառքով ավելացնում էր իր եկամուտը:

Ներքին ապրանքափոխանակության հետ միասին Ուրարտուն սերտ տնտեսական կապեր է ստեղծում նաև Հին Արևելքի, Փոքր Ասիայի, Հյուսիսային Կովկասի, Իրանի և այլ երկրների հետ: Կարմիր բլուրից հայտնաբերվել են հախճապակուց պատրաստված եգիպտական Սոխմետ դիցուհու արձանիկը, հիերոգլիֆագիր եգիպտական հմայիլներ, Ասորեստանում շինված կնիքներ, հույունքներ, մետաղե իրեր, էգեյան ծովի շրջանից ծագող ոսկե օղեր, կնիքներ, սկյութական ձիասարքի մասեր, բրոնզե նետասլաքներ, եղջյուրից պատրաստված զարդեր և այլն: Հնագիտական այս տվյալները մասամբ հաստատվում են նաև գրավոր վկայություններով: Մուսասիրից իր տարած

ավարի ցուցակում Սարգոնը հիշատակում է նաև փղոսկրից պատրաստված բազմաթիվ իրեր, Ասորեստանում ու Տաբալում (Փոքր Ասիայի արևելյան մասում) պատրաստված արծաթե բաժակներ:

Ուրարտուն իր հերթին նույնպես արտահանում էր զանազան ապրանքներ: Առաջավոր Ասիայում՝ հատկապես մեծ հռչակ ունեին ուրարտական մետաղագործական իրերը: Ուրարտական մետաղե իրեր հայտնաբերվել են Ասորեստանում, Միջագետքում, Իրանում, Փոքր Ասիայի տարբեր վայրերում, Էգեյան ծովի շրջանում, Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում և այլն:

Ուրարտական հասարակությունն իր բնույթով հին արևելյան տիպի վաղ ռազմաստրկատիրական հասարակություն էր, որտեղ ղեռնաուժեղ կերպով պահպանված էին նաև տոհմացեղային հարաբերությունների մնացորդները: Ուրարտուի տարբեր մասերը գտնվում էին տնտեսական և հասարակական զարգացման տարբեր աստիճանների վրա: Եթե պետության բուն կենտրոնում՝ Բիայնիլիում, Մուսասիրում և Արարատյան դաշտում իշխում էին ստրկատիրական հասարակությունները, ապա պետության ծայրամասերում, հատկապես լեռնային շրջաններում ապրող ցեղերը գտնվում էին տոհմատիրական կարգերի քայքայման և տոհմատիրական կարգերից ղեպի դասակարգային հասարակության անցման շրջանում: Տեղտեղ պահպանվել էին նաև համայնական կարգերը:

Ուրարտուում իշխող ու շահագործող հիմնական խավը հանդիսանում էր ռազմաստրկատիրական ավագանին, որը կազմված էր ինչպես ուրարտական, նույնպես և նվաճված երկրների ստրկատերերից:

Ուրարտուում մշակվող հողերը, հատկապես արհեստական ոռոգման միջոցով յուրացվող հողերը պատկանում էին պետությանը և անմիջականորեն գտնվում թագավորի տնօրինության տակ: Պետությանը կամ թագավորին էին պատկանում նաև ջրանցքները, քաղաքների մեծ մասը և հանքերը: Արձանագրությունների մեջ հաճախ է հիշատակվում, թե այս կամ այն քաղաքը «կառուցված է թագավորի կողմից» կամ «պատկանում է թագավորին»: Նման քաղաքները, որոնք չընկալված էին պետական ընդարձակ այգիներով և մշակելի հողային տարածություններով, մեծ մասամբ հանդիսանում էին ոչ միայն ռազմավարչական, այլև պետական տնտեսության խոշոր կենտրոններ: Այս կենտրոններում էին մշակվում և պահպանվում պետական այգիներից ու հողերից, ինչպես և շրջա-

պատի հարկատու բնակչությունից հարկի դիմաց ստացված գյուղատնտեսական միջերքները: Նման քաղաքներում կային նաև պետական խոշոր արհեստանոցներ, որոնք զգալի եկամուտ էին տալիս:

Պատերազմների ժամանակ ձեռք բերված ավարի մեջ տասնյակ հազարների, իսկ երբեմն նաև հարյուր հազարների էին հասնում անասունները, որոնց մի խոշոր մասը բաժին էր ընկնում թագավորին: Արձանագրությունների վկայություններից երևում է, որ պետությունը ուներ նաև ընդարձակ արոտներ, խոշոր ու մանր եղջերավոր անասունների հոտեր, ձիերի երամակներ:

Պետական տնտեսության տարբեր ճյուղերից ստացվող արտադրանքը թեև գտնվում էր թագավորի անմիջական տնօրինության տակ, սակայն այն միայն թագավորի և նրա ընտանիքի կողմից չէր յուրացվում: Եթե արտադրանքի մի մասը ծախսվում էր ստրուկներին և արհեստավորներին կերակրելու, այսինքն նրանց բանվորական ուժը վերականգնելու համար, ապա մյուս մասը, որը հանդիսանում էր արտադրողների ստեղծած հավելյալ արդյունքը, որպես ոռճիկ բաժանվում էր պետական և զինվորական ծառայության մեջ գտնվող ստրկատերերի միջև: Հին Արևելքի ստրկատիրական մյուս պետությունների նման Ուրարտական պետությունը ևս հանդես էր գալիս ստրուկներին և ազատ արտադրողներին կենտրոնացված ու կոլեկտիվ կերպով շահագործողի դերում:

Ընդարձակ հողային տարածություններ, արոտավայրեր և անասունների հոտեր ունեին նաև թագավորական ազգատոհմի անդամները և խոշոր ստրկատերերը: Սարգոն II-ի մի վկայությունից երևում է, որ թագավորի եղբայրները նույնիսկ ունեին իրենց քաղաքները: Պետք է ենթադրել, որ թագավորի ազգատոհմի ներկայացուցիչները և խոշոր ստրկատերերն առանձին քաղաքներում ու բերդերում ունեին նաև ստրկական աշխատանքի վրա հիմնված արհեստանոցներ:

Քրճական դասը, որը ուրարտական հասարակության կրոնական ու քաղաքական կյանքում կարևոր դեր էր կատարում, կազմում էր իշխող ստրկատիրական դասակարգի անբաժանելի մասը: Պետության մեջ թագավորից հետո երկրորդ դեմքը քրճապետն էր: Դրա համար էլ շատ հաճախ քրճապետ էր նշանակվում թագավորի եղբայրներից կամ մոտիկ ազգականներից մեկը:

Ուրարտական տաճարները, հատկապես նրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ, Մուսասիրի տաճարը, ոչ միայն կուտակել էին հրակայական հարստություններ, այլև ունեին ընդարձակ հողային տարածություններ, արոտներ, տասնյակ հազարավոր անասուններ,

ստրկական աշխատանքի վրա հիմնված խոշոր արհեստանոցներ: Տաճարական տնտեսություններն իրենց մեծությամբ գիջում էին միայն պետական տնտեսությունը: Տաճարները նման հարստությունները ձեռք էին բերում թագավորների, ստրկատերերի և հավատացյալների կողմից կատարված նվիրատվությունների, տաճարական տնտեսությունները շահագործելու, գնումների և այլ միջոցներով: Հավանաբար, գոյություն ունեցող սովորույթի իրավունքով նվաճված երկրներից վերցված ավարի և ստրուկների մի մասը նույնպես հասնում էր տաճարներին:

**Պարարտական հասարակության ազատ բը-
Գյուղական հա- նակցություն ճնշող մեծամասնությունը կազմը-
մայնքը և ազատ ված էր հողագործներից, որոնք միավորված էին
համայնականները գյուղական համայնքներում և ապրում էին մեծ
ընտանիքներով կամ գերդաստաններով:**

Հատկապես արհեստական ոռոգման միջոցով յուրացված հողերի վրա նստած համայնքների հողերի սեփականության իրավունքը պատկանում էր պետությանը:

Գյուղական համայնքների ներքին կառուցվածքի և ղեկավարման մարմինների մասին մեզ առանձին տեղեկություններ չեն հասել: Ուրարտական թագավորները խոսելով քաղաքների կառուցման, այգիների տնկման և նոր վարելահողերի ստեղծման մասին՝ գրեթե միշտ հիշատակում են, որ նրանք այդ բոլորը կատարել են անշակ, անմարդաբնակ, ոչ ոքի չպատկանող հողերում: Այստեղից հետևում է, որ գյուղական համայնքներն այնքան ուժեղ էին կազմակերպված, որ նույնիսկ թագավորները ամեն կերպ խուսափում էին ընդհարվել նրանց հետ և բռնագրավել նրանց պատկանող հողերը:

Ուրարտում շահագործման էին ենթարկվում ոչ միայն ստրուկները, այլև ազատ համայնականները: Նրանք բնամթերքներով հարկեր էին վճարում պետությանը, ձրի ու պարտադիր կերպով մասնակցում ջրանցքների, ճանապարհների, քաղաքների ու բերդերի կառուցմանը, զինվորական ծառայություն էին կատարում բանակում և այլն: Նրանք որոշ պարտավորություններ ունեին նաև տաճարների նկատմամբ:

Ստրուկները Ուրարտական հասարակության ընչազուրկ ու ազատագուրկ խավը կազմում էին ստրուկները:

Ստրուկների հայթայթման հիմնական աղբյուրը հանդիսանում էր պատերազմը: Ուրարտական թագավորներն իրենց մղած նվաճողա-

կան ու կողոպտիչ պատերազմների ժամանակ նվաճված երկրներից դեպի Բիայինիլի, այսինքն պետություն կենտրոնական շրջանն էին քշում և ստրկացնում տասնյակ հազարավոր, երբեմն նաև հարյուր հազարավոր գերիներ: Ոչ լրիվ տվյալներով Արգիշտի I-ը իր ռազմական արշավանքների ընթացքում գերեվարել է 280.512, իսկ Սարգուր II-ը 197.521 տղամարդ, կին և պատանի:

Երկրում ամենամեծ ստրկատերը պետությունն էր, որովհետև գերեվարված ստրուկների մեծ մասը բաժին էր ընկնում թագավորին: Ստրկական աշխատանքը կիրառվում էր պետական այգիների ու հողերի մշակման, քաղաքների, բերդերի, ջրանցքների, ճանապարհների կառուցման և այլ բնագավառներում: Պետական ստրուկները մեծ չափով օգտագործվում էին նաև պետական հանքերում ու արհեստանոցներում: Մովսես Ոորենացին, օգտվելով ժողովրդական ավանդույթունից, հաղորդում է, որ «Շամիրամի», այսինքն Մենուայի կառուցած ջրանցքի վրա աշխատել են 42.000 գործավորներ և 6000 արհեստավոր վարպետներ: Ժողովրդական ավանդույթյան հաղորդած այս թվերը կարող են ճիշտ լինել, միայն այն տարբերությամբ, որ այստեղ հիշատակվածները եղել են ոչ թե ազատ գործավորներ, այլ ստրուկներ:

Ուրարտական թագավորները երբեմն գերեվարում և բռնի կերպով դեպի պետության կենտրոնական շրջաններն էին տեղափոխում նաև առանձին մարդերի կամ բնակավայրերի ամբողջ բնակչությունը: Տեղափոխված այդ բնակչությունը, պատույթյանը ծանր հարկեր վճարելու և պարհակներ կատարելու պայմանով, բնակեցնում էին պետական հողերում: Սրանք ըստ էության նույնպես ստրուկներ էին, որոնք ի տարբերություն սովորական պետական ստրուկների՝ կոչվում էին «ինքնուրույն տնտեսություն վարող պետական ստրուկներ»: Սրանք իրենց տնտեսական, սոցիալական և իրավական վիճակով ավելի ցածր էին գտնվում, քան ազատ համայնականները, բայց ավելի բարձր, քան սովորական ստրուկները:

Բացի պետությունից, մեծ թվով ստրուկներ ունեին նաև տաճարները և ռազմաստրկատիրական ավագանու ներկայացուցիչները: Սրանք համապատասխանաբար իրենց ստրուկներին օգտագործում էին տաճարական և մասնավոր ստրկատիրական տնտեսություններում ու արհեստանոցներում:

Ուրարտական մի քանի արձանագրություններ վկայում են, որ թագավորները գերեվարված ստրուկներ են բաժանել կամ նվիրել ոչ միայն զինվորներին, այլև առանձին տոհմերի, ցեղերի կամ համայնք-

ների: Այստեղից հետևում է, որ ստրուկների մի մասը հանդիսացել է տոհմերի, ցեղերի կամ համայնքների ընդհանուր սեփականությունը: Նման դեպքերում ստրկատիրությունը ունեցել է առավելապես նահապետական բնույթ:

Չնայած ստրկատիրական հարաբերությունների որոշակի զարգացմանը, այնուամենայնիվ արտադրողական ուժերի զարգացման տվյալ մակարդակի պայմաններում Ուրարտուում ստրակական աշխատանքի կիրառման հնարավորությունները սահմանափակ էին: Ուրարտական բանակը նվաճված երկրներից վերցնում էր շատ ավելի մեծ թվով զերիններ, քան պետություն կենտրոնական չըջանները կարող էին այդ զերիններին որպես ստրուկների օգտագործել կամ տեղավորել արտադրության տարրեր ճյուղերում: Դրա համար էլ ուրարտացիներն իրենց վերցրած զերինների որոշ մասին սպանում էին տեղում: Պետք է ենթադրել, որ նրանք սպանում էին նաև ուժասպառ ու ծեր ստրուկներին և նրանց փոխարինում երիտասարդ նոր ստրուկներով:

Ուրարտական Թեյշեբահինի քաղաքի թաղամասերից մեկում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են ընդհանուր ծածկ ունեցող և միաժամանակ կառուցված, տնային կահավորանքից զուրկ, անասուններ և մթերքներ պահելու հարմարություններ՝ գոմեր ու մառաններ չունեցող բնակարաններ: Այս բնակարաններում հայտնաբերվել են ուրարտական և տեղական կավե ամանների բեկորներ, երկաթե բրիչի կամ փայտատի ծայր, դանակ, բրուտի դուրգ, խոշոր և մանր եղջերավոր անասունների, խոզի, ձիու, վայրի ոչխարի ու այծի, եղջերուի և շան ոսկորներ: Բնակարաններից դեպի բակը դուրս գալու մուտքի մոտ եղել են պահապան շներ կապելու հարմարանքներ: Նշված փաստերը ցույց են տալիս, որ այս բնակարաններում ապրել են միջնաբերդի, գուցե և քաղաքի պետական արհեստանոցներում, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ցեխերում և քաղաքի չըջակայքի պետական հողերում ու այգիներում աշխատող ստրուկները, որոնք սեփական տնտեսություն չեն ունեցել և պարենավորվել են պետության կողմից:

Ուրարտական պետությունը հին արևելյան

Պետական կարգը տիպի ռազմաստրկատիրական պետություն էր:

Ուրարտական պետությունը այժմյան իմաստով ազգային պետություն չէր, այլ տնտեսական-հասարակական զարգացման տարրեր աստիճանների վրա գտնվող, էթնիկական տարրեր ծագում ունեցող և տարրեր լեզուներով խոսող, բռնի ուժով

իրար միացած ցեղերի մի միություն: Տարածքային և քաղաքական իմաստով պետությունը բաժանված էր երկու մասի: Առաջինը՝ Բիայինիլին էր (Վանա լճի ավազանը), որը հանդիսանում էր ուրարտացիների բուն հայրենիքը և պետության կենտրոնը: Երկրորդը՝ ցեղային այն երկրներն էին, որոնք բուն ուժով միացվել էին Ուրարտուին և խիստ կերպով կողոպտվում ու շահագործվում էին ուրարտական ռազմաստրկատիրական ավազանու կողմից:

Պետական կառավարման ձևը հին արևելյան տիպի բացարձակ միապետությունն էր՝ թագավորի անսահմանափակ իշխանությունը: Թագավորը հանդիսանում էր երկրի գերագույն կառավարողը, զորքի գերագույն հրամանատարը և երկրի գերագույն դատավորը: Թագավորական իշխանությունը ժառանգական էր, որը հորից անցնում էր ավագ որդուն:

Պետական կառավարման կարևոր օրգաններից մեկն էր համարվում ավագների խորհուրդը, որը կազմված էր թագավորական տան անդամներից, թագավորի խորհրդականներից, պետական ու զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներից, տարբեր ցեղերից ծագող խոշոր ստրկատերերից: Ավագների խորհուրդը քննարկում էր համապետական նշանակություն ունեցող հարցերը, առանձին ցեղերի միջև առաջացած վեճերը, պահպանում էր թագավորական ժառանգության գոյություն ունեցող կարգը և այլն: Ավագների խորհուրդը տոհմատիրական կարգերից պահպանված մարմիններից մեկն էր, որը, սակայն, այժմ վերածվելով իր հակադրությունը, ղեմնկրատական կառավարման մարմնից փոխվել էր դասակարգային ճնշման ու պետական մարմնի:

Ուրարտական պետության կենտրոնական գործադիր մարմինների կամ գերատեսչությունների մասին մեզ առանձին տեղեկություններ չեն հասել: Սակայն անկասկած է, որ դրանք ունեցել են հարկային-ֆինանսական, պետական տնտեսության ղեկավարման, պետական-հասարակական աշխատանքների կազմակերպման և այլ գերատեսչություններ:

Վարչական տեսակետից ամբողջ պետությունը բաժանված էր մեծ ու փոքր մարզերի կամ ավելի ճիշտ՝ «երկրների»: Վարչական բաժանման հիմքում ընկած էր ոչ թե տնտեսական կամ աշխարհագրական, այլ ցեղային հատկանիշը: Ամեն մի ցեղի զբաղեցրած տարածքն ներկայացնում էր վարչական մի մարզ կամ մի «երկիր», որով և վարչական մարզի մեծությունն ու փոքրությունը պայմանավորված էր տվյալ ցեղի զբաղեցրած տարածքի մեծությամբ կամ փոքրությամբ:

Թե՛ բուն ուրարտական և թե՛ նվաճված ցեղային երկրները կամ մարզերը կառավարվում էին թագավորի կողմից նշանակված փոխարքանների կամ կառավարիչների միջոցով: Այս պաշտոններում մեծ մասամբ նշանակվում էին ուրարտական, իսկ երբեմն նաև տեղական ռազմաստրկատիրական ավագանու ներկայացուցիչները: Պետք է ենթադրել, որ բուն ուրարտական մարզերը առավելապես կառավարվում էին նույն ցեղին պատկանող տեղական խոշոր ստրկատերերի կողմից, որոնք սերվել էին ցեղային առաջնորդների ընտանիքներից: Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ նվաճված երկրներում իրենց գոյությունը պահպանում էին նաև տեղական թագավորները և ցեղային առաջնորդները:

Պետական ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում էին պատերազմների ժամանակ ձեռք բերված ավարից, պետական տրևտեսություններից ու արհեստանոցներից ստացվող եկամուտներից, ինքնուրույն տնտեսություն վարող պետական ստրուկներից, նվաճված ցեղերից և ազատ համայնականներից զանձվող հարկերից:

Ուրարտական հասարակության մշտական երևույթներից էին պատերազմները, որոնք մղվում էին նոր տարածքներ նվաճելու, ավար և ստրուկներ ձեռք բերելու համար: Դրա հետևանքով էլ պետական ու հասարակական կյանքում բանակը առաջնակարգ տեղ էր զբաղում:

Ուրարտական բանակը մշտական բանակ չէր: Թեև ուրարտական թագավորներն ունեին իրենց սեփական մշտական զորքը, որը հանդիսանում էր բանակի կորիզը, սակայն ուրարտական բանակի ճնշող մասը կազմված էր մարզերի կամ ցեղային երկրների ազատ բնակչությունից՝ աշխարհագրային հիմունքներով համալրված զորամասերից: Ամեն մի մարզ ուներ իր զորամասը, որի հրամանատարը համարվում էր նաև տվյալ մարզի կառավարիչը: Պատերազմի ժամանակ մարզերի զորամասերը, իրենց հրամանատարների գլխավորությամբ, պարտավոր էին անմիջապես միանալ թագավորական զորքին:

Ուրարտական բանակի կազմակերպման հիմքում ընկած էր տոհմացեղային սկզբունքը: Նույն ցեղին պատկանող զինվորները միավորված էին միևնույն զորամասում:

Բուն ուրարտացիները համեմատաբար թվով քիչ էին: Նրանք շատ ավելի մեծ թվով ցեղերի էին նվաճել, քան կարող էին միայն իրենց սեփական ուժերով դրանք պահել մշտական հնազանդություն մեջ:

Մի կողմից՝ այդ ցեղերին Հնագանդուլթյան մեջ պահելու, իսկ մյուս կողմից՝ Ասորեստանի դեմ հաջող պայքար մղելու համար ուրարտացիները ստիպված էին զորամասեր ստեղծել նաև Հպատակեցված ցեղերից: Նման զորամասերը ուրարտացիները մեծ մասամբ օգտագործում էին կայազորային ծառայութան համար, այն էլ ոչ թե տվյալ ցեղի, այլ էթնիկական տարբեր ծագում ունեցող ցեղերի տարածքներում:

Ուրարտական բանակում զորքի հիմնական տեսակներն էին ռազմակառքերը, հեծելազորը և հետևակը: Ռազմակառքերը և հեծելազորը, որոնք համարվում էին զորքի «արտոնյալ» տեսակները, մեծ մասամբ համալրվում էին իշխող ու արտոնյալ դասակարգի ներկայացուցիչներից, իսկ հետևակը՝ ազատ համայնականներից:

Բանակի գերագույն հրամանատարը համարվում էր թագավորը: Սակայն բանակը ուներ նաև իր առաջին և երկրորդ գլխավոր զորահրամանատարը կամ սպարապետը, որը հավանաբար ասորեստանյան ձևով կոչվում էր «տուրտան»:

Ուրարտական բանակում զենքի հիմնական տեսակներն էին նետն ու աղեղը, սուրը, դաշույնը, տապարը, նիզակը, վահանը, սաղավարտը և այլն:

6. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ներքին Հակասությունների սրումը

Ք. ա. VII դարի կեսից Ուրարտական պետությունը խիստ կերպով թուլանում և նույն դարի վերջում կանգնում է կործանման առաջ: Ուրարտական պետության թուլացումը և ապա կործանումը, մի կողմից, երկրի ներսում դասակարգերի և հասարակական տարբեր խմբերի միջև մղվող պայքարի, ներքին հակասությունների սրման, իսկ մյուս կողմից՝ արտաքին անհաջողությունների և արտաքին արշավանքների հետևանք էր:

Նախ խիստ կերպով սրվում է ուրարտական հասարակության ներսում ստրուկների և ստրկատերերի միջև մղվող դասակարգային պայքարը: Ստրուկները, որոնք դաժան շահագործման էին ենթարկվում, գայրույթով և ատելությամբ էին լցված դեպի իրենց շահագործողները: Նրանք երբեմն բացահայտ, երբեմն գաղտնի ձևերով պայքար էին մղում ստրկատերերի դեմ և փորձում էին ազատագրվել նրանց տիրապետությունից:

Ստրկատիրական հասարակարգում դասակարգային պայքարի ձևերից մեկը ստրուկների փախուստն էր իրենց տերերից: Ուրարտուում ստրուկների փախուստը գոյություն ունեւր դեռևս Մենուայի թագավորութան չրջանում, սակայն ավելի զանգվածային է դառնում և սպառնալից չափերի է հասնում կենտրոնական իշխանութան թուլացման ու անկման ժամանակ:

Այս ժամանակաշրջանում Ուրարտուից և Ասորեստանից փախչող ստրուկների հիմնական ապաստաններից մեկն է դառնում Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող Շուպրիան (Աղձնիքը): Ասորեստանի Ասարխադդոն թագավորը նույնիսկ ստիպված է լինում 673 թ. մի հատուկ արշավանք կազմակերպել դեպի Շուպրիա, այնտեղ ապաստանած ասորեստանյան ստրուկներին վերադարձնելու և նրանց պատժելու համար: Նա, Շուպրիան գրավելուց հետո, ձերբակալում և խիստ պատիժների է ենթարկում իրենց տերերից փախած և այստեղ ապաստանած ասորեստանյան ստրուկներին. կտրել է տալիս փախստականների մատները, ականջները, քթերը, հանել է տալիս նրանց աչքերը:

Շուպրիայում Ասարխադդոնի ձեռքն են ընկնում նաև Ուրարտուից փախած ստրուկները, որոնց մինչև այդ Ռուսաս II-ը Շուպրիայի կառավարչից պահանջել էր ետ վերադարձնել, սակայն վերջինս մերժել էր կատարել այդ պահանջը: Ասարխադդոնը Ուրարտուից փախած բոլոր ստրուկներին հանձնում է Ռուսային:

Ստրուկների զանգվածային փախուստը չէր կարող բացասական կերպով չանդրադառնալ և չնեղացնել ստրկական աշխատանքի վրա հիմնված արտադրությունը, որով և չէր կարող չթուլացնել Ուրարտական պետության ուժն ու հզորությունը:

Սոցիալ-տնտեսական անհրաժեշտ պայմանների բացակայություն հետևանքով Ուրարտական պետության կազմի մեջ մտնող էթնիկական տարբեր ծագում ունեցող, տարբեր լեզուներով խոսող ցեղերը չկարողացան միաձուլվել և կազմավորվել որպես միասնական ժողովուրդ: Ուրարտացիները, բացի Մուսասիրից և Արարատյան դաշտից, իրենց նվաճած ցեղային երկրների վրա նայում էին իբրև գաղութների, որոնք, ըստ ուրարտացիների, գոյություն ունեին միայն կողոպտվելու, ստրուկներ հայթայթելու և խիստ ծանր հարկեր վճարելու համար: Բնական է, որ այսպիսի պայմաններում նվաճված ցեղային երկրները կարող էին միայն շատ թույլ կապերով կապված լինել կենտրոնական իշխանութան հետ:

Հպատակեցված ցեղերը, որոնք ատելությունը էին լցված դեպի իրենց կեղեքիչները, ամեն մի հարմար առիթ ու հնարավորություն օգտագործում էին կենտրոնական իշխանությունների դեմ ապստամբելու և շահագործման մեքենայի ճնշումից դուրս գալու համար: Նման ապստամբությունները գրեթե միշտ գլխավորում էին տեղական ցեղային և ստրկատիրական ավագանու ներկայացուցիչները, որովհետև նրանք նույնպես դժգոհ էին ուրարտական ստրկատերերի տիրապետությունից: Տեղական իշխող շերտերի դժգոհությունն հիմնական պատճառն այն էր, որ ուրարտացիները մեծ չափով սահմանափակել էին նրանց կառավարման իրավունքները և ցեղակիցներին շահագործելու հնարավորությունները:

Հպատակեցված ցեղերի ապստամբությունները, որոնք հաճախ տեղի էին ունենում նաև առաջ, ավելի զանգվածային ու մշտական են դառնում կենտրոնական իշխանությունների արտաքին անհաջողությունների ժամանակ: Ուրարտացիները ստիպված են լինում հսկայական ուժեր և միջոցներ ծախսել այդ ապստամբությունները ճնշելու համար:

Կենտրոնական իշխանությունների թուլացման շրջանում արտաքին պատերազմները դադարելու, ստրուկների զանգվածային փախուստի և այլ պատճառներով Ուրարտուում ստրուկների քանակը զգալի չափով պակասում է: Պետությունը և ստրկատերերը պակասող ստրուկների փոխարեն սկսում են ավելի սաստկացնել ազատ համայնականների շահագործումը և նրանցից քամել իրենց կորցրած եկամուտների մի մասը: Այս հողի վրա սրվում է նաև պայքարը ազատ համայնականների և ստրկատերերի միջև: Ծնշումից և ծանր շահագործումից ազատվելու համար հաճախ ազատ համայնականները և ստրուկների նման սկսում են փախուստի դիմել դեպի հարևան երկրները: Ազատ համայնականների շրջանում ստրկատերերի դեմ առաջացած զայրույթն ու ատելությունը չէր կարող չանդրադառնալ նաև ուրարտական բանակի և նրա մարտունակության վրա, քանի որ բանակի շարքային կազմը հիմնականում համալրված էր նույն ազատ համայնականներից:

Լավ չէր դրությունը նաև բուն ուրարտական ստրկատերերի շրջանում: Այստեղ ևս պայքար էր գնում ստրկատերերի առանձին խմբերի միջև, պայքար, որը ավելի ցայտուն կերպով դրսևորվում էր արտաքին անհաջողությունների ժամանակ: Եթե մարզերի կառավարիչները ձգտում էին կենտրոնական իշխանությունից անջատվելով՝ ինքնուրույնություն ձեռք բերել, ապա բանակում ծառայող

ոռզմաստրկատիրական ավագանու ներկայացուցիչները աշխատում էին ավելի ևս բարձրացնել բանակի ղեկը հասարակության մեջ և գահ բարձրացնել իրենց ներկայացուցչին:

Այսպիսով, նախ և առաջ, ուրարտական հասարակության ներքին հակասությունների սրման, առանձին սոցիալական խմբերի միջև մղվող պայքարի հետևանքով Ուրարտական պետությունը խիստ կերպով թուլանում և կանգնում է կործանման առաջ:

Սկյութների արշավանքը

Ուրարտուն, որը իր կենսական ուժերը սպառել ու ջլատել էր Ասորեստանի, կիմմերների և տեղական ցեղերի դեմ մղվող երկարատև պայքարում, Ք. ա. VII դարի առաջին կեսից կանգնում է սկյութական ցեղերի ներխուժման վտանգի առաջ: Այս ցեղերը քոչվոր ու կիսաքոչվոր ցեղեր էին, որոնք ապրում էին Սև ծովի հյուսիսային ափերին և Հյուսիսային Կովկասում:

VII դարի 80-ական թվականներին, այսինքն կիմմերների արշավանքից մոտ 50-60 տարի հետո, սկյութները Հյուսիսային Կովկասից Գերբենդի լեռնանցքով ներխուժում են Արևելյան Անդրկովկաս և այստեղ հաստատում իրենց թագավորությունը: Այստեղից նրանք սկսում են արշավանքներ կատարել դեպի Առաջավոր Ասիայի երկրներ:

VII դարի 80-ական թվականներին, այսինքն կիմմերների արշավանքից մոտ 50-60 տարի հետո, սկյութները Հյուսիսային Կովկասից Գերբենդի լեռնանցքով ներխուժում են Արևելյան Անդրկովկաս և այստեղ հաստատում իրենց թագավորությունը: Այստեղից նրանք սկսում են արշավանքներ կատարել դեպի Առաջավոր Ասիայի երկրներ:

Սկյութները առաջին անգամ Ասորեստանի հետ ընդհարվում են VII դարի 70-ական թվականներին: Սակայն Ասորեստանին չուտով հաջողվում է դաշինք կնքել սկյութների հետ և նրանց ուժերը օգտագործել իր թշնամիների դեմ:

Ուրարտուն Ասորեստանի և նրա դաշնակից սկյութների հարվածից խուսափելու համար աշխատում է բարեկամություն հաստատել Ասորեստանի հետ: Այդ նպատակով էլ Ռուսա II-ը 654 թվականին մի դեսպանություն է ուղարկում Ասորեստան՝ Բարբելոնիայի և էլամի դեմ հաղթանակ տարած Ասուրբանիպալին (668-633) ողջունելու համար:

Սակայն սկյութների հարվածից խուսափելու ուղղությամբ Ռուսա II-ի գործադրած ջանքերը հավանաբար առանձին արդյունք չեն տալիս: VII դարի կեսին, Ասորեստանի դրդումով, սկյութները հարձակվում են կիմմերների վրա և ջախջախում նրանց: Հավանաբար այս ժամանակ էլ սկյութները ներխուժում են նաև Ուրարտուի հյուսիս-արևելյան շրջանները և սոսկալի ավերածություններ գործում:

Սկյութների այս հարվածից խիստ թուլացած՝ Ուրարտուն այժմ աշխատում է իր դարավոր հակառակորդի՝ Ասորեստանի հովանա-

վորութեան տակ մտնել և նրանից օժանդակութիւն ստանալ: Դրանով պետք է բացատրել, որ Ռուսա II-ին Հաջորդած Սարգուր III-ը (645–625) նվերներ է ուղարկում Աստուրբանիպային և իր գրած նամակներում փոխանակ իր նախորդների նման նրան «եղբայր» անվանելու, անվանում է «իմ տերը»:

Մարաստանը և Ուրարտուի կործանումը Դեռևս Ք. ա. երկրորդ Հազարամյակի վերջից մարերը ապրում էին Իրանական բարձրավանդակի Հյուսիս-արևմտյան մասում, իսկ նրանց ցեղակից պարսիկները՝ նույն բարձրավանդակի Հարավային մասում: Մարական և պարսկական ցեղերը մասամբ նստակյաց և մասամբ կիսաքոչվոր Հնդեվրոպական ցեղեր էին, որոնց տնտեսական հիմնական զբաղմունքը երկրագործութիւնն ու անասնապահութիւնն էր:

Սկսած Ք. ա. IX դարից պարբերաբար կողոպտիչ արշավանքներ կատարող Ասորեստանի դեմ Համատեղ կերպով պաշտպանվելու անհրաժեշտութեամբ մարական ցեղերը VII դարի վերջում միավորվում և կազմակերպում են մի ուժեղ ցեղային միութիւն, որը Հետագայում վերածվում է ստրկատիրական պետութեան: Մարաստանի (Մեդիա) մայրաքաղաք է դառնում Էկրատանը (այժմ՝ Համադան):

Մարաստանը մեծ չափով ուժեղանում և Ասորեստանի վտանգավոր ախոյանն է դառնում Կիաքսար թագավորի (625–585) ժամանակ: Մարերը Բաբելոնիայի և տեղական ցեղերի Հետ դաշնակցած՝ 612 թ. գրավում և կործանում են Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, իսկ 605 թ.՝ երկրի վերջին հենակետը հանդիսացող Կարքեմիշ քաղաքը: Այսպիսով, երբեմնի հզոր ու աշխարհակալ Ասորեստանը կործանվում և դուրս է գալիս պատմութեան թատերաբեմից. նրա տարածքը բաժանվում է Մարաստանի և Բաբելոնիայի միջև:

Ուրարտուն, որը Առաջավոր Ասիայում տեղի ունեցող այս խոշոր անցքերի ժամանակ հանդես էր եկել որպես Ասորեստանի դաշնակիցը, նույնպես զերծ չի մնում մարերի և նրանց դաշնակիցների հարվածից: Բաբելոնյան տարեգրութեան մի վկայութեան համաձայն Ք. ա. 610 կամ 609 թ. մարերը գրավում և ավերում են Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան: Սակայն Աստվածաչնչի մի վկայութիւնից երևում է, որ այս ղեկքից Հետո էլ Ուրարտուն շարունակել է պահպանել իր գոյութիւնը մինչև VI դարի 90-ական թվականները: Ուրարտուի վերջին թագավորն էր Էրիմենայի որդի Ռուսա III-ը (605–590):

Մոտավորապես Ք. ա. 590 թ. մարերը մտնում են Արարատյան դաշտ և տեղական ցեղերի օժանդակությամբ կործանում Ուրարտուի վարչական կենտրոնները, որոնց թվում և Թեյշերախնի քաղաքամրոցը: Հավանաբար նույն այս ժամանակ է, որ Ուրարտական պետությունը վերջնականապես կործանվում և պատմության թատերաբեմից դուրս է գալիս մարերի և նրանց դաշնակից հայերի հարվածների տակ:

Ուրարտուի կործանումից քիչ առաջ մարերը ոչնչացնում են նաև Մաննայի պետությունն ու Արևելյան Անդրկովկասում սկյութների հիմնած թագավորությունը: Դրանից հետո սկյութական ցեղերը մեծ մասամբ վերադառնում են Սև ծովի հյուսիսային ափերը և հյուսիսային Կովկաս, իսկ տեղում մնացածները՝ ձուլվում նոր կազմավորվող ժողովուրդների հետ:

Նոր նվաճված երկրներում իրենց տիրապետությունը որոշ չափով ամրապնդելուց հետո մարերը շարժվում են դեպի արևմուտք և մտնում Փոքր Ասիա: Սակայն այստեղ նրանց ուժեղ դիմադրություն է ցույց տալիս Լյուդիական պետությունը: Մարերի և լյուդիացիների միջև ճակատամարտը տեղի է ունենում Հալիս գետի ափին, որը, սակայն, չուտով ընդհատվում է Ք. ա. 585 թ. մայիսի 28-ին տեղի ունեցած արևի լրիվ խավարման պատճառով: Պատերազմող կողմերի միջև կնքվում է հաշտություն, որի համաձայն Մարաստանի և Լյուդիայի սահմանն է դառնում Հալիս գետը:

Այսպիսով, Կիաքսարի թագավորության վերջում Մարաստանը դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը, որի սահմանների մեջ մտնում էին Իրանական բարձրավանդակի մեծ մասը, Արևելյան Անդրկովկասը, բուն Ասորեստանը և Փոքր Ասիայի արևելյան շրջանները:

7. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գ Ի Ը Ը Գեղարվեստական ու գիտական բնույթի ուրարտական գրավոր տեքստեր մեզ չեն հասել: Այդ պատճառով էլ մենք տեղեկություններ չունենք Ուրարտուում գոյություն ունեցող գեղարվեստական գրավանդակների, գիտությունների և հոգևոր մշակույթի մյուս բնագավառների մասին:

Մեզ են հասել միայն ռազմական, շինարարական, տնտեսական ու կրոնական բնույթի ավելի քան 500 մեծ ու փոքր արձանագրու-

թյուններ, որոնք փորագրված են ժայռերի, բազալտե սրբատաշ քարակոթողների, շենքերի պատերի, կավե աղյուսների, կավե ու մետաղե իրերի վրա: Այդ արձանագրությունները գրեթե բացառապես պետական կամ թագավորական վավերագրեր են, որոնք գրված են պաշտոնական չոր լեզվով և միատիպ ոճով:

Ուրարտացիները սկզբում, կարճ ժամանակով, գրավոր խոսքի և արձանագրություններ գրելու համար օգտագործել են ոչ միայն ասուրական սեպագիրը, այլև լեզուն: Սակայն Ք. ա. IX դարի վերջում նրանք, վերցնելով ասուրական սեպագիրը և այն որոշ փոփոխությունների ենթարկելով ու հարմարեցնելով իրենց լեզվի առանձնահատկություններին, ստեղծում են իրենց սեփական գիրն ու գրականությունը: Ուրարտերեն սեպագրերով ու լեզվով գրված առաջին արձանագրությունները մեզ են հասել Իչպուինի թագավորից:

Ուրարտական սեպագրերը գրված են ձախից աջ, առանց բառերը իրարից անջատելու և առանց տողադարձի: Նրանք բաղկացած են մոտ հարյուր հնչյունագրերից և վանկագրերից, նույնքան գաղափարագրերից և քիչ թվով դետերմինատիվ, այսինքն՝ բառի բնույթը որոշող նշաններից: Այս կամ այն ուրարտական արձանագրության մեջ անունները և բառերի մի մասը գրված են հնչյունագրերով ու վանկագրերով, իսկ բառերի մնացած մասը՝ լոկ գաղափարագրերով:

Գոյություն ունեն մի նշանով մի բառ կազմող պարզ, ինչպես և երկու նշանով մի բառ կազմող բարդ գաղափարագրեր: Այսպես, օրինակ, «աստված» բառը գրվել է աստղի նկարը ներկայացնող գաղափարագրով, «քաղաք» բառը՝ լեռան վրա կառուցված շինությունից գաղափարագրով, իսկ «ձի» բառը գրվել է «լեռ» և «էշ» բառերի գաղափարագրերի զուգակցությամբ, նշանակելով՝ փաստորեն «լեռնային էշ», «պալատ» բառը՝ «մեծ» և «տուն» բառերի գաղափարագրերի զուգակցությամբ և այլն: Եթե գաղափարագրերը, մի կողմից, ուսումնասիրողներին հնարավորություն են տալիս հեշտությամբ վերծանելու ուրարտական արձանագրությունների իմաստը, ապա մյուս կողմից՝ մեզ զրկում են ու անհնարին են դարձնում իմանալու, թե այդ գաղափարագրերի տակ թաքնված բառերը ուրարտացիները ինչպես են արտասանել կամ անվանել:

Դետերմինատիվ նշանները միշտ զրվել են հնչյունագրերով ու վանկագրերով գրված հատուկ անուններից առաջ, որպեսզի ընթերցողը ճիշտ որոշի նրանց բնույթը: Այսպես, օրինակ, եթե տեքստում գրվել է որևէ քաղաքի, երկրի, մարդու կամ աստծու անունը, ապա համապատասխանաբար այդ անունից առաջ դրել են նաև քաղաքի,

երկրի, մարդու կամ աստծու գաղափարագիրը: Դետերմինատիվ նը-
շանները նույն գաղափարագրերը լինելու և ուրարտական տեքս-
տերում բառերը իրարից անջատված չլինելու պատճառով հաճախ
արձանագրությունների վերծանման ժամանակ առաջացնում են դժ-
վարություններ և թյուրիմացություններ:

Ուրարտացիների մոտ թվական հաշվումները հիմնված են տաս-
նորդական սիստեմի վրա: Դա երևում է նրանից, որ արձանագրու-
թյունների մեջ տասնավորների, հարյուրավորների և հազարավոր-
ների համար օգտագործվել են սեպագրերի տարբեր զուգակցումներ,
և թվերը հաշվված են տասնորդական սիստեմով:

Բացի սեպագրերից, ուրարտացիները օգտագործել են նաև հիե-
րոգլիֆներ, որոնք ընդհանուր գծերով նման են խեթականին:

Մեզ հասած ուրարտական բառապաշարի և քերականական ձե-
վերի սահմաններում դժվար է որոշակիորեն նշել ուրարտերենի ցե-
ղակցական կապը հին կամ ժամանակակից լեզուների հետ: Սակայն
լեզվաբանները որոշ ընդհանուր նմանություններ ու կապեր են բա-
ցահայտել, մի կողմից, ուրարտերենի, իսկ մյուս կողմից՝ խուրրիե-
րենի, խեթերենի, հայերենի և այլ լեզուների միջև:

Ուրարտական պետություն կազմավորմանը

Պաշտամունքը զուգընթաց ձևավորվում և առաջանում է նաև
ուրարտական պաշտամունքը: Վանի մոտ գրտ-

նրվող «Մհերի դուռ» կոչվող ժայռի վրա Իչպուլինի թագավորը և
նրա որդի Մենուան թողել են մի արձանագրություն, որտեղ նշել են
ուրարտական պանթեոնի բոլոր աստվածներին և նրանցից յուրա-
քանչյուրին մատուցվելիք զոհերի քանակը: Այդ արձանագրությունից
տեղեկանում ենք, որ ուրարտական պանթեոնի մեջ մտնում էին
բուն ուրարտական և նվաճված ցեղային երկրների մեծ ու փոքր 79
աստված:

Ուրարտացիների գլխավոր աստվածը կոչվում էր Խալդ: Նա հա-
մարվում էր երկնքի, բարություն, քաջություն և պատերազմի աստ-
վածը: Ուրարտական թագավորները Խալդ աստծու անունով էին
գնում պատերազմների և նրան էին վերագրում իրենց տարած հաղ-
թանակները:

Խալդ աստծու գլխավոր տաճարը գտնվում էր Մուսասիր քաղա-
քում: Բացի այս գլխավոր տաճարից, Ուրարտական պետության
տարբեր մասերում գոյություն ունեին նաև նրան նվիրված բազմա-
թիվ այլ տաճարներ ու սրբատեղիներ: Բոլոր աստվածներից ամենից
շատ զոհ մատուցվում էր Խալդ աստծուն՝ 17 ցուլ և 34 խոյ:

Ոսյղ աստծու կինն էր համարվում Արուբանն աստվածուհին: Ենթադրվում է, որ Թուփրակ-կալայում և Կարմիր բլուրում հայտնաբերված ոսկե ու արծաթե մեդալյոնների վրա գահարագմած կնոջ կերպարանքով պատկերված է այս աստվածուհին:

Ուրարտական պանթեոնի երկրորդ գլխավոր աստվածն էր Թեյշերան: Սա համարվում էր ջրի, անձրևի, հեղեղի, փոթորկի, պատերազմի աստվածը: Սրա կինն էր Նուբա աստվածուհին: Թեյշերա աստծու գլխավոր տաճարը գտնվում էր Կումենու քաղաքում, որի տեղը մինչև այժմ հայտնի չէ:

Երրորդ տեղը ուրարտական պանթեոնում զբվում էր արևի աստված Շիվինին, որի խորհրդանիշը պատկերվում էր ճառագայթոդ արևի սկավառակով կամ հրե գնդով: Սրա կինն էր Ուրարտուի մայրաքաղաքի՝ Տուշպայի աստվածուհի Տուշպուեան: Շիվինի աստծու և նրա կնոջ գլխավոր տաճարը գտնվում էր մայրաքաղաքում:

Բացի երրորդություն կազմող վերոհիշյալ գլխավոր աստվածներից, ուրարտական պանթեոնում գոյություն ունեին նաև տարբեր քաղաքների, ցեղային երկրների, հողի, ջրի, լեռան, քարայրի, ճանապարհի, լուսնի, աստղերի և այլ աստվածներ: Ուրարտացիների մեջ մեծ չափով տարածված էր նաև սրբազան ծառերի պաշտամունքը:

Ճարտարապետությունը

Ուրարտում զարգացման բարձր աստիճանի վրա են գտնվել ճարտարապետությունը և շինարարական տեխնիկան: Նրանք կառուցել են քաղաքներ, ամրոցներ, պալատներ, տաճարներ, բնակելի շենքեր, ջրանցքներ, արհեստական լճեր և այլ շինություններ, որոնց ավերակները ցրված են պատմական Հայաստանի տարբեր մասերում: Նրանք քաղաքների միջնաբերդերը և ամրոցները կառուցել են բնական ամրություններ ունեցող անմատչելի բլուրների վրա:

Ուրարտական ճարտարապետական հուշարձաններից համեմատաբար լավ է ուսումնասիրված Թեյշերաինի քաղաքի միջնաբերդը: Այս միջնաբերդը, որը գրավել է շուրջ չորս հեկտար տարածություն, շրջապատված է եղել մոտ 6–12 մետր բարձրություն ու 3 մետր լայնություն ունեցող, վատ հղկված հսկայական քարերի հիմքի վրա խոշոր, հում աղյուսներով շարված պարիսպներով, որոնք գլխավոր մուտքի մոտ և անկյուններում ունեցել են նաև պաշտպանական հզոր աշտարակներ: Միջնաբերդի ներսի հսկայական շինությունը կամ շենքը, որի պատերը նույնպես շարված են հում աղյուսներով, բաղ-

կացած է 120–150 իրար հետ կապ ունեցող սենյակներից: Շենքը հիմնականում եղել է միհարկանի, բացի նրա կենտրոնական մասից, որը ունեցել է երկու հարկ: Ինչպես ցույց են տալիս պեղումները, շենքի երկրորդ հարկի սենյակներում տեղավորված են եղել ուրարտական տեղական կառավարչության պաշտոնյաները, իսկ առաջին հարկի սենյակներում՝ ցորենի, գարու և գլուղատնտեսական այլ մթերքների պահեստները, գինու մառանները, ձիթահանքը, մթերքների վերամշակման ցեխերը, արհեստանոցները և այլն: Համանման շինարարական նյութերով ու տեխնիկայով, բայց ճարտարապետական տարբեր ձևերով, ավելի հզոր կամ թույլ պաշտպանական համակարգերով են կառուցված նաև ուրարտական քաղաքների միջնաբերդերից ու ամրոցներից շատերը:

Սակայն ուրարտացիները վատ մշակված և սրբատաշ քարերից ևս կառուցել են բազմաթիվ պալատներ, տաճարներ, բնակելի շենքեր, պարիսպներ և այլ շինություններ: Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի (Վան) միջնաբերդը չրջապատված է մշակված ու լավ շարված հսկայական մեծություն ունեցող քարերից, իսկ Թուրիակ-կալայում հայտնաբերված տաճարը՝ տարբեր գույնի սրբատաշ քարերից:

Ուրարտացիները Վանում, Մանազկերտում, Հին Բայազետի մոտ և այլ վայրերում կառուցել են նաև ժայռափոր ընդարձակ բնակարաններ, դահլիճներ, որմնախորշեր, հարթակներ, սանդուղքներ, ջրանցքի թունելներ և այլն: Ժայռափոր այս շինությունները ոչ միայն մեծ հիացմունք են պատճառում ժամանակակից դիտողներին, այլև ցույց են տալիս ուրարտական շինարարական արվեստի ու տեխնիկայի բարձր զարգացումը և ուրարտացի շինարար վարպետների բացառիկ հմտությունը:

Ճարտարապետության տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Մուսասիրի տաճարը, որի միայն քանդակի նկարն է հասել մեզ: Տաճարն ունի երկթեք տանիք, քանդակներով և հոնիական ոճի վեց սյուներով գեղազարդված ճակատ: Ուսումնասիրողները գտնում են, որ այս տաճարը հանդիսանում է հունական դասական ճարտարապետության նախատիպերից մեկը:

Ուրարտացիները պալատների, տաճարների և այլ շենքերի ներսի պատերը գեղազարդել են որմնանկարներով, ղեկորատիվ վահաններով, զենքերով և գեղարվեստական այլ իրերով: Էրեբունի ամրոցի պեղված դահլիճներից մեկի պատերի վրա հայտնաբերվել են սրբազան ծառերի պաշտամունքի տեսարանով, ցուլերի, ոչխարների

պատկերներով և այլ նախշերով որմնանկարներ: Որմնանկարների մնացորդներ են հայտնաբերվել նաև Թեյշերահինի քաղաքի միջնաբերդում:

Ուրարտուի մշակույթի ժա- ռանգությունը

Ուրարտուն իր գոյություն ավելի քան երկու և կես դարի ընթացքում ստեղծեց Հին Արևելքի ամենազարգացած մշակույթներից մեկը, որը հանդիսանում է համաշխարհային մշակույթի անբաժանելի մասը:

Ուրարտացիները խոր ազդեցություն թողեցին Հայկական լեռնաշխարհի, Անդրկովկասի ու իրենց հարևան ցեղային երկրների վրա և մեծ չափով նպաստեցին այդ երկրների ցեղերի տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Որպես հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած ցեղերից մեկը, ուրարտացիները ավելի քան խոր ազդեցություն թողեցին սկզբում հայկական ցեղերի, որոնց հետ վաղուց ի վեր ապրում էին կողք-կողքի, իսկ այնուհետև նոր կազմավորվող հայ ժողովրդի վրա:

Հայկական լեռնաշխարհում ուրարտացիներին փոխարինեցին հայերը, հայկական պետականությունը առաջացավ ու զարգացավ նախկին Ուրարտուի տարածքի վրա, իսկ ուրարտական ցեղերը ձուլվեցին հայերի հետ և հանդիսացան կազմավորված հայ ժողովրդի հիմնական նախնիներից ու բաղադրիչներից մեկը: Այս առումով էլ ուրարտական մշակույթի անմիջական ժառանգորդը հանդիսանում է հայ ժողովուրդը:

Ուրարտացիները հայերին փոխանցեցին իրենց պետական ու հասարակական կյանքի ավելի զարգացած ձևերի, իրենց արտադրական հարուստ կենսափորձի, տնտեսության ու մշակույթի տարբեր բնագավառներում իրենց ձեռք բերած նվաճումների զգալի մասը: Լեզվական ու հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ երկրագործություն, արհեստագործություն և հատկապես մետաղամշակության, շինարարական արվեստի ավելի կատարելագործված եղանակներն ու տեխնիկական հայ ժողովուրդը առավելապես ժառանգել և յուրացրել է իր նախնի ուրարտացիներից:

Բացի հայոց լեզվի բառային կազմում պահպանված ուրարտերեն բազմաթիվ բառերից, հայերը ժառանգել են նաև ուրարտական ժամանակաշրջանի տեղանուններից ու հատուկ անուններից շատերը, ուրարտական ծագում ունեն ուրարտերեն «նի» հոգնակիով և ուրարտերեն ու հայերեն «նիք» կրկնակի հոգնակիներով վերջացող Հայաստանի աշխարհագրական գրեթե բոլոր տեղանունները և նախարարական տների անունները: Այսպես, օրինակ, ուրարտական

ծագում ունեն չայաստանի նահանգներից ու գավառներից՝ Սյունիք, Աղձնիք, Գեղարքունիք, Ռչտունիք, Բզնունիք և այլն, գետերից ու բնակավայրերից՝ Արածանի, Գառնի, Արղնի, Բջնի և այլն, իսկ նախարարական տներից՝ Արծրունի, Գնունի, Գնթունի, Սոռխոռունի և այլ անուններ: Ուրարտական ծագում ունեն նաև Արարատ-Այրարատ, Տոսպ, Տարոն, Վան, Արճեչ, Ախուրյան և բազմաթիվ այլ տեղանուններ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա-Վանը և Արգիշտիխինիլի-Արմավիրը դարձան չայաստանի առաջին մայրաքաղաքները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի առաջին կենտրոնները: Խորհրդային չայաստանի մայրաքաղաք Երևանը ևս մեզանից ավելի քան 2750 տարի առաջ հիմնադրել են ուրարտացիները:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ուրարտական պետությունների ամբողջ երկուսուկեսդարյա գոյությունը ընթացքում (IX–VI), և դրանից էլ առաջ, նրա տարածքում, ի թիվս այլ ցեղերի և ժողովուրդների, բնակվում էին նաև Հայկական կամ Հայերին ազգակից մի շարք այլ ցեղեր ևս: Ուրարտուի կործանումից հետո, Ք. ա. VII դարի վերջում կամ VI դարի սկզբում, Հայերը դառնում են Հայկական լեռնաշխարհի միակ տիրապետող ժողովուրդը: Այդ ժամանակաշրջանից սկսած Ուրարտական պետության նախկին տարածքը՝ Հայկական լեռնաշխարհը, դառնում է միայն Հայերի անբաժան Հայրենիքը:

Հայերն իրենք իրենց անվանում են «Հայ», իսկ իրենց երկիրը՝ «Հայաստան» կամ «Հայք»: Մինչդեռ բոլոր մյուս ժողովուրդները, բացի վրացիներից, Հայերին անվանում են «արմեն», իսկ նրանց երկիրը՝ «Արմենիա»: Վրացիները Հայերին անվանում են «սոմեխ», իսկ նրանց երկիրը՝ «Սոմեխեթ»:

Հայ ժողովրդի էթնիկական ծագման և կազմավորման հարցը մեր ժողովրդի պատմության հանգամանորեն չպարզաբանված, շատ կողմերով մութ ու վիճելի հարցերից մեկն է: Մինչև այժմ Հայ ժողովրդի ծագման ու նրան տրվող անունների բացատրման ուղղությամբ եղել են բազմաթիվ տեսություններ, տեսակետներ, ենթադրություններ: Սակայն դրանք մեծ մասամբ հերքվել ու մերժվել են պատմական ու փաստական տեսակետից հիմնադուրկ լինելու պատճառով:

Ո՛չ Հայկական և ո՛չ էլ օտար սկզբնաղբյուրներում Հայ ժողովրդի ծագման ու նրա կազմավորման մասին պատմական ճշգրիտ ու որոշակի վկայություններ չեն պահպանվել: Մեզ են հասել միայն Հայկական, վրացական ու հունական առասպելախառն ավանդություններ:

1. ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Նշված առասպելախառն ավանդությունների մեջ ամենահինը և **Հայկական ժողովրդական ավանդությունն է, որը հայտնի է նաև «Հայկի ու Բելի առասպել» անունով: Այս ավանդությունը մեզ է հասել երկու տարբեր սկզբնաղբյուրներից՝ Պատմահայր Մովսես Խորենացու և Սեբեոսի պատմական աշխատություններից: Ավանդության բովանդակությունը հետևյալն է:**

Առաջին աստվածները ասեղ ու երեւելի էին և աշխարհին մեծամեծ բարիքներ պատճառողներ: Սրանցից առաջանում է հաղթանդամ ու վիթխարի հսկաների ցեղը: Այդ հսկաներից մեկն էր Թորգոմի որդի Հապետոսյան Հայկը:

Գեղազանգուր ու վայելչակազմ, խայտակն ու հաստաբազուկ այս Հայկը, որը երեւելի ու քաջ էր հսկաների մեջ, ընդդիմադրում է բոլոր նրանց, ովքեր ձգտում էին իշխանություն ձեռք բերել և իշխել հսկաների և դյուցազուհիների վրա: Բարելոնում աշտարակաչինություն անհաջող փորձից հետո հսկաներից մեկը՝ Տիտանյան Բելը, բռնանում է բոլորի վրա և իրեն արքա է հայտարարում: Հայկը չի կամենում հնազանդվել Բելին, ուստի իր Արամանյակ որդին Բարելոնում ծնվելուց հետո իր որդիների, դուստրերի և թոռների հետ, որոնք զորավոր մարդիկ էին և թվով մոտ երեք հարյուր հոգի, ինչպես և այլ ընդոժինների ու իրեն միացած մարդկանց հետ, իր ամբողջ ունեցվածքով չվում, գնում է Արարատի երկիրը, որը գտնվում էր հյուսիսային կողմերում: Նա գնում բնակվում է մի լեռան ստորոտում գտնվող դաշտավայրում և այստեղ նախապես ապրող սակավաթիվ մարդկանց հնազանդեցնում իրեն: Հայկը այստեղ բնակություն տուն է կառուցում և այն իրը ժառանգություն տալիս է Արամանյակի որդուն, այսինքն՝ իր թոռանը՝ Կազմոսին:

Հայկը այստեղից, իր մնացած տունուտեղով շարժվելով դեպի հյուսիս-արևմուտք, գալիս բնակվում է մի լեռնադաշտում և այդ դաշտի անունը կոչում է Հարք, այսինքն թե այստեղ բնակվողները Թորգոմի տոհմի տան հայրերն են: Նա այստեղ չինում է նաև մի գյուղ և իր անունով կոչում է Հայկաչեն: Այս դաշտավայրի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, շատ վաղուց ապրող սակավաթիվ մարդիկ ինքնակամ կերպով հնազանդվում են Հայկին:

Բեյը, երբ լսում է Հայկի անհնազանդութեան մասին, իր որդուն հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է Հայկի մոտ և պահանջում, որ ետ վերադառնա և հնազանդվի իրեն: Սակայն Հայկը խստութեամբ մերժում է կատարել այդ պահանջը:

Բեյը գործողով է կատարում և հետևակ զորքերի բազմութեամբ գալիս հասնում է Արարատի երկիրը, Կաղմոսի տան մոտ, իսկ այնտեղից էլ շտապում է հասնել Հայկի բնակութեան սահմանները: Հայկը, փախստական Կաղմոսից Բելի հարձակման լուրն առնելով, անմիջապես հավաքում է իր քաջ և ազնուամտ որդիներին ու թոռներին, ինչպես և իր ձեռքի տակ գտնվող մարդկանց, շարժվում է Բելի դեմ: Աղի ջուր և մանր ձկներ ունեցող ծովակի (Վանա լիճ) մոտ, բարձր լեռների միջև գտնվող մի դաշտաձև տեղում Հայկը և նրա ուղեկիցները հանդիպում են Բելի զորքին: Ինքը՝ Բեյը, երկաթե սաղավարտ դրած, կուրծքը, թիկունքն ու լանջերը պղնձե տախտակներով զրահապատած, երկսայրի սրով, նիզակով ու վահանով զինված, աջ և ձախ կողմերից հսկաներով շրջապատված, գտնվում էր մի բլրի վրա:

Երկու կողմի հսկաները իրար են ընդհարվում, և այդ ընդհարումից ահագին դղրդուն է բարձրանում երկրի վրա: Երկու կողմից էլ կովի դաշտում ընկնում են ոչ քիչ թվով հսկաներ, սակայն երկու կողմն էլ անպարտելի են մնում: Մարտի ընթացքից զարհուրած Բեյը որոշում է իջնել բլրից և ամրանալ զորքի մեջ: Աղեղնավոր Հայկը այդ բանն իմանալով, առաջ է անցնում և մոտենում Բելին, պինդ քաշում իր լայնալիճ աղեղը և երեթևեյան նետի սլաքը ուղղում նրա կրծքի զրահատախտակին: Սլաքը թափով անցնելով և թիկունքից դուրս գալով, տապալում է Բելին, որն ընկնում է գետնին ու շունչը փչում: Նրա զորքը այդ տեսնելով՝ փախուստի է դիմում:

Հայկը հաղթանակի առթիվ ճակատամարտի վայրում կառուցում է դաստակերտ և անվանում Հայք. նույն պատճառով գավառն էլ անվանվում է Հայոց ձոր: Իսկ մեր աշխարհն էլ մեր նախահոր՝ Հայկի անունով կոչվում է Հայք:

Ավանդութեան մեջ այնուհետև պատմվում է, թե ինչպես Հայկի որդին՝ Արամանյակը, և նրա հաջորդ սերունդները շարժվելով դեպի հյուսիս՝ բնակութուն են հաստատում Արարատյան դաշտում և Հյուսիսային Հայաստանի տարբեր մասերում, որտեղ և նրանց անունով են կոչվում առանձին գավառների ու բնակավայրերի անունները: Այսպես, օրինակ, Արամանյակի անունով է կոչվում Արագած լեռը և

Արագածոտն գավառը, Արամայիսի անունով՝ Արմավիրը, չատակեր Շարայի անունով՝ Շիրակը, Գեղամի անունով՝ Գեղարքունիքը, Սիսակի անունով՝ Սիսականը, Արայի անունով՝ Այրարատը և այլն:

Ըստ ավանդույթյան, Հայկի սերնդից էր նաև Արամը, որը բազմաթիվ քաջագործություններ է կատարում և Հայոց աշխարհի սահմանները ընդարձակում բոլոր կողմերից: Այդ պատճառով էլ օտարները Արամի անունով Հայերին սկսում են անվանել արմեն, իսկ նրանց երկիրն էլ՝ Արմենիա:

Հայագիտության մեջ տիրել է այն կարծիքը, որ այս ավանդույթունը նախահայկական ծագում ունի, և որ նրա մեջ արտացոլվել են միայն Ասորեստանի դեմ ուրարտացիների մղած դարավոր պայքարի արձագանքները և ուրարտացիների կրոնական առասպելները: Սակայն այս կարծիքը մասամբ միայն ճիշտ լինելով՝ թերի է և անընդունելի: Իրականն ու ճիշտը այն է, որ ավանդույթյան մեջ իրենց արտացոլումն են գտել նաև Հայ ժողովրդի կազմավորման գործընթացը, այդ գործընթացին տարբեր ցեղերի ունեցած մասնակցությունը, Հայկական ցեղերի աստիճանական տարածումը Հայկական լեռնաշխարհում, Հայկական Հնագույն դիցաբանական գրույցները և այլն: Ճիշտ է, որ ավանդույթյան առանձին մասերն (Արամի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի և այլն) ունեն նախահայկական ծագում, սակայն ինքը ավանդույթունը ստեղծվել է Հայ ժողովրդի կազմավորման ժամանակ, երբ Հայկական ցեղերը դեռևս գտնվում էին տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության անցման շրջանում:

Գժբախտաբար, Հայկի ու Բելի առասպելը իր նախնական ձևով և հարազատությամբ մեզ չի հասել, այլ ավելի ուշ ժամանակաշրջանում քրիստոնեական աշխարհայացքի անմիջական ազդեցության տակ ենթարկվել է որոշ խմբագրման ու փոփոխության: Հայ ժողովրդի ծագումը Աստվածաշնչի Ծննդոց Գրքի հետ հարմարեցնելու նպատակով եկեղեցական Հայրերը ոչ միայն ավանդույթունը կապել են Աստվածաշնչի առասպելներից մեկի՝ բաբելոնյան աշտարակաշինության հետ, այլև Հայկին կամ Հայերին աշխատել են գաղթեցնել Բաբելոնից:

Ինչպես արդեն ճիշտ կերպով ցույց են տվել ուսումնասիրողներից շատերը, ավանդույթյան մեջ հիշատակվող հերոսների մեծ մասը ոչ թե պատմական անձնավորություններ են, այլ Հայ ժողովրդի կազմավորման գործընթացին մասնակցած և նրա կազմի մեջ մտած տարբեր ցեղերի հերոսականացված ու անհատականացված անվա-

նադիրներ: Այսպես, օրինակ, ավանդույթյան մեջ Հայկը Հանդես է գալիս որպես Հայ ցեղի կամ Հայասա երկրի անվանադիրը, Արամանյակը՝ արմեն ցեղի, Արան՝ ուրարտական ցեղի և այլն: Տարբեր ցեղերի անվանադիրները հաճախ միաժամանակ Հանդիսացել են նաև նույն այդ ցեղերի աստվածները: Հին Արևելքում ստեղծված շատ ավանդույթունների նման, այստեղ ևս տարբեր ցեղերի գործողությունները վերագրված են նրանց աստվածներին:

Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և Հայ ժողովրդի վրացական ավանդույթունը, որն իր «Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմությունը» վերնագրով աշխատության մեջ բերել է XI դարի

վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին:

Այդ ավանդույթյան համաձայն Հայերի նախահայր Հայկը, վրացիների նախահայր Քարթլոսը, աղվանների նախահայր Ռանոսը, եգերների նախահայր Եգրոսը և վրացական ու կովկասյան մի քանի այլ ցեղերի նախահայրերը հարազատ եղբայրներ են եղել և սերել են մի հորից՝ Թորգոմից:

Բարելոնի աշտարակաշինությունից և լեզուների բաժանումից հետո Թորգոմը իր որդիներով և իր ամբողջ ժողովրդով դուրս գալով Բարելոնից, բնակություն է հաստատում Մասիս և Արագած լեռների միջև, որոնք անմատչելի են մարդկանց համար:

Սակայն շուտով Թորգոմի ժողովուրդը բազմանում է, և Մասիսի ու Արագածի երկիրը ի վիճակի չի լինում տեղավորել նրանց, որի պատճառով էլ նրանք տարածվում են և ընդարձակում իրենց բնակության սահմանները Սև ծովից մինչև Կասպից ծովն ու Կովկասյան լեռները:

Թորգոմի որդիների մեջ, իբրև քաջարի և անվանի հսկաներ, հայտնի են դառնում ութը, այն է՝ Հայկը, Քարթլոսը, Բարդոսը, Մովականը, Լեկոսը, Հերոսը, Կովկասը և Եգրոսը:

Իրենց հոր մահից մի քանի տարի անց դյուցազն եղբայրները ապստամբություն են բարձրացնում աշխարհի առաջին բռնակալ Ներովթի դեմ և մարտում սպանում են նրան:

Ներովթին հաղթելուց հետո դյուցազն եղբայրները սկսում են հանգիստ և անկախ կերպով իշխել իրենց երկրներում: Ավանդույթունը ավելացնում է նաև, որ «Հայկը և Քարթլոսը, ինչպես և նրանց եղբայրներն իրենց ամբողջ կյանքի ընթացքում փոխադարձաբար սեր էին տածում միմյանց նկատմամբ և իրար օգնում ամեն տեսակի կարիքի ժամանակ»:

Ուսումնասիրողները հիմնավոր փաստերով արդեն ցույց են տվել, որ այս ավանդույթյունը ստեղծվել է շատ ուշ ժամանակաշրջանում, հավանաբար IX–X դարերում, հայկական ժողովրդական ավանդույթյան անմիջական ազդեցություն տակ և նրա նմանություններ ու հետևություններ: Սրանից հետևում է, որ վրացական այս ավանդույթյունը հայ ժողովրդի կազմավորման հարցի ուսումնասիրման տեսակետից առանձին գիտական արժեք չի կարող ունենալ:

Այս ավանդույթյան հիմնական արժեքն այն է, որ այնտեղ շատ հիանալի կերպով ու վառ գույներով արտահայտված է Անդրկովկասի ժողովուրդների և առաջին հերթին հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը, նրանց փոխադարձ օգնությունը ու համատեղ պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ:

Հայ ժողովրդի ծագման մասին մեզ է հասել

**Հունական
առասպելը**

նաև հունական մի առասպել, որը բերված է հույն նշանավոր աշխարհագիր Ստրաբոնի աշխատության մեջ:

«Պատմում են,— գրում է Ստրաբոնը,— որ դեպի Կողքիս նավարկման ժամանակ Յասոնը գնացել էր Թեսսալացի Արմենոսի հետ մինչև Կասպից ծովը և անցել Իբերիան, Ալբանիան (Ադվանքը) և Արմենիայի ու Մարաստանի մեծագույն մասը, ինչպես այդ վկայում են Յասոնին նվիրված սրբավայրերը և բազմաթիվ հիշատակարաններ: Պատմում են նաև, որ Արմենոսը Արմենիոն քաղաքից էր, որն այն վայրերից մեկն էր, որոնք գտնվում էին Բոյբեյիս լճի շուրջը, Փերեի և Լարիսայի միջև, և որ նրա ուղեկիցները բնակվել էին Ակիլիսենում և Սյուսպիրիտիսում՝ մինչև Կալաքենես և Ադիարենես: Եվ պատմում են նմանապես, որ երկիրն Արմենիա էր անվանվել Արմենոսի անունով»:

Եթե ընդունենք, որ այս առասպելի մեջ հիշատակվող Արմենոսը արմեն ցեղի անվանադիրն է, ապա ստացվում է, որ հին հունական առասպելներից մեկի՝ արգոնավորդների ստեղծման ժամանակ, այսինքն Ք. ա. XI–X դարերում արմենները ղուրս գալով Թեսսալիայից, եկել ու հաստատվել են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում և Հյուսիսային Միջագետքում: Սակայն նման ենթադրություններ անելու համար պատմական հիմք գոյություն չունի:

Ստրաբոնը իր աշխատության մեջ մի այլ տեղում կրկին գրեթե բառացիորեն մեջբերելով այս առասպելը՝ ավելացնում է. «Կիրսիոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին ու նրանց հետ եղողները, որ

մասնակցում էին Ալեքսանդրի արչավանքին, ասում են, որ երկիրն Արմենիա էր անվանվել Արմենոսի անունով»:

Այս վկայությունից ոչ միայն երևում է, որ Ստրաբոնը այս առասպելը վերցրել է Կիրսիոս Փարսալացուց և Մեղիոս Լարիսացուց, այլև, հավանաբար, առասպելը հորինվել է Ք. ա. IV դարի վերջում, Ալեքսանդր Մակեդոնացու արչավանքների ժամանակ, երբ հույները նման առասպելներ հորինել էին նաև պարսիկների ու մարերի՝ Բալկանյան թերակղզուց գաղթած լինելու մասին:

Վերոհիշյալ դիտողությունից և պատմական այլ փաստերից երևում է, որ այս առասպելը ևս հայ ժողովրդի կազմավորման հարցի ուսումնասիրման տեսակետից առանձին գիտական արժեք չի կարող ունենալ:

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՅԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մինչև XIX դարի սկիզբը մարդկություն, առանձին ժողովուրդների ու լեզուների առաջացումը գրեթե բացառապես բացատրվում էր **Եկեղեցական Աստվածաշնչի** առասպելներով: Ըստ այդ առասպելների՝ երկրագնդի վրա մարդկությունը առաջին անգամ առաջացել է Աստծու կողմից ստեղծված նախամարդու՝ Ադամի, իսկ երկրորդ անգամ՝ իր տապանով Արարատ լեռան վրա հանգչած և ջրհեղեղից փրկված Նոյ Նահապետի սերնդից: Մի այլ առասպելի համաձայն՝ աշխարհի տարբեր ժողովուրդները և նրանց լեզուներն առաջացել են բաբելոնյան աշտարակաշինությունից ժամանակ, երբ իբր թե Աստված խառնել է մարդկանց լեզուները, որպեսզի նրանք չհասկանան իրար և չկարողանան կառուցել դեպի երկինք, Աստծու մոտ բարձրացվող աշտարակը:

Միջնադարյան պատմագրություն մեջ տիրում էր այն տեսակետը, որ աշխարհի ամենահին, Ադամի և Նոյ Նահապետի սերնդից սերած ժողովուրդը եղել են հրեաները, իսկ մինչև բաբելոնյան աշտարակաշինությունը գոյություն ունեցող միակ լեզուն՝ եբրայեցերենը: Միջնադարյան հայ մատենագիրները ևս պաշտպանում էին այս տեսակետը: Նրանք միաժամանակ գտնում էին, որ հայոց լեզուն բաբելոնյան լեզվախառնման ժամանակ առաջացած լեզուներից մեկն է, որը հայերի նախահայր Հայկը և նրա տոհմի անդամները Բաբելոնից բերել են Հայաստան:

XVIII դարում և XIX դարի սկզբում մասամբ եվրոպական, իսկ Հիմնականում հայ եկեղեցական պատմագրությունն ու լեզվաբանությունն ներկայացուցիչները, հիմք ընդունելով Աստվածաշնչի նույն առասպելները, հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման մասին ստեղծում են մի տեսություն: Ըստ այդ տեսության մարդկությունը երկու անգամ էլ, այսինքն՝ թե՛ Ադամի և թե՛ Նոյի սերնդից, առաջացել է Հայաստանում, որով և Հայաստանը եղել է մարդկության օրրանը կամ նրա նախահայրենիքը, հայ ժողովուրդը հանդիսացել է աշխարհի ամենահին ժողովուրդը, իսկ հայերենը՝ մարդկության նախամայր լեզուն: Այս կապակցությամբ էլ հիշյալ տեսության հեղինակները, մի շարք փաստարկներ բերելով և դրանք համադրելով իրար հետ, ձգնել են «ապացուցել», որ Աստվածաշնչում նկարագրված դրախտը գտնվել է Հայաստանում: Նրանք աշխատել են «հիմնավորել», որ ջրհեղեղից հետո Արարատից իջնելով՝ Նոյը և նրա հաջորդները մնացել են Հայաստանում և խոսել են հայերեն: Ըստ նրանց՝ այս իրողությունը «հաստատում են» Հայաստանի մի շարք տեղանուններ. այսպես, օրինակ, այն տեղը, ուր Նոյը ուռի է տնկել, կոչվել է «Ակոռի («արկ ուռի»), Նոյի իջևանած առաջին վայրը անվանվել է «Նախճավան» («նախ իջևան»), իսկ Նոյի՝ հեռվից տեսած առաջին բնակավայրը՝ «Երևան» («երևալ» բառից):

Հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման մասին գոյություն ունեցող այս տեսությունը հիմնված է Աստվածաշնչի առասպելների, կամայական փաստարկումների և տեղանունների քննհաճ մեկնությունների վրա, հետևապես գիտական արժեք չի կարող ունենալ:

XIX դարի սկզբում առանձին ժողովուրդների և նրանց լեզվի, այդ թվում և հայ ժողովրդի ու հայոց լեզվի ծագման ու ցեղակցության մասին առաջացավ մի նոր տեսություն: Դա պատմահամեմատական կամ հնդեվրոպական լեզվաբանությունն առաջ քաշած տեսությունն էր:

Քննության ենթարկելով և համեմատելով առանձին լեզուներն իրար հետ՝ լեզվաբանները նկատեցին և ցույց տվեցին, որ եվրոպական գրեթե բոլոր լեզուների և Ասիայում ապրող մի շարք ժողովուրդների լեզուների բառապաշարի, հնչյունաբանության և քերականական ձևերի միջև գոյություն ունեն որոշակի նմանություններ ու կապեր: Այդ նմանություններն ու կապերը բացատրելու համար լեզվաբանները զարգացրին այն տեսակետը, որ Եվրոպայում ապրող գրեթե բոլոր ժողովուրդները, Ասիայում ապրող հնդիկները, պար-

սիկները, քրդերը, աֆղանները, օսերը և այլն ծագումով իրար ցեղակից են եղել, պատմական հեռավոր անցյալում նրանք ապրել են միատեղ, մի նախահայրենիքում և խոսել են մի ընդհանուր՝ նախամայր լեզվով, և որ հետագայում միայն նրանք բաժանվել են իրարից և գաղթել տարբեր վայրեր: Լեզվաբանները սկզբում ենթադրում էին, որ վերոհիշյալ ժողովուրդների անմիջական նախնիներ հանդիսացող ցեղերի նախահայրենիքը հանդիսացել է Հնդկաստանը, իսկ նրանց նախամայր լեզուն՝ սանսկրիտը: Այստեղից էլ այդ ցեղերն ու ժողովուրդները, ինչպես և լեզվաբանությունն այս ուղղությունը կոչվեցին «հնդեվրոպական»: Սակայն հետագայում, մերժելով Հնդկաստանը նախահայրենիք լինելու տեսակետը, հնդեվրոպաբանների մի մասը սկսեց պնդել, որ նախահայրենիքը եղել է Միջին Ասիան, երկրորդ մասը՝ Բալթիկ ծովի ափերը, իսկ երրորդ մասը՝ ընդհանրապես Արևմտյան Եվրոպան: Նրանք, ժխտելով նաև սանսկրիտը նախամայր լեզու լինելու տեսակետը, եկան այն եզրակացություն, որ հին և ներկա հնդեվրոպական ցեղերից կամ ժողովուրդներից ոչ մեկն էլ չի պահպանել նախամայր լեզուն:

1837 թ. առաջին անգամ Հ. Պետերմանը, իսկ այնուհետև նաև Ֆ. Վինդիչմանը, Ֆ. Բոպպը և ուրիշներ ապացուցեցին, որ հայերենը ևս հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներից մեկն է: Սկզբում տիրում էր այն կարծիքը, որ հայերենը պատկանում է իրանական կամ արիական ճյուղին: Սակայն հետագայում Հ. Հյուբշմանը և նրա հետևորդները վերջնականապես և հիմնավոր կերպով հաստատեցին, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի մի անկախ ու ինքնուրույն ճյուղն է կազմում:

Հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը հաստատելուց հետո, բնական է, որ այս տեսությունը հետևող լեզվաբաններն ու պատմաբանները պետք է զբաղվեին նաև հայ ժողովրդի ծագման հարցով: Նրանք պետք է աշխատեին պարզել, թե ովքեր են եղել ներկա հայերի հնդեվրոպական անմիջական նախնիները և սրանք ե՛րբ, որտեղից ու ի՞նչ ճանապարհներով են եկել ու հաստատվել իրենց նոր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում:

Հենվելով հայ ժողովրդի ծագման մասին Ստրաբոնի բերած առասպելի և հույն պատմիչների մի քանի վկայությունների վրա՝ հնդեվրոպաբանները գտան, որ ներկա հայերի հնդեվրոպացի նախնիները հանդիսացել են արմենները, որոնք հետագայում միայն տեղական ոչ հնդեվրոպական մի ցեղից վերցրել կամ ժառանգել են իրենց «հայ» անունը: Հենվելով նույն այդ վկայությունների վրա՝

նրանք արմենների գաղթի մասին զարգացրին հետևյալ տեսությունը. պատմական շատ հեռավոր անցյալում արմենները հնդեվրոպական մյուս ցեղերի կամ ժողովուրդների հետ միասին դուրս գալով նախահայրենիքից՝ նախ եկել բնակություն են հաստատել Բալկանյան թերակղզում՝ Թեսսալիայում: Այնուհետև արմենները լեզվական ու արյունակցական տեսակետից իրենց անմիջականորեն ցեղակից թրակա-փոյուզական ցեղերի հետ Ք. ա. մոտ XIII–XII դարերում դուրս գալով նաև Բալկանյան թերակղզուց և անցնելով Հելլեսպոնտոսը՝ ներխուժել են Փոքր Ասիա, որտեղից էլ 500–600 տարվա ընթացքում, դանդաղ առաջ շարժվելով՝ դեպի արևելք: Ք. ա. VII դարի վերջում մտել են Հայկական լեռնաշխարհը և հաստատվել իրենց նոր հայրենիքում: Ըստ հնդեվրոպաբանների՝ արմեններն են գլխավորել Հայ ժողովրդի կազմավորման գործընթացը և իրենց հետ ձուլել Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերին:

Հայ ժողովրդի ու հայոց լեզվի ծագման մասին հնդեվրոպական այս տեսությունը չուտով տարածվեց և ընդհանուր ընդունելություն գտավ թե՛ հայ և թե՛ օտար լեզվաբանների ու պատմաբանների կողմից:

Այս տեսության մեջ գիտականորեն ճիշտ է այն, որ հայոց լեզուն իր հիմնական բառապաշարով, քերականական կառուցվածքով և հնչյունաբանությունով պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին և կազմում է նրա ճյուղերից մեկը: Ճիշտ է նաև այն, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ առաջնային դեր են կատարել ներկա հայերի հնդեվրոպական նախնիները:

Սակայն այս տեսության կողմնակիցների այն պնդումները, թե հայերի հնդեվրոպական միակ նախնիները հանդիսացել են արմենները և նրանք գաղթել են Բալկաններից ու անմիջական ազգակից են եղել թրակա-փոյուզիական ցեղերի հետ՝ պատմական հաստատուն փաստերով չեն ապացուցված:

Ստորև մեջ ենք բերում հույն պատմիչների այն վկայությունները, որոնք հիմք են ծառայել այս տեսության կողմնակիցներին՝ ընդունելու, որ արմենները գաղթել են Թեսսալիայից և անմիջական ազգակից են եղել թրակա-փոյուզիական ցեղերի հետ:

Հերոդոտոսը, պատմելով հույն-պարսկական պատերազմի մասին և նշելով, որ փոյուզիացիներն ու արմենները նույնպես գտրնվում էին պարսից Արտաքսերքսես թագավորի (486–465) բանակում, գրում է. «Փոյուզիացիները, ինչպես մակեդոնացիներն են ասում, անվանվում էին բոիզներ, երբ եվրոպայում էին գտնվում և մակեդո-

նացիներին հարևան էին: Անցնելով Ասիա՝ երկրի հետ միասին նրանք փոխեցին և իրենց անունը: Արմենները զինված էին փոյուզիացիների նման և փոյուզիացիների գաղութներն էին: Սրանց երկուսի առաջնորդն էր Արտոքմեսը, որն ամուսնացել էր Գարեհի աղջկա հետ»:

Ք. ա. IV դարի հույն աշխարհագետ Շվոպոստը գրում է. «Իսկ արմենները ծագումով Փոյուզիայից են և նրանց լեզվում շատ բան փոյուզերենից է»:

Ք. ա. I դարի հեղինակ Դիոնիսիոս Հալիկարնասցին ավելի է առաջ գնում, վկայելով, որ արմենները և փոյուզիացիները համալեզու են:

Հերոդոտոսի վկայության մեջ, ինչպես երևում է, ոչ մի խոսք չկա ո՛չ արմենների՝ Եվրոպայից գաղթելու և ո՛չ էլ արմենները փոյուզիացիների հետ ցեղակից կամ համալեզու լինելու մասին, այլ այդ վկայության մեջ միայն ասված է, որ արմենները զինված էին փոյուզիացիների նման և փոյուզիացիների գաղութներն էին: Նույն բանակում գտնվող զորքերի միատեսակ զինված լինելը և նույնիսկ միատեսակ տարազը, իհարկե, լուրջ փաստարկ չի կարող ծառայել փոյուզիացիների ու արմենների ցեղակցության ծանրակշիռ հարցը որոշելու կամ արմեններին ևս փոյուզիացիների հետ Եվրոպայից՝ Բալկանյան թերակղզուց, գաղթեցնելու համար, մանավանդ որ հնագիտական ու մատենագրական տվյալներից հայտնի է, որ հին հայերը իրենց տարազով, զինվածությունները զգալի չափով նման են եղել նաև լեվթերին, մարերին, պարսիկներին և հարևան այլ ժողովուրդներին: Որտես ուշագրավ է Հերոդոտոսի վկայության այն մասը, որտեղ ասված է, որ արմենները փոյուզիացիների գաղութներն էին: Վկայության այս մասից հետևում է, որ փոյուզիացիները հավանաբար Ք. ա. XIII–XII դարերում Բալկանյան թերակղզուց դեպի Փոքր Ասիա կատարած ներխուժման ժամանակ նվաճել ու իրենց գաղութներն էին դարձրել նաև Փոքր Ասիայի արևելյան և Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում գտնվող հայ-արմենական ցեղերի երկրամասերը: Հայկական առանձին երկրամասերը փոյուզիացիների գաղութները լինելու փաստն իսկ ինքնին կողմնակի կերպով ապացուցում է, որ հայ-արմենական ցեղերը շատ ավելի վաղ էին բնակվում Փոքր Ասիայի արևելյան և Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերում, քան փոյուզիացիների Եվրոպայից դեպի Փոքր Ասիա կատարած ներխուժումը: Այս փաստը նաև հիմք է տալիս ենթադրելու, որ փոյուզիացիների հետ մի գործասում եղող արմենները ոչ թե բուն Հայաստանի, այլ փոյուզիացիների կողմից նվաճված և նրանց տիրապետության տակ գտնվող հայ-արմեններն էին:

Անշուշտ, չատ ավելի լուրջ են Եվգոբսոսի և Դիոնիսիոս Հալիկարնասցու վկայությունները, որոնց համաձայն հայերենը նման է փոյուզերենին կամ արմենները և փոյուզիացիները համալեզու են:

Դժբախտաբար փոյուզերեն լեզուն ամբողջությամբ մեզ չի հասել, այլ միայն մոտ 200 բառ: Հայ ժողովրդի ու հայոց լեզվի ծագման հարցերը բազմակողմանիորեն ուսումնասիրած Հ. Տաշյանը մեծ ուշադրությամբ և մի առ մի համեմատելով ու քննելով հայերեն և փոյուզերենից մեզ հասած բառերը՝ եկել է այն վճռական եզրակացության, որ հայերենը ոչ մի կապ չունի փոյուզերենի հետ: Այս նույն տեսակետին են հանգել նաև հայագետներից Հ. Հյուրչյանը, Ա. Մեյնե, Հ. Աճառյանը, Յո. Մարկվարտը և ուրիշներ: «Թեև,– գրում է Յո. Մարկվարտը,– հնագույն հայերեն հիշատակարանների և փոյուզերենի միջև 12 դարերի հեռավորություն կա, բայց և այնպես նմանություն չկա հայ և փոյուզիական լեզուների միջև»:

Ժխտելով հայերենի և փոյուզերենի նմանությունը կամ նրանց միջև գոյություն ունեցող կապը, ինքնին փաստորեն ժխտվում է նաև փոյուզիացիների հետ արմենների ունեցած անմիջական ցեղակցությունը, ինչպես փոյուզիացիների հետ արմենների Բալկանյան թերակղզուց գաղթած լինելու տեսակետը:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի ծագման մասին Ստրաբոնի մոտ բերված առասպելին, ապա պետք է ասել, որ դա պատմական հիմքից զուրկ և ուշ ժամանակաշրջանում հորինված մի առասպել է, որը չի կարող գիտական փաստարկ ծառայել արմենների՝ Թեսսալիայում ապրած լինելու, այնտեղ Արմենիոն անունով քաղաք կառուցելու, արմենների՝ Բալկանյան թերակղզուց գաղթելու և նման այլ լուրջ հարցեր ապացուցելու համար:

Այսպես կոչված հարեթական լեզվաբանության տեսության հիմնադիր Ն. Մառը հայոց լեզվի ծագման մասին առաջ է քաշում այլ տեսակետ: Բազմաթիվ բառերի անհիմն, ոչ գիտական մեկնություններով, նա նախ փորձում էր ապացուցել, որ հայերենը խառնածին լեզու է՝ կազմված հարեթական (կովկասյան) և հնդեվրոպական երկրնույթի համազոր չերտերից: Հետագայում Մառը, երբ ստեղծում է լեզուների աստիճանական դարգացման իր տեսությունը, գտնում է, որ հայերենը հարեթական աստիճանից հնդեվրոպական աստիճանին փոխանցվող լեզվի դասական օրինակ է:

**Հարեթական
և ասիանիկ
տեսությունները**

Հետևելով այս տեսությանը՝ Ն. Մառի հայ հետևորդները աշխատեցին ոչ միայն ժխտել հայերենի հնդեվրոպական բնույթը, այլև ապացուցել, որ հայ ժողովուրդը և հայոց լեզուն կազմավորվել են բացառապես տեղաբնիկ ցեղերի ու նրանց լեզուների միաձուլման, խաչավորման միջոցով:

Գր. Ղափանցյանի տեսակետի հիմքում ևս փաստորեն ընկած է հայոց լեզվի խառնածին լինելու տեսությունը: Ի տարբերություն Մառի և նրա հետևորդների, նա գտնում է, որ հայերենը հին, փոքրասիական ծագում ունի և պատկանում է ասիանիկ կոչվող լեզվախմբին, որը կազմվել է «հայասացիների, խեթերների, խուրրիտա-ուրարտական լեզուների, ինչպես և հնդեվրոպական մի (կամ մի քանի) լեզվի խառնուրդով: Գր. Ղափանցյանը ճիշտ է նշում, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ առաջատար, գլխավոր դերը կատարել են հայ (հայասցիներ) և արմեն կոչվող ցեղերը: Սակայն նա գտնում է նաև, որ հայասցիներն ու արմենները ոչ թե հնդեվրոպական, այլ տեղաբնիկ ցեղեր են, որոնցից առաջինը ազգակից է եղել խեթական, բալայական, բայց հատկապես մենգրելական ու ճանական, իսկ երկրորդը՝ խուրրիտա-ուրարտական ցեղերին:

Ն. Մառի, նրա հետևորդների և Գր. Ղափանցյանի վերոհիշյալ տեսակետները հիմնավոր չեն: Գիտականորեն ապացուցված է, որ խառնածին կամ խառն լեզուներ գոյություն չունեն, և որ հայերենն առաջացել է ոչ թե տարբեր բնույթի ցեղային լեզուների միավորման, միաձուլման, միախառնման, այլ առաջատար հայ-արմեն ցեղախմբի հնդեվրոպական լեզուն ցեղային մյուս լեզուների նկատմամբ հաղթանակող դուրս գալու, ամբողջությամբ իր քերականական ձևերն ու բառային հիմնական ֆոնդը պահպանելու, պարտված լեզուների հաշվին մասամբ հարստանալու, ցեղային լեզվից աստիճանաբար համաժողովրդական լեզվի վերածվելու ճանապարհով: Հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը, որն այժմ լեզվաբանություն մեջ ոչ մի կասկած չի հարուցում, ինքնին ցույց է տալիս, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ առաջատար դեր են կատարել ոչ թե խուրրիտա-ուրարտական կամ կովկասյան, այլ հնդեվրոպական ցեղերը: Իսկ ժամանակի ընթացքում նշված ցեղերն աստիճանաբար ձուլվել են հայ ժողովրդի մեջ:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԵՐՆ ՈՒ ԳԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական ցեղերը

Աստուրա-բարելական և խեթական արձանագրությունների հաղորդած տեղեկություններից երևում է, որ Հայ ժողովրդի կորիզը և նրա անմիջական նախնիները հանդիսացող Հայկական ցեղերը շատ վաղ, անհիշելի ժամանակներից ապրել են Հայկական լեռնաշխարհի արևմտյան և կենտրոնական, ինչպես նաև Փոքր Ասիայի արևելյան մասերում: Հին հունական, հռոմեական, սլավոնական կամ գերմանական ցեղերի նման Հայկական ցեղերը ևս բազկացած են եղել տարբեր անուններ կրող արյունակից ցեղերից: Սակայն Հայկական բոլոր ցեղերի մասին մեզ գրավոր վկայություններ չեն հասել, այլ առավելապես տեղեկություններ են հասել «Հայ» և «արմեն» կոչվող ցեղախմբերի մասին, որոնցից առաջինի անունը պահպանել են իրենք՝ հայերը, իսկ երկրորդինը՝ օտարները:

Հայ, արմեն և այլ անուններ կրող Հայկական ցեղերը ոչ թե խոսել են տարբեր լեզուներով, ինչպես կարծել են Հայագետներից շատերը, այլ իրար հասկանալի, մի միասնական լեզվի՝ հայերենի ցեղային բարբառներով: Դժբախտաբար Հայկական ցեղային հին լեզվից կամ բարբառներից մեզ գրավոր հիշատակարաններ չեն հասել: Սակայն այդ լեզվից առանձին բառեր ու քերականական մասնիկներ պահպանվել են Հայկական լեռնաշխարհի տեղանունների մեջ, որոնք, անկասկած, ունեն շատ հին ծագում:

Հայոց լեզվի «ք» հոգնակի մասնիկը, որն ունի հնդեվրոպական ծագում, ոչ միայն եզակի բառը դարձնում է հոգնակի, այլև ցույց է տալիս այս կամ այն ցեղի, ժողովրդի բնակություն վայրը, ինչպես, օրինակ, աղվան-Աղվանք, ասորի-Ասորիք, վիր-Վիրք, պարս-Պարսք և այլն: Նույն այս նշանակությունն ունի նաև ուրարտերեն «նի» հոգնակի մասնիկը:

Հայտնի է, որ Հայաստանի, հատկապես կենտրոնական և հյուսիսային գավառների մի մասի անունը վերջանում է «նիք», այսինքն՝ ուրարտերենի «նի» և հայերեն «ք» հոգնակի կրկնակի մասնիկներով, ինչպես, օրինակ, Ռշտունիք, Բզնունիք, Սոսլոտունիք, Գեղարքունիք, Արշարունիք և այլն: Այս երևույթը ցույց է տալիս, որ Հայկական ցեղերը Ուրարտական պետության կենտրոնական ու հյուսիսային շրջանները նվաճելու ժամանակ չեն իմացել, չեն գիտակցել ուրարտերեն «նի» մասնիկի նշանակությունը և այդ պատճառով էլ

արդեն հոգնակի կամ տեղ ցույց տվող ուրարտերեն մասնիկով ածանցված տեղանունների վրա ավելացրել են նաև իրենց զուտ հայկական-հնդեվրոպական «ք» մասնիկը: Այս երևույթը միաժամանակ ցույց է տալիս, որ «ք» մասնիկը հայոց լեզվի քերականական հնագույն մասնիկներից մեկն է:

Ի տարբերություն վերոհիշյալ տեղանունների, Հայաստանի մի շարք երկրամասերի, նահանգների ու գավառների անունները կազմված են զուտ հայկական «ք» մասնիկով, ինչպես, օրինակ, Մեծ Հայք, Փոքր Հայք, Բարձր Հայք, Ծոփք, Հարք, Մոկք, Տայք, Գուգարք, Ուտիք, Կորճեք և այլն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծ մասամբ նման կազմություն ունեն այն երկրամասերի անունները, որոնք կա՛մ հայկական ցեղերի հնագույն բնակավայրերն են եղել (Փոքր Հայք, Բարձր Հայք, Ծոփք, հավանաբար նաև Հարք ու Մոկք) և կա՛մ Ուրարտական պետության կազմի մեջ չեն մտել, կա՛մ շատ կարճատև ժամանակով են մտել (Տայք, Գուգարք, Ուտիք և այլն), որով և նրանք չեն ունեցել ուրարտական «նի» մասնիկը: Հայտնի է, որ ուրարտական արձանագրություններում Ծոփքը անվանված է «Ծուպանի» կամ «Յուպանի»: Սակայն հայերը ուրարտերենի հետևությունները այն «Ծուպանիք» կամ «Ծոփանիք» չեն անվանել, այլ «Ծոփք», որովհետև այս երկրամասը շատ ավելի վաղ, քան Ուրարտական պետության կազմավորումը, հանդիսացել է հայ-արմենական ցեղերի բնակավայրերից մեկը, որով և ավելի վաղ ածանցված է եղել հայկական «ք» մասնիկով ու կոչվել է «Ծոփք»: Ուրարտագետները ենթադրել են, որ հայկական «Ծոփք» տեղանունը առաջացել է ուրարտական «Ծուպանի» ձևից: Սակայն այս ենթադրությունը անհամոզեցուցիչ է և խիստ կասկածելի: Ավելի քան հավանական է, որ «Ծոփք» տեղանունը առաջացել է հայերեն «ծով» բառից: Այս ենթադրությունը համար հիմք կարող է ծառայել այն, որ այժմ էլ Ծոփքում Խարբերդ քաղաքի մոտ գտնվող լիճը կոչվում է «Ծովք»: Անկասկած է նաև, որ հունահռոմեական մատենագիրների մոտ այս երկրամասին տրվող «Սոֆենե» անունը առաջացել է ոչ թե ուրարտական «Ծուպանի», այլ հայկական «Ծոփք» անվանաձևից:

Ուշագրավ է, որ ոչ միայն Հայք աշխարհագրական անունը, որը նշանակում է հայերի բնակության վայրը կամ Հայաստան, ածանցված է հայերենի հնդեվրոպական «ք» մասնիկով, այլ Մեծ Հայք, Փոքր Հայք և Բարձր Հայք անունների «մեծ», «փոքր» և «բարձր» ածականները հայերենում ունեն հնդեվրոպական ծագում: Հայկական տարբեր երկրամասերը իրարից զանազանելու համար հիշյալ բառերի

գործածությունը, իհարկե, պատահական և ուշ ժամանակաշրջանի երևույթներ չեն կարող համարվել: Հունահռոմեական սկզբնաղբյուրների վկայություններից հայտնի է, որ Մեծ Հայքն ու Փոքր Հայքը իբրև վարչական միավորներ գոյություն ունեին դեռևս Ք. ա. IV դարի կեսից: Ն. Ադունցը կարծում է, որ վարչական այդ միավորները գոյություն ունեին նաև Քսենոփոնի ժամանակ՝ Ք. ա. V դարում:

Ուիստ ուչագրավ է նաև, որ հայերենի հնդեվրոպական ծագում ունեցող «տուն» բառի զուգորդությամբ կազմված աշխարհագրական անունների բացառապես հանդիպում ենք հայ և արմեն ցեղախմբերի բնակած հնագույն տարածքներում, ինչպես՝ Պաղնատուն, Անգեղտուն, Տունն Թորգոմա: Ա. Սաչատրյանը կարծում է, որ հայերի բնակած երկիրը հնում կոչվել է նաև «Հայոց տուն», որը միայն ուշ շրջանում նոր պարսկերենի ազդեցությամբ է դարձել «Հայաստան»:

Նշված փաստերը, ինչպես և հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը ցույց են տալիս, որ թե՛ հայերը և թե՛ արմենները խոսում էին նույն լեզվով կամ նույն լեզվի՝ հայերենի ցեղային բարբառներով, և նրանք ծագումով հնդեվրոպական ցեղեր էին:

Պատմագրության և լեզվաբանության մեջ աստիճանաբար սկսում է տիրել այն կարծիքը, որ հայերը իրենց մարդաբանական տիպով, ցեղակցությամբ, մասամբ նաև լեզվով ավելի մոտ են եղել նեսիտ-խեթերի, լուվիական և Փոքր Ասիայում բնակվող մյուս հնդեվրոպական հնագույն ցեղերին: Այս տեսակետից նախ խիստ ուչագրավ է այն, որ շատ գիտնականներ, համեմատելով Փոքր Ասիայի հնագույն բնակիչների գանգերը ժամանակակից հայերի գանգերի հետ, ապացուցել են, որ Փոքր Ասիայի հնագույն բնակիչները և ժամանակակից հայերը պատկանում են մարդաբանական նույն՝ «կարճագլուխ» կոչվող տիպին: Դրա համար էլ գիտնականները մարդաբանական այդ տիպը հայերի անունով կոչել են «արմենոիդ»: Ուսումնասիրողները զգալի նմանություններ են հայտնաբերել նաև խեթերի և հին հայերի նյութական մշակույթի, զարդաքանդակների, թաղման ձևերի ու տարազի միջև: Խեթերի ու հին հայերի մոտ տարածված է եղել նաև նույն Տարկու-Տորք, Արա, Հեփիտ, Զավալ-Զիվաղ և այլ աստվածների ու չար ոգիների պաշտամունքը: Խեթագետ-հայագետները որոշ լեզվական ընդհանրություններ ու նմանություններ են հայտնաբերել նաև խեթերենի, լուվիական լեզվի և հայերենի միջև:

Մեզ հայտնի չեն թե՛ նեսիտ-խեթերի, լուվիական և Փոքր Ասիայում բնակվող հնդեվրոպական մյուս հնագույն ցեղերի և թե՛ հայ-

կական ցեղերի որտեղից գաղթած լինելը, նրանց գաղթի ժամանակն ու ուղիները: Հայտնի է միայն, որ Հնդեվրոպական ցեղերը Փոքր Ասիայում բնակվում էին շատ վաղ, անհիշելի ժամանակներից:

Հայկական ցեղերը, ապրելով Հին Արևելքի վաղ ստրկատիրական Հզոր պետությունների միջև ընկած տարածություններում, երկրորդ հազարամյակի սկզբից պարբերաբար ենթարկվում են խեթերի, ասորեստանցիների, միտանի-սուբարիների կողմից արշավանքներին: Արտաքին Հզոր թշնամիների դեմ համատեղ կերպով պայքարելու անհրաժեշտությունից ելնելով՝ հայկական ցեղերը աստիճանաբար միավորվում են և, հավանաբար, Ք. ա. XVII–XVI դարերում ստեղծում մի քանի ցեղային միություններ:

**Հայ անվան
բացատրման
փորձերը**

Մինչև այժմ մեր ժողովրդի ազգային «հայ» անվան բացատրման ուղղությամբ եղել են բազմաթիվ փորձեր ու ենթադրություններ:

Միջնադարից սկսած մինչև XIX դարի երկրորդ կեսը ոչ միայն Հայ ժողովրդի ծագումը, այլև «հայ» և «Հայք» անունները բացառապես բացատրվում էին Հայկի ու Բելի ավանդության մեջ եղած ժողովրդական մեկնություններ: Միջնադարյան Հայ մատենագիրները, ինչպես և XVIII դարի ու XIX դարի առաջին կեսի եկեղեցական պատմագրության ներկայացուցիչները անվիճելի էին համարում, որ «հայ» և «Հայք» անունները առաջացել են Հայերի նախահոր՝ Հայկի անունից:

Հայ հին մատենագրության մեջ Հայկ է անվանված Օրիոնի-Երևակի համաստեղությունը, և այն իբրև սովորական բառ գործածված է «հսկա» իմաստով: «Հայկ» անվան կամ բառի՝ նման գործածությունները ոչ միայն ցույց են տալիս, որ Հայկը սկզբում եղել է աստված, իսկ հետագայում վերածվել է հսկայի, այլև հայկական հնագույն հեթանոսական կրոնը սերտորեն կապված է եղել աստղային համակարգության հետ: Այստեղից հետևում է նաև, որ Հայկը որպես անվանադիր ոչ թե հայ ցեղի անունն է, այլ նրա գլխավոր աստծու անունը:

«Հայկ» անվան կամ բառի ծագումը, ինչպես և «հայ» և «Հայկ» բառերի միջև գոյություն ունեցող լեզվաբանական կապը մեզ անհայտ է: Սակայն անկասկած է, որ եթե նույնիսկ լեզվաբանական կապ գոյություն ունեցած լիներ այդ բառերի միջև, ապա «հայ» անունից միայն կարող էր առաջանալ «Հայկ» անունը և ոչ թե ընդհակառակն, որովհետև տվյալ դեպքում բառի արմատը պետք է

լիներ «Հայ» բառը: «Հայք» բառը, որը պարզապես «Հայ» բառի հոգնակի ձևն է և նշանակում է «Հայեր» կամ «Հայաստան», նույնպես «Հայկ» անունից չէր կարող առաջացած լինել, քանի որ «Հայկ» բառի վերջին «կ» մասնիկը այստեղ հոգնակիի իմաստ չունի: Դա պարզ կերպով երևում է նրանից, որ Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» աշխատությունից հայերեն հին թարգմանությունից «Հակա» նշանակությամբ այդ բառի հոգնակին գործածված է «Հայկք» ձևով:

Գերմանացի գիտնական Պ. Ենսենը փորձել է ապացուցել, որ «Հայ» անունը առաջացել է խեթերի «Հաթ» կամ «Հաթիո» էթնիկական անունից, և որ լեզվական ստուգաբանությամբ «Հաթ» և «Հայ» բառերը, որպես էթնիկական անուններ, նույնն են: Վերջերս արևելագետ Ի. Մ. Դյակոնովը, անծանոթ լինելով Պ. Ենսենի այս տեսակետին և այդ առթիվ եղած քննադատություններին, կրկին փորձել է հաստատել, որ «Հաթ» և «Հայ» անունները նույնանիշ են: Ըստ Դյակոնովի ենթադրությունից՝ Ք. ա. XII–XI դարերում մուշկերը, այսինքն թրակա-փոյուզիական ցեղերը եկել հաստատվել են Փոքր Հայքում և իրենց լեզուն պարտադրել են տեղում ապրող խեթերին, սակայն և նրանք, շուտով կորցնելով կամ մոռանալով իրենց էթնիկական անունը, տեղաբնիկ խեթերի անունով իրենց անվանել են «Հայ»:

Ուսումնասիրողներից շատերը վաղուց ապացուցել են, որ «Հաթ» և «Հայ» անունների նույնանիշ լինելու վերոհիշյալ տեսակետը սխալ է և անհիմն, որովհետև խեթերը նույն հայերը կամ հայերի անմիջական նախնիները չեն եղել, և ոչ էլ «Հայ» անունը կարող էր առաջացած լինել «Հաթ» անունից: Հայտնի է, որ խեթերը իրենց երկիրը անվանել են «Հաթթի» կամ «Ուաթթի», իսկ հայ ցեղի երկիրը՝ «Հայասա»: Այս փաստը ինքնին ցույց է տալիս, որ խեթերը իրենք իրենց տարբերել են հայերից: Եթե իրոք «Հաթ» և «Հայ» անունները նույնը լինեին, ապա և խեթերը հայերի բնակած երկիրն էլ պետք է անվանեին «Ուաթթի» կամ «Հաթթի», այլ ոչ թե «Հայասա»:

Սակայն մերժելով «Հաթ» և «Հայ» անունների նույնությունը՝ պետք է ընդունել լեզվաբանորեն նրանց նմանությունը: Այդ նմանությունը, անկասկած, ոչ թե խեթերի և հայերի նույնության, այլ նրանց միջև գոյություն ունեցող անմիջական ցեղակցության հետևավանք է:

Ֆ. Շպիգելը և Հ. Կիպերտը, իսկ նրանց հետևելով նաև Ա. Ուաչատրյանն ու Ն. Դոլենսը, «Հայ» անունը աշխատել են բացատրել

հնդեվրոպական «pəti»–«պրտի» բառով, որ նշանակում է «պետ, գլխավոր»: Ըստ նրանց, հայերենին հատուկ կանոնավոր հնչյունափոխություններ «pəti»–ն դարձել է «հայ», ճիշտ այնպես, ինչպես նույն նախալեզվի «pəter»–«պրտեր» բառը դարձել է «հայր»: Հիշյալ հեղինակների ենթադրությամբ VII դարում Հայկական լեռնաշխարհը նվաճած եկվոր արմեններն են, որ այս «հայ», այսինքն՝ «պետ, գլխավոր» անունը տվել են իրենք իրենց, որպեսզի տարբերվեն բնիկներից:

Ն. Մառը փորձել է ցույց տալ, որ «հայ» անունը առաջացել է Ք. ա. VI դարում հյուսիսից դեպի հարավ արշաված հենիոխների կամ հանիոխների անունից: Փորձեր են եղել նաև «հայ» անունը ուրարտացիների գլխավոր աստված Խալդի անունով բացատրելու ուղղությամբ:

«Հայ» անունը բացատրելու վերոհիշյալ բոլոր փորձերն էլ, պատմական ու փաստական հիմքից զուրկ լով ենթադրություններ լինելով, գիտական ոչ մի արժեք չեն ներկայացնում և անընդունելի են:

Հայասա

Խեթական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ դեռևս Ք. ա. XV դարում, գուցե և ավելի վաղ շրջանում, Փոքր Հայքի և Բարձր Հայքի ընդարձակ տարածքներում կազմակերպվում է մի ուժեղ ցեղային միություն, որին խեթերը անվանում էին Հայասա կամ Հայասա–Ազգի:

Առաջին անգամ Կ. Ռոթը, իսկ այնուհետև ավելի հանգամանորեն և հիմնավոր կերպով Պ. Կրեչմերը ցույց են տվել, որ Հայասա երկիրը պարզապես նույնն է, ինչ որ Հայքը կամ Հայաստանը: Պ. Կրեչմերը ապացուցել է, որ Հայասա անվան վերջին «սա» մասնիկը փոքրասիական ածանց է, որը պարսկական «ստան» ածանցի նման ցույց է տալիս այս կամ այն ցեղի կամ ժողովրդի բնակավայրը, տեղը, որով «Հայասա» նշանակում է «հայասների», «հայոների» կամ «հայերի երկիր»: Այժմ գրեթե բոլոր ուսումնասիրողները համամիտ են, որ մեր ժողովրդի ազգային «հայ» անունը առաջացել է Հայասա երկրում բնակվող «հայ» կամ «հայա» ցեղի անունից:

Խեթական սկզբնաղբյուրներում նույն ցեղային միությունը երկու տարբեր անուններով՝ Հայասա և Ազգի անվանված լինելու փաստից հետևում է, որ այստեղ սկզբում գոյություն են ունեցել ցեղային երկու խմբավորում կամ միություն, որոնք հետագայում միանալով կազմել են մի ցեղային միություն՝ հայերի գլխավորությամբ: Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ հայերը առավելապես բնակված են եղել Հայասայի արևմտյան և

Հյուսիսային, իսկ ազգիները՝ հարավային շրջաններում:

Հայասա երկիրը առաջին անգամ հիշատակված է խեթական թագավոր Սուպիլուլիումի (1380–1346) տարեգրություն մեջ, որը խմբագրել է նրա որդին՝ Մուրշիլ II-ը (1345–1320): Այդ տարեգրությունից իմանում ենք, որ խեթերի թագավոր Տուղխալիա III-ը (1410–1390) իր որդու՝ Սուպիլուլիումի մասնակցությամբ, երկու ռազմական արշավանք է կատարել Հայասա երկրի դեմ՝ այն իրեն ենթարկելու համար: Երկրորդ արշավանքի ժամանակ Տուղխալիա III-ի դեմ դուրս է գալիս Հայասայի Կարանի թագավորը: Ճակատամարտը տեղի է ունենում Կումմախա քաղաքի մոտ, որը, հավանաբար, վերջանում է Կարանիի պարտությունով:

Է. Ֆորերը, Ն. Ադոնցը, Գր. Ղափանցյանը և ուրիշներ ճիշտ կերպով Կումմախա քաղաքը համապատասխան համարելով Եփրատի ափին գտնվող Կամախ քաղաքի հետ՝ գտնում են, որ այն հանդիսացել է Հայասայի մայրաքաղաքը: Այս քաղաքը հետագայում հայերը անվանել են նաև Կամախ–Անի կամ պարզապես Դարանադյաց գավառի Անի: Ն. Ադոնցը մատնանշում է նաև, որ Հայասայի թագավոր Կարանիի անունը հիշեցնում է Կարին գավառի և Կարին քաղաքի անունը:

Հայասա երկրի մասին ժամանակագրական տեսակետից հետագա տեղեկությունները ստանում ենք Սուպիլուլիումի և Հայասայի թագավոր Հուզգանայի միջև կնքված մի դաշնագրից: Այդ դաշնագրով պայմանավորվող կողմերը պարտավորվում են վերացնել գոյություն ունեցող թշնամությունը, չհարձակվել միմյանց վրա և փոխադարձաբար օգնել ու պաշտպանել միմյանց: Հատուկ մի կետով Հուզգանան պարտավորվում է ետ վերադարձնել խեթական թագավորությունից փխսած և Հայասայում ապաստանած ստրուկներին: Կրնքված դաշնագիրը ավելի հաստատուն դարձնելու նպատակով Սուպիլուլիումը իր քրոջը կնություն է տալիս Հուզգանային, սակայն պայմանով, որ իր քույրը վերադաս լինի Հուզգանայի մյուս կանանցից և դառնա նրա առաջին կինը: Դաշնագրի վերջում Սուպիլուլիումը հայտարարում է, որ ինքը ոչ մի թշնամություն և վատություն չի անի հայացիներին, եթե նույնը կատարեն նրանք, իսկ եթե հայացիները դրժեն իրենց խոստումը, ապա ինքը զանգվածաբար կկոտորի հայացիներին և կավերի ու կոչնչացնի նրանց քաղաքները, բնակավայրերը, տները, այգիները, ցանքսերը, խոշոր ու մանր եղջերավոր անասունները և ամբողջ ունեցվածքը:

Սեթերի և Հայասների միջև տեղի ունեցած հետագա փոխհա-

րարերու թշուհների մասին մեզ կարևոր տեղեկություններ են հասել Մուրշիլ II-ի տարեգրությունից: Այդ տարեգրությունից երևում է, որ Նեթերի երկրի և Հայաստանի միջև կնքված բարեկամության դաշնագիրը իր ուժը պահպանել է մինչև Հուզգանայի մահը: Սրան հաջորդած Անիա թագավորը, հավանաբար Ք. ա. 1338 թ., օգտվելով նրանից, որ Մուրշիլը զբաղված էր Հայասցիների հարևան կաշկացեղի դեմ մղվող պատերազմներով, հարձակվում է սահմանակից խեթական Դանկուվա քաղաքի վրա, ավերում ու կողոպտում է այն, ինչպես և այնտեղից բերում է մեծ թվով գերիներ, անասուններ և այլ հարստություն:

Կաշկացիներին հաղթելուց հետո Մուրշիլ II-ը մի դեսպանություն է ուղարկում Հայաստան-Ազգիի թագավոր Անիայի մոտ և պահանջում է վերադարձնել նրա երկիրը փախած խեթական ստրուկներին, ինչպես և այն գերիներին, որոնց նա տարել էր Դանկուվա քաղաքից: Սակայն Անիան հրաժարվում է կատարել Մուրշիլի պահանջը և նրան խիստ պատասխան է տալիս: Դրանից հետո Մուրշիլը իր զորքով գալիս և ճամբար է դնում Հայաստանի սահմանագլխին: Այստեղից նա մի նամակ է գրում Անիային և կրկին պահանջում վերադարձնել ստրուկներին ու գերիներին: Այդ նամակում Մուրշիլը գրում է. «Ես եկել և քո սահմանի վրա ճամբար եմ դրել. ես քո երկիրը չեմ ապատակել, աշխատավոր մարդկանց, եղներ ու ոչխարներ չեմ վերցրել, բայց դու ինձ հետ գժտություն սկսեցիր, եկար, ապատակեցիր Դանկուվա երկիրը և անմարդաբնակ դարձրիր այն»:

Քանի որ Անիան այս նամակից հետո էլ կրկին հրաժարվում է վերադարձնել ստրուկներին ու գերիներին, Մուրշիլ II-ը հարձակվում և գրավում է Հայաստանի սահմանային Ուրա քաղաքը: Տարեգրության այս մասը վնասված լինելու պատճառով մեզ հայտնի չեն ո՛չ Ուրա քաղաքի գրավման մանրամասնությունները և ո՛չ էլ Մուրշիլի՝ խեթական մայրաքաղաքը վերադառնալու պատճառները:

1337 և 1336 թթ. Մուրշիլ II-ը շարունակում է իր բանակցությունները Անիայի հետ և կրկին ու կրկին պահանջում վերադարձնել Նեթական պետությունից փախած և Հայաստանում ապաստանած ստրուկներին: Անիան սկզբում խոստանում է կատարել այդ պահանջը, սակայն 1336 թ. Մուրշիլին հայտարարում է, որ նա խեթական թագավորի պահանջը կկատարի միայն այն դեպքում, եթե խեթերը նախապես վերադարձնեն Հայաստանից տարված իր սեփական հպատակներին:

1336 թ. Մուրշիլը զորքի մի մասի հետ գնում է իր պետության

Հարավային չրջանները: Անիան, օգտվելով դրանից, ներխուժում է խեթերի տիրապետության տակ գտնվող Վերին երկիրը, որտեղ ավերում է Իշտիտինա չրջանը և պաշարում Կանաուվարա քաղաքը: Խեթական խոշոր զորամասերից մեկը, որը գտնվում էր այս երկրում, անմիջապես օգնության է շտապում պաշարված քաղաքին և, Կանաուվարա քաղաքի մոտ ճակատամարտ տալով, հաղթում է Անիայի բանակին, որը բաղկացած էր 10.000 հետևազորից և 700 կառամարտիկներից:

Ք. ա. 1335 թ. Մուրշիլը խոշոր ուժերով և ռազմականքերով հարձակվում է Հայասայի վրա: Նա, հաղթահարելով հայասցիների դիմադրությունը, գրավում է Արիպաս քաղաք-ամրոցը և ենթարկում սոսկալի ավերման ու կողոպուտի: Այստեղից նա շարժվում է դեպի Դուկամմա քաղաքը: Այս քաղաքի վախեցած բնակիչները, չցանկանալով ենթարկվել Արիպասյի բախտին, կամավոր կերպով քաղաքը հանձնում են Մուրշիլին և պարտավորվում ամեն տարի որոշ քանակությամբ զինվորներ տալ խեթական բանակին:

Այս դեպքերից հետո Հայասա-Ազգիի ավագները տեսնելով, որ իրենց ամրացված քաղաքները չեն կարողանում դիմադրել թշնամուն, գալիս են Մուրշիլի մոտ և հայտնում, որ երկիրը ենթարկվում է նրան և պարտավորվում են զինվորներ տալ նրա բանակին: Նրանք խոստանում են նաև նրան վերադարձնել իրենց մոտ գտնվող խեթական ստրուկներին ու գերիներին: Մուրշիլ II-ը, Հայասայի ավագներից՝ իրենց տված խոստումները կատարելու առթիվ երդում վերցնելուց հետո, ղաղաբեցնում է իր հետագա արշավանքը և 3000 գերիներով վերադառնում իր մայրաքաղաքը:

Հաջորդ տարվա գարնանը, 1334 թ., Մուրշիլը կրկին շարժվում է Հայասա, այնտեղ կարգ հաստատելու և կառավարիչներ նշանակելու համար: Սակայն հայասցիները, լսելով այդ մասին, Մուրշիլին ընդառաջ են ուղարկում Հայասայի ավագներից մեկին, որը նրան խնդրում է կրկին չարչավել Հայասա, քանի որ հայասցիները պատրաստ են ընդունել նրա հպատակությունը և խոստանում են նրան զինվորներ տալ, ինչպես և վերադարձնել իրենց մոտ գտնվող խեթական գերիներին: Իրենց տված խոստումին որպես ապացույց, հայասցիները Մուրշիլին են հանձնում խեթական 1000 ստրուկ ու գերի: Մուրշիլը Հայասան վերջնականապես նվաճելու և հպատակեցնելու հետ կապված դժվարությունները, ինչպես և հայասցիների հետագա թշնամությունը չգրգռելու և նրանց ունեցած ռազմական ուժը իր հետագա արշավանքներում օգտագործելու հանգամանքները

նկատի ունենալով՝ բավարարվում է այդքանով և ետ վերադառնում:

Հակառակ Մուրչիլ II-ի տարեգրություն միակողմանի բնույթին, դժվար չէ նկատել, որ խեթերին չէր հաջողվել վերջնականապես հպատակեցնել Հայասան, և որ նա դրանից հետո էլ պահպանել էր ինքնուրույնությունը:

Հայասա երկիրը վերջին անգամ հիշատակված է Տուղխալիա IV-ի (1260–1230) մի արձանագրության մեջ: Այստեղ Տուղխալիա IV-ը Հայասա, Կաչկա և Լուկկա երկրները համարում է խեթերին սահմանակից և թշնամական երկրներ, ինչպես և պահանջում է իր սահմանային բերդերի կառավարիչներից չհամախառնել այդ երկրների բնակչության ունեցվածքը և չնեղացնել նրանց: Այս վկայությունը ոչ միայն երևում է, որ Հայասցիները խեթերին հպատակվելու և նրանց զորք տալու մասին Մուրչիլ II-ին տված իրենց խոստումը երկար չէին պահել, այլև այն, որ Հայասան XIII դարի կեսերին զգալի չափով ուժեղացել էր:

Ելնելով խեթական արձանագրությունների հաղորդած տեղեկություններից՝ Հայասցիները XV–XIII դարերում դեռևս ապրում էին տոհմատիրական կարգերում կամ, ավելի ճիշտ, տոհմատիրական կարգերի աստիճանական քայքայման շրջանում:

Հայասցիների հիմնական տնտեսական զբաղմունքը անասնապահությունն ու երկրագործությունն էր: Նրանց մոտ զարգացած էր նաև մետաղամշակությունը և արհեստագործությունը:

Խեթական արձանագրություններում հիշատակված են Հայաստանում գտնվող մոտ տասնհինգ քաղաք և բերդ: Եթե նկատի ունենանք, որ խեթական արձանագրությունների մեջ հիշատակված են Հայասայի քաղաքների ու բերդերի միայն մի մասը, ապա կարելի է հաստատ կերպով ենթադրել, որ Հայասայում կար ավելի քան երեսուն քաղաք ու բերդ: Այս քաղաքների ճնշող մեծամասնությունը իսկական առումով քաղաքներ չէին, այլ ավելի շուտ՝ ցեղային բերդչեններ, բերդ-ամրոցներ:

Հայասայում ստրկատիրությունը շատ քիչ էր զարգացած, և ստրուկների շահագործումը դեռ թույլ էր: Այստեղ ստրկատիրությունը ուներ մեծ մասամբ նահապետական բնույթ: Դրա լավագույն ապացույցն այն է, որ շատ հաճախ Խեթական թագավորությունից ստրուկները փախչելով՝ գալիս էին Հայասա: Որոշ ուսումնասիրողներ, ելնելով ստրուկների Հայասա փախչելու փաստից, ենթադրել են, որ այնտեղ ստրկատիրություն բոլորովին գոյություն չի ունեցել: Սակայն նման ենթադրությունը անհիմն է և սխալ: Հայասցիների

կողմից խեթական Դանկուվա քաղաքի շրջանից մեծ թվով գերիներ ու ստրուկներ տանելու, խեթական գերիներին ու ստրուկներին վերադարձնելու մասին Մուրշիլի պահանջը Անիայի կողմից համառ կերպով չկատարելու, խեթերից փախած 1000 ստրուկ Մուրշիլին հանձնելու և այլ փաստերը ցույց են տալիս, որ ստրկատիրությունը գոյություն է ունեցել Հայաստյում, բայց թույլ զարգացած է եղել և ունեցել է նահապետական բնույթ:

Հակառակ նրան, որ խեթական արձանագրություններում Կարանին, Հուզգանան և Անիան անվանվում են թագավորներ, սակայն իրականություն մեջ նրանք ոչ թե թագավորներ են եղել, այլ Հայասայի ցեղային միություն ատաճնորդներ: Ցեղային միության ատաճնորդի պաշտոնը Հայաստյում եղել է ժառանգական: Այդ պաշտոնում եթե միշտ չէ, որ ընտրվել են նախորդ ատաճնորդի որդիները, սպա միշտ ընտրվել են նույն ընտանիքից: Ատաճնորդի կողքին գոյություն է ունեցել նաև ցեղային միության խորհուրդ, որը կազմված է եղել ցեղային միության մեջ մտած ցեղերի ատաճնորդներից կամ ցեղապետներից: Ցեղային միության խորհուրդը և նրա անդամները շատ վճռական դեր են կատարել երկրին վերաբերող կարևոր հարցերի լուծման ժամանակ: Այդ հանգամանքը շատ պարզ երևում է նրանից, որ Հայասան խեթերին հպատակվելու մասին որոշումը երկու անգամ էլ Մուրշիլին հայտնում են ցեղային միության խորհրդի ավագները. նրանք են, որ բանակցությունների մեջ են մտնում Մուրշիլի հետ և նրան հանձնում Հայաստյում գտնվող խեթական գերիներին ու ստրուկներին:

Տոհմատիրական կարգերի քայքայման շրջանում գտնվող բոլոր ցեղերի նման, Հայասցիները ևս եղել են խիստ մարտունակ: Սրանց զորքը կազմված է եղել հետևակազորից ու հեծելազորից: Նրանք պատրաստել և մարտում օգտագործել են նաև ռազմակառքեր: Հայասցիների բարձր մարտունակությունն էր հիմնական պատճառներից մեկը, որ խեթական թագավորները վարձով և այլ միջոցներով աշխատում էին իրենց զորքի կազմում ունենալ նրանցից կազմված զորամասեր:

Քանի որ Հայասցիները գտնվում էին տոհմատիրական կարգերի քայքայման շրջանում, բնական է, որ հարևանների և հատկապես խեթերի ունեցած հարստությունները գրգռում էին նրանց ընչաքաղցությունը: Կողոպուտի միջոցով անասուններ և այլ հարստություններ ձեռք բերելը դարձել էր այս ցեղերի հիմնական նպատակներից մեկը: Մեծ մասամբ դրանով պետք է բացատրել այն, որ Հայասցիները ամեն մի հարմար առիթ օգտագործում էին խեթական սահ-

մանակից շրջանների վրա հարձակվելու և կողոպտելու համար:

Հայասցիների պանթեոնը կազմված էր տարբեր ցեղերի աստվածներից: Հայասայի և Սեթական թագավորությունների միջև կնքված դաշնագրերից մեկի վերջում նշված են Հայասայի տասնչորս քաղաքների աստվածները:

Արմենի- Շուպրիա

Հակառակ հնդեվրոպաբանների բոլոր պնդումներին, արմենները շատ ավելի վաղ, քան փոյուզիական ցեղերի ներխուժումը Փոքր Ասիա, ապրում էին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան, արևմտյան շրջաններում և Փոքր Ասիայի արևելյան մասերում: Նրանք տարածված էին պատմական Փոյուզիայի (Կապադովկիա) արևելյան շրջաններից մինչև Սասնա լեռների ստորոտները: Հայկական լեռնաշխարհում, հավանաբար, նրանց հնագույն բնակավայրերն էին Ծոփք, Հանձիթ, Մնձուր, Անգեղտուն գավառները և Թոգարմա երկիրը:

Ասորեստանյան արձանագրություններում արմենները հիշատակված են «ուրումե», ուրարտական արձանագրություններում «ուրմե» կամ «արմե», իսկ Հոմերոսի «Իլիական»-ում՝ արիմ անուններով:

Հայազետ բոլոր լեզվաբաններն ու պատմաբանները համամիտ են, որ «Արմենի», «Արմենիա» կամ հին պարսկերեն «Արմինա» անվան վերջին «նի», «նիա» կամ «ինա» մասնիկը ոչ թե հնդեվրոպական, այլ խուրրիտա-ուրարտական ծագում ունի, որը, ինչպես տեսանք, Հայկական «ք» կամ նոր պարսկերեն «ստան» մասնիկի նման այս կամ այն ցեղի բնակություն վայրն է ցույց տալիս: Բ. Պիտտրովսկու իրավացի դիտողությամբ՝ «Արմենի» անունը, կազմված լինելով «արմեն» կամ «արմե» ցեղանունից և խուրրիտա-ուրարտական «նի» ածանցից, նշանակում է, «Արմենների երկիր» կամ «արմե ցեղի երկիր»: Այս անվան՝ բացառապես օտարների մոտ տարածված ու պահպանված լինելու երևույթը ինքնին ապացուցում է, որ ոչ թե արմեններն են իրենց երկիրը անվանել «Արմենի-Արմենիա», այլ նրանց հարևան խուրրիտա-ուրարտական ցեղերը: Անկասկած է, որ արմեններն իրենց երկիրը պետք է անվանած լինեին «Արմենք»՝ այնպես, ինչպես նրանց ցեղակից Հայերը իրենց երկիրը կոչել էին «Հայք»:

«Արմենի-Արմենիա» անվան կազմությունը ցույց է տալիս, որ այն իբրև ցեղային երկիր գոյություն է ունեցել Հայկական լեռնաշխարհում դեռևս Ուրարտական պետության կազմավորումից շատ առաջ, և նրա անունով էլ հետագայում Հայաստանը օտարները ան-

վանել են «Արմինա», «Արմենի» կամ «Արմենիա»:

Մի հին արձանագրության հաղորդած տեղեկությունների համաձայն Ք. ա. մոտ 2550 թ. տասնյոթ «թագավորներ» կամ ավելի ձիշտ՝ ցեղային երկրների առաջնորդներ Ակկադի Նարամսին թագավորի դեմ մի դաշնություն են կազմակերպում: Այդ դաշնությունում հինգերորդը հիշատակված է Հաթթիի, այսինքն՝ Նեթերի երկրի Պամբա թագավորը, վեցերորդը՝ այժմյան Կեսարիայի մոտ գտնվող Կաննեշ երկրի Զիպանի թագավորը, իսկ տասնմեկերորդը՝ Արմանի երկրի Մանդակինա թագավորը:

Բացի Հաթթի և Կաննեշ երկրներից, դժբախտաբար, այս համադաշնությունը մասնակցած մյուս ցեղային երկրների տեղադրությունը հայտնի է: Հաթթի և Կաննեշ երկրների տեղադրությունը ավելի շատ հիմք է տալիս ենթադրելու, որ դաշնության մեջ մտած բոլոր երկրները, այդ թվում և Արմանի երկիրը, գտնվում էին Փոքր Ասիայի արևելյան և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան չրջաններում: Եթե հետազայում հնարավոր լինի ավելի հաստատուն փաստերով Արմանի երկիրը տեղադրել Հայկական լեռնաշխարհում, ապա վերոհիշյալ արձանագրության տեղեկությունը կհանդիսանա արմենների և նրանց ցեղային երկրի մասին մեզ հասած ամենահին գրավոր տեղեկությունը:

Արմանի երկիրը երկրորդ անգամ հիշատակված է Սարգոն I-ի Ք. ա. (1980–1948) մի արձանագրության մեջ, որտեղ նա հայտնում է, որ իր ժամանակ, ի չարս այլ երկրների, Ասորեստանի տիրապետության տակ են եղել նաև Շուպրիա, Լուբդի, Լուլլուբի և Արմանի երկրները:

Շուպրիա երկիրը, ինչպես ձիշտ կերպով նշել է Ն. Ադոնցը, ասսուրական ավելի ուշ չրջանի արձանագրություններում հաճախ հիշատակվող Շուպրիա երկիրն է, որին բոլոր ուսումնասիրողները հաստատուն կերպով տեղադրում են Հայաստանի Աղձնիք նահանգում:

Ուսումնասիրողները Արմանի երկիրը տեղադրել են Դիալա գետի չրջանում: Հ. Տաչյանը ևս Արմանի երկիրը տեղադրելով Ուրմիո լճից հարավ, սակայն գտնում է, որ այն հանդիսացել է արմենների հին բնակավայրը, և որ արմենները ոչ թե Եվրոպայից, այլ այստեղից են եկել Հայկական լեռնաշխարհ՝ հետևելով մարերի արշավանքին, և սրանց անունով էլ մարերն ու պարսիկները Հայաստանը անվանել են Արմինա կամ Արմենիա: Ըստ Հ. Տաչյանի արմենները մարա-իրանական ցեղեր են եղել:

Սակայն Արմանի երկրի վերոհիշյալ տեղադրությունը հիմնավոր

ու հաստատուն չի կարելի համարել, որքանով որ Սարգոն I-ի արձանագրության մեջ հիշատակվող երկրները թվարկված են ոչ թե հյուսիսից դեպի հարավ աշխարհագրական հերթականությամբ, այլ խառը կերպով, մեջընդմեջ, մեկ՝ հյուսիսից և մեկ՝ հարավից: Ծուլարիա երկրի տեղագրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Արմանի երկիրը ևս գտնվում էր Հայաստանի հարավային մասում, հիշյալ երկրին անմիջականորեն մոտիկ շրջաններում: Եվ իսկապես, ավելի ուշ շրջանի ասուրական և ուրարտական արձանագրությունները հաստատում են, որ Արիմե, Ուրումե, Արմե կամ Ուրմե ցեղային երկիրը, որը փաստորեն նույն Արմանի կամ Արմենի երկիրն է՝ առանց «նի» ածանցի, գտնվել է Ծուլարիայից դեպի արևմուտք և սահմանակից է եղել նրան:

Բ. Պիտրովսկին, Գ. Մելիքիչվիլին և ուրիշներ Արմե երկիրը նույնացնելով Ծուլարիայի հետ՝ տեղագրում են Աղձնիքում, իսկ Գր. Ղափանցյանը այն տեղագրում է Աղձնիքից դեպի արևմուտք գտնվող սահմանակից Անգեղտուն գավառում: Պետք է կարծել, որ Արմանի-Արմենի ցեղային երկիրը իր մեջ ընդգրկում էր Մեծ Ծոփք, Անգեղտուն, Հանձիտ, Մնձուր, Սասունք գավառները: Հավանաբար Ք. ա. X դարում արմեն կամ արմե կոչվող հայկական ցեղերը գրավել և իրենց ցեղային միության տարածքին են միացրել նաև Ծուլարիան: Ըստ երևույթին դրանով պետք է բացատրել, որ ուրարտական արձանագրություններում Ծուլարիա երկիրը բոլորովին չի հիշատակվում, և որ ուրարտացիները Արմե կամ Ուրմե երկրի անվան տակ հասկանում էին նաև Ծուլարիան:

Ավելի քան հավանական է, որ Արմենի-Ծուլարիա ցեղային միության կենտրոնը հանդիսացել է Անգեղտուն գավառի Անգեղ բերդաքաղաքը: Դա ոչ միայն երևում է նրանից, որ հին հայերի նշանավոր աստվածներից մեկի՝ Տորքի պաշտամունքի գլխավոր վայրը եղել է Անգեղ բերդաքաղաքը, այլև ըստ Փավստոս Բուզանդի՝ այստեղ են թաղված եղել հայ հին թագավորներից շատերը:

«Ուրումե» ձևով արմեններին իր տարեգրության մեջ առաջին անգամ հիշատակում է Թիզլաթպալասար I-ը: Նա հայտնում է, որ իր գահակալությունից հիսուն տարի առաջ, մոտ 1170–1165 թթ. ուրումեացիները ուժով գրավել էին Ծուլարիա երկրի Ալզի և Պուրուումգի շրջանները, այսինքն՝ Աղձնիքը, որի թվում և Սասունը: Սակայն ինքը հաղթել ու իրեն է հպատակեցրել նրանց:

Ք. ա. IX դարից սկսած Արմենի-Ծուլարիա երկիրը հաճախակի ենթարկվում է ասուրական և ուրարտական թագավորների կո-

ղոպտիչ արչավանքներին:

Իր թագավորութեան առաջին շրջանում Արիմե–Արմե երկրի վրա մի խոշոր արչավանք է կատարում Ասորեստանի Ադադնիրարի (911–889) թագավորը, որի ժամանակ նա նվաճում, կողոպտում և իրեն է ենթարկում այդ երկիրը:

Սակայն արիմե–արմենները երկար չեն մնում Ասորեստանի տիրապետության տակ: Հավանաբար Ադադնիրարիի մահից հետո նրանք ոչ միայն ազատագրվում են Ասորեստանի տիրապետությունից, այլև հարձակման անցնելով, գրավում են Ասորեստանին ենթակա մի շարք քաղաքներ: Գա պարզ կերպով երևում է Ասուր–նազիրպալ II–ի մի արձանագրությունից, որտեղ նա հայտնում է, որ ասուրական այն զինվորները, որոնք Սալմանասար I թագավորի կողմից վերաբնակեցվել էին Նաիրի երկրի Սինաբու, Տիդու և այլ քաղաքներում, բռնի ուժով վտարվել էին Արիմե երկրի մարդկանց կողմից, և ինքը՝ Ասուրնազիրպալը, կրկին նրանց հաստատել է իրենց նախկին տեղերում: Նույն Ասուրնազիրպալի տարեգրությունից հայտնի է նաև, որ նա իր 882 թվականի արչավանքի ժամանակ հարկ է ստացել մի շարք երկրներից, որոնց թվում և Արիմե–Ուրումե և Նաիրի երկրներից:

Ուրարտական թագավորներից առաջինը Մենուան է արչավում Արմենի–Շուպրիա երկրի վրա՝ այն անվանելով Ուրմե երկիր կամ Ուրմեուխի: Նա Մուշ քաղաքի մոտ թողած իր արձանագրության մեջ հայտնում է, որ արչավել է Ուրմե երկիրը և նվաճել նրա Կուլիմար քաղաքը, այսինքն՝ հետագա հայկական Քղիմար քաղաքը և 400 բնակավայր:

Ք. ա. 773 թ. Արգիշտի I-ը, Տարոնը նվաճելուց հետո, նույնպես մի խոշոր արչավանք է կատարում Ուրմե երկրի վրա, որտեղ ավերում, այրում է քաղաքներն ու բնակավայրերը և այնտեղից տանում 24.813 գերի, տասնյակ հազարավոր խոշոր ու մանր եղջերավոր անասուններ: Արգիշտի I-ին հաջորդող Սարգուր II-ի տարեգրությունից տեղեկանում ենք, որ նա մեկ տարվա ընթացքում՝ 751 թվականին, երեք արչավանք է կատարել զեպի Արմե երկիրը, որոնց ընթացքում նվաճել ու ավերել է տասնմեկ ամրոց և այնտեղից տարել է 1100 պատանի, 6500 կին, 2000 զինվոր, 2538 գլուխ խոշոր և 8000 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ մինչև Ք. ա. VII դարի կեսը արիմ–արմե կամ արմեն կոչվող հայկական ցեղերը ապրում էին տոհմատիրական կարգերի աստիճանական քայքայման շրջանում: Այդ ցեղերի հիմնական զբաղմունքը անաս-

նապահությունն ու երկրագործությունն էր: Սրանց մոտ ստրկատիրությունը քիչ էր զարգացած և ուներ նահապետական բնույթ: Այդ հանգամանքը երևում է նրանից, որ Ասորեստանից և Ուրարտուից ստրուկները փախչում և ապաստանում էին **Թոգարմա կամ Թեգ-Արամա** Արմենի-Շուպրիայում:

V դարի Հայ պատմագիրներ Փավստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին, ինչպես և հետագա դարերի պատմագիրներից շատերը Հայերին սերած են համարում Աստվածաշնչյան Թորգոմի սերնդից: Դրա համար էլ նրանք շատ հաճախ Հայերին անվանում են «Որդիք Թորգոմա» կամ «Ազգն Թորգոմա», իսկ Հայաստանը՝ «Տունն Թորգոմա»: Հայկական ժողովրդական ավանդույթյան մեջ և Հայերի նախահայր Հայկը համարվում է Թորգոմի որդին: Հետաքրքիր է նշել, որ Հայ պատմագիրներից դեռ շատ առաջ III–IV դարերի եկեղեցական պատմագիրներ Հիպպոլիտոսը և Եվսեբիոս Կեսարացին նույնպես Հայերին սերած են համարել Թորգոմի սերնդից, իսկ «Տունն Թորգոմա» ասելով հասկացել են Հայաստանը:

Եզեկիել մարգարեն Բ. ա. 592–570 թթ. խոսելով Փյունիկիայի Տյուրոս քաղաքի մասին, Աստվածաշնչում վկայում է. «Իսկ Թորգոմի տնից քո վաճառանոցները լցվում են բեռնաձիերով և նժույգներով ու ջորիներով»: Նույն մարգարեն մի այլ տեղ նույնպես վկայում է. «Գոմերը և բոլոր երկրները, որոնք նրա շուրջն են գտնվում և Թորգոմի տունը ծայր հյուսիսում և բոլոր երկրները, որ նրա շուրջն են»:

«Տունն Թորգոմա»-ն, որը Եզեկիել մարգարեի վկայության համաձայն գտնվում էր Գոմեր կամ Գամեր երկրի, այսինքն՝ կիմմերների երկրի (հմմտ. հայերեն Գամիրք-Կապաղովկիա) մոտ և ծայր հյուսիսում, շատ ուսումնասիրողներ ճիշտ կերպով համապատասխան են համարում խեթական արձանագրություններում հիշատակվող Թեգ-Արամա, իսկ ասսուրական արձանագրություններում հիշատակվող Թիլ-Գարիմու երկրի հետ և այն տեղագրում են Մեկիտինն քաղաքի շրջանում, այսինքն՝ հետագայի Երրորդ Հայքի տարածքում:

Առանձին Հայագետներ Հայերին և Հայաստանին տրվող վերոհիշյալ անվանումները համարում են անարժեք և պատմական հիմքից զուրկ: Ըստ նրանց, քրիստոնյա հին պատմագիրները Հայերին Թորգոմի սերնդից սերված են համարել կամ «Տունն Թորգոմա»-ն նույնացրել են Հայաստանի հետ պարզապես Հին Կտակարանի Ծննդոց Գրքի և Եզեկիել մարգարեի վերոհիշյալ վկայությունների անմիջական ազդեցության տակ և Հայ ժողովրդի ծագումը Աստվածաշնչի

Հետ կապելու ու հարմարեցնելու նպատակով:

Սակայն այժմ հայազեւոյնների շատերը այս տեսակետը համարում են անընդունելի և գտնում են, որ Հին պատմագիրների կողմից հայերին և Հայաստանին տրվող «ազգն», «որդիք» կամ «Տունն Թորգոմա» անվանումները ունեն որոշակի պատմական հիմք:

Հայազգիտական Հին և նորագույն աշխատութիւններում արդեն ցույց է տրված, որ Թորգոմա երկիրը կամ Հետագայի Երրորդ Հայքի տարածքը ոչ միայն Հնուց սկսած միշտ հայաբնակ է եղել, այլև հանդիսացել է հայ-արմենական ցեղախմբերի հնագույն բնակավայրերից մեկը:

Առաջին անգամ Ֆ. Լը Նորմանը, իսկ Հետագայում նաև շատերը ապացուցել են, որ Թորգոմա կամ Թեզ-Արամա անունը կազմված է «Թոզ»-«Թեզ» և «արմա»-«արամա» բառերից, որոնցից առաջինը նշանակում է «ազգ», «ցեղ», «տուն», «երկիր», իսկ երկրորդը՝ «արմա-արամա», այսինքն՝ «արմե» կամ «արմեն» ցեղանուն: Որով «Թորգոմա»-«Թեզ-Արամա» նշանակում է «արմա-արմենների» կամ «արմենների ազգ, տեղ, տուն կամ երկիր»:

Վերոհիշյալ բացատրութիւնից երևում է, որ Արմենի-Շուպրիայում և Թորգոմա երկրում ապրող արիմ-արմենները կամ արմենները անմիջականորեն իրար ցեղակից են եղել, կրել են նույն անունները և խոսել են մի միասնական լեզվով: Հայկական ժողովրդական ավանդութիւնի «Թորգոմ ծնանի զՀայկ» վկայութիւնից երևում է, որ Թորգոման ոչ միայն եղել է հայկական ցեղային միավորումներից մեկի անունը, այլև հանդիսացել է հայ-արմենական ցեղերի աճման ու ձևավորման հիմնական կենտրոնը:

Թորգոման գտնվելով, մի կողմից՝ Ասորիքի և Միջագետքի, իսկ մյուս կողմից՝ Փոքր Ասիայի միջև կատարվող առևտրի հիմնական ճանապարհի վրա՝ դեռևս Ք. ա. XVII դարում նվաճվում է Խեթական պետութիւնի կողմից և մի քանի դար մնում նրա տիրապետութիւնի տակ:

Տուրխալիա III-ի ժամանակ Թորգոման և տասնչորս այլ ցեղային երկրներ ապստամբութիւն են բարձրացնում և փորձում ազատագրվել խեթերի տիրապետութիւնից: Սակայն այդ ցեղերը չկարողանալով դիմադրել խեթերին, ստիպված են լինում անցնել Մոփք, որոնց հետագայում Սուպալիուլիումը վերագարձնում է իրենց նախկին բնակավայրերը:

Ք. ա. մոտ 1200 թ. փոյուզիական ցեղերի կողմից Խեթական պետութիւնը կործանելուց հետո Թորգոման ազատագրվում է խեթերի

տիրապետութունից և ինքնուրույնութունն է ձեռք բերում:

Ք. ա. 695 թ. Ասորեստանի Մինախեթի թագավորը մի ռազմական արշավանք է կատարում դեպի Թոգարմա երկիր, որտեղ թագավորում էր Գուրդի անունով մեկը: Մինախեթի իր արշավանքի ժամանակ խոշոր Հաջողության չի Հասնում: Նրա տարեգրության Հաղորդած տեղեկության Համաձայն Գուրդին խուսափում է ճակատամարտից, իսկ ասորեստանցիներն էլ Թոգարման կողոպտելուց ու ավերելուց Հետո ետ են վերադառնում:

Թոգարման զգալի չափով ուժեղանում է Գուրդիի Հաջորդների ժամանակ: 675–673 թթ. ընթացքում Ասորեստանի ԱսարՀազդոն թագավորի՝ Շամաչ աստծուն ուղղած աղոթքներից մեկից իմանում ենք, որ Թոգարմայի Մուգալու թագավորը զրավել և իր իշխանությանն էր միացրել նաև Մեխիտինե քաղաքը:

Էդ. Ֆորբեր, իսկ նրան Հետևելով նաև Ն. Ադոնցը և Հ. Մանանդյանը, մի կողմից՝ ելնելով փոյուզիական ցեղերի Հետ արմենների՝ Բալկաններից գաղթած լինելու տեսութունից, իսկ մյուս կողմից՝ Գուրդի անունը նույնացնելով փոյուզիական Գորդիոս անվան Հետ՝ գտնում են, որ Թոգարմայի Գուրդի թագավորը ոչ միայն եղել է մուշկերի Միտա–Միդաս թագավորի որդին կամ մոտիկ ազգականներից մեկը, այլև Հանդիսացել է փոյուզիական արմենների առաջնորդը, որոնք այժմյան Կեսարիա քաղաքի շրջակայքից շարժվելով դեպի արևելք, եկել բնակություն են Հաստատել իրենց նոր Հայրենիքում՝ Փոքր Հայքում: Գուրդի և Գորդիոս անունների նույնացումից արմենների գաղթի մասին նման ծանրակշիռ եզրակացություն անելը անհամոզեցուցիչ է: Եթե նույնիսկ ընդունենք Գուրդի և Գորդիոս անունների նույնությունը, ապա դրանից լավագույն դեպքում կարելի է ենթադրել, որ փոյուզիացիները կամ մուշկերը նվաճել էին նաև Թոգարման և իրենց ենթարկել այստեղ դեռևս չատ վաղուց ապրող Հայ–արմենական ցեղերին: Սրա Համար իրև ապացույց կարող է ծառայել Հերոդոտոսի այն վկայությունը, որ «արմենները փոյուզիացիների գաղութներն էին»:

Թոգարմայում ապրող Հայկական ցեղերի տնտեսական զբաղմունքը գերազանցապես եղել է անասնապահությունը, և անասունները Հանդիսացել են նրանց Հիմնական Հարստությունը: Եզեկիել մարգարեի՝ վերևում մեջ բերած վկայությունից երևում է, որ Թոգարմայից վաճառքի Համար դեպի Ասորիքի և Փյունիկիայի վաճառաչահ ծովափնյա քաղաքներն են արտահանվել ձիեր, ջորիներ, անասուններ և, Հավանաբար, նաև գյուղատնտեսական մթերքներ: Պետք է

ենթադրել, որ նման արտահանումները կատարում էին ասորեստան-
ցի առևտրականները, որոնք հնուց գաղութ-քաղաքներ ունեին ոչ
միայն Փոքր Ասիայում, այլ Արմենի-Շուպրիայում, հավանաբար նաև
Թոգարմայում:

4. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

**Հայկական ցեղերի Դեռևս Ուրարտական պետության գոյություն-
գերիչխանություն** նից առաջ Փոքր Հայքի, Բարձր Հայքի, Ծովքի,
հաստատումը **Հայկական լեռ-
նաչխարհում** Երկրորդ Հայքի կամ Թոգարմա երկրի, Աղձնիքի
և Տարոնի մի զգալի մասի բնակիչները հիմնա-
կանում հայ, արմեն, գուցե և այլ անուններ կրող
Հայկական ցեղեր էին: Ուրարտական թագա-

վորների կողմից այս երկրամասերից տասնյակ հազարավոր մարդ-
կանց գերեվարելու և նրանց պետության տարբեր մասերում վերա-
բնակեցնելու հետևանքով Ք. ա. VIII–VII դարերում զգալի չափով
աճում է նաև Հայկական էթնիկական ծագում ունեցող բնակչության
թիվը Հայկական լեռնաչխարհի կենտրոնական շրջաններում և
Արարատյան դաշտում:

Ք. ա. VII դարի վերջում մի կողմից Մարաստանի ու Բաբելոնիայի,
իսկ մյուս կողմից Ասորեստանի ու Ուրարտուի միջև մղվող պայքարի
ժամանակ Հայերը հանդես էին գալիս իբրև մարերի դաշնակից: Ըստ
Մովսես Խորենացու բերած ավանդական պատմության՝ Հայերը գոր-
ծուն կերպով մասնակցում էին 612 թ. Ասորեստանի մայրաքաղաք
Նինվեի գրավմանն ու կործանմանը: Հայկի և Բելի միջև տեղի ունե-
ցած ճակատամարտի վայրը Ուրարտուի մայրաքաղաք Տուշպային
մոտիկ գտնվելու և այն Հայոց ձոր վերանվանելու փաստերը ցույց են
տալիս, որ Հայկական ցեղերը մարերի հետ միասին գործուն կերպով
մասնակցել են նաև Ուրարտուի կործանմանը:

Օգտվելով ստեղծված դրությունից, ինչպես և ի փոխհատուցումն
իրենց ցույց տված օժանդակության, մարերի համաձայնությունը
Հայկական ցեղերը նվաճում և իրենց տիրապետությունն են ենթար-
կում ոչ միայն Տարոնի մնացած մասը, Հարքը, Մոկաց աչխարհը և
Ուրարտուի կենտրոնական շրջանները, այլև Կորճեքն ու Հյուսիսային
Միջագետքը: Որ իրոք Հայկական ցեղերը գրավել էին նաև Կորճեքն
ու Հյուսիսային Միջագետքը, հաստատվում է Ստրաբոնի այն վկա-
յությունը, որ Միսպիրիտիսը, Կալաքենեն և Ադիարենեն գտնվում էին
Հայ-արմենների հնագույն բնակավայրերի թվում: Ուսումնասիրող-

ներն արդեն ցույց են տվել, որ Սիսպիրիտիսը Շուպրիա երկրի անվան հունարեն աղավաղված ձևն է, Կալաքենեն գտնվում էր Սարուր և Մեծ Զար գետերի միջև, այսինքն՝ պատմական Կորձեք նահանգի տեղում, իսկ Ադիաբենեն՝ Հյուսիսային Միջագետքում: Մի քիչ ավելի ուշ հայերը շարժվելով դեպի Հյուսիս և անցնելով Հայկական պարը՝ նվաճում են նաև Արարատյան դաշտը, Շիրակը, Սյունիքը, Արցախը և Ուտիքը, որոնք դեռևս ուրարտական տիրապետության շրջանում արդեն բնակեցված էին հայերով:

Հայկական ցեղերի վերոհիշյալ նվաճումներն ունեցել են ոչ թե զուտ ռազմական արշավանքների, այլ ավելի շուտ՝ ցեղային տեղաշարժերի կամ խաղաղ գաղթների բնույթ:

Այսպիսով, արդեն Ք. ա. VII դարի վերջում Հայկական լեռնաշխարհի մեծ մասում հաստատվում է հայկական ցեղերի գերիշխանությունը:

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ և եկվոր ցեղերի ձուլումը հայերի հետ և հայ ժողովրդի կազմավորումը

Հայկական ցեղերի վերոհիշյալ նվաճումների ժամանակ մեծ չափով մեծանում է ցեղային և ռազմական առաջնորդների դերն ու կշիռը, ուժեղանում նրանց տնտեսական կարողությունը և քաղաքական իշխանությունը: Այդ նվաճումների ընթացքում ձեռք բերված ավարի, ստրուկների և լավագույն հողերի մեծ մասը բաժին է ընկնում նրանց և դառնում նրանց մասնավոր

սեփականությունը: Տոհմացեղային ավագանին աստիճանաբար վերածվում է ստրկատիրական ավագանու: Ք. ա. VI դարից հայկական ցեղերի մոտ սկսվում են որոշակիորեն քայքայվել տոհմատիրական կարգերը և ձևավորվել ստրկատիրական հարաբերությունները: Հայկական ցեղերից դեռևս չատ առաջ տոհմատիրական կարգերը քայքայվել կամ սկսել էին քայքայվել նաև տեղաբնիկ բազմաթիվ ցեղերի մոտ: Տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության առաջացման իբրև հետևանք Ք. ա. VII դարի վերջում կամ VI դարի սկզբում կազմավորվում է հայկական պետականությունը:

Թե՛ հայկական և թե՛ տեղաբնիկ այլ ցեղերի մոտ տոհմատիրական կարգերի քայքայումը և մասնավոր սեփականության առաջացումը, էթնիկական տարբեր ծագում ունեցող ցեղերի գաղթը դեպի Հայկական լեռնաշխարհ, բնակչության բնական աճը, սկզբում ուրարտացիների, իսկ այնուհետև հայերի կողմից կատարված արշավանքների ժամանակ մեծ թվով ցեղերի բռնագաղթեցումները և

նրանց խառն կամ ցեղընդմեջ բնակեցումները, նույն տոհմի կամ ցեղի սահմաններում ազատ բնակչության կողքին մեծ թվով օտարածին ստրուկների հանդես գալը անխուսափելիորեն խիստ կերպով թուլացնում և աստիճանաբար քայքայում են տոհմացեղային, արյունակցական կապերը: Տոհմային համայնքը գյուղական համայնքի վերածվելուն զուգընթաց տոհմացեղային կապերը փոխարինվում են տարածքային-տնտեսական կապերով:

Մասնավոր սեփականության առաջացումից և հատկապես աշխատանքի հասարակական երկրորդ բաժանումից հետո, երբ մասնագիտացված արհեստը բաժանվում է երկրագործությունից, Հայկական լեռնաշխարհում որոշ չափով զարգանում են ապրանքափոխանակությունը և ներքին առևտուրը, որոնք սկզբում շատ թույլ, իսկ հետագայում ավելի կայուն տնտեսական փոխադարձ կապեր են ստեղծում ոչ միայն նույն, այլև հեռավոր բնակավայրերում ապրող արտադրողների միջև: Եթե առաջ տնտեսական կապերը գրեթե բացառապես արտահայտվում էին նույն տոհմի կամ ցեղի ներսում, ապա այժմ այդ կապերը փոխադարձ կերպով իրար են միավորում ոչ միայն նույն կամ մոտիկ, այլև հեռավոր բնակավայրում ապրող տարբեր տոհմերից ծագող ներկայացուցիչներին:

Տոհմացեղային կապերի քայքայումը, էթնիկական տարբեր խմբերի միջև տարածքային-տնտեսական կապերի առաջացումը և այդ խմբերի միավորված լինելը մի պետության կազմի մեջ անհրաժեշտ պայմաններ էին ստեղծում Հայկական լեռնաշխարհում մի միասնական լեզվով խոսող ժողովրդի կազմավորման համար: Սակայն նման ժողովրդի կազմավորումը տեղի կարող էր ունենալ միայն ցեղախմբերից մեկի գլխավորությամբ և մնացած ցեղերը այդ ցեղախմբի հետ համաձուլվելու, ինչպես և այդ ցեղախմբի լեզուն միասնական լեզվի վերածվելու ճանապարհով: Թե՛ ուրարտացիները և թե՛ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական ու հյուսիս-արևելյան շրջաններում ապրող տեղաբնիկ ցեղերն արդեն անկարող էին գլխավորել կազմավորվող ժողովրդի գործընթացը, որովհետև այդ ցեղերը ոչ միայն գտնվում էին նվաճվողի դրության մեջ, այլև իրար դեմ մղվող դարավոր պայքարում սպառել ու ջլատել էին իրենց կենսական ուժերը: Կազմավորվող ժողովրդի գործընթացը կարող էին գլխավորել և մնացած ցեղերին իրենց հետ կարող էին ձուլել միայն Հայկական ցեղերը, որոնք ավելի կենսունակ էին, մարտունակ և ավելի համախմբված: Մնացած ցեղերի նկատմամբ հայկական ցեղերի խոշոր առավելություններից մեկն էլ այն էր, որ նրանք օգտվում

էին նվաճողի բոլոր արտոնութիւններին, և նրանց ձեռքում էր գր-տրնվում քաղաքական իշխանութիւնն ու նորաստեղծ հայկական պետական ապարատը:

Գժբախտաբար, հայ ժողովրդի կազմավորման մանրամասնու-թիւնները մեզ հայտնի չեն, սակայն անկասկած է, որ այդ կազմա-վորումը տեղի է ունեցել հայկական ցեղերի կողմից մյուս ցեղերին աստիճանաբար իրենց մեջ միավորելու ճանապարհով:

Ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդների կազմավորումը, նույն-պես և հայ ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել պետութեան առաջացման հետ զուգընթաց և առաջներում լոկ իրար կողքի ապ-րող էթնիկական նույն կամ տարբեր ծագում ունեցող ցեղերի միա-ձուլման, խաչավորման հետևանքով:

Հայ ժողովրդի կազմի մեջ մտած կամ համաձուլված բոլոր ցեղերի մասին մենք գրավոր տեղեկութիւններ չունենք: Նրանց մի մասը լոկ իրենց անուններն են թողել Հայաստանի նահանգների, գավառների և այլ տեղանունների, ինչպես և շատ հաճախ այդ տեղանուններին հա-մապատասխանող հայ նախարարական տների վրա: Գրավոր վկա-յութիւնները և տեղանունների ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ հայ ժողովրդի մեջ են ձուլվել, նրա բաղադրիչ մասերը և նախնիներն են դարձել ոչ միայն հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ցեղախմբերը՝ հայասները և արմենները, այլև ուրարտա-կան, խուրրիտական և կովկասյան ծագում ունեցող ցեղախմբերը: Ուրարտացիները և տեղաբնիկ մյուս նախահայկական ցեղերը, որոնք իրենց հասարակական, տնտեսական և մշակութային զարգացման աստիճանով ավելի բարձր մակարդակի վրա էին կանգնած, քան հայ-կական ցեղերը, բնականաբար ուժեղ ազդեցութիւն պետք է թող-նեին նոր կազմավորվող հայ ժողովրդի վրա և նրան պետք է փո-խանցեին իրենց հասարակական, տնտեսական կյանքի ավելի զար-գացած ձևերն ու մշակույթի մի մասը: Բացի ուրարտական, խուր-րիտական և կովկասյան տեղաբնիկ ցեղախմբերից, հայ ժողովրդի մեջ են ձուլվել նաև իսթրական, փոքրասիական, փոյուզիական, կիմ-մերական, սկյութական, սարմատական և իրանական մի շարք եկվոր ցեղեր:

Հայ ժողովրդի կազմավորման գործընթացում, անշուշտ, առա-ջատար դեր պետք է կատարած լիներ հայկական ցեղային միու-թիւններից մեկը: Հնդեվրոպաբանները գտնում են, որ այդ առա-ջատար դերը կատարել են արմենները: Ըստ նրանց, հնդեվրոպական արմեններն իրենց մեջ են ձուլել տեղաբնիկ ցեղերին և նրանց են

պարտադրել իրենց լեզուն, բայց և, կորցնելով իրենց բուն ցեղային անունը, տեղաբնիկ հայասների անունով իրենց անվանել են հայ, իսկ իրենց երկիրն էլ՝ Հայաստան. միայն օտարներն են, որ պահպանել են արմենների անունը և նրանց անունով էլ հայերին անվանել են արմեններ, իսկ նրանց երկիրը՝ Արմենիա:

Հակառակ հնդեվրոպաբանների վերոհիշյալ տեսակետին, պետք է ընդունել, որ մեր ժողովրդի կազմավորման մեջ առաջատար դեր կատարել են ոչ թե արմենները, այլ արմենների հետ նույն հայկական ցեղախմբին պատկանող, բայց տարբեր անուն կրող հայասները կամ հայերը: Որ իսկապես այդ առաջավոր դերը կատարել են հայասները, նախ հետևում է այն կարևոր իրողությունից, որ հայ ժողովրդի մեջ ձուլված բոլոր ցեղերը, այդ թվում և արմենները, իրենք իրենց ոչ թե անվանել են արմեն կամ մի այլ անունով, այլ՝ հայ: Հայասների գլխավորող և առաջատար դերը շատ պարզ կերպով մատնանշված է նաև հայկական ժողովրդական ավանդույթյան մեջ, որտեղ մեր ժողովրդի ծագման բնագավառում հայասների անվանադիր Հայկին վերագրված է հոր դերը, մինչդեռ արմենների անվանադիր Արմենակին (Արամանյակ) վերագրված է ավագ որդու, իսկ ուրարտացիների անվանադիր Արային և սկյութական ու սարմատական ցեղերի անվանադիր Շարային՝ ծոռների դերը: Դժվար չէ նկատել, որ ժողովրդական ավանդույթունում հայ ժողովրդի մեջ ձուլված ցեղերի անվանադիրները դասավորված են ոչ թե այդ ցեղերի պատմական ասպարեզ գալու ժամանակագրությունը կամ պատմության մեջ ընդհանրապես նրանց խաղացած դերով ու նշանակությունը, այլ մեր ժողովրդի կազմավորման ժամանակ նրանց հանդես բերած առաջատար կամ երկրորդական դերով:

Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու տարբեր վկայություններից հայտնի է, որ Դարանադյաց գավառի Անի-Կամախ ամրոցում, այսինքն նախկին Հայասա ցեղային միությունն մայրաքաղաքում էր գտնվում ոչ միայն հայկական հեթանոսական կրոնի աստվածահոր՝ Արամազդի (անկասկած հնում Հայկի) գլխավոր տաճարը, ոչ միայն այստեղ էր նստում հայոց քրմապետը, այլև այստեղ էին թաղված սկզբից մինչև IV դարը մահացած հայ թագավորները, որոնց թվում և քրիստոնյա թագավորները: Հայտնի է նաև, որ նույն Դարանադյաց և նրան սահմանակից Եկեղյաց գավառների կամ նախկին Հայասայի Երիզա, Թիլ, Թորդան և Բագառիճ ավաններում էին գտնվում Անահիտ ու Նանե դիցուհիների, Բարչամ

և Միհր աստվածների նշանավոր մեհյանները, որոնցից առաջինը Ազաթանգեղոսը անվանել է «Հայոց թագավորների մեծ և բուն մեհյան»: Կրոնական կարևոր կենտրոնները նախկին Հայաստանի տարածքում տեղադրված լինելու, Հայ թագավորների պանթեոնը և քրեմապետի նստավայրը Անի-Կամախում կամ Կումամախայում գտնվելու շատ ուշագրավ երևույթները, երևույթներ, որոնք ոչ թե պատահականություն, այլ շատ հույս, Հայաստանի ժամանակաշրջանից եկող ավանդույթի արդյունք էին, կրկին ապացուցում են, որ Հայ ժողովրդի և նրա պետականության կազմավորման մեջ գլխավորող ու առաջատար դերը կատարել են Հայասները:

Հայասներից Հետո, անկասկած, մեր ժողովրդի կազմավորման մեջ երկրորդ դերը կատարել են նույն ցեղախմբին պատկանող արմենները: Այդ հանգամանքը ոչ միայն երևում է ժողովրդական ավանդույթունից, որտեղ, ինչպես տեսանք, արմենների անվանադիր Արմենակին վերագրված է ավագ որդու դերը, այլ նրանից, որ սկզբում պարսիկները, իսկ նրանց միջոցով էլ հույները և մյուս ժողովուրդները սրանց անունով հայերին անվանել են արմեն և նրանց երկիրն էլ՝ Արմենիա:

Առանձին ուսումնասիրողներ ենթադրում են, որ վրացիները հայերին «սոմեխի» են անվանել Հայաստանի անմիջականորեն սահմանակից կամ նրա մասը կազմող Սուխմի երկրի և այստեղ բնակվող ցեղերի անունով: Սակայն այս ենթադրությունը, հավանական լինելով հանդերձ, դեռ անհրաժեշտ է ճշտել հաստատուն փաստերով:

Հայ ժողովրդի կազմավորմանը զուգընթաց կազմավորվում և ձևավորվում է նաև Հայերեն համաժողովրդական լեզուն: Յ. Կարստը, Ն. Մառը և նրա աշակերտները զարգացրել են այն տեսակետը, որ իբր թե Հայոց լեզուն բազմաթիվ ցեղային լեզուների խաչավորման, համաձուլման հետևանքով գոյացած ինչ-որ նոր, խառնածին մի լեզու է: Ինչպես արդեն նշել ենք, լեզվաբանությունը հիմնավոր կերպով արդեն ապացուցել է, որ աշխարհում գոյություն չունեն խառնածին լեզուներ, և որ լեզուների խաչավորման ժամանակ չի առաջանում խաչավորվող լեզուների համադրությամբ մի նոր լեզու, այլ խաչավորվող լեզուներից մեկը հաղթող է դուրս գալիս մյուսների նկատմամբ: Անկասկած է, որ Հայ ժողովրդի լեզուն նույնպես կազմավորվել է ցեղային լեզուների խաչավորման ժամանակ տիրապետող, Հայասների հնդեվրոպական ծագում ունեցող լեզվի հաղթանակող դուրս գալու ճանապարհով:

Տարածքային-տնտեսական փոխադարձ կապերը, պետական,

լեզվական ընդհանրությունները անհրաժեշտորեն առաջ են բերում նաև հայ ժողովրդին միայն հատուկ, նրան մյուս ժողովուրդներից տարբերող քիչ թե շատ կայուն սովորույթներ, բարքեր, բնավորությունների, հավատալիքներ և այլն:

Հայ ժողովրդի կազմավորումը եղել է մի երկարատև գործընթաց: Այն սկսվել է դեռևս հայկական ցեղային միությունների կազմավորման ժամանակներից (Ք. ա. III հազարամյակի վերջ), իսկ բուռն և անկասելի գործընթացը տեղի է ունեցել Ք. ա. VII դարի վերջից և հիմնականում ավարտվել Ք. ա. II դարի սկզբում: Ստրաբոնը վկայում է, որ արդեն Ք. ա. II դարի սկզբում Հայաստանում բնակվող բնակչությունը խոսում էր միայն մի լեզվով, այն է՝ հայերեն:

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

**1. ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ
ԵՎ ՆՐԱ ՊԱՅՔԱՐԸ ՄԱՐԱՍՏԱՆԻ ԴԵՄ**

**Երվանդունիների
Հայկական
պետություն
կազմավորումը** Հայկական ցեղերի նվաճումների, տոհմատիրական կարգերի քայքայման և ստրկատիրական հարաբերությունների սաղմնավորման զուգընթաց Ք. ա. VII դարի վերջում կազմավորվում և առաջանում են հայկական մի քանի պետական միավորումներ, որոնցից միայն երկուսի մասին են մեզ տեղեկություններ հասել:

Ըստ ավանդական պատմության՝ հայկական ցեղային միություններից մեկի առաջնորդ Պարույր Սկայորդին դաշնակցում է մարերի թագավոր Կիաքսարի հետ և իր ռազմական ջոկատներով գործունե կերպով մասնակցում Ք. ա. 612 թ. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի գրավմանն ու կործանմանը: Ի փոխհատուցումն այս օգնության, Կիաքսարը սրան ճանաչում է իբրև Հայոց թագավոր: Ըստ ավանդության՝ Պարույր Սկայորդին համարվում է «առաջին պսակավորն Հայոց», այսինքն՝ առաջին հայ թագավորը: Ենթադրվում է, որ սա Արմենի-Շուպրիա երկրի ցեղային միության առաջնորդն է եղել և հիմնել է հայկական առաջին պետական միավորումներից մեկը:

609 թ. հայկական ցեղերը, մարերի հետ դաշնակցած, Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան գրավելուց հետո այնտեղ հիմնում են երկրորդ պետական միավորումը կամ թագավորությունը: Նորաստեղծ այս թագավորության գահ են բարձրանում հայկական ցեղերի նվաճումների ժամանակ առաջնորդի դեր կատարած, քաղաքական ու ռազմական ազդեցիկ դիրք գրաված Երվանդունի տոհմի ռազմաստրկատիրական ավագանու ներկայացուցիչները: Նվաճման իրավունքով այս տոհմի ձեռքն է անցնում ոչ միայն Ուրարտական պետության հարստության մի զգալի մասը, այլև ուրարտական թագավորների բուն տիրույթը հանդիսացող Տուշպա-Վանի քաղաքային

տարածքը, որը այնուհետև վերանվանվում է Երվանդունիք:

Կազմավորված պետական միավորումների մեջ ավելի կենսունակը և ուժեղը հանդիսանում էր «Հայկազանց» կամ «Երվանդունիների» թագավորությունը: Երվանդունիները, հենվելով իրենց ունեցած տնտեսական ու ռազմական ուժի գերազանցության վրա, չուտով նվաճում և իրենց թագավորությանն են միացնում նաև Արմենի-Շուպրիայի թագավորությունը և Հայկական մյուս պետական միավորումները: Այսպիսով, Ք. ա. VI դարի առաջին կեսում առաջանում է Հայկական միացյալ պետությունը:

Հայկական հնագույն այս պետության սահմանների մեջ էին մտնում Աղձնիքը, Կորճեքը, Ծոփքը, Մոկքը և Վանա լճի հարավային մասը, Վասպուրականը, Տուրուբերանը, Բարձր Հայքը և Փոքր Հայքը: Երվանդունիները քիչ ավելի ուշ, հավանաբար VI դարի կեսերին գրավում և իրենց պետությանն են միացնում նաև Հյուսիսում Արա-րատյան դաշտը, Սյունիքը և Ծիրակը, Ուտիքը, Արցախը:

Հայկական հնագույն այս պետության մայրաքաղաքը հանդիսանում էր Տուշպա-Վանը, իսկ երկրորդ կարևոր կենտրոնը՝ Անի-Կամայրը:

Պարսից Դարեհ I թագավորի (522-486) Բիհիսթունյան արձանագրության մեջ Հին պարսկական բնագրում արձանագրված «Արմինա-Արմենիայի» փոխարեն բարելակական տեքստում արձանագրված է «Ուրարտու»: Այս ուշագրավ փաստը ոչ միայն ցույց է տալիս, որ Ուրարտու հին անունը փոխարինվել էր Արմենիա նոր անունով, այլև Հայկական հնագույն պետությունը կամ Արմենիան արդեն իր սահմանների մեջ էր ընդգրկում նախկին Ուրարտական պետության տարածքը:

Հայերի պայքարը Հայերի պատմական հնագույն անցյալի, **Մարաստանի դեմ** հատկապես VI դարի առաջին կեսում Մարաստանի դեմ մղած պայքարի մասին որոշ տեղեկություններ են պահպանվել հույն պատմիչ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» («Կյուրոսի վարքը») և Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունների մեջ:

Անցյալում ուսումնասիրողներից ոմանք, ելնելով «Կյուրոպեդիա»-ի վիպական բնույթից և նրա մեջ գոյություն ունեցող որոշ անճշտություններից, նրան, իբրև պատմական աղբյուրի, առանձին արժեք չեն տվել: Սակայն այժմ գրեթե բոլոր հայագետ պատմաբանները գտնում են, որ այս աշխատության մեջ հայերին վերաբերող տեղեկությունները մեծ մասամբ պատմական են ու իրական և ոչ թե

մտացածին ու հնարովի, մանավանդ, որ թե՛ Քսենոփոնի և թե՛ Մովսես Սորենացու մոտ հիշատակված պատմական անձնավորությունները, նկարագրված դեպքերը և նրանց ժամանակը շատ հաճախ համընկնում ու լրացնում են իրար:

Մովսես Սորենացու հաղորդած տեղեկություններից պարզ երևում է, որ Ասորեստանի և Ուրարտուի դեմ մղվող պայքարի ժամանակ հայերը հանդես են եկել ոչ միայն իբրև մարերի դաշնակից, այլև հայերի ու մարերի միջև գոյություն են ունեցել բարեկամական, դաշնակցային իրավահավասար հարաբերություններ, որոնք հաճախ ամրապնդվել են նաև խնամհական կապերով:

Սակայն դաշնակցային իրավահավասար այս հարաբերությունները երկար չեն պահպանվում: Կիաքսարին հաջորդած Աժդահակը (585–550), ինչպես հաղորդում է Քսենոփոնը, հարձակվում է Հայկական թագավորության վրա՝ այն իր գերիշխանությունը ենթարկելու համար: Հայոց Երվանդ I Սակավակյաց թագավորը, թշնամու դեմ անհաջող ճակատամարտ տալուց ու պարտվելուց հետո, ոչ միայն ստիպված է լինում ընդունել Աժդահակի գերիշխանությունը, այլև պարտավորվում է նրան հարկ վճարել տարեկան 50 տաղանդ (մոտ 200.000 ոսկի ուռլի) և պատերազմի դեպքում իր զորքի մի մասով մասնակցել նրա մղած կռիվներին:

Այս իրադարձությունից որոշ ժամանակ անց, պատմում է Քսենոփոնը, հայոց թագավորը, օգտվելով Մարաստանի և Բաբելոնիայի միջև առաջացած պատերազմից, ապստամբում է Մարաստանի դեմ, հրաժարվում է սահմանված հարկն ու զորք տալուց և սկսում կառուցել ամրություններ: Հայերի այս ապստամբությունը մեծ անհանգրստություն է առաջ բերում Մարաստանում: Նույնիսկ սկզբում Աժդահակը տատանվում է վճռել, թե որն է ավելի ձեռնտու. արդյոք զենքի ուժով ճնշել՞ Հայաստանում առաջացած ապստամբությունը, թե՞ լուեյայն հանդուրժել, որպեսզի հայերը չանցնեն թշնամու կողմը և չավելացնեն նրա ուժը: Իր զորահրամանատար, Անշանի թագավոր Կյուրոսի խորհրդով Աժդահակը վճռում է զենքի ուժով ճնշել ապստամբությունը: Այդ նպատակով Աժդահակը նույն Կյուրոսին հեծյալ ու հետևակ զորքով ուղարկում է Հայաստան:

Կյուրոսը մտնելով Հայաստան, արագ կերպով շարժվում ու մոտենում է հայոց թագավորի ապարանք-ամրոցին: Երվանդ I-ը երբ լուր է ստանում Կյուրոսի մոտենալու մասին, իր կրտսեր որդուն՝ Սարբրիսին (Շավարաչին), իր ընտանիքը և իր հարստությունը ուղարկում է ավելի ապահով վայր, իսկ ինքը շտապ զորք է հավաքում

և մարտակարգ կազմում՝ թշնամու դեմ կռվելու համար: Սակայն Կյուրոսը խորամանկությամբ գերեզմարում ու ձերբակալում է թե՛ հայոց թագավորին և թե՛ նրա ընտանիքի անդամներին: Զերբակալված հայոց թագավորին ուղղած՝ Կյուրոսի այն հարցին, թե «Արդ, ինչո՞ւ այժմ ոչ տուրք ես վճարում, ոչ զորք ես ուղարկում և սկսել ես ամրություններ շինել», նա պատասխանում է. «Ես ազատություն էի ձգտում, որովհետև գերադասում էի, որպեսզի թե՛ ինքս ազատ լինեմ և թե՛ որդիներիս ազատություն թողնեմ»: Թագաժառանգ Տիգրանի միջնորդությամբ, որը Կյուրոսի մոտիկ ընկերն էր ու որսակիցը, նախկին հիմունքներով, բայց վճարվելիք հարկը 50 տաղանդից 100 տաղանդ դարձնելու պայմանով հաշտություն է կնքվում Կյուրոսի և հայոց թագավորի միջև:

Քսենոփոնի հաղորդած տեղեկությունների համաձայն հայկական զորքը բաղկացած էր 8 հազար հեծելազորից և 40.000 հետևազորից, իսկ հայոց թագավորի ունեցած կարողությունը, այն հարստությունների հետ միասին, որ թողել էր նրա հայրը, կազմում էր ավելի քան 3000 արծաթ տաղանդ (մոտ 12 միլիոն ոսկի ուրբի): Կյուրոսը պատերազմում մարերին օգնելու համար վերցնում է հայկական զորքի կեսը՝ 4 հազար հեծելազոր և 20 հազար հետևազոր:

«Կյուրոպեդիա»-ում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև հայերի և նրանց հարևան խալդայների փոխհարաբերությունների մասին: Սալդայները լեռնաբնակ, մշակելի հողերից զուրկ, աղքատ, ծառերի ճյուղերից հյուսված կաշվեպատ վահաններով ու նիզակներով զինված, հաճախ Արևելքի տիրողների մոտ վարձկանությամբ զբաղվող խաչնարած ցեղեր էին, որոնք կողոպուտի նպատակով մշտապես հարձակվում էին դաշտավայրերում բնակվող և երկրագործությամբ զբաղվող հայերի վրա: Սալդայների ու հայերի միջև մղվող մշտական կռիվների պատճառով Հայոց երկրի մի մասը մնացել էր անմշակ ու անմարդաբնակ:

Սալդայները, ինչպես երևում է Քսենոփոնի պատմածից, ձգտում էին ձեռք բերել և մշակել այն անմշակ ու արգավանդ հողերը, որոնք գտնվում էին դաշտավայրում, իսկ հայերը շահագրգռված էին, որ խալդայները թույլ տան օգտվելու լեռնային արոտներից:

Կյուրոսը հայկական զորքի օժանդակությամբ խալդայներին հաղթելուց և նրանց լեռնային կարևոր բարձունքները զբաղեցնելուց հետո հաշտություն է կայացնում Հայոց թագավորի և խալդայների միջև: Այդ հաշտությամբ, մի կողմից, խալդայները, Հայոց թագավորին

սահմանված հողային հարկը վճարելու պայմանով, իրավունք են ստանում տիրել ու մշակել դաշտավայրի հողերը, իսկ մյուս կողմից՝ անասնապահ հայերը, խալդայներին որոշ տուրք վճարելու պայմանով, իրավունք են ստանում օգտվել արոտավայրերից: Հայերը և խալդայները, վկայում է Քսենոփոնը, «իրար հավատարմության խոստում տվին և համաձայնության եկան, որ երկու կողմն էլ իրար հանդեպ կպահպանեն իրենց ազատությունը, նրանք իրավունք կունենան փոխադարձ ամուսնություն, իրար հողերի ու արոտատեղերի օգտագործման և կպաշտպանեն իրար ընդհանուր ուժերով»:

Հայերի ու խալդայների միջև կայացած հաշտությունը, նրանց փոխադարձ ամուսնությունները ապացուցում են, որ արդեն Ք. ա. VI դարի սկզբից Հայկական լեռնաշխարհի ցեղերը սկսել էին աստիճանաբար համաձուլվել հայերի հետ, որով և սկսել էր հայ ժողովրդի կազմավորման ընթացը:

Յո. Մարկվարտը և Ն. Մանանդյանը, ելնելով ոչ հեռու անցյալում ուրարտացիներին սխալ կերպով խալդեր անվանելու փաստից, խալդայներին նույնացրել են ուրարտացիների հետ: Նրանք Քսենոփոնի «Կյուրոպեղիա»-ում, ինչպես և «Անաբազիս»-ում Օրոնտասի գորքի մեջ հիշատակված խալդայներին համարել են Հայկական լեռնաշխարհի հարավային մասում ապրող ուրարտացիներ, իսկ նույն «Անաբազիս»-ում տառիների հետ հիշատակված խալդուրների ու մակրոնների հարևան խալդայներին՝ հյուսիսային կամ պոնտական ուրարտացիներ: Կասկածից վեր է, որ սակավահող, խաչնարած, աղքատ, նույնիսկ ծառերի ճյուղերից հյուսված կաշվեպատ վահաններով զինված և վարձկանությամբ զբաղվող այս խալդայներին ոչ մի կերպ չի կարելի նույնացնել տնտեսական, հասարակական ու մշակութային զարգացման շատ բարձր աստիճանում գտնվող, վաղուց գիր ու գրականություն ունեցող ուրարտացիների հետ: Խալդայները, ինչպես ճիշտ կերպով նշել են մի շարք ուսումնասիրողներ, դեռևս տոհմատիրական կարգերում ապրող ցեղեր էին, որոնք բնակվում էին Փոքր Հայքի և Պոնտոսի լեռնային շրջաններում գտնվող և նրանց անունով Խաղտիք կամ Խալդիկա կոչվող երկրամասում:

Խալդայների երկրի՝ Խաղտիք-Խալդիկայի տեղադրումը Փոքր Հայքի և Պոնտոսի լեռնային շրջաններում ապացուցում է, որ Հայկական հնագույն պետությունը VI դարի սկզբում իր սահմանների մեջ էր ընդգրկում նաև Փոքր Հայքը և Բարձր Հայքը, այսինքն՝ նախկին Հայաստանի տարածքը: Ըստ «Կյուրոպեղիա»-ի, խալդայներին պատկանող լեռները Հայոց թագավորի ապարանք-ամրոցից ոչ այնքան

հեռու գտնվելու ուշադրավ փաստը որոշ հիմք է տալիս ենթադրելու, որ այդ ապարանք-ամրոցը հանդիսացել է հայերի հնագույն մայրաքաղաք և կրոնական գլխավոր կենտրոն Անի – Կամախը:

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Աքեմենյան արքայատան հիմնադրումը և Հայաստանը

Մարերի տիրապետությունը Առաջավոր Ասիայում երկար չի գոյատևում: Ք. ա. 553 թ. պարսիկները, օգտվելով մարական իշխող վերնախավի ներսում առաջացած պայքարից և Աժդահակի դեմ գոյություն ունեցող դժգոհություններից, ապստամբություն են բարձրացնում մարերի դեմ: Ապստամբության գլուխ է կանգնում Աժդահակի՝ վերը հիշված գորավար Կյուրոսը, որը ծագումով պարսկական Աքեմենյան տոհմից էր: Երեք տարի տևող կռիվներից հետո Կյուրոսը Ք. ա. 550 թ. հաղթում է մարերին և գրավում նրանց մայրաքաղաք Էկբատանը, որին զգալի չափով նպաստում են նաև մարական ավազանու մի մասի դավաճանությունը և մարական բանակի ներսում առաջացած ապստամբությունը: Կյուրոսը (550–529) գրավելով մարական գահը, հիմնադրում է հին պարսկական կամ Աքեմենյան պետությունը, որով և մարական գերիշխանությունը փոխարինվում է պարսկական գերիշխանությամբ:

Գերիշխանության համար մղված պայքարի ժամանակ հայերը անցնում են պարսիկների կողմը: Ըստ Մովսես Խորենացու բերած ավանդական պատմության՝ Երվանդ Սակավակյացին հաջորդած Հայոց թագավոր Տիգրան Երվանդյանի և Կյուրոսի միջև կնքվում է բարեկամական դաշինք: Այս դաշինքը, որը զգալի փոսանգ էր ներկայացնում մարերի համար, խիստ մտահոգություն ու անհանգրստություն է պատճառում Աժդահակին: Աժդահակը նենգ միջոցներով աշխատում է քանդել այդ դաշինքը և ձերբակալել ու սպանել Տիգրանին, սակայն դա նրան չի հաջողվում: Հավանաբար, Աժդահակի դեմ Կյուրոսի ձեռնարկած վճռական գործողությունների ժամանակ Տիգրանը իր հերթին ապստամբություն է բարձրացնում Աժդահակի դեմ և իր գորքերով հարձակվում նրա վրա: Ըստ ավանդության՝ հայմարական պատերազմը տևում է բավական երկար և վերջանում է հայերի հաղթությամբ: Նույնիսկ հայկական ժողովրդական ավանդությունը Աժդահակի պարտությունը և սպանությունը վերագրում է Հայոց թագավոր Տիգրանին, որը, անշուշտ, պատմական իրակա-

նությանը չի համապատասխանում: Սակայն միանգամայն պատմական իրողություն է ժողովրդական ավանդության այն վկայությունը, որ Տիգրանը աջակցել է Կյուրոսին՝ մարերից իշխանությունը գրավելու համար:

Հայերը աջակցելով Կյուրոսին, անշուշտ հույսեր էին տածում, որ կազատագրվեն օտարերկրյա գերիշխանությունից և լրիվ կերպով կվերականգնեն իրենց պետական ինքնուրույնությունը: Սակայն այդ հույսերը չեն արդարանում: Շուտով, ինչպես Մարաստանի գերիշխանության տակ գտնվող մյուս երկրները, նույնպես և Հայաստանը, հարկ վճարելու և պատերազմի դեպքում զորք տալու պայմանով ստիպված են լինում ընդունել Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանությունը:

Կյուրոսի և նրա որդու՝ Կամբիզի (529–522) ժամանակ պարսիկները խոչոր նվաճումներ են կատարում և մեծ չափով ընդարձակում են իրենց պետության սահմանները: Նրանք 546 թ. նվաճում են ամբողջ Փոքր Ասիան և հասնում են մինչև էգեյան ծով, 538 թ. գրավում են Բաբելոնը, իսկ 525 թ.՝ Եգիպտոսը: Քսենոփոնի վկայությունների համաձայն հայկական հեծելազորը և հետևազորը ևս, Տիգրանի ու էմբասի առաջնորդությամբ, մասնակցել են Բաբելոնի գրավմանը: Հաստատ կարելի է ենթադրել, որ հայկական զորամասերը մասնակցել են նաև Կյուրոսի և Կամբիզի մղած մյուս պատերազմներին:

Ինչպես մարական, նույնպես հին պարսկական պետությունը իր բնույթով ազգային պետություն չէր, այլ բռնի ուժով իրար միացած ժողովուրդների ու ցեղերի մի միավորում, որտեղ հպատակված երկրները պահպանում էին իրենց ներքին ինքնուրույնությունը: Հայաստանը ևս, չնայած սկզբում Մարաստանի, իսկ այնուհետև Աքեմենյան Պարսկաստանի նկատմամբ ունեցած իր հարկային ու զինվորական պարտավորություններին, պահպանում էր իր պետական-կառավարչական, տնտեսական, լեզվական ու կրոնական ներքին ինքնուրույնությունը:

**Հայերի Ք. ա.
521–520 թթ.
ապստամբությունը
Աքեմենյան
Պարսկաստանի
դեմ**

Կամբիզի մահից և յոթ ամիս տևող ներքին կռիվներից հետո Պարսկաստանում գահ է բարձրանում Դարեհ I-ը (522–486): Սրա գահակալության հենց առաջին տարում՝ 521 թ., մի շարք երկրներ ապստամբություն են բարձրացնում և փորձում են թոթափել Աքեմենյան Պարսկաստանի տիրապետությունը: Այդ երկրը-

ների թվում էր գտնվում նաև Հայաստանը:

Հայերի ապստամբությունը և նրանց մղած կռիվները հիշատակված են Քերմանշահ քաղաքից ոչ հեռու գտնվող Բիհիսթունի ժայռի վրա Դարեհ I-ի թողած սեպագիր արձանագրությունից մեջ, որը գրված է երեք լեզվով՝ հին պարսկերեն, էլամերեն և բաբելոնական կաղերեն:

Այդ արձանագրության մեջ Հայերի ապստամբության մասին գրված է հետևյալը.

«Դարեհ թագավորն ասում է.— Երբ ես Բաբելոնում էի գտնվում, իմ դեմ ապստամբեցին հետևյալ երկրները՝ Պարսկաստան, Շոշաստան, Մարաստան, Ասորեստան, Արմինա, Պարթևաստան...»:

«Դարեհ թագավորն ասում է.— Արդ Արմինա (Արմենիա) ուղարկեցի մի արմին՝ Դադարչիչ անունով իմ ծառային, և այսպես պատվիրեցի.— «Գնա՛ ու նվաճե՛ այդ ապստամբ գործը, որ ինձ չի հպատակվում»: Դադարչիչը գնաց Արմենիան նվաճելու: Երբ նա եկավ Արմենիա՝ ապստամբները դուրս ելան Դադարչիչի դեմ՝ նրան ճակատամարտ տալու համար: Դադարչիչը ճակատամարտն ընդունեց: Արմենիայում Ջուզա անունով մի ավան կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից: Թուրավահարա ամսի 8-ն էր (521 թ. մայիսի 21-ին), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»:

«Թշնամին 546 սպանված թողեց պատերազմի դաշտում, և Դադարչիչը 520 հոգի գերի վերցրեց»:

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ անգամ հավաքեցին իրենց ուժերը և նորից դուրս ելան Դադարչիչի դեմ պատերազմի: Արմենիայում Տիգրա անունով մի բերդ կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի իմ բանակը թշնամու բանակին հալածեց: Թուրավահարա ամսի 18-ն էր (521 թ. մայիսի 31-ին), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»:

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երրորդ անգամ հավաքվեցին և դուրս ելան Դադարչիչի դեմ պատերազմի: Արմենիայում Ուլամա անունով մի բերդ կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից: Թաիզարչիչ ամսի 9-ն էր (521 թ. հունիսի 21-ին), երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Դադարչիչը հնազանդվելով իմ հրամանին, մնաց Արմենիայում,

մինչդեռ ես իմ նիղակը ուղղում էի դեպի Մարաստան»:

«Դարե՛հ թագավորն ասում է:– Այնուհետև Արմենիա ուղարկեցի Վահու՛միսա անունով մի պարսիկի և այսպես պատվիրեցի:– «Գնա՛ և նվաճե՛ այդ ապստամբ զորքը, որ ինձ չի հնազանդվում»: Վահու՛միսան գնաց Արմենիան նվաճելու: Ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Վահու՛միսայի դեմ պատերազմի: Ասորեստանում Իգլաա անունով մի երկիր կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Ծնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց ապստամբների բանակից: Անամակա ամսի 15-ն էր (521 թ. դեկտեմբերի 31-ին), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»:

«Դարե՛հ թագավորն ասում է:– Ապստամբները երկրորդ անգամ հավաքվեցին և դուրս ելան Վահու՛միսայի դեմ պատերազմի: Արմենիայում Աուտիարա անունով մի գավառ կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Ծնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից: Թուրավահարա ամսի վերջն էր (520 թ. հունիսի 12-ին), երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Վահու՛միսան, հնազանդվելով իմ հրամանին մնաց Արմենիայում, մինչդեռ ես իմ նիղակը ուղղում էի դեպի Մարաստան»:

«Նրանցից սպանված էին 2045 մարդ և գերի էին վերցված 2559 հոգի»:

Չնայած արձանագրություն կաղապարային ոճին և միակողմանի բնույթին, դժվար չէ նկատել, որ հայերը երկարատև, համառ ու հերոսական կռիվներ են մղել պարսկական զավթիչների դեմ՝ իրենց հայրենիքի անկախությունը վերականգնելու համար: Հզոր Պարսկաստանը ոչ միայն ստիպված է եղել ապստամբ հայերի դեմ տալ հինգ մեծ ճակատամարտ, այլև նրանց դեմ պատերազմել է ավելի քան մեկ տարի:

Հակառակ Դարեհի պարծենկոտ հայտարարություններին, առաջին երեք ճակատամարտերում հաղթող էին հանդիսացել ոչ թե պարսիկները, այլ հայերը: Հատկապես երրորդ ճակատամարտում, ինչպես երևում է արձանագրություն վկայություններից, հայերը ոչ միայն գլխավոր Ջախջախել էին պարսկական բանակին և նրան դուրս քշել Հայաստանի սահմաններից, այլև, հետապնդելով թշնամու բանակի մնացորդներին, ներխուժել էին Ասորեստանի հյուսիսային շրջանները: Այս տեսակետից խիստ ուշագրավ է, որ չորրորդ ճակատամարտը տեղի էր ունեցել արդեն ոչ թե Հայաստանի, այլ Ասորեստանի տարածքում: Անուշտ, պարսկական բանակի խայտառակ պարտությունը և նրա ոչնչացումն էր հանդիսացել հիմնական պատճառը, որ Դարեհը ստիպված էր եղել փոխել իր հրամանատարին և նոր բա-

նակներ ուղարկել հայերի դեմ:

Հայերի և պարսիկների միջև առաջին երեք ճակատամարտերը տեղի էին ունեցել Հայաստանի Զուզա ավանի, Տիգրա և Ույամա բերդերի մոտ: Չորրորդ ճակատամարտը տեղի էր ունեցել Ասորեստանի Իզալա երկրում, իսկ հինգերորդը՝ Հայաստանի Աուտիարա գավառում: Բոլոր ուսումնասիրողները Հայաստանի տարածքում հիշատակվող աշխարհագրական վերոհիշյալ վայրերը տեղադրում են պատմական Աղձնիք և Կորձեք նահանգներում, իսկ Իզալա երկիրը՝ Ասորեստանի հյուսիսային մասում: Ծակատամարտերը Հայաստանի հարավային սահմանամերձ նահանգների տարածքում տեղի ունեցած լինելու փաստերը ոչ թե ապացուցում են, որ Հայաստանը այդ ժամանակ մի փոքր երկիր էր, որն իր մեջ ընդգրկում էր միայն այդ երկու նահանգները և նրանց հարևան չրջանները, ինչպես կարծել են Լեոն, Ն. Մանանդյանը և ուրիշներ, այլ լոկ հաստատում են, որ ապստամբ հայերը ուժեղ դիմադրություն էին ցույց տվել պարսիկներին հենց սահմանագլխին և նրանց թույլ չէին տվել խորանալու երկրի ներսը:

Ուշագրավ է, որ Դարեհը սկզբում ապստամբ հայերի դեմ ուղարկում է ոչ թե պարսիկ, այլ Դադարչիչ (հավանաբար՝ Արտաշես) անունով մի հայ զորավարի: Այս իրողությունը ապացուցում է, որ հայ ռազմաստրակատիրական ավագանու ներկայացուցիչները ոչ միայն կարևոր դիրք էին գրավում պարսկական բանակում, այլև նրա առանձին ներկայացուցիչները համագործակցում էին պարսիկների հետ: Ըստ երևույթին, մասամբ այդ համագործակցության հետևանքով է, որ հինգերորդ ճակատամարտից հետո պարսիկներին հաջողվում է ճնշել հայերի ապստամբությունը և վերականգնել իրենց տիրապետությունը Հայաստանում:

Հայաստանում առաջացած ապստամբությունը զուգընթաց Դարեհի դեմ հատկապես ուժեղ ապստամբություններ են առաջանում նաև Բաբելոնիայում և Մարաստանում: Հետաքրքիր է, որ Բաբելոնիայում ապստամբության գլուխ է կանգնում Արախա անունով մի հայ՝ Սալդիտայի որդին: Արախան, ինչպես ասված է Բիհիսթունի արձանագրության մեջ, Բաբելոնիայի Դուրալա երկրում ապստամբություն է բարձրացնում և հայտնում, որ ինքը Նաբուգոդոնոսորն է, Բաբելոնիայի վերջին թագավոր Նաբոնիդի որդին: Բաբելոնացիները ապստամբում են Դարեհի դեմ և անցնում Արախայի կողմը: Սա գրավում է Բաբելոնը և իրեն հայտարարում է Բաբելոնիայի թագավոր: Սակայն Դարեհը, 521 թ. նոյեմբերի 2-ին, հաղթում է սրան, ձերբակալում և նրա գլխավոր գործակիցների հետ մահապատժի

ենթարկում:

Յո. Մարկվարտը, Գր. Խալաթյանցը և ուրիշներ, ելնելով վերոհիշյալ փաստից, ենթադրում են, որ Հայաստանի ու Բարեկոնիայի, թերևս նաև Մարաստանի միջև գոյություն է ունեցել որոշ կապ ու դաշնակցություն՝ համատեղ կերպով պարսիկների դեմ պայքարելու համար: Սակայն չնայած ենթադրվող դաշինքին՝ ապստամբած երկրներից և ոչ մեկը չի կարողանում թոթափել Աքեմենյանների տիրապետությունը: Դարեհին հաջողվում է ճնշել իր դեմ ուղղված բոլոր ապստամբությունները:

Դարեհ I-ի բարենորոգումները և Հայաստանը

Դարեհ I-ը իր դեմ եղած ապստամբությունները ճնշելուց հետո տերություն ներսում կատարում է մի շարք բարենորոգումներ, որոնց նպատակն էր առավել մեծ չափով ուժեղացնել ու ամրապնդել կենտրոնական իշխանությունը, արագ կերպով ճնշել տեղերում ծագած ապրստամբությունները:

Դարեհը նախ Պարսկական ամբողջ պետությունը բաժանում է վարչական 20 առանձին մարզերի կամ սատրապությունների: Սրանց կառավարումը նա հանձնում է բարձրաստիճան հատուկ կառավարիչների, որոնք կոչվում էին «սատրապ»: Սատրապներն իրենց ենթակա մարզերի քաղաքացիական բնակչության նկատմամբ ունեին վարչական, դատական անսահմանափակ իշխանություն: Նրանց պարտականությունների մեջ էին մտնում նաև պետական հարկերի հավաքումը, պարհակների կազմակերպումը, ճանապարհների անվերտանգությունն ապահովումը և այլն:

Դարեհը սատրապություններում զինվորական իշխանությունը անջատում է քաղաքացիական իշխանությունից և հանձնում առանձին հրամանատարների, որոնք անկախ էին սատրապներից: Նա միաժամանակ սատրապների և զինվորական հրամանատարների միջև սահմանում է փոխադարձաբար իրար գործունեությունը վերահսկելու կարգ:

Պատմական Հայաստանի տարածքը, ինչպես հետևում է Հերոդոտոսի վկայություններից, մտնում էր Աքեմենյան Պարսկաստանի 13-րդ և 18-րդ սատրապությունների կազմի մեջ: 13-րդ սատրապության բնակիչներն էին հայերը, պակտյուկները և նրանց հարևան ցեղերը, իսկ 18-րդ սատրապությանը՝ մատիենները, սասպեյրները և այլորդները:

13-րդ սատրապությունը, բացի պակտյուկների երկրից, որի տեղը մինչև այժմ վերջնականապես ու հաստատուն կերպով որոշված չէ,

իր մեջ ընդգրկում էր Հայկական պարից դեպի հարավ ընկած Հայաստանի գրեթե ամբողջ տարածքը, այդ թվում և Փոքր Հայքը, Մոփքը:

Ուսումնասիրողները վաղուց են ապացուցել, որ 18-րդ սատրապությունների՝ ալարոզների (ուրարտացիների) անունից առաջացել է Արարատ լեռան, ինչպես և Այրարատ նահանգի անունը, իսկ սասպեյրների անունից՝ Սպեր գավառի անունը: Այստեղից հետևում է, որ 18-րդ սատրապությունը, բացի մատիենների երկրից, որին մի քանի ուսումնասիրողներ տեղադրում են Հյուսիսային Ատրպատականում, իսկ ուրիշները՝ արևմուտքում՝ Հալիս գետի շրջանում, իր մեջ ընդգրկում էր Հայկական պարից դեպի Հյուսիս ընկած պատմական Հայաստանի տարածքի մեծ մասը, Արարատյան դաշտից մինչև Սպեր գավառը ներառյալ: Թե՛ ալարոզները և թե՛ սասպեյրները հետագայում նվաճվելով հայերի կողմից՝ աստիճանաբար ձուլվում են հայ ժողովրդի հետ: Մինչև Դարեհի բարենորոգումները՝ ինչպես Մարաստանում, նույնպես և Աքեմենյան Պարսկաստանում պետականորեն սահմանված կայուն հարկեր գոյություն չունեին: Դարեհը իր տերություններում սահմանում է կայուն հարկեր և ստեղծում է վարչական-հարկային ապարատ: Նա ամեն մի սատրապության համար սահմանում է տարեկան որոշակի հարկային գումար, որը պետք է մուծվեր կենտրոնական պետական գանձարանը արծաթ տաղանդներով:

Հերոդոտոսի վկայության համաձայն 13-րդ սատրապությունը Աքեմենյան Պարսկաստանին որպես հարկ տարեկան վճարում էր 400 արծաթ տաղանդ, իսկ 18-րդ սատրապությունը՝ 200 անծաթ տաղանդ: Երկու սատրապությունների 600 արծաթ տաղանդի այս հարկագումարը հիմնականում վճարում էին հայերը և Հայկական լեռնաշխարհի մյուս բնակիչները: Բացի դրամական այս հարկից, ինչպես հաղորդում է Ստրաբոնը, Հայաստանը Պարսկաստանին իրեն հարկ տարեկան տալիս էր նաև 20.000 ձի:

Տեղերում առաջացող խոշոր ապստամբությունների և արտաքին վտանգի դեպքում արագ կերպով զորքեր տեղափոխելու համար Դարեհ I-ը բարեկարգում է իր տերություններում ցամաքային ճանապարհները: Նա կառուցում է «Արքայական» կոչվող մեծ ճանապարհը, որը դուրս գալով Պարսկաստանի մայրաքաղաք Շոշից կամ Մուզայից, հասնում էր մինչև Փոքր Ասիայի արևմտյան ծովափին գտնվող Սարգես քաղաքը: Մոտ 2400 կիլոմետր տարածություն ունեցող այս ճանապարհի ամբողջ երկարությունը, մոտավորապես յուրաքանչյուր 25 կիլոմետրի վրա, տեղավորված էին սպասարկման

չենքերով ու անձնակազմով կայարաններ: Այն սատրապները, որոնց ենթակա մարզերի միջով էր անցնում ճանապարհը, պարտավոր էին ապահովել ճանապարհորդների, առևտրականների անվտանգ երթև-վեկույթունը և նրանց կյանքն ու գույքը՝ ավազակների հարձակում-ներից:

«Արքայական ճանապարհը» մեծ չափով նպաստում է նաև ապ-րանքափոխանակույթյանն ու առևտրի զարգացմանը պարսկական պետույթյան ներսում: Նա իր ապահովույթյան և բարեկարգույթյան պատճառով դառնում է միջազգային քարավանային առևտրի հիմնա-կան ճանապարհը, նրա զարկերակը:

Ապրանքափոխանակույթյան և առևտրի զարգացմանը զգալի չա-փով նպաստում են նաև Դարեհի կողմից ոսկե, արծաթե և պղնձե միասնական կտրված դրամները գործածույթյան մեջ մտցնելը:

«Արքայական ճանապարհի» մի որոշ հատվածը, որն ուներ 56 ¹/₂ փարսալ, այսինքն՝ մոտ 330 կիլոմետր երկարույթյուն և 15 կայարան, անցնում էր Հայաստանի հարավային նահանգների՝ Աղձնիքի և Ծոփքի վրայով: Թե՛ «Արքայական ճանապարհը» և թե՛ այս ժա-մանակ որոշ չափով կարգավորված տեղական ճանապարհները ոչ միայն նպաստում են Հայաստանի տարբեր մասերի տնտեսական, փոխանակային կապերի առաջացմանը, այլև հայ ժողովրդի կազմա-վորման գործընթացի արագացմանը:

**Հայաստանը
Քսենոփոնի
նկարագրու-
յթյամբ**

Ք. ա. 401 թ. արքայազն Կյուրոս Կրտսերը, որ փոքրասիական բոլոր սատրապույթյունների կառավարիչն էր, գահը գրավելու համար ապրա-տամբույթյուն է բարձրացնում իր եղբոր՝ Ար-տաքսերքսես II-ի (404–358) դեմ: Հույները, հաղթանակի դեպքում նոր թագավորից զիջում-ներ ստանալու հույսով, ընդառաջում են Կյուրոսի խնդրանքին և նրան օգնույթյան են ուղարկում վարձկաններից կազմված տասը հազարանոց մի զորաբանակ: Սակայն Կյուրոս Կրտսերը իր եղբոր դեմ մղած ճակատամարտում պարտվում է և սպանվում: Հույները ստիպված են լինում Բաբելոնի մոտից Միջագետքի, Կորդվաց աշ-խարհի, Հայաստանի և Տրապիզոնի վրայով վերադառնալ Հունաս-տան:

Տասը հազար զորքի այս նահանջը նկարագրել է նույն բանակում գտնվող հույն պատմագիր Քսենոփոնը իր «Անաբասիս» կոչվող աշ-խատույթյան մեջ: Քսենոփոնը տեղեկույթյուններ է տալիս նաև Հա-յաստանի ու հայերի մասին:

Ըստ Քսենոփոնի վկայության՝ Հայաստանը մեծ, ընդարձակ, հարուստ ու բարեկեցիկ մի երկիր էր, որը գտնվում էր Օրոնտասի, այսինքն՝ Երվանդի իշխանության տակ: Վերջինս ամուսնացած էր Արտաքսերքսես II-ի դուստր Հոդոգունների հետ և իր զորքով մասնակցել էր Կյուրոս Կրտսերի դեմ մղված ճակատամարտին:

Նահանջող հույները, Կարգուխների երկրի վրայով անցնելուց հետո, հասնում են Կենտրիտես գետին, այժմյան Բոհտան-սուին կամ Արևելյան Տիգրիսին, որը Հայաստանը և Կարգուխների երկիրը բաժանում էր իրարից: Հույները գիշերում են հարթավայրից վերև՝ Կենտրիտես գետի մոտ գտնվող կարգուխների գյուղերում: Հաջորդ առավոտյան նրանք գետի հակադիր ափին տեսնում են զինված ձիավորներ և նրանցից վերև՝ բլուրների վրա շարքերով կանգնած հետևակ զորքեր, որոնք նպատակ ունեին թույլ չտալ հույներին անցնելու գետը և մտնելու Հայաստան: Մեծ վահաններով ու երկար նիզակներով զինված այս զորքերը Օրոնտաս-Երվանդի զորքերն էին, որոնք կազմված էին հայերից և վարձկան մարդերից ու խալդայներից:

Սակայն հույները կարողանում են անցնել գետը և մտնել Հայաստան, իսկ Օրոնտաս-Երվանդի զորքերը, ըստ երևույթին, հաշվի առնելով իրենց ուժերի փոքրաթիվ լինելը, խուսափում են ընդհարվել հույների հետ:

Կարգուխների հետ կռիվների պատճառով, ինչպես վկայում է Քսենոփոնը, գետի հայկական ափի մոտ գյուղեր չեն եղել: 5 փարսախ (մոտ 25 կիլոմետր) դաշտավայրով և լերկ բլուրներով շարժվելուց հետո է միայն, որ հույները այժմյան Սղերդի կամ Ռեզվանի շրջանում հանդիպում են մի մեծ գյուղի, որը սատրապի՝ կառավարչի համար ունեցել է ապարանք-ամրոց, ինչպես և գյուղի տների մեծ մասի վրա եղել են աշտարակներ: Այս գյուղն ունեցել է նաև կենսամթերքների շատ առատ պաշարներ:

Հույները այստեղից շարժվելով դեպի Հյուսիս և անցնելով մոտ 125 կիլոմետր, իջնում են Մշո դաշտը և հասնում Տելերոաս գետին, որի շուրջը եղել են բազմաթիվ գյուղեր: Ուսումնասիրողները այս գետը նույնացնում են Մեղրագետի կամ այժմյան Կարա-սուի հետ: Այս գետից սկսած՝ երկիրը կոչվում էր Արևմտյան Հայաստան, որի հյուսիս-արևմուտք, այսինքն փոխկառավարիչն էր պարսից թագավորի բաժնեկամ Տիրիբազը:

Այստեղ Տիրիբազը բանակցություններ է վարում նահանջող հույն զորքի հրամանատարության հետ և պայման է կապում, որ հույները

չպետք է այրեն հայկական գյուղերը, իսկ կենսամթերքներ գյուղերից կարող են վերցնել այնքան, որքան անհրաժեշտ է իրենց:

Տելեբոտա գետից հետո հուլյները, որոնց որոշ հեռավորություն վրա իր գործով հետևում էր Տիրիբազը, հասնում են մի ապարանք-ամբողջի, որի շուրջը նույնպես եղել են բազմաթիվ գյուղեր՝ լի մեծաքանակ պաշարեղենով: Գիշերը տեղացող առատ ձյան պատճառով հուլյները ստիպված են լինում տեղավորվել շրջակայքի հայկական գյուղերում: Այս գյուղերում նրանք գտնում են առատ մթերքներ՝ մսացու անասուններ, հաց, հին անուշահոտ գինիներ, չամիչ, ամեն տեսակի ընդեղեն, խոզի ճարպ, քնջութի, դառն նշի և բևեկնի յուղ, ինչպես և դրանից պատրաստված անուշահոտ յուղ:

Տիրիբազի հարձակումից վախենալով՝ նահանջող հույն զորքի հրամանատարությունը որոշում է մի տեղ հավաքել գյուղերում ցրված զորքին: Սակայն գիշերը կրկին սաստիկ ձյան և ցրտի պատճառով հրամանատարությունը ստիպված է լինում նորից զորքը ցրել նույն գյուղերը: Հակառակ Տիրիբազի հետ կնքված պայմանի, հույն զինվորներից ոմանք, ինչպես վկայում է Քսենոփոնը, առաջին անգամ գյուղերից հեռանալիս՝ ամբարտավան կերպով այրել են տները:

Հուլյները ձերբակալված մի պարսիկից տեղեկություն ստանալով, որ Տիրիբազը պատրաստվում է լեռնանցքում հարձակվել իրենց վրա, իրենք են նախահարձակ լինում և փախուստի մատնում Տիրիբազի զորքին: Նրանք սպանում են մի քանի զինվորների, գրավում մոտ 20 ձի և Տիրիբազի վրանը, որի մեջ գտնվում էին արծաթե ոտքերով գահույքներ ու ըմպանակներ: Նրանք գերի են վերցնում նաև Տիրիբազի հացարարներին ու մատովակներին:

Այս ընդհարումից հետո հուլյները վախենալով, որ Տիրիբազի զորքը կարող է գրավել լեռնանցքը, որոշում են անմիջապես ճանապարհ ընկնել: Նրանք հաջորդ օրը տեղացի բազմաթիվ ուղեցույցների առաջնորդությամբ և խոր ձյան միջով առաջ շարժվելով գրավում են այն լեռնանցքը, որտեղ Տիրիբազը մտադիր էր հարձակում գործել նրանց վրա: Այստեղից հուլյները անմարդաբնակ վայրերով երեք օրվա ընթացքում մոտ 75 կիլոմետր առաջ շարժվելուց հետո հասնում են Եփրատ, այսինքն՝ Արածանի գետին և անցնում են այն՝ թրջվելով մինչև գոտկատեղը: Հուլյները լսել էին, որ Եփրատի ակունքները այստեղից հեռու չէին:

Եփրատ-Արածանիի ափից սկսած՝ չորս օր տևող շատ ծանր երթից և զինվորների, գերիների ու գրաստների մի մասին ցրտի պատճառով կորստի մատնել տալուց հետո նահանջող հույն զորքի առա-

Չապահ գորամասը հասնում է ամրություն ունեցող մի գյուղի: Հույները ամրության առջև, աղբյուրի մոտ հանդիպում են ջուր տանող գյուղի կանանց ու աղջիկներին: Սրանք հարցնում են հույներին, թե ովքե՛ր են: Վերջիններս, թաքցնելով իրենց ով լինելը, թարգմանի միջոցով պարսկերեն հայտնում են, որ իրենք թագավորի կողմից գնում են սատրապի մոտ: Կանայք հայտնում են, որ սատրապը այդտեղ չէ, այլ հեռու է այդտեղից մոտ մեկ փարսախս: Հույները կանանց հետ մտնում են ամրություն, որն ուներ իր գյուղապետը:

Հաջորդ առավոտյան, երբ գորքի մնացած մասը ևս հասնում է այս գյուղը, հույն հրամանատարները որոշում են զորամասերը տեղավորել գյուղերում: Առաջապահ զորամասը մնում է նույն տեղում, իսկ մյուս հրամանատարները վիճակահանությունից իրար մեջ են բաժանում շրջակա գյուղերը, և ամեն մեկը իր զորամասի հետ գնում է այն գյուղը, որ բաժին էր ընկել իրեն:

Շրջակա գյուղերից մեկը բաժին է ընկնում նաև Քսենոփոնին: Նրա զորամասի վաչտապետներից մեկը և մի խումբ զինվորներ վազելով գնում են այդ գյուղը: Այնտեղ նրանք ձերբակալում են բոլոր գյուղացիներին, գյուղապետին և սրա աղջկան, որը իններորդ օրն էր, որ ամուսնացել էր: Քսենոփոնը տեղեկացնում է, որ գյուղապետի աղջկա ամուսինը, որ գնացել էր նապաստակ որսալու, մյուս գյուղերում ձերբակալված կամ գերված գյուղացիների մեջ չէր հայտնաբերվել: Այս տեղեկությունից պարզ երևում է, որ հույները իրենց իջևանած բոլոր գյուղերում էլ ձերբակալել էին գյուղացիներին:

Հույները գյուղապետի տանը բռնագրավում են նաև 17 ձիու քուռակ, որոնք պահվում էին իբրև հարկ՝ պարսից թագավորին վճարելու համար: Քսենոփոնը վկայում է, որ այստեղի ձիերը թեև պարսկական ձիերից փոքր էին, բայց ավելի կայտառ: Քսենոփոնը իր պառաված ձին, որ նախապես ավար էր վերցրել, տալիս է գյուղապետին, որպեսզի կերակրի և զոհաբերի արևին, քանզի լսել էր, որ իր ձին նվիրատրված է արևին: Իր պառաված ձիու փոխարեն նա վերցնում է ձիու քուռակներից մեկը, ինչպես և մեկական ձիու քուռակ էլ տալիս է իր զորամասի հրամանատարներին:

Քսենոփոնը տեղեկացնում է, որ այստեղ գյուղական տները գետնափոր էին, մուտքը ջրհորի բերանի նման, որից մարդիկ ցած էին իջնում սանդուղքներով: Տներում մարդկանց հետ ապրում էին նաև ընտանի կենդանիներ՝ այծեր, ոչխարներ, եղներ, հավեր՝ իրենց ճտերով, որոնց համար ներքևից հատուկ մուտք էր շինված:

Բացի ցորենից, գարուց, այլ ընդեղեններից և գինուց, այս տներում կար նաև կարասների մեջ պատրաստված գարեջուր, որին Քսենոփոնը անվանում է «գարուց պատրաստված գինի»: Գարեջուրը խմում էին կարասների մեջ դրված եղեգներից՝ ծծելու միջոցով: Քսենոփոնը հայտնում է, որ այդ խմիչքը շատ թունդ էր, եթե ջուր էլք խառնվում նրա մեջ, բայց սովոր մարդու համար այն խիստ ախորժելի էր:

Հաջորդ օրը Քսենոփոնը գյուղապետի հետ գնում է առաջապահ զորամասի իջևանած գյուղը: Ճանապարհին նա լինում է նաև մի շարք այլ գյուղերում: Ամեն տեղ հույները կերուխումի, ուրախությունից մեջ էին և հյուրասիրում էին միմյանց: Նրանց սեղանների վրա կային ամենաընտիր կերակուրներ, ոչխարի, այծի, խոզի, հորթի ու հավի միս, մեծ քանակությամբ ցորենի ու գարու հաց: Ծատ առատ էր նաև գինին:

Հույները հայկական այս գյուղերում յոթ օր հանգստանալուց և պարենավորվելուց հետո շարունակում են իրենց ճանապարհը: Նրանք իբրև ուղեցույց վերցնում են Քսենոփոնի իջևանած գյուղի գյուղապետին, նախօրոք նրա տունը լցնելով մյուս գյուղացիներից բռնագրավված պաշարեղենով և ազատ արձակելով նրա ազգականներին: Հույները իրենց հետ են վերցնում նաև գյուղապետի դեռահաս որդուն, որպեսզի հետագայում իր հոր հետ միասին վերադառնան գյուղ, եթե նրա հայրը լավ առաջնորդի զորքին: Երեք օր անմարդարնակ վայրերով և ձյան միջով առաջ շարժվելուց հետո առաջապահ զորամասի հրամանատար Խեյրիսոփոսը բարկանում և ծեծում է գյուղապետին, որը զորքին չի առաջնորդել գյուղերի վրայով: Հույն հրամանատարի հանդես բերած այս տմարդի վերաբերմունքի պատճառով գյուղապետը գիչերով փախչում է բանակից, իր որդուն թողնելով հույների մոտ:

Այնուհետև, հույները այստեղից շարժվելով Փասիս, Հարպասոս ու Ճորոխ գետերի երկարությունքով և անցնելով փասիանների, տաոխների, խալյուբների, սկյուլթների և այլ ցեղերի երկրների վրայով՝ հասնում են Տրապիզոն, իսկ այնտեղից էլ վերադառնում հայրենիք:

Քսենոփոնի նկարագրությունից երևում է, որ արդեն Ք. ա. V դարի վերջում Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերի մեծ մասը համաձուլվել էր կազմավորվող հայ ժողովրդի կազմի մեջ: Դրա լավագույն ապացույցն այն է, որ նահանջող հույները կենտրիտես-Քոհտան-սուից սկսած մինչև տաոխների երկրի՝ Տալքի սահմանները և ավելի քան 450 կիլոմետր անցել էին Հայաստանի վրայով ու

բացառապես հանդիպել էին հայկական գյուղերի: Սակայն այս ժամանակ Հայկական լեռնաշխարհի առանձին մասերում գոյություն են ունեցել նաև դեռևս իրենց ինքնուրույնությունը պաշտպանած այնպիսի ցեղեր, որոնք հետագայում են միայն ձուլվել Հայ ժողովրդի հետ: Այդպիսի ցեղերից Քսենոփոնի մոտ հիշատակված են մարդերը, փասիանները, տաոխները, որոնց անունից են առաջացել պատմական Հայաստանի Մարդաստան, Մարդաղի, Բասեն կամ Բասյան և Տայք գավառների անունները: Անկասկած, մարդերի անունից է առաջացել նաև Հայաստանի նշանավոր նախարարական տներից մեկի՝ Մարդպետունիների անունը:

Պատմագիտական գրեթե բոլոր երկերում Քսենոփոնի մոտ հիշատակված Օրոնտասին համարել են Արևելյան Հայաստանի սովորական պարսից սատրապներից մեկը: Այս եզրակացությունը համար հիմք է ծառայել այն, որ հույն պատմիչի մոտ հիշատակված է նաև Արևմտյան Հայաստանի առանձին կառավարիչ Տիրիբազը:

Քսենոփոնի մոտ Օրոնտասը հիշատակված է երկու տարբեր վկայություններում, որոնք մեջ ենք բերում ստորև.

«(Հույները) կզնան Հայաստան, որը մեծ է ու հարուստ և գտնվում է Օրոնտասի իշխանության տակ»:

«Սրանք (գորքերը) Օրոնտասի և Արտուխասի հայերն էին և մարդերն ու խալդայները վարձկան»:

Դժվար չէ նկատել, որ առաջին վկայության մեջ Քսենոփոնը Օրոնտասին համարում է ոչ թե Հայաստանի մի մասի, այլ ամբողջ Հայաստանի իշխանավորը: Լեոն և Ն. Մանանդյանը, ելնելով առաջին վկայությունից և Քսենոփոնի մոտ Տիրիբազին տրված «Հյուպարքոս»՝ «փոխկառավարիչ» տիտղոսից, ավելի ճիշտ կերպով ենթադրել են, որ Հայաստանը ունեցել է միայն մեկ սատրապ, և Օրոնտասը հանդիսացել է ոչ միայն Արևելյան, այլև ամբողջ Հայաստանի սատրապը:

Հայաստանի այս իշխանավորի Օրոնտաս-Երվանդ անունը ավելի շուտ հիմք է տալիս կարծելու, որ նա եղել է Երվանդունի Հայ թագավորներից մեկը, մեզ հայտնի նույնանուն Հայ թագավորներից երկրորդը, որը միաժամանակ կատարել է պարսից սատրապի գործառույթներ:

Այս տեսակետից ոչ միայն խիստ ուշագրավ է այն, որ Քսենոփոնը Օրոնտասին սատրապ չի անվանում, այլև այն, որ Օրոնտասի և Արտուխասի գորքերի թվում պարսիկներ չեն եղել: Ն. Մանանդյանը ընդունելով, որ երկրորդ վկայության մեջ «վարձկան» բառը վերա-

բերում է ոչ միայն խաղաղայնորեն, այլև մարզերին, իրավացի կերպով գտնում է, որ Օրոնտասի գորքերի հիմնական մասը կազմված է եղել հայերից: Անշուշտ, եթե Օրոնտասը և Արտուխասը հայեր չլինեին, ապա նրանց գորքերն էլ չէին կարող հիմնականում կազմված լինել հայերից: Ոչ մի պարսիկ սատրապ, առանց պարսկական զորամասերի, չէր կարող հենվել միայն հայկական ռազմական ուժի վրա և կատարել իր պարտականությունները: Հայկական բանակը չէր ստեղծված իր իսկ հայրենիքում օտար տիրողի շահերը պաշտպանելու համար:

Հայտնի է, որ սատրապություն պաշտոնում սովորաբար նշանակվում էին պարսկական ազնվատոհմ ռազմաստրատիգիական ավագանու ներկայացուցիչները, սակայն առանձին երկրներում, ինչպես, օրինակ, Եգիպտոսում այդ պաշտոնը հանձնվում էր նաև տեղական նախկին թագավորներին կամ իշխանավորներին: Այդպիսի երկրներում գինվորական իշխանությունը ևս չէր բաժանվում քաղաքացիական իշխանությունից, և այդ երկու իշխանություններն էլ նախկինի նման գտնվում էին տեղական թագավորի ձեռքում: Քսենոփոնի նկարագրությունից դժվար չէ եզրակացնել, որ հար և նման վիճակ գոյություն ուներ նաև Հայաստանում: Ամենայն հավանականությամբ Հայաստանում ևս սատրապություն պաշտոնը վստահված և հանձնված էր Երվանդունի տոհմի հայ թագավորներին, որոնցից մեկն էր և այս Օրոնտաս-Երվանդ II-ը:

Եթե ընդունելու լինենք, որ Դարեհ I-ից սկսած վերացել է հայկական պետականությունը և Հայաստանում անընդմեջ իշխել են պարսիկ սատրապները, ապա անբացատրելի է մնում մեր ժողովրդի պատմության ամենանշանակալից երևույթներից մեկը՝ հայ ժողովրդի կազմավորման շրջանում բուն հայկական լեռնաշխարհի բազմաթիվ մեծ ու փոքր ցեղերի ձուլումը հայերի մեջ, որը պատմական անվիճելի իրողություն էր Քսենոփոնի ժամանակ: Հայ ժողովրդի կազմավորման բուռն գործընթացը կարող էր տեղի ունենալ միայն հայկական պետականության գոյության պայմաններում:

Քսենոփոնի վկայություններից հետևում է, որ այս ժամանակ Հայաստանը բաժանված էր երկու մասի՝ Արևելյան և Արևմտյան: Սակայն դրանք Արևմեայան Պարսկաստանի կազմի մեջ մտնող ինքնուրույն, իրարից անկախ երկու տարբեր սատրապություններ չէին, ինչպես կարծել են ուսումնասիրողներից շատերը, այլ Հայաստանի վարչական տեսակետից բաժանված երկու երկրամասեր: Նման վարչական բաժանման անհրաժեշտությունը, անկասկած, առաջացել էր

նրանից, որ բազմաթիվ ցեղերի և հատկապես նախկին 18-րդ սատ-
րապուլթունում բնակվող ցեղերի հայացման և նրանց երկրների
միացման հետևանքով մեծ չափով ընդարձակվել էր Հայաստանի
տարածքը: Արևելյան Հայաստանը իր մեջ ընդգրկում էր պատմա-
կան Հայաստանի Կորճեք և Աղձնիք նահանգները, Վանա լճի ափ-
զանը և Ծոփքը, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Տարոնը, Բագրևանդը,
Բասենը, Բարձր Հայքը և Փոքր Հայքը:

Հայաստանի թագավոր-սատրապը հանդիսանում էր Օրոնտա-
ս-Երվանդ II-ը, իսկ Արևմտյան Հայաստանի հյուպարքոս-փոխկա-
ռավարիչը կամ կուսակալը՝ Տիրիբազը: Այս վերջինը Օրոնտա-
ս-Երվանդի ենթական էր, գուցե և նրա օգնականը:

Մեզ հայտնի չէ, թե արդյո՞ք Արևելյան Հայաստանը անմիջակա-
նորեն Օրոնտա-Երվանդը ինքն է կառավարել, թե սա նույնպես
ունեցել է իր կուսակալը: Քսենոփոնը իր երկրորդ վկայությունն
Օրոնտա-Երվանդի հետ հիշատակում է նաև Արտուխաս անունով
մեկին, սակայն չի հայտնում, թե ով էր սա: Կարելի է միայն ենթա-
դրել, որ այս Արտուխասը (հավանաբար Արտաշեսը) եղել է Արևել-
յան Հայաստանի կուսակալը կամ գորքի հրամանատարը:

Գրեթե բոլոր ուսումնասիրողները ենթադրել են, որ Կենտրիտես
գետից հետո հույների հանդիպած առաջին գյուղը եղել է Օրոնտա-
ս-Երվանդի նստավայրը, նրա գահանիստը: Սակայն այս ենթադրու-
թյունը հիմնավոր չէ: Քսենոփոնը համապատասխան վկայության
մեջ կամ այլ տեղում չի հայտնում, որ այս գյուղը եղել է Հայաստանի
սատրապի նստավայրը, այլ նշում միայն, որ այս մեծ գյուղը «ունեն
սատրապի համար ապարանք-ամրոց, և տների մեծագույն մասի վրա
կային աշտարակներ»: Սատրապի որևէ գյուղում ապարանք-ամրոց
ունենալը դեռևս լրիվ ապացույց չի կարող ծառայել, որ հատ-
կապես այդ գյուղը եղել է նրա նստավայրը, որովհետև նա նման
ապարանք-ամրոցներ կարող էր ունենալ նաև այլ վայրերում: Ան-
կասկած է, որ հիշյալ գյուղը Հայաստանի թագավոր-սատրապների
նստավայրը, նրանց կենտրոնատեղին չէր կարող եղած լինել, որով-
հետև, ինչպես վկայում է Քսենոփոնը, այս գյուղը կարգուխների դեմ
մղվող կռիվների թատերաբեմից մոտ 25 կիլոմետր հեռավորության
վրա էր գտնվում և նրա շրջապատը անմարդաբնակ էր, գոնե հույ-
ները Կենտրիտես գետից մինչև այս գյուղը ոչ մի այլ բնակավայրի
չէին հանդիպել: Իհարկե չի կարելի կարծել, որ Արևելյան Հայաս-
տանը այնքան փոքր է եղել կամ Հայաստանի թագավոր-սատրապ-
ները այնքան անհեռատես էին գտնվել, որ իրենց գահը հաստատել

էին սահմանամերձ և արտաքին թշնամու հարձակումներին մշտապես ենթակա այս գյուղում: Հաստատ կարելի է ենթադրել, որ Հայաստանի թագավոր-սատրապների նրստավայրը գտնվել է երկրի կենտրոնական շրջաններից մեկում, արտաքին թշնամու հարձակումներից պակի ապահով մի վայրում:

Հիշյալ գյուղը ամրոց ունենալու և տների մեծ մասի վրա աշտաբակներ լինելու ուչագրավ փաստերն ինքնին ապացուցում են, որ դա հանդիսացել է կարգուխների ներխուժումից երկիրը պաշտպանելու կարևոր ռազմական հենակետերից, ամրություններից մեկը: Նման կարևոր հենակետում բնականաբար Հայաստանի սատրապը, տեղական կառավարիչը կամ կայագործի հրամանատարը կարող էին ունենալ իրենց ապարանք-ամրոցը:

3. ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք. Ա. VI-IV ԴԱՐԵՐՈՒՄ

Գյուղատնտես- սությունը և արհեստները

Բիհիսթունիի արձանագրություն, Հերոդոտոսի և Քսենոփոնի աշխատությունների հաղորդած տեղեկություններից երևում է, որ Հայերը վաղուց նստակյաց էին: Նրանք մեծ մասամբ բնակվում էին գետերի ու լեռների հովիտներում, իրար մոտիկ կառուցված գյուղերում: Նրանք ունեին նաև բերդեր և ապարանք-ամրոցներ:

Հայերի տնտեսական հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր:

Քսենոփոնի այն վկայությունները, որ հայկական գյուղերում «պաշարեղենը շատ առատ էր», գյուղերը «լի էին բազում պաշարեղենով», «լիառատ էին» և այն ինքնին ապացուցում են, որ Հայաստանում երկրագործությունը գտնվում էր զարգացման բավական բարձր աստիճանի վրա: Հայերը մշակում էին ցորեն, գարի, քնջութ, կտավատ և այլ բնդեղեններ:

Արածանիի վերին հովտում, Վանա լճի ավազանում, Ծոփքում և Արարատյան դաշտում առավել մեծ չափով զարգացած էին նաև այգեգործությունն ու պտղաբուծությունը: Դրա լավագույն ապացույցն այն է, որ նահանջող հույները հայկական գյուղերի մեծ մասում գտել էին կարասների մեջ պահվող մեծ քանակությամբ սովորական, հին ու անուշահոտ գինիներ, չամիչ և այլ չոր մրգեր:

Բացի սովորական, հին ու անուշահոտ զինիններից, հայերը գիտեին պատրաստել նաև գարեջուր, քնջութի և կտավատի ձեթ, դառն նշի և բևեկնի յուղ, օծանելիք, անուշահոտ յուղեր: Այս բոլորը ցույց են տալիս, որ Ք. ա. V դարում հայերը գտնվում էին տնտեսական ու մշակութային զարգացման բարձր մակարդակի վրա:

Հայաստանում, հատկապես նրա լեռնային և նախալեռնային շրջաններում զարգացած էր նաև անասնապահությունը: «Հայերը, վկայում է Հերոդոտոսը, հարուստ են անասուններով»: Հայերը պահում էին խոշոր եղջերավոր անասուններ, ոչխար, այծ, խոզ, ձի, ջորի, էշ, ուղտ և տնային թռչուններ: Հայաստանը հատկապես հարուստ և հռչակված էր իր ձիերով: «Երկիրը (Հայաստանը), ասում է Ստրաբոնը, ձիերի համար ունի հարուստ արոտներ, որոնք մարականներից վատ չեն, այնպես որ նեսեական ձիերը, որ գործածում էին պարսից թագավորները, այնտեղից էլ էին բերում, և Հայաստանի սատրապը պարսից թագավորին ուղարկում էր տարեկան 20.000 քուռակ»:

Ք. ա. VI–IV դարերում Հայաստանում գոյություն ունեցող արհեստների մասին մեզ են հասել թե՛ գրավոր և թե՛ հնագիտական անբավարար տվյալներ, մեծ մասամբ կցկտուր և կողմնակի վկայություններ: Սակայն այդ կցկտուր և անբավարար տեղեկություններն անգամ ցույց են տալիս, որ հայերի մոտ ևս շատ վաղուց կատարվել էր աշխատանքի երկրորդ մեծ հասարակական բաժանումը. մասնագիտացված արհեստը բաժանվել էր երկրագործությունից:

Դեռևս Հայկի և Բելի ավանդությունն մեջ նշված է, որ երկու կողմերի հսկաները իրար հետ կռվել են նետ ու աղեղով և սրերով: Շատ բնորոշ է նաև, որ Բելը ունեցել է երկաթե սաղավարտ, պղնձե տախտակներից շինված զրահ, երկսայրի սուր, վահան և նիզակ, իսկ Հայկը Բելին սպանելու համար գործածել է երեքթևյան նետի սլաք, որը ծակել է հակառակորդի կրծքի ու թիկունքի պղնձե զրահատախտակներն ու մարմինը: Հերոդոտոսի և Քսենոփոնի տարբեր վկայություններից Հայտնի է նույնպես, որ հայերը իբրև զենք օգտագործել են սրեր, դաշույններ, նետ ու աղեղ, կարճ ու երկար նիզակներ, երկսայրի տապարներ, տեգեր, մեծ ու փոքր վահաններ, երկաթե կամ պղնձե լարերով հյուսված սաղավարտներ, զրահներ և այլն: Քսենոփոնը վկայում է, որ Հայոց թագավորը ունեցել է թանկարժեք զարդեր և տնային կարասիներ, իսկ հույները Տիրիբազի վրանում գտել էին արծաթե ոտքերով զահույքներ և ըմպանակներ: Բացի գրավոր տեղեկություններից, տարբեր ժամանակներում Երզնկայում

և Հայաստանի այլ վայրերում պատահականորեն Հայտնաբերվել են արծաթից ու բրոնզից պատրաստված, նախշերով, տարբեր կենդանիների քանդակներով զեղազարդված եղջյուրաբաժակներ, թասեր, գավաթներ, գլանաձև փոքրիկ տուփ, ամանի բռնակ և այլն: Հասանկալայի դամբարաններից մեկում գտնվել է ոսկուց պատրաստված ձիու բաշ: Հայտնաբերված այս իրերը, որոնք պատկանում են Ք. ա. V–IV դարերին, մեծ նմանություն ունեն ոչ միայն արքեմենյան, այլև ուրարտական իրերին: Վերևում նշված բոլոր փաստերը անվիճելի կերպով ապացուցում են, որ VI–IV դդ. Հայաստանում զգալի չափով զարգացած էին մետաղամշակությունը և նրա հետ կապված արհեստները, և որ Հայերը ժառանգել և հիմնականում պահպանել էին մետաղամշակության մշակույթի այն խոշոր նվաճումները, որ ձեռք էին բերել ուրարտացիները:

1950–1951 թթ. պեղումների ժամանակ ուրարտական էրերունի (Արին բերդ) քաղաք–ամրոցում Հայտնաբերվել է սյունազարդ, նախշերով ու որմնանկարներով հարուստ մի դահլիճ, որը նման է Արքեմենյան Պարսկաստանի մայրաքաղաքներ Սուզայում, Պերսեպոլսում և այլ վայրերում Հայտնաբերված ընդունասրահների՝ ապաղանաապարանքներին: Հնագետները գտնում են, որ այս դահլիճը կառուցվել կամ վերակառուցվել է Ք. ա. V դարում: Նորահայտ այս դահլիճը, ինչպես և բերդերի ու ապարանք–ամրոցների գոյությունը Հայաստանում ցույց են տալիս, որ Հայերը պահպանել ու զարգացրել էին նաև ուրարտացիներից ժառանգած շինարարական արվեստը և սրա հետ կապված արհեստները: Քսենոփոնը վկայում է, որ խալդայներից գրավված բարձունքում ամրոց կառուցելու համար, Կյուրոսի առաջարկով, Հայոց թագավորը բերել է քարագործներ, հյուսներ և այլ արհեստավորներ:

Ինչպես վկայում են հույն պատմիչները, Հայկական ավազանին և զինվորները հագնում էին կարճ վերնագգեստներ, ձտքավոր կոշիկներ, իսկ գյուղացիները՝ տարբեր գույնի երկար զգեստներ և տրեխներ: Հին Հայերը կրում էին նաև սրածայր, սաղավարտանման և այլ ձևի գլխարկներ: Էրերունի քաղաք–ամրոցի, Ջրաշատ գյուղի, Դվինի և այլ վայրերի պեղումներից Հայտնաբերվել են նաև V–IV դարերին պատկանող կավե ամաններ, կարասներ, կժեր, կճուճներ, տարբեր նյութերից պատրաստված զանազան գույնի հուլունքներ, քարե տնային իրեր և այլն: Վերոհիշյալ գրավոր վկայությունները և նյութական մշակույթի մնացորդները հաստատում են, որ Հայաստանում VI–IV դարերում որոշ չափով զարգացած են եղել նաև մանածա-

գործուիթյունը, կաշեգործուիթյունը, կավագործուիթյունը և մյուս արհեստները:

«Հայաստանը,– ասում է Քսենոփոնը,– մեծ է, հարուստ և բարեկեցիկ»: Հույն պատմիչի այս բնութագրումը պարզ մի ապացույց է, որ իրոք VI–IV դարերում Հայաստանը գտնվել է տնտեսական զարգացման բավական բարձր աստիճանի վրա: Այդ զարգացման ցուցանիշ է հանդիսանում նաև Հայաստանի երկու սատրապուիթյունների՝ Աքեմենյան Պարսկաստանին տարեկան վճարած 600 արծաթ տաղանդի հարկագումարը, որի կշիռը այժմյան կշռով հավասար էր մոտ 19.584 կիլոգրամ արծաթի, իսկ արժեքով՝ մոտ 2.400.000 ոսկի ուրբու: Իր ժամանակի համար այս մեծ հարկագումարը կարող էր վճարել միայն տնտեսապես զարգացած երկիրը, մանավանդ, եթե համեմատուիթյան համար նշենք, որ Հին Արևելքի ամենահարուստ, ամենազարգացած երկրներից Եգիպտոսը տարեկան վճարում էր 700, Բաբելոնիան՝ 1000, իսկ Փոքր Ասիան, իր երեք սատրապուիթյունների հետ միասին, 1760 արծաթ տաղանդ:

Սակայն Հայաստանի երկու մասերն իրենց զարգացման մակարդակով միևնույն աստիճանի վրա չէին գտնվում: Արևելյան Հայաստանը, որն իր տարածքի մեջ էր ընդգրկում Ուրարտական պետուիթյան կենտրոնական չրջանները և մոտիկ էր գտնվում Հին Արևելքի առաջավոր երկրներին ու առևտրական հիմնական ճանապարհներին, ավելի էր զարգացած, քան Արևմտյան Հայաստանը: Զարգացման այդ տարբերուիթյունը պարզ կերպով երևում է Քսենոփոնի գյուղական տների նկարագրուիթյունից: Եթե Արևելյան Հայաստանի գյուղական տները կանոնավոր էին և նույնիսկ նրանց մեծ մասի վրա կային աշտարակներ, ապա Արևմտյան Հայաստանի գյուղական տները գետնավոր էին, և մարդիկ ու ընտանի կենդանիները ապրում էին նույն հարկի տակ:

Փոխանակուիթյունը և առևտուրը

Պատմագիտական բոլոր երկերում տարածված է այն կարծիքը, որ Հայաստանում VI–IV դարերում քաղաքներ գոյուիթյուն չեն ունեցել: Այս եզրակացուիթյան համար հիմք է հանդիսացել այն, որ հույները իրենց նահանջի ճանապարհին Հայաստանում ոչ մի քաղաքի չէին հանդիպել: Սակայն նման եզրակացուիթյունը հիմնավոր չէ: Հավանաբար, հույներն իրենք են խուսափել Հայաստանում քաղաքների հանդիպելուց և նահանջել էին ոչ թե հիմնական, բանուկ, այլ գյուղական ճանապարհների և ճանապարհազուրկ վայրերով:

Իհարկե, անտրամաբանական է կարծել, որ մարերը և հայերը կործանել ու մոխրակույտերի էին վերածել ուրարտական ժամանակաշրջանի բոլոր նշանավոր քաղաքներն ու վարչական կենտրոնները: Մեզ հասած կցկտուր տվյալները հակառակն են ապացուցում: Վանի միջնաբերդում հայտնաբերվել է պարսից թագավոր Արտաքսերքսես I-ի (486–465) պարսկերեն լեզվով գրված սեպագիր մի արձանագրություն, որտեղ նա խոսում է իր կատարած շինարարական աշխատանքների մասին: Ուրարտական էրեբունի քաղաք-ամրոցում, ինչպես արդեն նշվել է, հայտնաբերվել են արեմենյան դարաշրջանին պատկանող նյութական մշակույթի զգալի մնացորդներ: Այս փաստերը ցույց են տալիս, որ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա–Վանը և էրեբունի քաղաք-ամրոցը իրենց գոյությունն ու քաղաքային-վարչական նշանակությունը այս կամ այն կերպ պահպանել էին նաև VI–IV դարերում: Պետք է կարծել, որ իրենց գոյությունը և նշանակությունը պահպանել էին նաև Արգիշտիխինիլի–Արմավիրը և ուրարտական քաղաք-ամրոցներից շատերը:

Մասնավոր սեփականություն և առաջացումը և աշխատանքի երկրորդ հասարակական մեծ բաժանումը, այսինքն՝ մասնագիտացված արհեստի բաժանումը երկրագործությունից, բնականորեն հայկական հասարակության ներսում նույնպես պետք է նպաստեին ապրանքափոխանակության և առևտրի առաջացմանն ու հետագա զարգացմանը: Տոհմա-ցեղային արտադրական ու արյունակցական կապերից կտրված, մասնավոր սեփականություն հիման վրա անհատական տնտեսություն վարող արտադրողների փոխադարձ տրնտեսական կապը հնարավոր էր իրագործել միայն սկզբում պարզ ապրանքափոխանակության, իսկ հետագայում՝ առևտրի միջոցով:

Հայաստանում VI–IV դարերում գոյություն ունեցող ապրանքափոխանակության, ներքին ու արտաքին առևտրի մասին մեզ են հասել միայն կցկտուր տեղեկություններ:

Հայաստանի և Բաբելոնի միջև Եփրատ գետի վրայով տեղի ունեցող առևտրի մասին մի հետաքրքիր տեղեկություն է պահպանվել Հերոդոտոսի մոտ:

«Այժմ ես կպատմեմ,– ասում է Հերոդոտոսը,– թե ինչն է, իմ կարծիքով, ամենից զարմանալիս իրենց քաղաքից (Բաբելոնից) հետո սրանց մոտ: Նրանց նավերը, որոնք գետի վրայով գալիս են Բաբելոն, կլոր են և բոլորը կաշվեպատ: Հայերի երկրում, որոնք բնակվում են ասորեստանցիներից վերև, սրանք կտրում են ուռիներ, շինում նավի կողերը և պատում են այդ կաշվե ծածկով, տալով հատակի ձև...»:

Լցնում են ամբողջ նավը ծղոտով, բեռնում են և թողնում, որ իջնեն գետն ի վայր: Մեծ մասամբ նավերով տանում են գինիով լիքը արմավենու տակառներ...: Այդ նավերը լինում են և շատ մեծ և ավելի փոքր: Նրանցից ամենամեծները տանում են հինգ հազար տաղանդ բեռ: Ամեն մի նավում գտնվում է մեկ էջ, իսկ մեծ նավերում՝ մի քանիսը: Բարելոն հասնելուց և բեռը ծախելուց հետո նրանք վաճառում են նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշին բարձում են էջերի վրա և նորից գնում հայերի երկիրը»:

Ա. Գարագաշյանը, Գր. Սալաթյանցը և ուրիշներ կարծել են, որ Հայաստանի և Բարելոնի միջև տեղի ունեցող այս առևտրի միջնորդ առևտրականներ եղել են հայերը: Սրան հակառակ Հ. Մանանդյանը ցույց է տվել, որ այդ միջնորդ առևտրականները եղել են ոչ թե հայերը, այլ ասորեստանցիները: Սակայն անկախ նրանից, թե ովքեր են եղել միջնորդ առևտրականները, կարևորն ու հականն այն է, որ Ք. ա. V դարում Հայաստանը Եփրատ գետի վրայով առևտրական կապեր է ունեցել Բարելոնի հետ և արտահանել է մեծ քանակությամբ գինի, հավանաբար նաև գյուղատնտեսական այլ ապրանքներ: Հերոդոտոսի հաղորդած տեղեկությունն մեջ առավել ուշագրավ է այն, որ միջնորդ առևտրականները Հայաստանում գինի և այլ գյուղատնտեսական մթերքներ ձեռք բերելու համար Բարելոնից իրենց հետ ապրանքներ չեն բերել: Այստեղից հետևում է, որ առևտրականները Հայաստանում իրենց գնումները կատարել են ոսկու ու արծաթի կշռով կամ դրամահատված փողի միջոցով:

Որ իրոք Հայաստանը այս ժամանակ անձանոթ չի եղել դրամական տնտեսությունն ու փողի շրջանառությունը, ապացուցում են նաև հնագիտական տվյալները: Երևանի նախկին նահանգում հայտնաբերվել է աքեմենյան արծաթե մի դրամ, իսկ ուրարտական էրբրունի քաղաք-ամրոցում՝ V դարին պատկանող միլեթյան երկու արծաթե դրամ:

Միլեթյան հիշյալ դրամների հայտնաբերումը էրբրունի քաղաք-ամրոցում ապացուցում է, որ ապրանքափոխանակության, առևտրի և արհեստագործությունների առաջին կենտրոնները հանդիսացել են Հայաստանի քաղաքներն ու քաղաք-ամրոցները, թեև ինչպես Արևելքի շատ երկրներում, նույնպես և Հայաստանում քաղաքները դեռևս մեծ մասամբ ռազմավարչական կենտրոններ էին:

Հայաստանում գոյություն ունեցող առևտրի, առուծախի մասին կողմնակի վկայություններ կան նաև Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատություններում:

«Զինվորներին նա (Կյուրոսը) հրամայեց,– վկայում է Քսենոփոնը,– որ ոչ ոքի հետ անարդար չվարվեն, և եթե հայերից որևէ մեկը հանդիպի՝ հայտնեն, որ անհանգիստ չլինեն, և ասեն, որ ցանկացողները ծախու ապրանքներ բերեն ուր որ իրենք են գտնվելու, եթե նրանք կամենում են ծախել ուտելիք և կամ խմիչք»:

Քսենոփոնը մի այլ տեղ վկայում է, որ Կյուրոսը մերժելով Հայոց թագուհու մատուցած ոսկե զարդը՝ նրան ասում է. «Տիկին առ այդ փողը, որ բերում ես, և գնա՛, ու այլևս մի՛ տա Հայոց թագավորին, որ նա այդ գետնի մեջ թաղե: Դու ուղարկի՛ր որդուդ գորբի մեջ ու նրանցով ամենագեղեցիկ կերպով նրան զարդարիր, իսկ մնացածով քեզ, ամուսնուդ, դուստրերիդ ու որդիներիդ համար գնի՛ր այնպիսի բաներ, ինչ ձեռք բերելով և ինչով որ զարդարվելով՝ ձեր կյանքը կանցկացնեք ավելի գեղեցիկ ու ավելի ուրախ կերպով»:

Մեջբերված այս վկայությունները ցույց են տալիս, որ Քսենոփոնը ևս ականատես կամ տեղյակ է եղել, որ Հայաստանի առանձին մասերում առևտուրը կատարվել է ոսկու ու արծաթի կշռով կամ դրամահատված փողի միջոցով, իսկ բնակիչները մթերքներ ու խմիչքներ են վաճառել զինվորներին:

Հայոց թագավորի ունեցած 3000 արծաթ տաղանդի կարողությունը և Հայաստանի երկու սատրապությունների տարեկան վճարած 600 տաղանդի հարկագումարը նույնպես կողմնակի կերպով ապացուցում են, որ Հայաստանը անծանոթ չի եղել այս դարաշրջանում դրամական տնտեսությունը:

Բացի զինուց և գյուղատնտեսական այլ մթերքներից Հայաստանը դեպի Փյունիկիայի Տյուրոս և Սիդոն առևտրական քաղաքներն է արտահանել նաև ձիեր, ջորիներ և այլ անասուններ, ինչպես վկայում է «Աստվածաշնչում» Եզեկիել մարգարեն՝ Հայաստանի մասը կազմող Թոգարմա երկրի կապակցությամբ:

Սակայն Հայաստանում VI–IV դարերում գոյություն ունեցող ներքին ու արտաքին առևտրի, դրամական տնտեսությունն ու շրջանառությունը դերը չի կարելի գերազնահատել: Հաստատ կերպով պետք է կարծել, որ Հայաստանի գյուղերի մեծագույն մասը և հեռավոր շրջանները ոչ միայն դեռ անծանոթ էին դրամական տնտեսությանը, այլև այս տեղերում առևտուրը կատարվում էր պարզ ապրանքափոխանակություն ձևով:

Չնայած քաղաք-ամրոցների, արհեստների, փոխանակության ու առևտրի գոյությունը և տնտեսությունը մեջ նրանց առաջ բերած որոշ փոփոխություններին՝ Հայաստանն Աքեմենյան դարաշրջանում գտնվում էր փակ ու բնական տնտեսություն շրջանակներում:

**Հասարակական
Հարաբերու-
թյունները**

VI-IV դարերում Հայկական Հասարակու-
թյունը իր բնույթով հիմնականում տոհմատի-
րական կարգերը քայքայված, տնտեսապես ու
սոցիալապես չերտավորված և աստիճանաբար
արևելյան տիպի ստրկատիրութան վերածվող

Հասարակութուն էր, որտեղ ուժեղ էին նաև տոհմա-ցեղային Հա-
րաբերությունների մնացորդները: Հատկապես երկրի հեռավոր ու
լեռնային շրջաններում ապրող Հայկական, ինչպես և այն ցեղերը,
որոնք դեռևս չէին ձուլվել կազմավորման գործընթացում գտնվող
Հայ ժողովրդի հետ, մեծ մասամբ գտնվում էին տոհմատիրական
կարգերում կամ այդ կարգերի քայքայման շրջանում:

Հասարակության իշխող ու շահագործող խավը կազմված էր
Հայկական ու տեղական այլ ցեղերից առաջացած ռազմաստրկա-
տիրական և տոհմա-ցեղային ավագանու մեծ ու փոքր ներկայա-
ցուցիչներից, որոնք հետզհետե վերածվում էին ստրկատիրական
դասակարգի: Սրանց Քսենոփոնը անվանում է «երևելի Հայեր»,
«պատվավոր Հայեր» կամ «իշխանավորներ»:

Ինչպես Աքեմենյան Պարսկաստանում և Առաջավոր Ասիայի շատ
երկրներում, նույնպես և Հայաստանում հողը հանդիսանում էր պե-
տության սեփականությունը: Այս հանգամանքը կողմնակի կերպով
մատնանշված է այն հարց ու պատասխանների մեջ, որ, ըստ Քսե-
նոփոնի «Կյուրոպեդիա»-ի, տեղի է ունեցել Կյուրոսի, Հայոց թա-
գավորի և խալդայների միջև՝ հաշտության ժամանակ:

«Արդյոք չէ՞իք ցանկանա,- ասաց Կյուրոսը,- որ դուք ևս վճա-
րեիք նույնը, ինչ որ մյուս Հայերը, և թույլատվություն ստանայիք
մշակելու Հայաստանի հողերը, որքան որ կամենայիք»: «Եթե մենք
հավատացած լինեինք,- ասացին խալդայները,- որ նրանք մեզ չեն
նեղացնելու»: «Իսկ դու, ո՞վ Հայոց թագավոր,- ասաց Կյուրոսը,
չէի՞ր ցանկա, որ քո այժմյան անմշակ հողերը դառնային պտղաբեր,
եթե համաձայնեին վճարել քեզ մոտ ընդունված տուրքերը»: «Այդ,-
ասաց Հայոց թագավորը,- շատ մեծ արժեք կունենար, որովհետև
խիստ կավելանար եկամուտը»:

Մեջբերված այս հատվածից երևում է, որ Քսենոփոնը ոչ միայն
տեղյակ է եղել, որ Հայաստանում հողի սեփականություն ու տնօրին-
ման իրավունքը պատկանել է պետությանը կամ թագավորին, այլև
հողամշակման համար Հայերը պարտավոր են եղել պետությանը
վճարել որոշակիորեն սահմանված հարկեր ու տուրքեր: Այստեղից
հետևում է նաև, որ Առաջավոր Ասիայի շատ երկրների նման Հա-

յաստանում ևս հողային բնահարկը և պետական հարկը հանդես են եկել միաձուլված տեսքով:

Բացի հողից, Հայաստանում պետութանը կամ թագավորին են պատկանել նաև քաղաքները, բերդերը, հանքերը, ջրանցքները, ճանապարհները:

Օգտագործման իրավունքով, գուցե և գանձվող պետական հարկի մի մասը յուրացնելու պայմանով ընդարձակ հողային տիրույթներ են ունեցել թագավորական և ռազմաստրկական ավագանու ազգատոհմերը:

Հայկական գյուղերի բնակչությունը, ինչպես երևում է Քսենոփոնի վկայություններից, կազմված էր տոհմացեղային կապերից կտրված, մենամուսնություն և հայրական իրավունքի հիման վրա կազմված առանձին ընտանիքներից կամ ծխերից, որոնք միավորված էին տարածքային գյուղական համայնքներում: Գյուղական տները, նրանց մեջ պահվող անասունները, կենսամթերքները, խմիչքները, տնային իրերը և այլն հանդիսանում էին այդ ընտանիքների կամ ազատ համայնականների մասնավոր սեփականությունը:

Հայաստանում ազատ համայնականները շահագործվում էին կրկնակի կերպով: Նրանք բնամթերքներով հարկեր ու տուրքեր էին վճարում ոչ միայն հայկական, այլև պարսկական պետությունը: Բացի հարկերից ու տուրքերից, նրանք կատարում էին նաև շինարարական, փոխադրական և մի շարք այլ պարհակներ: Համայնքի անդամներից հարկերի գանձումը, ինչպես երևում է Քսենոփոնի վկայությունից, կատարվում էր գյուղապետի կողմից:

Հայաստանում ստրկատիրությունը դեռևս շատ թույլ էր զարգացած, և ստրուկների թիվը շատ քիչ էր: Կային գերեվարված, պարտային և տիրոջ տանը ծնված ստրուկներ: Ստրուկների մեծ մասը պատկանում էր պետությունը: Նրանց աշխատանքը կիրառվում էր շինարարական աշխատանքներում, հանքերում և տնային ծառայություն մեջ:

Հնագույն Հայկական պետությունն իր բնույթով արևելյան տիպի միապետություն էր, որի գլուխ կանգնած էր թագավորը կամ թագավոր-սատրապը: Թագավորական իշխանությունը ժառանգական էր, որը հորից անցնում էր անդրանիկ որդուն:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍՏՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ք. Ա. IV–III ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հպատակված երկրների և ինքնուրույնության ձգտող տեղական սատրապների ապրտամբությունների, ներքին հակամարտությունների ու զահակալական կոիվների պատճառով Ք. ա. IV դարի առաջին կեսից Աքեմենյան Պարսկաստանը խիստ կերպով թուլանում է և կանգնում կործանման առաջ: Այդ թուլությունը մեծ չափով կապված էր նաև պարսկական պետության ներսում տնտեսական կյանքի խիստ դանդաղ զարգացման ու հետամնացության հետ:

Հունա-մակեդոնական ստրկատերերը, օգտվելով Աքեմենյան Պարսկաստանի այս թուլությունից, ծրագրում են նվաճել Փոքր Ասիան և Արևելքի մյուս երկրները ու ձեռք բերել նոր հարստություններ, տասնյակ հազարավոր ստրուկներ ու վաճառահանման շուկաներ: Սրան մեծ չափով նպաստում է այն հանգամանքը, որ հույները, որոնք հաճախ Արևելքում վարձկանություններ էին զբաղվում, շատ լավ ծանոթ էին պարսկական պետության ներքին թուլությանը:

Մակեդոնիան, որը գտնվում էր Բալկանյան թերակղզու հյուսիսային մասում, սկզբում տնտեսական, քաղաքական ու մշակութային տեսակետից մի շատ թույլ ու հետամնաց երկիր էր: Սակայն նա

Փիլիպոս II թագավորի ժամանակ (359–336) մեծ չափով ուժեղանում և իրեն է ենթարկում ամբողջ Հունաստանը:

336 թվականին Փիլիպոս II-ը սպանվում է, երբ պատրաստվում էր հարձակվել Աքեմենյան Պարսկաստանի վրա: Փիլիպոսին հաջորդում է նրա քսանամյա որդին՝ Ալեքսանդր Մակեդոնացին (336–323), որը եղել էր հույն նշանավոր փիլիսոփա Արիստոտելի աշակերտը:

Հունա-մակեդոնական զորքերը Ալեքսանդր Մակեդոնացու ղեկավարությամբ Բ. ա. 334 թ. ներխուժում են Փոքր Ասիա և պատերազմ սկսում Աքեմենյան Պարսկաստանի դեմ: 334 թ. Մարմարա ծովը թափվող Գրանիկ գետի մոտ, 333 թ. Կիլիկիայում գտնվող Իսոսի հարթավայրում տեղի ունեցած ճակատամարտերում Ալեքսանդր Մակեդոնացին հաղթում ու մեծ կորուստներ է պատճառում պարսիկներին՝ իրար ետևից նվաճելով ամբողջ Փոքր Ասիան, Կիլիկիան, Ասորիքը, Փյունիկիան, Պաղեստինը և Եգիպտոսը: 331 թ. սեպտեմբերին Նինվեի ավերակներից ոչ այնքան հեռու գտնվող Գավգամելա բնակավայրի մոտ վճռական ճակատամարտ է տեղի ունենում Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ III Կողոմանոսի (336–331) և Ալեքսանդր Մակեդոնացու միջև: Չնայած Դարեհի ունեցած ուժերի մեծ գերակշռությանը, Ալեքսանդր Մակեդոնացին վճռական ու լրիվ հաղթանակ է տանում, ջախջախում է պարսկական ուժերին և վերջնականապես կործանում Աքեմենյան պետությունը:

Ալեքսանդր Մակեդոնացին ստեղծում է ընդարձակաճավալ ու աշխարհակալ մի պետություն, որի սահմանները տարածվում էին Դանուբ գետի ափերից մինչև Գանգես գետի ու Հնդկական օվկիանոսի ափերը, Սև ծովից և Միջին Ասիայից մինչև Եթովպիայի սահմանները: Նորաստեղծ այս տերությունն մայրաքաղաքն է դառնում Բաբելոնը:

Սակայն Ալեքսանդր Մակեդոնացին երկար չի ապրում: Նա մահանում է 323 թ.:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո նրա ստեղծած պետությունը, որը ներքին տնտեսական ու քաղաքական կապերից զուրկ էր, արագ կերպով քայքայվում է: Նրա զորավարները, հենվելով իրենց զինվորական ուժերի վրա, իրար դեմ պայքար են սկսում թագավորական իշխանությունը գրավելու համար: Երկարատև ու արյունալի կռիվներից հետո Ալեքսանդր Մակեդոնացու զորավարները պետությունը բաժանում են իրար մեջ և հիմնադրում ինքնուրույն երեք խոշոր հելլենիստական թագավորություններ: Մակեդոնիայի և

Հունաստանի տարածքում ստեղծվում է մի առանձին պետություն. Պտղոմնոս զորավարը Եգիպտոսում հիմնադրում է Պտղոմնոսյան, իսկ Սելևկոս Նիկատոր զորավարը Առաջավոր Ասիայում՝ Սելևկյան պետությունները:

Սելևկյան պետության հիմնադրման և սելևկյան հատուկ տոմարի սկիզբը համարվում է 312 թվականը: Սկզբում այս պետության կորիզը և նրա հիմնական տարածքը հանդիսանում էր Բաբելոնիան: Սակայն Սելևկյան պետությունը մեծ չափով ընդարձակվում և հելլենիստական ամենախոշոր ու հզոր պետությունն է դառնում միահեծան իշխանության ձգտող Անտիգոնոս զորավարի դեմ մղած՝ 301 թվականի Իպսոսի ճակատամարտից հետո: Արդեն Ք. ա. IV դարի վերջում Սելևկյան պետության կազմի մեջ էին մտնում Բաբելոնիան, Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը, Մարաստանը, Պարսկաստանը, էլամը, Միջին Ասիան և Փոքր Ասիայի մեծ մասը: Սելևկյան պետության մայրաքաղաքն էր սկզբում Բաբելոնը, հետո՝ Տիգրիս գետի ափին կառուցված Սելևկիա քաղաքը, իսկ ապա՝ Ասորիքում հիմնադրված Անտիոքը:

Հելլենիզմը Արևելքում

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները և Հելլենիստական պետությունների առաջացումը զարգացման մի նոր աստիճան նշանավորեցին Արևելքի երկրների պատմության մեջ և զարկ տվեցին այդ երկրների տնտեսական, քաղաքական, սոցիալական ու մշակութային կյանքին:

Հունա-մակեդոնական տիրապետության ժամանակ մեծ թվով հույն գաղթականներ՝ զինվորներ, արհեստավորներ ու առևտրականներ են գալիս Արևելք: Սրանք Արևելք են բերում իրենց ավելի կատարելագործված արտադրության գործիքները, արտադրական հարուստ կենսափորձը, բարձր մշակույթը, լեզուն, սովորությունները, պետական-վարչական ձևը, տնտեսական-սոցիալական հարաբերությունները:

Ալեքսանդր Մակեդոնացին և նրա հետևորդները նպաստում են Արևմուտքի և Արևելքի մերձեցմանը: Այս քաղաքականության, հույն գաղթականների ու Արևելքի ժողովուրդների միջև ստեղծված փոխադարձ տնտեսական, հասարակական, քաղաքական, ամուսնական կապերի հետևանքով Արևմուտքի և Արևելքի սոցիալ-տնտեսական նույնատիպ բայց առանձնահատուկ, ինքնուրույն գծեր ունեցող հարաբերությունները միաձուլվում են, և զրանց համադրությունից Արևելքում առաջանում է ստրկատիրության նոր և ավելի բարձր աստիճան, որը հայտնի է Հելլենիզմ անունով:

Հույն գաղթականները Արևելքի երկրներում հիմնում են հունական կամ, ավելի ճիշտ, հելլենիստական տիպի ինքնավար, բայց թագավորական իշխանությունը ենթարկվող մեծ թվով քաղաքներ ու գաղթավայրեր, որոնք դառնում են արհեստագործությունների և առևտրի կենտրոններ: Առաջանում են այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպիսիք էին Ալեքսանդրիան՝ Եգիպտոսում, Սելևկիան ու Անտիոքը՝ Առաջավոր Ասիայում, որոնք ունեին մոտ կես միլիոն բնակչություն:

Արևելքի քաղաքներից շատերը վերածվում են հելլենիստական տիպի ինքնավար քաղաքների:

Արևելքում հիմնականում գոյություն ունեին պետական, տաճարական և տնային ստրկատիրությունների ձևեր: Հելլենիզմի դարաշրջանում դրանց կողքին զգալի չափով զարգանում է նաև մասնավոր, անտիկ ստրկատիրությունը, և ստրկական աշխատանքը ավելի մեծ չափերով կիրառվում է արտադրության բոլոր ճյուղերում: Ստրկատիրության խոշոր կենտրոններ են դառնում քաղաքները:

Արևելքի հելլենիստական երկրներում, հնուց գոյություն ունեցող հողի պետական սեփականության պահպանմամբ հանդերձ, առաջանում ու զարգանում է նաև հողի մասնավոր սեփականությունը: Գյուղական համայնքների կողքին հանդես են գալիս մասնավոր սեփականատիրական տնտեսություններ, որոնք հիմնված էին ստրկական աշխատանքի վրա:

Հողի մասնավոր սեփականությունից առաջացման, ստրկական աշխատանքի ուժգին չահագործման, ավելի կատարելագործված գործիքների և եռադաշտային համակարգի կիրառման, անասունների ցեղի բարելավման, քաղաքային բնակչության՝ կենսամթերքների նկատմամբ ունեցած պահանջի աճման հետևանքով զգալի վերելք են ապրում երկրագործությունն ու անասնապահությունը: Ավելանում է ցանքսերի տարածությունը, բարձրանում բերքատվությունը և անասունների մթերատվությունը:

Հելլենիստական քաղաքներում զարգացման նոր և ավելի բարձր աստիճանի են հասնում մետաղամշակությունը, մանածագործությունը, կավագործությունը, ապակեգործությունը և արհեստագործության մյուս ճյուղերը:

Որպես արտադրության բոլոր ճյուղերի ընդհանուր վերելքի բնական հետևանք, զարգանում են նաև առևտուրն ու դրամական շրջանառությունը: Սրանց զարգացմանը մեծ չափով նպաստում են նաև ցամաքային ու ծովային ճանապարհների կարգավորումը, Արևելքի ու Արևմուտքի համար միասնական դրամական համակարգի ստեղծու-

մը, պարսից թագավորների նկուղներում որպես անչարժ գանձ պահվող հսկայական քանակությամբ ոսկին ու արծաթը կտրված դրամների ձևով չըջանառությամբ մեջ մտցնելը: Հեյլենիզմի դարաչըջանում առևտուրը ստանում է միջազգային բնույթ: Առաջավոր Ասիայի երկրները սկսում են աշխույժ առևտուր կատարել ոչ միայն իրար, այլև Հունաստանի, Եգիպտոսի, Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ:

Արևելքի հեյլենիստական երկրների տնտեսական կյանքի ու առևտրի այս աննախընթաց զարգացումն իր ոլորտի մեջ է առնում նաև հարևան երկրները, որոնք չէին նվաճված Ալեքսանդր Մակեդոնացու կամ նրա հետևորդների կողմից: Որքան այդ երկրները մոտ էին հեյլենիստական կենտրոններին, այնքան մեծ էր հեյլենիզմի ազդեցությունը նրանց վրա:

Սակայն չի կարելի խիստ մեծացնել և գերազնահատել հեյլենիստական քաղաքների, տնտեսությունների ու առևտրի զարգացման դերն ու նշանակությունը: Ինչպես ստրկատիրական բոլոր հասարակությունների, նույնպես և հեյլենիզմի, որպես անտիկ հասարակության զարգացման նոր աստիճանի համար խիստ բնորոշ էին արտադրության հիմնակետի թուլությունը, ստրկական աշխատանքի արտադրողականության սահմանափակությունը, արտադրության տեխնիկայի համեմատաբար ցածր մակարդակը: Հեյլենիզմը առաջադիմական մի խոշոր քայլ էր միայն Արևելքում գոյություն ունեցող նախորդ սոցիալ-տնտեսական հարաբերությունների, տնտեսական կյանքի լճացման ու դանդաղաչարժության նկատմամբ: Հեյլենիզմը ոչ միայն չկարողացավ լրիվ կերպով քայքայել Արևելքի հետամնացության ու դանդաղաչարժության հիմքը հանդիսացող գյուղական համայնքը, այլև ինքը ընդօրինակեց ու պահպանեց գյուղական համայնքի շահագործման Արևելքում գոյություն ունեցող ձևը: Հեյլենիստական պետությունները Արևելքից ընդօրինակեցին նաև կառավարման միապետական բռնապետական ձևը՝ որոշ փոփոխություններով, հողի պետական սեփականության իրավունքը, վարչական բաժանման ու կառավարման սիստեմը և այլն:

Զարգացող սոցիալ-տնտեսական հարաբերությունների հիման վրա, հունական և Արևելքի տեղական մշակույթների համաձուլման և նրանց համադրման հետևանքով առաջանում և զարգանում է մշակույթի մի նոր տիպ, որը հայտնի է հեյլենիստական մշակույթ անունով: Զարգացման նոր, ավելի բարձր աստիճանի են հասնում գիտության, մշակույթի և արվեստի այն ժամանակվա հայտնի բոլոր ճյուղերը: Նորաստեղծ այս մշակույթը, հունարեն լեզուն, հունական

աստվածների պաշտամունքը և նրանց նույնացումը տեղական աստվածների հետ մեծ տարածում են ստանում Արևելքի երկրների տեղական հեղինականացած ստրկատիրական վերնախավի շրջանում:

Հեղինիստական մշակույթի ստեղծման մեջ կարևոր դեր են կատարում ոչ միայն իրենք՝ Հույները, այլև եգիպտացիները, ասորիները, բաբելոնացիները, հրեաները, պարսիկները, հայերը և Արևելքի մյուս ժողովուրդները: Այդ իմաստով էլ հեղինիստական մշակույթը ոչ միայն պատկանում է Հույն ժողովրդին, այլև այդ մշակույթն ստեղծած բոլոր ժողովուրդներին և հանդիսանում է նրանց արժեքավոր ներդրումը համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IV–III ԴԴ.

Հայաստանի անկախության վերականգնումը

Հայաստանի Ք. ա. IV–III դարերի պատմության վերաբերյալ մեզ են հասել միայն պատահական, կցկտուր և աղոտ տեղեկություններ: Ք. հ. երրորդ դարի լատին հեղինակ Հուստինոսի մոտ պահպանված մի տեղեկությունից իմանում ենք, որ Դարեհ III Կողոմանոսը մինչև Պարսկաստանում գահ բարձրանալը եղել է Հայաստանի սատրապը: Եթե այս տեղեկությունը պատմականորեն ճիշտ է, ապա պետք է կարծել, որ Երվանդունի հայ թագավորները, իրենց ժառանգական մյուս իրավունքները պահպանելով հանդերձ, ժամանակավորապես կորցրել էին սատրապության պարտականությունները:

Սակայն Ք. ա. 336 թ. Դարեհ Կողոմանոսի գահ բարձրանալուց հետո սատրապության պաշտոնը առաջվա նման կրկին հանձնվում է Երվանդունիների թագավորական տան ներկայացուցիչ Օրոնտաս-Երվանդ III-ին (336–300):

Գավզամելայի նշանավոր ճակատամարտում, ինչպես վկայում են Հույն և Հռոմեացի պատմագիրներ Արրիանոսը և Կուրտիոս Ռուփոսը, Դարեհ Կողոմանոսի բանակում հայերը նույնպես կռվել են Ալեքսանդր Մակեդոնացու դեմ: Նրանք այս ճակատամարտում, Օրոնտաս-Երվանդ III-ի և Միթրաուստեսի հրամանատարությամբ, դուրս են բերել 40.000 հետևազոր և 7.000 հեծելազոր:

Այս ճակատամարտում պարսկական բանակի ջախջախումից հետո հայկական զորքի մնացորդներն իրենց առաջնորդների հետ միասին վերադառնում են Հայաստան:

Ալեքսանդր Մակեդոնացին, որն իր արչավանքը կատարել էր Փոքրը Ասիայի հարավային շրջանների, Կիլիկիայի, Ասորիքի և Բաբելոնիայի վրայով դեպի Պարսկաստան, անձամբ Հայաստանում չէր եղել և այն չէր նվաճել: Սակայն նա Գավգամելայի ճակատամարտից անմիջապես հետո Հայաստանի սատրապ է նշանակում Միթրեն, կամ ավելի ճիշտը, Միհրան անունով մի պարսիկի, որը դավաճանաբար իրեն էր հանձնել Սարդեսի ամրոցը: Այս նշանակումը, սակայն, բացառապես ձեռնարկում և անվանական էր մնացել, որովհետև Միթրեն-Միհրանը չէր կարողացել մտնել Հայաստան և այնտեղ հաստատվել սատրապությունից ապաշտոնում:

Որ իրոք Հայաստանը չէր նվաճվել և Միթրեն-Միհրանը այնտեղ սատրապ չէր եղել, պարզ կերպով երևում է նրանից, որ այս նշանակումից առնվազն երեք տարի անց Ալեքսանդր Մակեդոնացին Մենոն զորավարի առաջնորդությամբ մի հատուկ զորամաս է ուղարկում Հայաստան՝ Սպեր գավառում գտնվող ոսկու հանքերը գրավելու համար: Սակայն այս փորձը ևս ոչ մի հաջողություն չի ունենում: Հայերն իրենց հայրենիքի սահմաններից դուրս են քշում հունամակեդոնական զորքերին և ճակատամարտում սպանում Մենոնին:

Գավգամելայի ճակատամարտից հետո Աքեմենյան Պարսկաստանի տիրապետությունը տակ գտնվող այն երկրները, որոնք չէին նվաճվել Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, ձեռք են բերում ինքնուրույնություն և անկախություն: Այդպիսի երկրներից մեկն էր նաև Հայաստանը: Երվանդ III-ը և Միթրաուստեսը, օգտվելով Աքեմենյան տերության կործանումից և Ալեքսանդր Մակեդոնացու՝ Միջին Ասիայում ու Հնդկաստանում զբաղված լինելու հանգամանքից, վերականգնում են Հայաստանի անկախությունը և այնտեղ հիմնում երկու ինքնուրույն թագավորություն: Երվանդ III-ը իրեն անկախ թագավոր է հայտարարում Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում:

Մեծ Հայքի թագավորությունը Մեծ Հայքի թագավորությունն իր կազմի մեջ ընդգրկում էր Հայաստանի տարածքի գերակշիռ մասը: Նրա սահմանների մեջ էին մտնում Աղձնիք ու Կորճեք նահանգները, Վանա լճի ավազանը, Տարոնը, Բասենը, Արարատյան դաշտը, Շիրակը, Ծոփքը և Մելիտինեի շրջանը: Սակայն Ծոփքը և Մելիտինեի շրջանը Ք. ա. III դարի կեսից անջատվում և դուրս են գալիս Մեծ Հայքի կազմից:

Սկզբում Ալեքսանդր Մակեդոնացու զորավարների, իսկ այնուհետև հելլենիստական պետությունների միջև մղվող երկարատև ու

արյունալի պատերազմները հնարավորություն չեն տալիս հունամակեդոնական նվաճողներին միջամտելու հատկապես Մեծ Հայքի ներքին գործերին և լուրջ սպառնալիք ստեղծելու նրա ինքնուրույնությունը: Այս հանգամանքը մեծ չափով նպաստում է Մեծ Հայքի թագավորության անկախությունն ամրապնդմանը և նրա հզորացմանը:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո պետություն խնամակալ ընտրված Պերդիկկաս զորավարը 322 թ. նվաճում է Հայաստանի հարևան Կապադովկիան, Պափլագոնիան ու Սև ծովի մոտակա շրջանները՝ մինչև Տրապիզոն, և այդ երկրներն իբրև առանձին սատրապություն հանձնում իրեն կողմնակից, Ալեքսանդր Մակեդոնացու քարտուղար Եվմենեսին: Կապադովկիայի պարսկական նախկին սատրապ Արիարաթես I-ը, որը Գավգամելայի ճակատամարտից հետո իրեն անկախ էր հայտարարել, խիստ կերպով պարտվում և մահվան է դատապարտվում: Նրա որդին՝ Արիարաթես II-ը, փախչում է Մեծ Հայք և ապաստան գտնում Երվանդ III-ի մոտ:

301 թ. Իպսոսի վճռական ճակատամարտից հետո ստեղծվում է խառը դրություն: Նպաստավոր այս դրությունից օգտվելով՝ Մեծ Հայքում ապաստանած Արիարաթես II-ը հայկական զորքի օգնությամբ գրավում է հարավային կամ բուն Կապադովկիան և այնտեղ հիմնում է իր անկախ թագավորությունը: Նույն այս ժամանակ, հավանաբար Հայերի օժանդակությամբ, Պոնտական Կապադովկիայում ապստամբություն է բարձրացնում նաև Միհրդատ I-ը և հիմնում Պոնտական թագավորությունը: Նորաստեղծ այս երկու պետությունները որոշ ժամանակ արևմուտքից պատնեշի դեր են կատարում Հայաստանի համար և թույլ չեն տալիս արտաքին թշնամիներին ներխուժելու Հայաստան:

Ք. ա. IV դարի վերջում կամ III դարի սկզբում Մեծ Հայքի մայրաքաղաքը տեղափոխվում է Արարատյան դաշտ՝ ուրարտական նախկին Արգիշտիխինիլի քաղաքի տեղում կառուցված Արմավիր քաղաքը: Այս ժամանակից սկսած՝ Այրարատ նահանգը, հատկապես Արարատյան դաշտը, դառնում է Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոնը: Այդ պատճառով էլ հնում Մեծ Հայքի թագավորությունը սկսում են անվանել նաև «Արարատյան» կամ «Այրարատյան թագավորություն»:

Ք. ա. III դարում Մեծ Հայքի տնտեսական, հասարակական և սոցիալական կյանքում զգալի տեղաշարժեր ու փոփոխություններ են կատարվում: Այդ փոփոխությունները հիմնականում երկրի ներքին

օրինաչափ զարգացման, մասամբ նաև Առաջավոր Ասիայի հելլենիստական երկրների ունեցած ազդեցություն հետևանք էին:

Մեծ Հայքում, բացի Արմավիրից և Հնուց գոյություն ունեցող Վանից, առաջանում են նաև մի շարք նոր քաղաքներ, քաղաքատիպ ավաններ: Քաղաքաշինությունը, հատկապես Այրարատ նահանգում, մեծ ծավալ է ստանում Երվանդ IV-ի կամ Վերջինի (մոտ 220–201) ժամանակ: Մովսես Խորենացին, օգտվելով Դարանադյաց գավառի Անի ամրոցի Ողյունյալ քուրմի մեհենական պատմությունից և այլ աղբյուրներից, հաղորդում է, որ Երվանդ IV-ը Արաքս և Ախուրյան գետերի խառնարանի մոտ իր անունով կառուցում է մի նոր քաղաք՝ Երվանդաշատը, և Արմավիրից այնտեղ է տեղափոխում արքունիքը: Նա նոր մայրաքաղաքի միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ դնում պղնձե դռներ և ներքևից մինչև վեր բարձրացող երկաթե սանդուղքներ: Նա Ախուրյան գետի ձախ ափին կառուցում է նաև գեղեցիկ ու չքնաղ շինվածքներով Երվանդակերտ դաստակերտն ու Բագարան փոքր քաղաքը: Արմավիրից նա Բագարան է փոխադրում հեթանոս աստվածների արձանները և իր եղբորը՝ Երվազին նշանակում քրմապետ: Ք. ա. III դարում են առաջանում նաև Երվանդավան, Նախճավան, Վարդգեսավան (հետագա Վաղարշապատ), Երազգավորս և այլ քաղաքատիպ բնակավայրերը:

Զգալի թվով քաղաքների և քաղաքատիպ ավանների առաջացումն ու զարգացումը Մեծ Հայքում առաջին հերթին պայմանավորված էին աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացման, ուրարտական ժամանակաշրջանի հետ համեմատած՝ գյուղատնտեսություն և արհեստագործությունների բոլոր ճյուղերի ավելի բարձր զարգացման և դրանց հիման վրա առևտրի ու դրամական շրջանառության ծավալման հետ: Առևտրի և քաղաքների զարգացմանը որոշ չափով նպաստում է նաև միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհներից մեկը, որը սելևկյանների նախկին մայրաքաղաք Սելևկիայից (Տիգրիսի վրա) դուրս գալով՝ Միջագետքի, Մարաստանի ու Արարատյան դաշտի վրայով գնում էր Կոլխիդա և Սև ծովի նավահանգիստները, իսկ այնտեղից էլ Բոսփոր (Ղրիմ) և Մերձագովյան երկրները: Այս ճանապարհի շնորհիվ Մեծ Հայքը ևս ներգրավվում է միջազգային առևտրի մեջ և սկսում է առևտուր անել ոչ միայն հարևան երկրների՝ Իբերիայի, Կոլխիդայի, Պոնտոսի ու Ատրպատականի, այլև Մարաստանի, Պարսկաստանի, Միջագետքի, Ասորիքի և հելլենիստական մյուս երկրների հետ:

Ք. ա. IV–III դարերում Մեծ Հայքում ևս առևտրի ու դրամական շրջանառությունների զարգացման բնագավառում կատարված խոշոր բեկումը պարզ կերպով երևում է Հայտնաբերված Հին դրամներից: Մեծ Հայքի տարածքի զգալի մասում, այդ թվում՝ Երևանում ու նրա շրջակայքում, Թալինի, Սևանի, Ապարանի և Սիսիանի շրջաններում, Օրդուբադում, Լեռնային Ղարաբաղում և այլուր, Հայտնաբերվել են Ալեքսանդր Մակեդոնացու, ինչպես և III դարում և II դարի առաջին կեսում իշխած սելևկյան, պարթևական, պոնտական, կապադովկյան թագավորների պատկերներով կտրված զգալի քանակությամբ ոսկե, արծաթե ու պղնձե դրամներ:

Արմավիրում գտնվել են III դարի վերջին պատկանող Հունարեն արձանագրություններ, որոնցից մեկի մեջ Մեծ Հայքը անվանված է «գեղեցիկ երկիր Արմենիա»:

Այս արձանագրությունները ոչ միայն ցույց են տալիս, որ Մեծ Հայքի վերնախավի շրջանում տարածված է եղել Հունարեն լեզուն և հելլենիստական մշակույթը, այլև Արմավիրը, հավանաբար նաև Մեծ Հայքի մյուս քաղաքները իրենց կառուցվածքով նման են եղել հելլենիստական քաղաքներին:

Ք. ա. 330 թ. Միթրաուտեսի կողմից Հիմ-
Փոքր Հայքի թագավորությունը նազրված Փոքր Հայքի թագավորությունն իր սահմանների մեջ ընդգրկում էր Եփրատ և Գայլ գետերի վերին հոսանքների միջև ընկած տարածքը: Նա արևելքից սահմանակից էր Մեծ Հայքին, արևմուտքից և հյուսիսից՝ Պոնտոսին, իսկ հարավից՝ Ծոփքին և Կապադովկիային: Ք. ա. III դարի սկզբում Փոքր Հայքը, ինչպես վկայում է Ստրաբոնը, իրեն է հպատակեցնում նաև խալդայներին ու տիրարեններին և հյուսիսից իր տիրապետությունը տարածում է մինչև Սև ծովի ափերը:

322 թվականին Կապադովկիայի, Պափլագոնիայի և Սև ծովի մոտակա շրջանները նվաճելու ժամանակ Հունա-մակեդոնական զորքերը գրավում են նաև Փոքր Հայքը և այն միացնում են Ալեքսանդր Մակեդոնացու քարտուղար Եվմենեսին հանձնված սատրապությանը: Այստեղ կառավարիչ է նշանակվում Եվմենեսին ենթակա հրամանատարներից մեկը՝ Նեոպտոզեմեսոսը, որը, ինչպես վկայում է Պլուտարքոսը, տառապում էր մեծամոլությամբ և սին հպարտություններով: Սրա վարած դաժան քաղաքականության պատճառով չուտով Փոքր Հայքի հայերը ապստամբություն են բարձրացնում հունա-մակեդոնական զավթիչների դեմ: Միայն Եվմենեսի միջամտու-

Թյան չնորհիվ, որը վարում էր համեմատաբար մեղմ քաղաքականություն, հնարավոր է լինում առժամանակ հանգստացնել ու հնազանդեցնել ապստամբ հայերին:

Սակայն Փոքր Հայքը երկար չի մնում հունա-մակեդոնական տիրապետության տակ: Իսպոսի ճակատամարտից հետո, 301-300 թթ. Փոքր Հայքը ևս ապստամբություն է բարձրացնում և վերականգնում իր անկախությունը:

Սկզբնաղբյուրների հաղորդած կցկտուր և պատահական տեղեկություններից երևում է, որ IV-II դարերում Փոքր Հայքում ևս զգալի չափով զարգանում են երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, մետաղամշակությունը և արհեստագործության մյուս ճյուղերը: Մեծ զարկ են ստանում նաև առևտուրն ու դրամական շրջանառությունը: Սրանց զարգացման մեջ զգալի դեր են կատարում Միջագետքից ու Ասորիքից, Մեծ Հայքի ու Ծոփքի վրայով եկող և Փոքր Հայքում խաչավորվող առևտրական ճանապարհները, որոնք գնում էին դեպի Պոնտոս և Սև ծովի հարավային նավահանգիստները: Այս ճանապարհներով Փոքր Հայքը ևս իր արտադրանքի մի մասը սկսում է արտահանել դեպի հարևան երկրները:

Փոքր Հայքը իր անկախությունն ու ինքնուրույնությունը պահպանում է համարյա երկու հարյուր տարի: «Փոքր Հայքը,- վկայում է Ստրաբոնը,- բավական պտղաբեր երկիր է: Այստեղ ևս, ինչպես և Ծոփքում, միշտ կառավարում էին երկիրը սեփական իշխանները, որոնք կամ բարեկամ ու դաշնակից էին մյուս հայերին և կամ իրենց գործերը վարում էին առանձին ու անկախ»:

Ծոփքի հայկական Թագավորությունը

Ծոփքը կամ Ծոփաց աշխարհը գտնվում էր Հայաստանի հարավ-արևմտյան մասում: Նրա տարածքը ձգվում էր Արածանի գետի ստորին հոսանքի շատ բարեբեր հովտում, որին Պոլիբիոսը անվանում է «գեղեցիկ դաշտ»: Սկզբում նրա մասն էին կազմում նաև Մելիտինե քաղաքը և նրա գավառը, որոնք, սակայն, հետագայում, մոտ 220 թ., նվաճվում և միացվում են Կապադովկիային:

Ծոփքը իր աշխարհագրական դիրքի պատճառով դեռևս Աքեմենյան դարաշրջանից սկսած՝ տնտեսական, մասամբ նաև մշակութային ավելի սերտ կապերի մեջ էր գտնվում Ասորիքի, Միջագետքի ու Կապադովկիայի, քան թե Մեծ Հայքի հետ: Այդ կապերը ավելի ևս ուժեղանում են հելլենիզմի դարաշրջանում:

Ծոփաց աշխարհի հայկական իշխող վերնախավը, որն առանձին չահագրգովածություն հանդես չէր բերում Մեծ Հայքի հետ ունեցած իր տնտեսական և քաղաքական կապերի մեջ, մոտավորապես Ք. ա. 240 թ. Ծոփքը անջատում է Մեծ Հայքից և այնտեղ հիմնում իր ինքնուրույն փոքրիկ թագավորությունը: Պետք է կարծել, որ Ծոփքի անջատման մեջ որոշակի դեր են կատարել նաև արտաքին ուժերը՝ Կապադովկյան և Սելևկյան թագավորությունները:

Հայկական այս նորաստեղծ թագավորության հիմնադիրը, հավանաբար, հանդիսացել է Սամսուր (260–240), որը Մեծ Հայքի երվանդունիների տոհմից էր: Սա Կոմմագենեում, Եփրատ գետի ափին իր անունով կառուցում է Սամոսատ մայրաքաղաքը: Սամոսին հաջորդել է նրա որդին՝ Արչամը (մոտ 240–220): Արչամի մասին մեզ հասել է մատենագրական միայն մի տեղեկություն: Հույն մատենագիր Պոլիենոսը հայտնում է, որ Անտիոքոս Հիերաքսը, որը մոտ 230 թ. ապստամբել էր իր եղբոր՝ Սելևկոս II-ի (247–223) դեմ, Միջագետքից մտնում է Հայաստան (Ծոփք) և ապաստանում Արչամի մոտ, որի բարեկամն էր նա: Արչամ թագավորի մահից հետո Ծոփքը և Կոմմագենեն բաժանվում են իրարից և հիմք դնում անկախ երկու ինքնուրույն թագավորությունների, որոնցում շարունակում են իշխել Երվանդունի թագավորական տան ներկայացուցիչները:

Ծոփքը, որն իր աշխարհագրական դիրքով շատ մոտ էր գտնվում հելլենիստական կենտրոններին ու գաղթավայրերին, ավելի ուժեղ կերպով է ենթարկվում հելլենիզմի ազդեցությանը, քան Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը: Հելլենիզմի դարաչրջանում այստեղ զարգացման նոր աստիճանի են հասնում այգեգործությունը, գինեգործությունը, մետաղամշակությունը և արհեստագործության մյուս ճյուղերը: Ստրաբոնը, խոսելով նախկինում Ծոփքի մասը կազմող Մելիտինեի մասին, վկայում է. «Մելիտինեն շատ նման է Կոմմագենեին. ամբողջը ծածկված է պտղատու ծառերով, միակը ամբողջ Կապադովկիայում, որ բերում է նաև ձկնիկ և մոնարիտ կոչվող գինին՝ մրցակից հունական գինիներին»:

Ծոփքը ինչպես հնում, նույնպես և այս դարաչրջանում հանդիսանում էր միջազգային տարանցիկ առևտրի կարևոր հանգույցներից մեկը: Ծոփքի վրայով էր անցնում ոչ միայն հին աշխարհի տարանցիկ առևտրի գլխավոր մայրուղին, նրա զարկերակը հանդիսացող «Արքայական ճանապարհը», այլև հարավից դեպի Սև ծովի ափերը տանող բանուկ ու կարճ ճանապարհը: Այստեղ էր գտնվում նաև Եփրատի կարևոր գետանցքներից մեկը և նրա մոտ

կառուցված Տոմիսա ամրոցը, որը կայան էր Հանդիսանում Փոքր Ասիայից, Սև ծովի ափերից, Միջագետքից և Ասորիքից եկած քաղաքականների համար:

Գյուղատնտեսությունից և արհեստագործությունից զարգացումը, Ծովքի վրայով կատարվող միջազգային տարանցիկ առևտուրը բնականաբար պետք է նպաստեին Հայկական այս փոքրիկ թագավորությունն անբուխ առևտրի, դրամական շրջանառություն և քաղաքային կյանքի զարգացմանը:

Ծովքում, բացի Հնուց գոյություն ունեցող քաղաքներից ու քաղաքատիպ ավաններից, III–II դարերում առաջանում են նաև Հելլենիստական տիպի երկու քաղաքներ՝ Արչամաչատը և Արկաթիակերտը, որոնցից առաջինը գտնվում էր Արածանի գետի մոտ, իսկ երկրորդը՝ Տիգրիսի աղբյուրագետակ Արղանայի վրա: Արչամաչատը, ինչպես երևում է նրա անունից, կառուցել էր Արչամ թագավորը և այն Հանդիսանում էր Ծովքի մայրաքաղաքը: Արչամ թագավորը Կոմմագենեում կառուցել է Արսամեյա կամ Արչամեյա անունով քաղաքը: Այս երկու քաղաքներն էլ կարճ ժամանակից հետո դառնում են ոչ միայն վարչական, այլև արհեստագործություն ու առևտրի կարևոր կենտրոններ:

Հայ թագավորներից Ծովքի թագավորներն առաջիններն են, որ կտրել են իրենց անունով սեփական դրամներ: Մինչև այժմ Հայտնաբերվել են Արչամ, Արղիսարես, Քսերքսես և Զարեհ թագավորների կտրած արծաթե և պղնձե դրամները, որոնք պահվում են եվրոպական տարբեր թանգարաններում: Այս դրամների առաջին երեսում դրոշմված են կտրող թագավորների կիսադեմ պատկերները, իսկ երկրորդ երեսում՝ ձիավոր և նիզակակիր զինվորի, արծվի և հունական առասպելներից վերցված պատկերներ: Երկրորդ երեսում կան նաև հունարեն գրված «Արչամ թագավորի», «Արղիսարես թագավորի», «Քսերքսես թագավորի» և «Զարեհ թագավորաց թագավորի» մակագրությունները:

Ք. ա. երրորդ դարի կեսից Սելևկյան պետությունը առանձին երկրամասերի միջև տնտեսական, քաղաքական, մշակութային, էթնիկական թույլ կապերի, մշտական արտաքին պատերազմների և ներքին կոիվների ու ապստամբությունների պատճառով սկսում է թուլանալ: Նրանից սկսում են անջատվել առանձին երկրամասեր կամ երկրներ:

Սելևկյան գերիշխանությունից Հաստատումը Մեծ Հայքում և Ծովքում

Մոտավորապես 250 թ. պարն կամ ապարն թափառական ցեղի առաջնորդ Արչակը ապստամբություն է բարձրացնում սելևկյանների դեմ և Կասպից ծովից դեպի Հարավ-արևելք ընկած տարածքում, այսինքն՝ Միջին Ասիայի Հարավ-արևմտյան և Իրանի Հյուսիս-արևմելյան մասում հիմնադրում է Առաջավոր Ասիայի նոր, հզոր պետություններից մեկը՝ Պարթևական կամ Պարթև Արչակունիների թագավորությունը: Նորաստեղծ այս պետության հիմնադրման պաշտոնական տարեթիվը և Արչակունիների տարեհաշվման սկիզբը համարվում է Ք. ա. 248/247 թվականը: Սկզբում Պարթևական թագավորության մայրաքաղաքը հանդիսանում էր Նիսա քաղաքը, որի ավերակները գտնվում են Աշխաբադի մոտ, իսկ ավելի ուշ՝ Օրոդես I-ի (56–37) ժամանակ տեղափոխվում է Տիգրիսի վրա կառուցված Տիգրոն քաղաքը:

Նույն այս 250 թվականին Միջին Ասիայում սելևկյանների դեմ ապստամբություն է բարձրացնում նաև Բակարիայի կուսակալ Դիոդորոսը: Սա, սելևկյաններից իրեն անկախ հայտարարելով, այստեղ հիմնադրում է Հունա-բակտրիական պետությունը:

Սակայն Սելևկյան պետությունը ղեռևս իր կենսական բոլոր ուժերը չէր սպառել: Նա ժամանակավորապես կրկին մեծ չափով ուժեղանում է Անտիոքոս III-ի (223–187) գահակալության առաջին երեսուն տարիների ընթացքում:

Ք. ա. 220 թվականին Անտիոքոս III-ը մի խոշոր պատժիչ արշավանք է կատարում Մարաստանի կուսակալ Մոլոնի դեմ, որն իրեն անկախ թագավոր էր հայտարարել և գրավել էր արևելյան սատրապությունների մեծ մասն ու Հյուսիսային Միջագետքը, որի թվում և Սելևկիա նախկին մայրաքաղաքը: Մոլոնի զորքի մեծ մասը Անտիոքոսի կողմն անցնելու պատճառով Մոլոնը պարտվում է և ինքնասպանությունը վերջ է տալիս իր կյանքին:

Արևելյան սատրապություններում և Հյուսիսային Միջագետքում իր իշխանությունը վերականգնելուց հետո Անտիոքոսը նվաճում և իր գերիշխանությունն է ենթարկում նաև Ատրպատականը, որտեղ ղեռևս Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո պարսկական նախկին սատրապ Ատրոպատը հիմնադրել էր բավական ընդարձակ և ուժեղ մի թագավորություն:

Հավանաբար այս նույն ժամանակ Անտիոքոս III-ը հարձակվում է նաև Մեծ Հայքի ու Ծոփքի վրա, որոնք չկարողանալով անհրաժեշտ հակահարված տալ թշնամու գերագանց ուժերին, ստիպված են լինում ընդունել Անտիոքոսի գերիշխանությունը և պարտավորվում են տարեկան որոշ հարկ վճարել նրան:

Սակայն Մեծ Հայքում և Մոփքում սելևկյան տիրապետությունը շատ անկայուն էր: Մեծ Հայքը և Մոփքը ոչ միայն պահպանել էին իրենց ներքին ինքնուրույնությունը, այլև ամեն մի հարմար առիթ օգտագործում էին սելևկյան տիրապետությունից ազատագրվելու համար: Մոփքի թագավորներից հավանաբար Արդիսարեսը, օգտվելով Անտիոքոսի՝ Ք. ա. 217 թ. Եգիպտոսի պտղոմեոսյաններից կրած ծանր պարտությունից, հրաժարվում է ճանաչել Անտիոքոսի գերիշխանությունը և նրան հարկ վճարել:

Անտիոքոս III-ը իր ուժերը վերականգնելուց և Փոքր Ասիայում իր դեմ առաջացած ապստամբությունը ճնշելուց հետո որոշում է Մոփքում ևս վերականգնել իր գերիշխանությունը: Այդ նպատակով նա 212 թ. զգալի ուժերով ներխուժում է Մոփք և բանակ է դնում Արչամաշատ մայրաքաղաքի մոտ: Մոփքի Քսերքսես թագավորը, նկատի ունենալով թշնամու ուժերի գերազանցությունը, դեսպաններ է ուղարկում Անտիոքոսի մոտ և հայտնում, որ ցանկանում է բանակցության մեջ մտնել նրա հետ: Անտիոքոսը իր մոտ է կանչում Քսերքսեսին, հաշտվում է նրա հետ և նույնիսկ նրան է զիջում հարկի մեծագույն մասը, որ մերժել էր իրեն վճարել Քսերքսեսի հայրը: Այնուհետև Անտիոքոսը վերցնում է Քսերքսեսից 300 տաղանդ, 1000 ձի և նույնքան ջորի՝ իրենց լծասարքերով, վերադարձնում է նրան ամբողջ իշխանությունը և ամուսնացնում նրան իր քրոջ՝ Անտիոքիսի, հետ:

Քսերքսեսի նկատմամբ Անտիոքոսի հանդես բերած այս հանդուրժելի մեղմությունն ու բարյացակամությունը, անշուշտ, նպատակ ունեն սիրաշահել տեղական իշխող խավերին և Մոփքում ամրապնդել սելևկյանների գերիշխանությունը: Իր քրոջը ամուսնացնելով Քսերքսեսի հետ՝ Անտիոքոսը հույս ուներ նաև նրան դարձնել իր հյու կամակատարներից մեկը: Սակայն Քսերքսեսը նրա այդ հույսը չի արդարացնում: Դրա պատճառով էլ Անտիոքոսը կարճ ժամանակից հետո իր քրոջ միջոցով սպանել է տալիս Քսերքսեսին և Մոփքում գահ է բարձրացնում կամ կառավարիչ է նշանակում Զարեհին, որը, ըստ երևույթին, Մոփքի թագավորական տոհմից էր:

Նույն այս ժամանակ (201 թ.) Հայկական ավազանու ընդդիմադիր հոսանքի ղեկավար Արտաշեսը, Անքիոքոս III-ի օժանդակությամբ, պայքար է սկսում Մեծ Հայքի թագավոր Երվանդ IV-ի դեմ: Արտաշեսը, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին, զգալի ուժերով հարձակվում է Երվանդի վրա, հաղթում է նրան, պաշարում և գրավում Երվանդաշատը: Մայրաքաղաքի գրավման խառնաշփոթության

ժամանակ զինվորներից մեկը վաղրով սպանում է Երվանդին: Դրանից հետո Արտաշեսը գրավելով նաև Բագարանն ու սպանելով Երվանդի եղբորը՝ հայոց քրմապետ Երվազին՝ վերացնում է Երվանդունիների արքայատոհմը: Օրոնտաս-Երվանդ IV-ի տապալումից ու սպանութունից հետո, Անտիոքոս III-ը Արտաշեսին նշանակում է Մեծ Հայքի ստրատեգոս: Դրանից հետո, ավելի քան տաս տարի (201–190 թթ.), Մեծ Հայքը և Ծոփքը իբրև սելևկյան տիրապետության տակ գտնվող երկրներ կառավարվում են Արտաշեսի ու Ջարեհի կողմից: